
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ
(1283-1340)

# ԱՄԱՌԱՒՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ
(1283-1340 թթ.)

# ԱՄԱՌԱՒՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ


2280

Աշխատասիրութեամբ՝
Բանասիրական Գիտութիւնների Դոկտոր,
**Փրոֆէսէօր Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**

ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍ
1984

Printed by ALCO PRINTING CO. (818) 240-1412
Glendale, California

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА



Մատենագրական սոյն Յուշարձանի
լոյսընծայումը
իրականացաւ մեկենասութեամբ
Տիար
**ՃՈՐՃ ԱԴԱՄԵԱՆԻ**
Ի Յիշատակ իր սիրեցեալ Հօր՝
**ԱԴԱՄ ՍԱՐԳԻՍ ԱԴԱՄԵԱՆԻ**

Publication of this
Literary Monument is realized
by generous donation of

**GEORGE ADAMIAN**
In Memory of His Beloved Father
**ADAM SARKIS ADAMIAN**

# Երկու խօսք

Ամերիկայի մեզի ծանօթ այս կեանքի թոհուբոհին մէջ, երբ մեր օրերը կը սպառին ամէնօրեայ հեւքով եւ մեր ազգային ու հայկական բաւարարութիւնները կ'որոնենք մատչելի, աժան եւ անմիջական հաճոյքներու մէջ, կը դժուարանանք մեր մտաւորական ունակութիւններուն պարտադրել խոր, հարուստ, գերակշիռ մակարդակով յագեցած մշակութային նուաճումներ:

Հակառակ այս բոլորին, անցեալի անկողոպտելի մեր մշակութային գանձերուն եւ հարստութեանց հանդէպ ունեցած մեր հաւատքն ու սէրը մեզ կը մղէ, որ անգամ մը եւս ամբողջական գիտակցութեամբ ոչ միայն ըմբռնենք այդ ժառանգութիւնը, այլեւ զայն մեր թանկագին անցեալի ու ներկայի բարձրորակ գոյութեան դրօշակին վերագրելով, պարզենք բոլոր ժամանակներու դէմ, բոլոր պայմաններու մէջ եւ բոլոր միջակութիւններէն վեր:

Ահաւասիկ միակ բացատրութիւնը՝ միջնադարեան մեր մտքի կարկառուն ներկայացուցիչներուն գիտական հրատարակութիւնը: Այս հասկացողութեամբ միայն՝ զանգուած կազմող ընթերցողներուն դժուարահաճութիւնը կը վերածուի զարմանքի, զարմանքը հիացումի եւ հիացումը հպարտութե՛ն:

Հակառակ մեր վարչական, կրթական, մշակութային եւ հոգեւոր զբաղումներուն, ազգային այս հպարտութեամբ էր, որ հրատարակեցինք Փրոֆ. Լեւոն Գ. Խաչերեանի նախորդ երկու հայագիտական աշխատութիւնները՝ «Առաքել Սիւնեցի. Ցաղագս Քերականութեան

Համառաւտ Լուծմունք» (1982) եւ «Յովհաննէս Երզնկացի. Հաւաքումն Մեկնութեան Քերականի» (1983):

Երկու տարուայ մէջ յաջորդաբար Լոս Անճելըսի մէջ միայն լոյս տեսած մատենագրական այս Յուշարձանները իրենց ստեղծած հետաքրքրութիւններով արդարացուցին մեր ակնկալութիւնները: Արդարեւ, Հայաստանի, Եւրոպայի թէ Միացեալ Նահանգներու հայ եւ օտար բանասէրներու վաւերական վկայութիւնները, դրուատանքի խօսքերն ու շնորհաւորանքները մեզ բերին այն եզրակացութեան, որ կարելի է ապրիլ Ամերիկայի մէջ, ունենալ անհամար մտմտուքներ, դժուարութիւններ, բայց վեր մնալ անոնցմէ եւ գիտական հասարակայնութեանը ներկայացնել, բանասիրական նորագոյն նուաճումներու մակարդակով, հայ ժողովուրդի պատմութեան ամենէն դառն եւ ճակատագրական շրջանին իսկ պայծառացած մեծութիւններու բնագրային աղբիւրները:

Անհաւասիկ յաղթանակը բազմավաստակ հայագէտ Փրոֆ. Լեւոն Խաչերեանի եւ մեր քաջալերանքը հրատարակութեան յանձնելու նաեւ այս երրորդ ստուարածաւալ մատենագրական Յուշարձանը՝ «Յովհաննէս Ծործորեցի. Համառաւտ Տեսութիւն Քերականի» խորագրով, որ իբրեւ գիտական բնագիր պատրաստուած է 14 Ձեռագրերու քննահամեմատական համադրմամբ, մասնագիտական ուսումնասիրութեամբ եւ բանասիրական մանրակրկիտ ծանօթագրութիւններով:

Բանասիրական աշխարհին մէջ այս հատորը իր թեմային ընծայած կարեւորութեան, համապարփակ հանգամանքին եւ բազմաթիւ աղբիւրագիտական ու բանասիրական հարցերուն բերած բարւոք լուծումներով նոր եւ կարեւոր ներդրում մը պիտի հանդիսանայ, անշուշտ, ոչ միայն Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցիի անուան ու կեանքին, ինչպէս նաեւ մատենագրական վաստակին կապուած կարգ մը կնճռոտ խնդիրներ լուծելով ու հայագիտութեան մէջ աւանդաբար տեղ գտած բնագրագիտական թիւրիմացութիւններ սրբագրելով, այլեւ մամուա՛նդ՝ հայոց լեզուին նկատմամբ անոր գիտնականի, հոգե-իմաստասիրական հասկացողութեան եւ մտածողութեան հաղորդակից դարձնելով այսօրուայ հայը, որուն զաւակները, հաւանաբար մեծ Վարդապետին անուան իսկ ծանօթ չեն:

Փրոֆ. Լեւոն Գ. Խաչերեան, հայագիտական պրպտումներու լայն ընդգրկմամբ ու մասնագիտական խորաքնին վերլուծմամբ կը յաջողի ճշգրտօրէն վերականգնել եւ մատուցանել, ինչպէս բանասիրութեանը յայտնի իր նախորդ ակադեմիական հրատարակութիւնները, նաեւ Յովհաննէս Ծործորեցիի քերականական Մեկնութեան գիտաքննական այս բնագիրը: Արձանագրենք նաեւ, որ սոյն հրատարակութեամբ Յովհաննէս Ծործորեցին, իբրեւ ԺԴ. դարի առաջին տասնամեակներու կարկառուն մատենագիր, առաջին անգամ կը ներկայանայ ընթերցողին՝ ընդհանուր եւ ամբողջական ուրուագծումով:



Սիւնեցիներ, Երզնկացիներ, Ծործորեցիներ եւ այլ երախտաւոր մատենագիրներ, իրենց փառաւոր կրթա-մշակութային, լեզուա-քերականական աշխատութիւններով եւ իմաստասիրութիւններով մեզի կը բերեն պատգամը ոչ միայն մեր ունեցած փայլատակող դէմքերու, այլեւ մանաւա՛նդ՝ այն մթնոլորտին, դպրոցներուն, համալսարաններուն, որոնք մերը եղած են պատմութեան դաժան օրերուն անգամ:


Նման հրատարակութիւններ ապացոյց են թէ միշտ ալ պիտի գտնուին Փրոֆ. Խաչերեաններ՝ գուրգուրալու, մշակելու եւ մեզի մատուցանելու մեր արժէքները, թէ՝ տակաւին ոմանց մօտ անմար է կրակը, ճաշակը եւ պահանջը նման աշխատասիրութիւններու: Եւ, վերջապէս, հայ ազգայիններ տակաւին կը հաւատան ազնուօրէն ստանձնել նման մեկենասութիւններ՝ հայ միտքը տարածելու, հայ գիրը պահելու եւ հայ հանճարեղ ոգին յաւերժացնելու:

Շնորհաւորական մեր մաղթանքը՝ Փրոֆ. Լեւոն Գ. Խաչերեանին: Շնորհակալութեան մասնաւոր խօսք՝ գաղութիս ծանօթ ազգայիններէն Պրն. Ճորճ Ադամեանին, որ ընդառաջելով մեր փափաքին, սիրայօժար յանձն առաւ այս հատորին տպագրական ծախսերը:

Անհաւասիկ մշակութային նոր նուաճում մը եւս Լոս Անճելըսի հայահոծ մեր գաղութի՝ Խաղաղականի այս ափերուն, որ իմացական բերկրանք կը պատճառէ մեզի քաղցրօրէն:

Եզրափակելով մեր խօսքը՝ այն կարծիքին ենք, որ գիտական շրջանառութեան մէջ դրուող սոյն Սկզբնաղբիւրը եւս պիտի հետաքրքրէ մասնաւորապէս հայագէտ-բանասէրներուն, լեզուաբան-քերականագէտներուն, լեզուի ու գրականութեան ուսուցիչներուն, արուեստներու տեսութեամբ զբաղուողներուն ու հայ մշակոյթի պատմութիւնն հետազօտողներուն՝ ընդհանրապէս:

ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԱՊԱԳԵԱՆ



# ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

*Երախտաշատ ուսուցչապետ, մատենագիր ու թարգմանիչ Յովհաննէս Մոր-ծորեցու սոյն երկը, իր բազմաթիւ Ձեռագրական ընդօրինակութիւններով, ամէնից տարածուածն է եղել միջնադարի հայ ուսումնագիտական կետրոններում՝ վարդապետարաններում, ճեմարաններում ու համալսարաններում: Միայն Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Հին Ձեռագրերի Գիտահետազօտական Ինստիտուտ-Մատենադարանում առկայ են շուրջ 14 Ձեռագրեր, որոնցում պարփակուած է սոյն բնագրային տարբերակը՝ ժամանակագրական լայնաշառաւիղ ընդգրկմամբ: Հարիւրամեակներ շարունակ այն եւս ծառայել է իբրեւ Ձեռնարկ-դասագիրք հայոց լեզուի, քերականութեան ու գրականութեան տեսութեան, բանասիրութեան ու ճարտասանութեան, նաեւ գեղագիտական այլ արուեստների ուսուցման՝ տրամադրելով այդ բնագաւառներից իւրաքանչիւրի վերաբերեալ դրոյթային ու հարցադրումնային բանաձեւումներ եւ իմաստաւորումներ, որոնք եւ ձեւաւորել են միջնադարի հայ ուսումնականի տեսական մտածողութիւնը, ընդարձակել նրա գիտական մտահորիզոնը՝ ատակ դարձնելով նրան փիլիսոփայելու, տրամախօսելու, կրօնաբանելու եւ առհասարակ վերացական գիտութիւնների ոլորտներում թափանցելու ու ճախրելու միաժամանակ: Ինչպէս ճիշդ է դիտուած ընթերցողին ներկայացուող սոյն աշխատասիրութեան մէջ՝ «...իբր ի քուրայէ զհրատեսակն ոսկի արտաքս բերել, կամ որպէս զարճան ի մահարճանաց, կամ զբարձր կանգնեալ աշտարակ եւ կամ նպատակ եւ դրաւշուած ի ճանապարհի կանգնեալ անվթար զճանապարհն վճարեսցեն*, այսպէս բերականութեամբս ուղղի բանականութիւնս եւ սոքաւք մտանիցեն յամենայն արուեստս իմաստասիրութեան, որպէս ի պաղատս արբունական կուռ եւ բերեալ ճանապարհաւ» (էջ 117): *Հետեւաբար՝ մատենագրական* սոյն Ճուշարձանը հայագիտութեան համար ունի ո՛չ միայն գիտա-մանկավարժական, ա՛յլեւ՝ պատմական արժէք ու նշանակութիւն: *Ուսումնական սերունդների հայկա-*

*բանական կրթութիւնը մեծ չափով եւ հիմնականում պարտական է այս եւ գերազանցապէս ա՛յս կարգի Ձեռնարկ-դասագրքերին իբրեւ հայերէնագիտութեան գանձարանների ու ազգային արժէքների ներշնչանքի ոգեղէն ակունքների…:*

*Որքան ճիշդ է նկատուած մեր գրչութեան արուեստում, որ Մեսրոպաչունչ 36 գիրուորները հայոց հանճարեղ այբուբենի՝ ազգապահպանման աննկուն ու աննուաճ մարտիկներն են եղել հայ ժողովրդի գոյամարտի բոլոր հանգրուաններում՝ նրա տարապայման բոլոր իրավիճակներում ու անգամ ամենադժուեմ պատմական շրջադարձերում, դա առաւել ճշմարտացիութեամբ եւ, մանաւա՛նդ՝ ուժգնութեամբ վերաբերում է լոյս ընծայուող հէնց այս բնոյթի բնագրային Սկզբնաղբիւրներին ու բազմացումներին ձեռագրական մատեաններում…:*

*Շարունակելով վաստակաշատ հայագէտ Նիկողայոս Ադոնցի հիմք դրած հայ միջնադարի տեսական կոթողների՝ քերականական Ցուշարձանների ուսումնասիրման ու հրատարակման գործը, ներկայ հատորով հայագէտների ուշադրութեանն ենք յանձնում մեր մատենաշարային հրատարակութիւնների հերթական լոյսընծայումը: Երկասիրութիւնը կատարուել է, հիմնականում, դարձեալ քաղաքամայր Երեւանում, Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում, աղբիւրագիտական ու բնագրագիտական մեր բազմամեայ հետազօտութիւնների ընթացքում՝ մատենագրական Ցուշարձանների քննական բնագրեր պատրաստելու ու գիտական շրջանառութեան մէջ դնելու մեր սեւեռուն ծրագիրն իրականացնելիս:*

*Ցովհաննէս Մործորեցու մատենագրական սոյն Ցուշարձանի լոյսընծայման առթիւ մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Գերաշնորհ Տ. Եփրեմ Ս. Եպիսկ. Թապագեանին, որ հոգածու եղաւ այս հատորի հրատարակութիւնը եւս կազմակերպելու, ինչպէս եւ հայ Գրի ու Մշակոյթի բարերար Տիար Ճորճ Ադամեանին, որի նիւթական ազնիւ օժանդակութեամբ հնարաւոր եղաւ աշխատասիրութեանս տպագրութիւնը:*



# Ներածութիւն

## Ա.

ԺԴ դարի առաջին քառասնամեակի մատենագիր է, քերական մեկնիչ, թարգմանիչ, ուսուցչապետ եւ հասարակական գործիչ Յովհաննէս Երզնկացի կրտսերը, որը ձեռագրական աղբիւրներում առաւելաբար յայտնի է իբրեւ Յովհաննէս Մործորեցի[1]:

Նա իր փայլուն ուսումնառութիւնը իրականացրել է «Իմաստութեան մայրաքաղաք», «երկրորդ Աթէնք» հռչակուած Գլաձորի համալսարանում եւ բարձրագոյնի իր գիտա-մանկավարժական որակաւորումը՝ «վարդապետական աստիճանը», ստացել մեծանուն գիտնական եւ բարեւնապետ Եսայի Նչեցու երախտաւորութեամբ ու, մանաւա՛նդ, երաշխաւորմամբ:

Այս մատենագրի ծննդեան թուականը ստուգապէս հաղորդուած չէ ձեռագրական վկայութիւններում, ուստիեւ այն հնարաւոր է որոշել միայն մօտաւոր ճշդութեամբ՝ կռուան ունենալով Գլաձորի համալսարանում նրա ուսումնառութեան տարիները: Բնականաբար՝ նրա կենսագրութեան[2] վերաբերեալ ձեռագրական վկայութիւններ չեն հանդիպում նախագլաձորեան ժամանակաշրջանում, իսկ «Յովհաննէս Երզնկացի» յիշատակումներն էլ գերազանցապէս ակնարկում են համանուն աւագ մատենագրին, որը բնորոշւում է աղբիւրներում նաեւ «Պլուզ», «Քաղցրիկ», «Մաշածին» մակդիրներով:

Ձեռագրական աղբիւրներում յիշատակութիւններ են առկայ Յովհաննէս Երզնկացի կրտսերի Գլաձորի համալսարանում գտնուելու մասին դեռեւս 1298 թուականից: Համալսարանական իր ուսումնառութեան մասին առաջին անգամ հաւաստում է ինքը՝ Յովհաննէս Երզնկացին, նշելով «մեծ բարեբեան Նչեցու երախտաւորութեամբ ու, մանաւա՛նդ, երաշխաւորմամբ:

Այս մատենագրի ծննդեան թուականը ստուգապէս հաղորդուած չէ ձեռագրական վկայութիւններում, ուստիեւ այն հնարաւոր է որոշել միայն մօտաւոր ճշդութեամբ՝ կռուան ունենալով Գլաձորի համալսարանում նրա ուսումնառութեան տարիները: Բնականաբար՝ նրա կենսագրութեան[2] վերաբերեալ ձեռագրական վկայութիւններ չեն հանդիպում նախագլաձորեան ժամանակաշրջանում, իսկ «Յովհաննէս Երզնկացի» յիշատակումներն էլ գերազանցապէս ակնարկում են համանուն աւագ մատենագրին, որը բնորոշւում է աղբիւրներում նաեւ «Պլուզ», «Քաղցրիկ», «Մաշածին» մակդիրներով:

Ձեռագրական աղբիւրներում յիշատակութիւններ են առկայ Յովհաննէս Երզնկացի կրտսերի Գլաձորի համալսարանում գտնուելու մասին դեռեւս 1298 թուականից: Համալսարանական իր ուսումնառութեան մասին առաջին անգամ հաւաստում է ինքը՝ Յովհաննէս Երզնկացին, նշելով «մեծ բարեբեան Նչեցու երախտաւորութեամբ ու, մանաւա՛նդ, երաշխաւորմամբ:

---

1 Այստեղ չենք անդրադառնում, կրկնութիւնից խուսափելու համար, բանասիրութեան մէջ աւագ եւ կրտսեր համանուն երկու Երզնկացիների՝ Պլուզի եւ Մործորեցու չփոթման, նոյնացման, ինչպէս եւ սահմանազատման պատմութեան հարցին, քանի որ արդէն առիթն ունեցել ենք մեր խօսքն ասելու հանգամանօրէն ինչպէս «Եսայի Նչեցի. վերլուծութիւն քերականութեան» (Երեւան, 1966, Առաջաբան, էջ 24–25, ծան. 35), այնպէս էլ «Յովհաննէս Երզնկացի. Հաւաքումն Մեկնութեան Քերականի» (Լոս Անճելըս, Ներածութիւն, էջ 15–25) երկասիրութիւններում:

2 Ի դէպ, իրաւացի է անուշտ Փրոֆ. Լ. Խաչիկեանը, երբ նշում է, որ Յովհաննէս Մործորեցու կենսագրութեան գիտական ուրուագծմանը լուրջ ձեռնարկումներ չեն եղել. «Անհամեմատ քիչ աշխատանք է կատարուած Մործորեցի Յովհաննէսի կենսագրութեան եւ գիտա-մանկավարժական գործունէութեան կարեւոր դրուագների բացայայտման ուղղութեամբ» (տե՛ս նրա «Արտագի հայկական իշխանութիւնը եւ Մործորի դպրոցը» ծաւալուն յօդուածը, «Բանբեր Մատենադարանի», No. 11, 1973, էջ 174): Բայց նկատենք, որ ինքն էլ Յովհաննէս Մործորեցուն նուիրած հատուածում կանգ է առել գերազանցապէս նրա մատենագրական վաստակի բնութագրման վրայ (համեմատի՛ր՝ էջ 173–204):

1298 թուականին ընդօրինակած «Պիտոյից գրքում» թողած ցիչատակարանում[3]. «ի թուականիս ՉԽԷ (=1298) գրեցաւ սա ի գաւառիս կոչեցեալ Վայոց ձոր, ի վանս Գլաձոր, ընդ հովանեաւ սուրբ նախավկային, ի վարժապետութեան եսայեայ առն հեզոյ եւ խաղաղարարի, մեծի րաբունապետին Նչեցւոյ ձեռամբ յոգնամեղ ծառայիս Ցոհաննիսի աշակերտի բանի»[4]: *Այս ինքնավկայութիւնը «աշակերտ բանի» բանաձեւմամբ՝ աներկբայօրէն յուշում է եւ ընդգծում միաժամանակ Ցովհաննէսի դեռեւս իրրեւ ուսումնականի հանգամանքը: Նոյն տարին նա «լուսազարդեալ» Աւետարան է գրչագրում դարձեալ Գլաձորի համալսարանում՝ իրեն բնութագրելով իրրեւ «քահանայի». «...Բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանս ի մերս թիւ ՉԽԷ (=1298) ձեռամբ Ցովհաննէս անարժան բահանայի, ի խնդրոյ Տիրատուր քահանայի. եւ խոչորութեան եւ սխալանաց մի՛ մեղադրէք...»*[5]:

*Յատկանշական է, որ նկարագրելով մոնղոլների («ազգն նեստողաց») ներխուժմամբ ստեղծուած արհաւիրալից իրադրութիւնը երկրում իր մղձաւանջային հետեւանքներով՝ հայ ժողովրդի համար փրկութիւն է խնդրում «Ամենակարողից» թէ՛ նրա հոգու եւ թէ՛, մանաւանդ, մարմնի համար՝ թախանձագին աղերսելով նաեւ նրա գոյատեւման կենսական կարեւորութիւնը: Նոյն յիշատակարանում գրչութեան արուեստի նկատմամբ հնարաւոր մեղանչումներ թոյլ տուած լինելու զգպքում ներողամտութիւն է հայցում Ցովհաննէս երզնկացին՝ «հիմնաւորելով» իր այդ աղերսանքը հայրենիքի ճակատագրով տոչորուող հայրենասէրի հետեւեալ սրտառուչ խօսքերով. «...Քանզի էր ժամանակ չար եւ դառն, եւ տիրեալ էին աշխարհին ազգն նեստողաց, եւ ազգի ազգի խառնիճաղանճ պարսից թուրքաց իսմայելականաց, եւ ոչ գոյր յոյս կամ տեղի ապաստանի բրիստոնէից. բայց միայն յոյսն Քրիստոս է. նա արասցէ իրաւունս զրկելոց, եւ դարձուսցէ զգերութիւն եւ զտառապանս ազգիս մերոյ, եւ արասցէ այց իւրում ժողովուրդեան, եւ փրկեսցէ ի վտանգից հոգւոյ եւ մարմնոյ»*[6]: *Այս տողերը դեռ վաղ հասակից բնութագրում են անշուշտ մեր ուսումնականին՝ ամենապայծառ կողմերով:*

*Ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք Ցովհաննէս Երզնկացու բարձրագոյն կրթութեան ընթացքին հետեւելիս, 1302 թուականից յիշատակարանային վկայութիւն ունենք իր ուսումնակիցներից Մկրտիչ գրչի կողմից այն մասին, որ Երզնկացին արդէն «սպասաւոր բանի» է եւ «մերձ ի կատարելութիւն», այսինքն՝ պատրաստւում է «վարդապետական աստիճան» ստանալու*[7]: *Եւ իրօք, յաջորդ տարուանից ձեռագրական վկայութիւն է պահպանուած, որում աներկբայաբար հաւաստւում է, որ Երզնկացին արդէն վարդապետ է Գլաձորի համալսարանում, եւ իրրեւ մանկավարժ-ուսուցիչ յանձնարարութիւններ է տուել իր սանին ձեռագիր գրչագրելու*[8]:

*Վաւերական այս փաստերից բխում է հետեւեալ հետեւութիւնը. այնքանով, որքանով բարձրագոյն ուսումնառութեան թեւակոխումը Գլաձորի համալսարանում ընդհանրապէս նախատեսւում էր 13–14 տարեկանից, երբ այդ հասակում յաճախողներն արդէն իսկ բոլորած էին լինում նախընթաց՝ «քահանայական» ուսումնառութիւնը, իսկ համալսարանական կրթութիւնը տեւում էր չուրջ եօթ–ութ տարի*[9], նշանակում է, որ Ցովհաննէս Երզնկացի կրտսերը առաջին անգամ ոտք է դրել Գլաձորի համալսարան 1296 թուականին (1303–7=1296), հետեւաբար նրա ծնունդը պէտք է համարել մօտաւորապէս 1296–14=1282 կամ 1283 թուականին[10]:

*Հարկ է նշել, որ այս մատենագրի ծննդավայրը ընդհանրապէս կասկած չի յարուցել՝ տեղանուամբ իրրեւ «մականուն» ծառայող որոշեալի (այն է՝ «Երզնկացի») ուղղակի ցուցումով: Բացի այդ, նա եւս վկայութիւն է թողել աներկմիտ հաւաստմամբ իր ծննդավայրի մասին. իմաստասիրական–խրատաբանական, կանոնական, քարոզչական–դաւանաբանական, աստուածաբանական–մեկնաբանական երկերի խայտաբղէտ մի ժողովածու ընդօրինակելիս, դեռեւս 1314 թուականին Ցովհաննէս կրտսերն իր մասին յիշատակագրում է. «Եւ զվերջացեալս ի բարեաց գործոց՝ զտարտամ գրիչս՝ զՑոհան, ծանօթ բանի եւ տեղեաւ Եզնկացի...»*[11]:

*Բանասիրութեան մէջ, սակայն, վարկած է առաջ քաշուել նաեւ այն մասին, որ իբր մեր այս մատենագիրը ծնուած է եղել Երզնկայի Պարկանց գիւղում, ուստիեւ յորջորջուել է թէ՛ իրրեւ Ցովհաննէս Պարկանցցի եւ թէ՛ իրրեւ Ցովհաննէս Երզնկացի: Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի No. 2019 ձեռագրում պարփակուած յիշատակագրութիւնների թիւր քննութեամբ հայագէտ Ց. Քիւրտեանը այնպէս է մեկնաբանել, որ Ցովհաննէսը, իբր թէ, նախքան Գլաձորի համալսարան մեկնելը, իր կրթութիւնը ձեռք է բերել Գէորգ Սկեւռացի կամ Լամբրոնացի ուսուցչապետի մօտ եւ նոյնիսկ «վարդապետ օծուել» նրանից: Այս առնչութեամբ բանասէրը «Բազմավէպ»-ի 1954 թուի համարում, իրրեւ իր քննութեան արդիւնք, գրում է. «...Ցովհ. Պարկանցցի-Երզնկացին՝ ես կը նոյնեզրակացութիւն,*

---

3 *Այս յիշատակարանային վկայութիւնը, քաղուածքի համառօտմամբ, առաջին անգամ Լ. Խաչիկեանը գիտական շրջանառութեան դրեց Ցովհաննէս Երզնկացի կրտսերի նկատմամբ՝ նրա մասին բանասէրներին յայտնի տեղեկութիւնը չորս տարով շարժելով դէպի եա (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 175): Այսպէս Ց. Քիւրտեանը գրում է. «Ցովհաննէսին առաջին անգամ կը հանդիպինք 1302-ին, էջմիածնայ նոր ժողովածուի թիւ 1844-ին, որ Ներսէս Լամբրոնացիի Սաղմոսց Մեկնութեան օրինակ մըն է եսայի Նչեցւոյ համար գրուած...» («Երիզա եւ եկեղեաց գաւառ», Վենետիկ, 1953, էջ 236–37): Ա. Սրապեանը նշում է. «Բոլորովին այլ է Ծործորեցի Ցովհաննէս Երզնկացու կեանքն ու գործունէութիւնը: Նրա մասին մեզ յայտնի առաջին տուեալը վերաբերում է 1302 թուականին» («Ցովհաննէս Երզնկացի», Երեւան, 1958, էջ 31): Կենսագրական փաստի իմացութեան այս սահմանափակութիւնը հետեւանք է անշուշտ ԺԴ դարի յիշատակարանների ոչ-լրիւ հրապարակման:*

4 *Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 6273 («Ցիչատակարանք կամ նշխարք պատմութեան հայոց հաւաքեալ ի մի յոգնաջան աշխատութեամբ նուաստ Ղեւոնդ Ծ. վարդապետի Տոնպեցւոյ, Վարագայ վանաց միաբանի», 1878 թ., էջ 100):*

5 *Անդ:*

6 *Անդ:*

7 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 5–6:*

8 *Տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 6558, թ. 637բ:*

9 *Տե՛ս մեր աշխատութիւնը՝ «Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ (XIII-XIV դդ.)», Երեւան, 1973, էջ 177:*

10 *Չհաշուած այն ուսումնասիրողներին, որոնք չփոթելով աւագ եւ կրտսեր համանուն Երզնկացիներին, երկուսի էլ ծննդեան տարեթիւը համարել են 1250 թուականը (տե՛ս Գ. Զարպհանալեան, Հայկական հին դպրութիւն (Դ–ԺԳ դարեր), Վենետիկ, 1886, էջ 132, Ղ. Ալիշան, Ցուշիկք հայրենեաց հայոց, հատ. Բ, տպ. 2-րդ, Վենետիկ, 1921, էջ 414 եւ ուրիշներ), վերջին հետազօտողներից (որոնք թէեւ յատակ սահմանազատում են համանուն այս մատենադիրներին) Լ. Խաչիկեանը Ցովհաննէս Երզնկացի կրտսերի ծննդեան տարին ընդունում է 1280-ական թուականները» (տե՛ս նրա նշուած աշխատ., «Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 176):*

11 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, էջ 111:*





2280
ՀՀԳԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

ցացնեմ ցոյց Ցովհ. Երզնկացի-Ծործորեցիի հետ...»[12]: *Այնուհետեւ. «Հանուաբար Ցով. աբեղայ Պարկանցցի-Երզնկացի-Ծործորեցի* իր նախնական կրթութիւնը ստացած է՝ Գէորգ Լամբրոնացիի մօտ, *Արեւելեան Հայաստանի մէջ վանք մը*: Անկէ ուսած է գրչութիւն եւ հաւանաբար ստացած է նաեւ վարդապետական գաւազան»[13]: *Եւ կամ՝ «Ինձի համար տարակոյս չի մնար որ այս Գէորգը նոյն է մեր վերի թուղթերուն Գէորգին (իմա՝ Գէորգ Լամբրոնացուն – Լ. Խ.), որուն բազմաթիւ աշակերտներուն շարքին մէջ եղած ըլլալու է նաեւ Ցով. Պարկանցցի իբր աբեղայ եւ հաւանաբար ալ անկէ վարդապետ օծուած»*[14]: *Այս ենթադրութիւնները, հարկ է արձանագրել, տարաբախտաբար մատենագրական տուեալների սխալ համադրումով է կատարուած, մանաւանդ որ անյարիրութիւնները նրանցում չափազանց ակնբախ են:*

*Առաջին անյարիր մատենագրական տուեալն այն է, որ «ձեռագրիս մէջ կը հանդիպինք Ցովհաննէս Երզնկացիի մը, որ ինքզինքը զատորոշելու համար ուրիշ համանուն երզնկացիներէ, կը կոչէ «Ցովհաննէս Եզընկացի որոյ գիւղն Պարկանց կոչի» կամ «ցՑոաննէս Պարկանցցի»*[15]: *Ցիշատակագրային այս պնդումը, սակայն, հերքւում է Գլաձորի համալսարանի սաներից Մկրտիչ գրչի վկայութեամբ, երբ նա Ցովհաննէս Երզնկացուն համարում է ոչ թէ Երզնկայի գիւղից (իմա՝ «Պարկանց»), այլ՝ բուն իսկ Երզնկա* բաղաքից: *Նա այդպէս էլ յիշատակագրում է. «...ձեռամբ առն իմաստնոյ եւ ճարտարի... Ցովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր բաղաքէն Եզնկայ կոչեցեալ*[16]:

*Երկրորդ՝ Ց. Քիւրտեանը կարծում է, որ ձեռագիրը ընդօրինակուել է 1300 թուականին, իսկ ուսուցչապետ Գէորգ Լամբրոնացին գլխաւորում էր Սկեւռայի ուսումնագիտական կենտրոնը մինչեւ 1301 թուականը, երբ իր մահկանացուն է կնքում: Սակայն Ցովհաննէս Երզնկացի կրտսերը դեռեւս* ցոյնիսկ 1302 թուականին՝ «վարդապետ» չէր ճանաչուած եւ բոլոր իր յիշատակագրութիւններում էլ, ինչպէս չարագրանքի ընթացքում կը տեսնենք, Պարկանցցի լինելու մասին ո՛չ մի հաւաստում չի արուած, իրաւացի հիմքով նկատում է Լ. Խաչիկեանը եւ մերժում այդ վարկածը[17]: Ց. Քիւրտեանի *բերած յիշատակագրային վկայութիւններից պարզապէս հետեւում է, որ մեր մատենագրի ապրած ժամանակաշրջանում եղել է նաեւ մի աննշան համանուն գրիչ եւս, որը եւ իրեն կոչել է երկրորդաբար նաեւ Պարկանցցի՝ միւս համանուն Երզնկացի մատենագիրներից, ամենայն հաւանականութեամբ, սահմանազատուելու համար, ընդ որում ձեռագրական ընդօրինակութիւններում յայտնի մնալով թերեւս միակ այդ ձեռագրի իր ընդօրինակողի մոլորով: Այս գրիչը, պէտք է ասել, բացի նշուած փաստից, չի չփոթուել նաեւ եւ կրտսեր Երզնկացիների հետ բանասիրութեան մէջ:*

Ուսումնառութիւնը Գլաձորի համալսարանում Ցովհաննէս Երզնկացի

12 Ց. Քիւրտեան, *Ցովհաննէս Երզնկացի-Ծործորեցի* (նորագիւտ նիւթեր Ս. Ղազարու մէկ նոր ձեռագրէն), «Բազմավէպ», 1954, էջ 245: *Այս եւ յետագայ բոլոր ընդգծումները մերն են: – Լ. Խ.:*

13 *Անդ:*

14 *Անդ:*

15 *Անդ*, էջ 244:

16 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 5–6:

17 *Տե՛ս նշուած աշխատ.*, «Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 174:



*կրտսերի՝ ընթացել է բեղմնաւոր արդիւնաւէտութեամբ:*

*Ապագայ այս մատենագրի մասին, իբրեւ համալսարանական ուսանողի, երրորդ տեղեկութիւնը, ինչպէս վերը ասուեց, հաղորդում է Գլաձորի համալսարանի սաներից եւ ուսումնակիցներից Մկրտիչը, որից իմանում ենք, որ 1302 թուականին Երզնկացին հմտացել է ամբողջ Աստուածաչնչին՝ իր չորս կտակարաններով, համարեա աւարտել է համալսարանական ուսումնառութիւնը՝ «գործնական» եւ «տեսական» գիտութիւնների, այլ կերպ ասած՝ «եօթ ազատ արուեստների» հմտացմամբ ու տիրապետմամբ, իմաստասիրութեան ու բանասիրութեան ոլորտների ընդգրկմամբ*[18]*, այդ իսկ պատճառով ստացել է «սպասաւոր բանի» կոչումը, ճանաչուել որպէս «իմաստուն եւ ճարտար» ուսումնական: Ըստ յիշատակագրի վկայութեան, եսայի Նչեցին նախապէս Ցովհաննէս Երզնկացուն եւ Վարդան Կիլիկեցուն պատուիրել է «Մեկնութիւն Սաղմոսաց Ներսիսի Լամբրոնացւոյ» աշխատութիւնը գրչագրելու, եւ երբ նրանք արգելաւորի հանգամանքների բերումով կիսատ են թողնում, Նչեցին խնդրում է, որ Մկրտիչ գրիչն աւարտի հասցնի այն: Վերջինս, դրուատալից խօսքերով բնութագրելով Ցովհաննէս Երզնկացի կրտսերին, յիշատակագրում է. «ձեռամբ ուրումն սրբազան բահանայի՝ առն իմաստնոյ եւ ճարտարի, որ էր ամենայն Աստուածաշունչ կտակարանաւուքն վարժեալ՝ սպասաւոր գոլով բանի, մերձ ի կատարելութիւն, Ցովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր բաղաքէն Եզնկայ կոչեցեալ...»*[19]*: Սոյն վկայութիւնից միանգամայն ակնբախ է դառնում, որ մինչեւ 1302 թուականը, որքան էլ որոշ հեղինակութիւն է ձեռք բերել Երզընկացին Գլաձորի համալսարանում, բայց դեռ «քահանայ» վիճակում է եղել այն ժամանակ եւ դեռեւս չի ստացել «վարդապետական գաւազան», դրա համար էլ ասւում է՝ «մերձ ի կատարելութիւն» էր նա: Այստեղից հետեւութիւն՝ նրա բարձրագոյն ուսումնառութեան շրջանը համարեա թէ իր լրումին էր հասել 1302 թուականին:*

*Եւ ահա յաջորդ տարում՝ 1303 թուականին, Ցովհաննէս Երզնկացուն տեսնում ենք արդէն իբրեւ վարդապետ եւ ուսուցիչ. Գլաձորի համալսարանի սաներից մի այլ գրիչ, «Լուծմունք նուրբ գրեանց Ցակոբայ կաթողիկոսի» մատենագիտական աշխատութիւնը ընդօրինակելիս վկայում է, որ արդէն վարդապետ Ցովհաննէս Երզնկացին հարկադրել է իրեն, թերեւս իր ծուլութիւնը յաղթահարելու համար, ինչպէս խոստովանում է գրիչը, ձեռնարկել այդ աշխատանքը: Այս առթիւ հեղինակուած յիշատակարանում գրիչը բարձր է գնահատում Երզնկացու հմտութիւնը նաեւ «գրչութեան արուեստում»՝ յայտարարելով, որ Երզնկացին ամենեւին էլ իր օգնութեան կարիքը չի ունեցել, որովհետեւ «այնքան երագ էր ի գիր արուեստին». ընդ որում նչուած իրողութիւնը այնքան հանրայայտ է եղել, որ այն կարող են հաստատել բոլոր նրանք, ովքեր երբեւէ չփոում են ունեցել հետը. «...Ընդ նմին եւ զիմ վարդապետս՝ Ցովհաննէս Եզնկա(յ)եցի,– կարդում ենք այնտեղ,– որ եւ զիս իբրեւ զստահակ ծառայ քարչէ ի վերայ երեսաց, թերեւս զերծուսցէ ի յեղգանալոյ, եւ ոչ թէ կարիս ինչ ունելով առ այս եղտորել գիրս, զայս մի՛ ոք վարկցի, զի այնճան երագ էր ի գիր արուեստին, որ ոչ դիպաւ աւրինակի, եւ ճշմարտութիւն բանիս ևոքա վկայեն, որք մերձ եղեալ հանդիպեցան նմայ.*

18 *Տե՛ս մեր աշխատութիւնը՝* «Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ», Երեւան, 1973, էջ 98–125:

19 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 5–6:

*վասն որոյ աղաչեմ յիշել զվարդապետն իմ ի մաքրափայլ աղաւթս ձեր...»*[20]:

*Գլաձորի համալսարանում, ի չարս վերը նշուած դասընթացքների իւրացման, մեր մատենագիրը ձեռք է բերում նաեւ օտար լեզուների, այն է՝ յունարէնի, լատիներէնի եւ պարսկերէնի իրազեկութիւն ու հմտութիւն, որ ակներեւ է մասամբ նաեւ նրա թարգմանչական գործունէութիւնից, եւ որի մասին խօսք կը լինի յընթացս մեր չարադրանքի: Վերջին երկու լեզուները՝ լատիներէնն ու պարսկերէնը, ինչպէս կը տեսնենք, խորացրեց եւ հիմնաւոր զարձրեց յետագայում, երբ ձեռնամուխ եղաւ թարգմանական աշխատանքների*[21]:

---

20 *Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 6558, թ. 637բ:*

21 *Ի դէպ, հիմնագուրկ պէտք է համարել վերջերս առաջադրուած փաստարկների մեծ մասը՝ Ցովհաննէս Երզնկացի կրտսերի օտար լեզուներ իմանալու առնչութեամբ, Գլաձորի համալսարանում սովորելիս: Այսպէս, Լ. Խաչիկեանը իր վերոյիշեալ յօդուածում, ուր անդրադառնում է նաեւ Ցովհաննէս Երզնկացու ուսումնա-մշակութային ընդհանուր գործունէութեանը, գրում է. «Համառօտ տեսութիւն քերականին» աշխատութեան մէջ ուշագրաւ տուեալներ կան հաստատապէս պնդելու, որ Ցովհաննէս Մործորեցի վարդապետը քաջ լեզուագէտ է եղել, տիրապետել է յունարէն, լատիներէն, թերեւս նաեւ պարսկերէն լեզուներին» («Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 179, ընդգծումները մերն են – Լ. Խ.): Այդ «ուշագրաւ տուեալները», որ վկայակոչում է Լ. Խաչիկեանը, ցաւօք, բնաւ էլ երգնկացու սեփական տուեալները չեն, ինչպէս կարծում է բանասէր-պատմաբանը, այլ մեծաւ մասամբ բանաճարտումներ են նախորդ բերական մեկնիչների աշխատութիւններից:*

*Այսպէս, մանաւորելով իր խօսքը, Լ. Խաչիկեանը գրում է. «Պարսկերէնի իմացութեան մասին տուեալը որոշակի չէ. անդրադառնալով յարաբարդ բառերին, Ցործորեցին ասում է, որ այդպիսիք չատ կան «ի պարսից եւ ի մերս լեզու, որպէս Նիւ-Խոսրով, Ջուան-Խոսրով, Վարազ-Տրդատ, եւ մերս Լեւոն, Քաջ-Լեւոն, Քաջ-Վարդան եւ այլ սոյնպիսիք» («Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 178, ծան. 34): Նկատենք, սակայն, բանասէր-պատմաբանի եզրայանգման համար հիմք ծառայած «սկզբնաղբիւրային» համարուող քաղուածքը ոչ թէ հեղինակային է, այլ՝ Ցովհաննէս Երզնկացի կրտսերի գրչին է պատկանում, այլ... բանաճարտուրիւն է VIII դարի նշանաւոր քերական մեկնիչ, երաժիշտ եւ մատենագիր Ստեփանոս Սիւնեցու երկից, որին զուգընթաց ընթերցում է, մանակի խմբագրմամբ, առաջադրուած մէջբերումը: Համեմատի՛ր. «Եւ գտանի սա յոլովագոյն ի Պարսից եւ յԱղուանից եւ ի Սիւնեաց լեզուին, զի երկանունք եւ եռանունք են յոլովք, որպէս՝ Նիւ-դաստ, Նիւ-խոսրով, Ջուան-խոսրով, Վարազ-տրդատ եւ որք այսպիսիք») ( Н.Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград , 1915 թ., էջ 238–39: Տե՛ս նաեւ մեր երկասիրութիւնը՝ «Ցովհաննէս Երզնկացի. Հաւաքումն Մեկնութեան Քերականի», էջ 208): Այդ նոյն քաղուածքի վերջին մասը արտագրութիւն է Ցովհաննէս Երզնկացի աւագի՝ Պլուզի «Հաւաքումն Մեկնութեան Քերականի» ընդարձակ աշխատութիւնից. «դարձեալ, պարզ՝ Լեւոն, բարդ՝ բաջ Լեւոն, եւ յարաբարդ՝ բաջ Լեւոնեան» (տե՛ս անդ):*

*Իսկ Ցովհաննէս Երզնկացի կրտսերի յունարէն (ինչպէս եւ լատիներէն) իմանալու առնչութեամբ Լ. Խաչիկեանը նոյնպէս բնագրային սխալ վերագրմամբ պնդում է. «Ցունարէն եւ լատիներէն լեզուների իմացութեան ականկպայելի փաստեր ենք գտնում աշխատութեան սեռերին նուիրուած բաժնում. «Սէրք,– կարդում ենք այնտեղ,– ոչ ի գոյութենէ վերակոչին, զի ոչ գրնութիւնս յայտնեն, այլ անուն արական եւ իգական եւ չէզոքին, զի որք յանուանց սկզբունս ունին գով, որպէս ասելն ով այիովս ապաստօլօս ( ὁ ἅγιος ἀπόστολος ), որ լսի սուրբ առաքեալք՝ արական է, իսկ ասելն իա՝ իա օգոկօս (հաւանաբար՝ ἡ ὁσκὸς – գերան)՝ իգական է, իսկ տօ քսօլա (հաւանաբար՝ τὸ ξύλο(ν) – փայտ) չէզոք է, զի անուն որ ի սկիզբն տօ ունի չէզոք է. այսպէս եւ ի վախճանս անուանց յորում պատահին՝ զնոյն վախճանս ունին: Իսկ հռոմայեցւոյն եւս յատուկ, քանզի անուն պատահական է, որ ունիցի յանգի իւրում զուս՝ արական է, եւ որ ունի զայ՝ իգական, իսկ զում՝ չէզոք է, այսպէս՝ ալպուս, ալպայ, ալպում» («Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 178, ծան. 34):*

*Նկատենք, որ յունարէնին վերաբերող մասը նոյնպէս... բանաքաղութիւն է, այս անգամ, սակայն, Մագիստրոսից: Նչենք միայն, «իա օգոկօս» լեզուանմուշը բնագրային «իայէ Աւգուսկաւս» (յն. ἡ εὐδοκία ) րնթերցման աղաւաղումն է, հետեւաբար նրան չէր կարող համապատասխանել Լ. Խաչիկեանի առաջադրած « ἡ ὁσκὸς – գերան» բացատրութիւնը: Համեմատի՛ր. «...Քանզի այսոքիկ են արականք յունաց, որք ունին ի սկզբունս բանի ով, որպէս ասելն՝ ով այիովս ապաստաւլաւս (Ադոնցի տուած տողատակի բացատրութիւնը՝ « ὁ ἅγιος ἀπόστολος ), այսինքն սուրբ առաքեալ[ք] եւ է՛ արական: Իսկ ասելն ի այէ այէ աւգուսկաւս (Ադոնցի տուած տողատակի բացատրութիւնը՝ ἡ ἁγία εὐδοκία ), որ է անուն իգական եւ ոչք մի անգամ ի սկզբանն ունին ի, նոքա են իգականք: Իսկ որք ունին եւ սկզբունս տաւ քսաւլա (Ադոնցի տուած տողատակի բացատրութիւնը՝ τὸ ξύλον ) եւ ամենայն որ ի սկզբունն ունին տաւ, նոքա չէզոք են» (Ն. Ադոնց, նչուած աշխատ., էջ 238–39, տե՛ս նոյնը նաեւ մեր երկասիրութիւնը՝ «Ցովհաննէս Երզնկացի. Հաւաքումն Մեկնութեան Քերականի», էջ 196–97, նաեւ մեր միւս աշխատասիրութիւնը՝ «Եսայի Նչեցի. Վերլուծութիւն քերականութեան, Երեւան, 1966, էջ 105–106):*

*Միակ ինքնուրոյն միտքը, որ երգնկացի կրտսերի գրչին է պատկանում քննարկուող քաղուածքում, լատիներէնի մասին ասուածն է (տե՛ս մեր այս նոր աշխատասիրութիւնը՝ «Ցովհաննէս Մործորեցի. Համառաւտ տեսութիւն քերականի», էջ 198–99), որը մատնանչել է Դեռեւս Փրոֆ. Գ. Ջահուկեանը՝ գրելով. «...երգնկացին համառօտ մեկնութեան մէջ լատիներէնը իր սեփական ծանօթութեամբ. «Իսկ ի հռոմայեցւոյն եւս յատուկ, բէնր ներկայացնում է իր սեփական ծանօթութեամբ. «Իսկ ի հռոմայեցւոյն եւս յատուկ, քանզի յանուն պատահական, որ ունիցի յանգի իւրում զուս՝ արական է, եւ որ ունի զա՝ իգական է, իսկ զում՝ չէզոք. այսպէս ալպուս, ալպա, ալպում» («Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում», Երեւան, 1954, էջ 272):*

22 *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց, կազմեց՝ Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1969, հ. Դ, էջ 65:*

23 *Ի դէպ, Ց. Քիւրտեանը առաջին հայագէտն է, որ ծաւալուն մանրամասնութեամբ անդրադարձել է երկու համանուն երգնկացիների սահմանազատման եւ նրանց մատենագրական վաստակի որոշման բանասիրական արդիւնաւէտ ու ճիշդ ուղղութեամբ կատարուած աշխատանքներին:*

24 *Ց. Քիւրտեան, Երիզա եւ եկեղեց գաւառ, էջ 190–91:*



1306 *թուականին, ուսումնառական նպատակով Երզնկացի կրտսերը Ստեփանոս Սիւնեցի, Անդրէաս եւ Աթանաս եպիսկոպոսների հեղինակած Մեկնութիւնների մի ժողովածու է գրչագրում նուիրուած Ցովհաննէս Աւետարանիչին, Գլաձորի համալսարանի սանների համար՝ «ի վարժ կրթութեան երկասէր անձին բանասիրի», թողնելով միաժամանակ հետեւեալ բովանդակութեամբ յիշատակարանը, որը բերում ենք համառօտակի. «Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս եւ զիս՝ զտարժանեալ մեղսաներկ ոգիս՝ զնուաստ Ցոհ(աննէս) եզընկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափաք սորին, գրեցի իմով իսկ տխեղծ մատամբս ի մխիթարութիւն վչտացեալ հոգւոյ իմոյ, եւ ի վարժ կրթութեան երկասէր անձին բանասիրի...: Գրեցաւ ի թիւ (Հայոց) ՉՄԵ .(=1306), ի խաւնեւիճն մարտի ամսոյն»*[22]: *Տարաբախտաբար, բանասէր Ց. Քիւրտեանը*[23] *սոյն գրչագիրը իր յիշատակարանի հետ միասին սխալմամբ վերագրում է Ցովհաննէս Պլուզին...*[24]:

*Այս գրչագիրը Գէորգ երէցը ընդօրինակում է հէնց նոյն տարում, ըստ որում ի պատիւ երգնկացու գեղագրական վարպետութեան ու հեղինակութեան, միաժամանակ ներդիր ներկայացնում է երգնկացու տրամադրութեան տուեալ պահի ներչնչմամբ գրուած չափածոյ յիշատակարանը: Գրիչը մեծագոյն ղրուատանքով ու յարգանքով յիշատակագրում է ընդօրինակութեան հիմք ծառայած գրչագրի հեղինակին՝ Ցովհաննէս Երզնկացուն՝ հաւաստելով միաժամանակ. «Գիտութիւն լիցի աստուածարեալ եւ վսեմազարդ որեացդ՝ գեղեցկազան եւ քաղցրապտուղ սրբոյ Աւետարանիս Ցոհաննու Մեկնութեանս պատահողացդ, զի զայս գրոցս գլուսաւոր մեկնչիս օրինակն որ եդաք եւ գրեցաք զսա էր գրեալ Ցոհաննու վարդապետին Եզընկայեցւոյն ՉՄԵ (=1306) թվին, զոր եդաք գաղափար եւ փոխարկեցաք: Վասնորոյ սակս յիշատակելոյ նորին Ցոհաննու վարդապետին եդաք զգրեալ*

յիշատակարան ընդին գոտանաւորն, որպէսզի յիշեսցի եւ նա եւս ընդ մեծին Նաճայի բազմաշխատ ճգնաւորի եւ ուղղափառ վարդապետի ասորոց, սորին մեկնչի»[25]:

*Ահա այս չափածոյ Ցիշատակարանում կայ նաեւ ինքնակենսագրական մի փաստ, որ վերաբերելով Գլաձորի համալսարանի ուսումնառութեան ընդհանուր բնութագրին ու գնահատականին, կարեւորւում է առաւել քան երբեք.*

*«...Զի յայս տեղիս յորում էի*
*էր դպրութիւն հրաշալի.*
*Եւ ես կարօտ յայսմ տառի,*
*Զի յիւր տեղին սա հասանի,*
*Շտապեցայ յաւէտ կարի,*
*Բայց իւր տեղոյն ոչ հասուցի»...*[26]:

*Նորաւարտ համալսարանականի ուսումնառութեան չունչը այստեղ, ինչպէս նկատելի է, դեռեւս թարմ է. հետեւաբար այս առումով եւս բացառւում է նրա հեղինակի վերագրումը համանուն աւագ մատենագիր երզնկացուն՝ Պլուզին, որը առաւել քան մէկ տասնամեակ առաջ արդէն իսկ հրաժեշտ էր տուել կեանքին: Ինչպէս յայտնի է՝ սխալը նաեւ ա'յլ սխալ է բերում իր հետ. Ց. Քիւրտեանը, մի անգամ կարծելով, թէ գրչագրի «հեղինակը» Պլուզն է, բնականաբար՝ «դպրութիւն հրաշալի» փառաբանուած ուսումնագիտական կենտրոնն էլ «սազական» է համարում ընդունել Սեպուհ լեռան կողմերում գտնուող մենարանները, ուր եւ իր մասնակի կրթութիւնն էր ձեռք բերել Ցովհաննէս Երզնկացի Պլուզը. «Լաւ կը պատշաճի Սեպուհի մենարաններուն այն ատենուան վիճակին (իմա՝ «զի յայս տեղիքս յորում էի, էր դպրութիւն հրաշալի» խօսքերը – Լ. Խ.), ուր բազմաթիւ րաբունիք, մենակեացներ, գրիչներ, վարդապետներ գրեթէ «ոսկեդարեան» գործունէութեան մը մէջ էին»[27]: Բայց չէ՛ որ, եթէ «պատշաճութեամբ» առաջնորդուելու լինենք, ապա հազիւ թէ նշուած ժամանակաշրջանում հայ իրականութեան մէջ առաւել «հրաշալի դպրութիւն» ունեցող ուսումնագիտական կենտրոն լիներ, քան Գլաձորի համալսարանը, որը եւ Ցիշատակարանի հեղինակի կենսագրական փաստով էլ անհերքելի է:*

*Նոյն չափածոյ Ցիշատակարանում, ինքնաբուխ խոստովանութեամբ ակնարկւում է, թէ ինչքան գրասէր եւ ընթերցասէր ուսումնական է եղել ինքը՝ Ցովհաննէս Երզնկացի կրտսերը.*

*«...Ես՝ Ցով(հաննէս) աղքատ ոգի,*
*Տառապանօք թանձրագունի,*
*կարօտութեամբ անպատմելի,*
*Այլ աղաչեմ զրաբունքդ բարի,*
*Ցիշման առնէք զիս արժանի:*
*Սակայն փափաք յոյժ տեսչալի,*
*Եւ ախորժանք անքըննելի*
*Զիս յորդորեաց յայս գործ իրի՝*
*Առ ի չարել զսա ի քարտի...»*[28]:

25 *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց*, հ. Դ, էջ 65:
26 *Անդ*:
27 Ց. Քիւրտեան, *Երիգա եւ եկեղեաց գաւառ*, էջ 191:
28 *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց*, հ. Դ, էջ 65:



*Ցետագայում անյայտ մի յիշատակագիր, որը, սակայն, անձամբ աշակերտել է Ծործորի ուսումնագիտական կենտրոնում արդէն «րաբունապետ» դարձած Ցովհաննէս Երզնկացուն, «համապարփակ» գիտութեամբ հարստացած է համարում իր ուսուցչապետին նաեւ այն պատճառով, որ վերջինիս ուսումնառութիւնը իրացուել է, հասկանալի է, Գլաձորի համալսարանում՝ «ի ձեռն վարժից կրթութեան», որոնք իրօք հռչակուած էին գիտական մեծ հեղինակութեամբ. «Քանզի թէպէտ մասն էր ինքն (իմա՝ Երզնկացի կրտսերը – Լ. Խ.) բոլորին, սակայն զհաւուրցն եւ զմասանցն ստացաւ գիտութիւն, ի ձեռն վարժից կրթութեան, եւ բնական չնորհացն աջողութեան. նաեւ առաքինի եւ հեզ վարուց պարկեշտութեան»*[29]:

*Անտարակոյս, Ցովհաննէս Երզնկացուն նկատի ունի եսայի Նչեցին, երբ նրան բնութագրում է իբրեւ «աշխատասէր» եւ «առատամիտ» ուսումնականի, որը նաեւ «սրբագրիչի» հանգամանքով է հանդէս եկել Նչեցու իսկ հեղինակած «Մեկնութիւն եզեկիէլի» աշխատութեան առնչութեամբ. «Նաեւ զաշխատասէր եւ զառատամիտ վարդապետն Ցոհաննէս, զծնեալ որդեակն իմ ի Քրիստոս,– գրում է Նչեցին իր աշխատութեան «Վերջաբանութեան» մէջ,– ի ձեռն որոյ սրբագրութիւն տառիս եղեւ, յիշեցէք բարի կամօք, զի ըստ աշխատանացն եւ զհատուցումն ընկալցի ի տեառնէ...»*[30]: *Իսկ ձեռագրական սրբագրութիւնների աշխատանքը, ինչպէս ակնարկ է գլաձորեան գրչագրերի քննութիւնից, յանձնարարւում էր Գլաձորի համալսարանում ամենահմուտ աղբիւրագէտներին ու բանասէրներին, որոնք մեծ վստահութիւն պէտք է ներշնչէին իրենց անտարակուսելի գիտելիքներով ու բնագրագիտական խորաքնին համութեամբ: Ուշագրաւ է եւ այն փաստի արձանագրումը Գլաձորի համալսարանի դպրապետի իսկ հաւաստմամբ, որ Երզնկացին ոչ թէ Գէորգ Լամբրոնացուց կամ որեւէ մի այլ ուսուցչապետից է «վարդապետ օծուել», այլ հէնց իր՝ րաբունապետ եսայի Նչեցուց, քանի որ վերջինս նրան աներկբայօրէն համարում է «զծնեալ որդեակն իմ...»*[31]:

29 *Անդ*, հ. Դ, էջ 5:
30 *Մաշտոցի անուան Մատենադարան*, ձեռ. 1276, թ. 320բ:
31 Ց. Քիւրտեանը ուշադրութիւն չի դարձրել յիշատակագրութիւններում հանդիպող «զծնեալ որդեակն իմ» ձեւակերպման վրայ, որը համարժէք է «սանի» կամ «աշակերտի»՝ հոգեւոր

Բազմավաստակ հայագէտ Ղ. Ալիշանը անչուշտ սխալւում է, երբ Յովհաննէս Երզնկացի կրտսերին, չփոթելով իր համանուն աւագ մատենագրի հետ, կա՛մ հասակակից է դարձնում Գլաձորի համալսարանի դպրապետ Եսայի Նչեցուն, կա՛մ էլ նրանից... ծեր: Այս առնչութեամբ նա գրում է. «Տարիքով եթէ (Եսայի Նչեցին – Լ. Խ.) պզտիկ այլ չէր, այլ գոնէ հասակակից պիտի ըլլար մեր Երզնկացւոյն. բայց գուցէ անկէ առաջ վարդապետական պատուոյ հասած էր, եւ այն անուանի վարժարանին գլխաւոր ըլլալով՝ թուի թէ Երզնկացին խոնարհաբար իրեն այլ վարդապետ կամ գոնէ ուսմանց բարգաւաճող կը ցըցընէ զնա մեծարանօք»[32]:

Վերը արդէն նշուած Յիշատակարանում, որում Երզնկացին իրրեւ «րաբունապետ» համարուելով՝ «զհայրն մեր հոգեւոր» է վկայւում, մեծ դրուատանքով է բնութագրւում նրա իմացութիւնների «համապարփակութիւնը»: Թէեւ ակնբախ է մեծարման չափազանցութիւնը՝ երախտագիտական իր զեղումով, այնուամենայնիւ փաստը մնում է փաստ, որ Երզնկացին իր ժամանակի մակարդակով գիտական-իմացական դժուարանուաճ բարձունքներում էր գտնւում: Յիշատակագիրը իր խորին համոզմունքն է յայտնում՝ ասելով, որ եթէ հայ դպրութեան պատմութեան երկնակամարում այս կամ այն ուսումնականը փայլատակել է իր մէկ կամ միւս չնորհքի ճառագութով, ապա Յովհաննէս Երզնկացին ճառագել է իմացական ժայթքումի «համապարփակ» դրսեւորմամբ...: Որքան էլ մեզմ ժպիտ կարող է առթել ժամանակակից ընթերցողին պատկերաւոր այս համեմատութիւնը՝ ներքողական զեղումի յորդումով, բերե՛նք յիշատակագրի այդ տողերը, որոնք, այնուամենայնիւ, ժամանակի «մտաւորականութեան» վերաբերմունքի ու գնահատականի կոնկրետ արտայայտութիւնն են անչուշտ. «...Զի թէպէտ եղեալ ոմանք համբաւեալ հռչակին ի խումբս աստուածեղէն տարից, սակայն ոմն այսու եւ ոմն այնու չնորհացն պայծառութեամբ յարգին ըստ Առաքելոյ, եւ ըստ այնմ, եւ զգովութեանն տարան մրցանակ, եւ կամ տա՛ նին: Իսկ նա (իմա՝ րաբունապետ Յովհան Երզնկացին – Լ. Խ.) զրովանդակն ընկալաւ իմաստ, եւ բոլորին եղեւ ընդունակ հանճարոյ»[33]: Մասնաւորելով

վարդանի աշակերտն էր, մկր մեր բազմաչխատ մատենագիրներից եւ ընտիր գրիչներից: ...Բազմաթիւ են նորա աշխատութիւնները գիտական, մատենագրական, բանաստեղծական եւ թարգմանական ասպարիզում: Նա եղել է իր ժամանակի բոլոր հոգեւոր կեդրոններում՝ Տփխիսից սկսած մինչեւ Հռոմկլայի հայրապետանոցը եւ Կիլիկիայի արքունիքը, ամէն տեղ վայելելով իր ընդունակութիւններին համապատասխան պատիւ եւ յարգանք: Այս գլխի մէջ յաճախ առիթ կ'ունենանք յիշելու նորա անունը, որչափ կապուած է Գլաձորի հետ»: (Տե՛ս «Հայրակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ», Երուսաղէմ, 1942, մասն Բ, էջ 15, ծան. 1): Նկատառումը, ինչպէս տեսնում ենք, վերաբերում է բացառապէս Յովհաննէս կրտսերին, քանի որ Յովհաննէս Երզնկացի աւագը բնաւ չի եղել Գլաձորի համալսարանում, հետեւաբար եւ չի ունեցել որեւէ առնչութիւն ուսումնագիտական այդ բարձրագոյն կաճառի հետ:

32 Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Բ, տպ. 2-րդ, Վենետիկ, 1921, էջ 421:

33 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Դ, էջ 5:



իր խօսքը Երզնկացու բանասիրական հմտութեան եւ գրչութեան արուեստում ունեցած բացառիկ կարողութեան ու ձիրքի նկատմամբ, յիշատակագիրը վկայում է միաժամանակ. «Եթէ ըստ մտացն տեսողութեան եւ ծննդական գոլոյն ի գիւտս հնարից դարձուածոց բանից արագ էր բան զամենեսեան»[34]:

Հայ գրչութեան արուեստի պատմութեան ներհուն հետազօտող Գար. Յովսէփեանը, քննելով վերը մեր յիշատակած՝ Եսայի Նչեցու պատուէրով, Կիրակոս եւ Յովհաննէս Երզնկացիների գրչութեամբ ու Թորոս Տարօնացու մանրանկարչութեամբ չքեղօրէն զարդարուած Աստուածաչունչը՝ համարում է այն «Գլաձորի դպրոցի գրչութեան գլուխգործոցը»[35], ընդ որում յանգում նաեւ այն հետեւութեանը, որ Յովհաննէս Երզնկացի կրտսերը «սխանչելի գեղագիր էր միեւնոյն ժամանակ»[36]:

Իսկ ճարտասանութեան արուեստում այնքան առինքնող հռետոր է եղել մեր այս մատենագիրը, որ մինչեւ անգամ փնտռուել է ամբիոններում իրրեւ «բաղձալի» բեմբասացի. «...եւ թէ ըստ առաս եւ յորդարուղխ բանին բղխողութեան, եւ համեղ եւ ախորժ ի շահ օգտութեան ի լուր լսողաց՝ ամենեցուն էր սա բաղձալի»[37]:

Բացի վերը ուրուագծուած գրչագրական եւ ուսումնագիտական-մանկավարժական աշխատանքներից, Գլաձորի համալսարանում Յովհաննէս Երզնկացու ուրիշ պաշտօններ գրաւելու մասին վկայութիւններ չեն հասել մեզ[38]:

Հարկ է արձանագրել, իրրեւ ամփոփում մինչեւ այժմ ասուածի, որ Երզնկացու կենսագրութեան մէջ Գլաձորի համալսարանում գտնուելու ժամանակաշրջանը բնութագրւում է գերազանցապէս գրչութեան արուեստում թողած իր վաստակով եւ, մասնաւորապէս, գիտա-մանկավարժական բեղմնաւոր գործունէութեամբ: Իսկ մատենագրական երկերի յղացումը եւ թարգմանչական ու դաւանաբանական-հասարակական գործունէութեան ծաւալումը առաւելապէս վերաբերում են նրա կենսագրութեան ծորձորեան ժամանակաշրջանին, որը նրա ստեղծագործական հրայրքի երկրորդ կարեւորագոյն շրջանն է: Հէնց նրա դպրապետութեան օրօք էլ ծաղկում է, ապրում ու հռչակ ձեռք բերում Ծորձորի ուսումնագիտական կենտրոնը:

Նկատառման է արժանի այս առթիւ այն պարագան, որ ձեռագրական աղբիւրները Յովհաննէս Երզնկացի կրտսերի Գլաձորի համալսարանում գտնուելու եւ գիտա-մանկավարժական գործունէութիւն ծաւալելու մասին հասնում են մինչեւ ԺԴ դարի առաջին տասնամեակը, աւելի ստոյգ՝ մինչեւ 1309 թուականը: Այդ ժամանակուանից մինչեւ 1314 թուականը, չուրջ հինգ տարի յիշատակագրութիւնները յամառօրէն լռում են նրա մասին: Ինչո՞վ բացատրել այս ընդհատումը, որը փոքր ժամանակամիջոց չէ ուսումնագիտական հաստուն արդէն ապրած դասասաց գիտնականի

34 Անդ:

35 Գար. Յովսէփեան, Հայրակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, մասն Բ, էջ 225:

36 Անդ, էջ 226:

37 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Դ, էջ 5:

38 Ի դէպ, Լ. Խաչիկեանը վաւերական ոչ մի հիմք չունի, երբ յայտարարում է աներկմիտարար. Յովհաննէս Երզնկացին «վարդապետական գաւազան է ստացել 1302-1303 թթ. ու դարձել նշանաւոր ուսումնական այդ հաստատութեան ուսուցիչ, Եսայի րաբունապետի օգնական» (Հանդէս Մատենադարանի, No. 11, էջ 176, ընդգծումը մերն է – Լ. Խ.):

համար, օժտուած՝ միջնադարի մշակութային գործչի բազմակողմանիութեամբ. թէկուզեւ մի ձեռագիր կ'ընդօրինակէր գրչութեան արուեստում ձեռք բերած իր հմտութիւնը հաւաստելով, կամ յանձնարարութիւններ տուած կը լինէր իր սաներին գրչագրեր ընդօրինակելու եւ բազմացնելու համար ուսումնագիտական նպատակներով, որ այնքան սուր զգացւում էր դրանց կարիքը Գլաձորի բազմանդամ աշակերտութեան համար, եւ կամ որեւէ ձեւով արտայայտուած երախտագիտական յիշեցում կը լինէր իր մասին չնորհապարտ սաների կողմից՝ ի հատուցումն իրենց «մտաւոր» եւ «հոգեւոր» աճի, որ ընդհանրացած եւ աւանդոյթային սովորութիւն էր միջնադարի հայ դպրութեան կենտրոններում, առաւել եւս Գլաձորի համալսարանում, եթէ, իհարկէ, Յովհաննէս Երզնկացին շարունակում էր գործել եւ դասաւանդել ուսումնագիտական այդ կաճառում: *Բայցեւ միաժամանակ ձեռագրական աղբիւրների լուսաբանութիւնը անուղղակի ինչ-որ բան նշանակում է, մանաւանդ որ* 1314 *թուականից սկսած ձեռագրերը դարձեալ արձագանգում են Յովհաննէս Երզնկացու կրթական-մշակութային-մատենագրական-թարգմանչական-հասարակական համապարփակ գործունէութեանը, այս անգամ, սակայն, համբաւաւոր ուսուցչապետի, վաստակաշատ գիտնականի եւ Մործորի ուսումնագիտական կենտրոնը գլխաւորողի պատկառելի հանգամանքով, ընդ որում զուգադրաբար արդէն նոր յորջորջմամբ՝ իբրեւ* Յովհաննէս Մործորեցի:

*Իրադրութեան տրամաբանութիւնը, յարակից հանգամանքների հաշուառմամբ, յուշում է, որ Երզնկացու տեղափոխումը եւ Մործորի ուսումնագիտական կենտրոնի ղեկավարութեան ստանձնումը պէտք է զուգադիպէր* 1310–11 *թուականներին, եւ ո՛չ՝ աւելի ուշ կամ աւելի վաղ: Իսկ այնուհետեւ նշմարուող* 3–4 *տարիների լռութիւնը միանգամայն հասկանալի է ու բնական, քանի որ այդ ժամանակամիջոցը խիստ անհրաժեշտ էր ուսումնակազմակերպչական աշխատանքների համար:*

*Իհարկէ, ձեռագրական աղբիւրների հետ փաստական հակասութեան մէջ է Ղ. Ալիշանի յայտարարութիւնն այն մասին, որ «Յովհաննէս ԺԳ դարուն վերջերը գնաց Հայաստանի Արտազ գաւառը, ուր Ս. Թադէոս առաքեալ Մործոր գեղին մօտ վանք մը չիներ էր Աստուածածնի անուամբ»*[39]*: Մինչդեռ իրականում, ինչպէս վերը ցոյց տրուեց յիշատակարանային հաստումներով, դեռ մինչեւ* 1309 *թուականը վկայութիւններ կան ուղղակի թէ անուղղակի ակնարկումներով՝ Գլաձորի համալսարանում երզնկացու գտնուելու մասին:*

*Կարծում ենք՝ նաեւ Մ. Զամչեանցի պնդումն այն մասին, որ Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսը դեռեւս* 1305 *թուականին պաշտօնական հրաւէր նամակներ է յղել «առ երեւելի եպիսկոպոսունս Արեւելեայց», այդ թւում եւ Յովհաննէս Մործորեցուն, ժամանակագրական վրիպում է, թէեւ Պատմութեան լուսանցքում մատնանշում է իր այդ յայտարարութեան աղբիւրագիտական հիմքերը: Բանն այն է, որ այդ թուականին, երբ հազիւ* 21–22 *տարեկան երիտասարդ լինէր Յովհաննէս երզնկացին, բնականաբար դեռեւս «մեծ վարդապետ» չէր ճանաչւում, ոչ է լ, մանաւանդ, «Մործորեցի» յորջորջւում երկրորդաբար. «...Գրեաց ապա առ Զաքարիա Մործորեցի՝ որ էր արքեպիսկոպոս Արտազու եւ առաջնորդ ուխտին Թադէոսի առաքելոյ, եւս եւ առ մեծ վարդապետին Յոհան Մործորեցի՝ այն է երզնկացի, որ յայնժամ*

39 Ղ. Ալիշան, *Ցուցիկ հայրենեաց հայոց*, հ. Բ, էջ 423:



բնակէր ի վիճակին Զաճարեայ ի վանս Մործորու: *Սոյնպէս գրեաց եւ... մանաւանդ ապա առ եսայի վարդապետ Նչեցի՝ որ էր դասատուց վարժապետ Արեւելեայց ի կողմանս Երեւանայ, եւ նստէր ի Գայլեձոր»*[40]: *Բայց այս պնդման ճշմարտացիութիւնը աւելի հաւանական է թերեւս ԺԴ դարի առաջին տասնամեակից յետոյ ընկած ժամանակի վերաբերմամբ:*

*Երբ կաթողիկոսի բացատրական-նամակները հասան Արեւելք, ասում է Զամչեանցը, Զաքարիա Մործորեցին եւ Յովհաննէս Օրբելեանը մի քանի վարդապետների հետ միասին (բացառուած չէ, որ նրանցում լինէր նաեւ Յովհաննէս Երզնկացին որպէս Զաքարիա Մործորեցու ամենամտերիմ եւ համախոհ վարդապետը) գտնուում էին Թաւրիզում, ուր եւ քննարկել են կաթողիկոսի առաջարկները: Համաձայնութեան եկան, որ Յովհաննէս Օրբելեանը, խորհրդականների լիազօրութեամբ ու նրանց անունից պատասխան գրի կաթողիկոսին՝ դիւանագիտական նրբամտութեամբ չեչտելով այն միտքը, որ իբր թէ՝ «զոր խնդրեսդ՝ մենք կամիմք, այլ չկարեմք բնաւին հաւանեցուցանել ազգին. եւ թէ բուռն առնեմք, մեծամեծ աղմուկք ծագին»*[41]*:*

*Բայց Զաքարիա Մործորեցի եպիսկոպոսը երկդիմի վարքագիծ է դրսեւորում, մի կողմից՝ հաւանութիւն տալով ընդունուած որոշմանը, միւս կողմից՝ կաթողիկոսի առաջարկութիւններն սկսում է գործադրել Արեւելեան Հայաստանում առաւել ջերմեռանդութեամբ ու յախուռնութեամբ, քան նոյնիսկ կաթողիկոսն էր սպասում, «յորմէ անկաւ չփոթութիւն յԱրեւելս»: Այս կապակցութեամբ, ահա, կշտամբական նամակագրութիւնների փոխադարձ առաքում է տեղի ունենում Յովհաննէս Օրբէլեանի եւ Զաքարիա եպիսկ. Մործորեցու միջեւ: Երկուստեք փոխանակած նամակների մէջբերումներից առաւել քան ընդգծւում է այդ իրադարձութիւնների ու միջադէպերի նկարագրութեան պատմական հաւաստիութիւնը, բայց տարակուսանքը վերաբերում է այդ դէպքերի կատարման ժամանակի վերագրմանը Սիսի ժողովին:*

*Զամչեանցի այդ չարադրանքից օգտուելով համարեա նոյնութեամբ կրկնում են այն յետագայում Զարբհանալեանը, Ալիշանը եւ ուրիշներ՝ աւելացնելով հիմնական պատումին միայն առանձին երանգներ:*

*Այսպէս, Զարբհանալեանի մօտ կարդում ենք. «Պատմութենէ գիտենք թէ Կիլիկիոյ հայոց թագաւորներն ուզեցին միաբանութիւն ընել լատին եկեղեցւոյ հետ. եւ այս վախճանաւ Գրիգոր Անաւարզեցի ժողով մը գումարեց ի Սիս, եւ հոն հրաւիրեց ուրիշ զանազան վարդապետաց հետ նաեւ Զաքարիա եւ զերզնկացին. բայց երբոր չգումարուած կաթուղիկոսին կենաց վախճանը հասաւ, ասոնք ժողովքի չգնացին: Անաւարզեցւոյն յաջորդեց Կոստանդին, ու իր նախորդին հրաւէրքը կրկնեց. բայց Երզնկացին չուզեց տեղէն չարժիլ. վասն զի տեսաւ որ Ստեփանոս Ուռպելեան կը հակառակէր այն խնդրոց՝ որոնց համար պիտի ըլլար ժողովոյն գումարումը ու թէ կաթուղիկոսին եւ թէ Զաքարիային իմացուցած էր իւր միտքը: Զաքարիա չատ ջանաց զինքը համոզել. բայց երբոր անկարելի եղաւ, լաւ համարեցաւ որ հեռուանց յայտնեն իրենց կաթողիկոսին հետ համաձայնութիւնը, եւ փուճ տեղը ազգային երկպառակութեանց յառաջելու պատճառ չըլլան»*[42]*: Ընդ-*

40 Մ. Զամչեանց, *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ, 1786, էջ 304–305:

41 *Անդ*, էջ 405:

42 Գ. Զարպհանալեան, *Հայկական դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դարեր)*, Վենետիկ, 1886, *տպ.* Բ; էջ 736–37:

գծուած տողերից ակնբախ է, որ Զարբհանալեանը աւելի չուտ իր կարծիքն է փաթաթել Երզնկացուն, քան եղել է իրական փաստը: Աւելին. չատ հնարաւոր է, որ ճշմարտութեան նշոյլ լինի ասուածի մէջ, սակայն դա կարող է վերաբերել ո՛չ թէ հէնց Սիսի ժողովին, ա՛յլ՝ աւելի յետագայ ժամանակներին եւ Ադանայի ժողովին մերձ իրադարձութիւններին:

Ղ. Ալիշանը, Զամչեանցի եւ Զարբհանալեանի պատումների համադրմամբ վերաշարադրում է վերոբերեալ մոմենտները՝ առանց հիմնաւորումների կամ նոր փաստ աւելացնելու արդէն իսկ յայտնի վերագրումներին. բայց Երզնկացու եւ Զաքարիա Ծործորեցու Սիսի ժողովին չմասնակցելու հանգամանքների բացատրութիւնը ներկայացնելիս, Ալիշանը ա՛յլ շարժառիթներ է մատնանշում, որոնք, սակայն, աւելի չուտ սեփական դատումների բնոյթ ունեն, քան փաստական իրողութիւնների. «...Ցովհաննէս խոհեմութեան ճամբայ սեպեց չերթալը (իմա՝ Սիսի ժողովին – Լ.Խ.). ինչու որ Սիւնեաց արքեպիսկոպոսն Ուռպէլեան Ցովհաննէս որ միանգամայն գրեթէ իշխան էր իր երկրին եւ մեծ ազդեցութիւն ունէր չրջակայ կողմերուն, կաթողիկոսին մտացը հաւանեալ չէր, ինչպէս գրով ալ իմացուց իր միտքը թէ՛ կաթողիկոսին եւ թէ՛ Զաքարիայի: Զաքարիա պատասխան գրեց չատ իմաստութեամբ եւ զգուշութեամբ, համաձայն կաթողիկոսին մտացը. ասոր համար Ուռպելեան դժարեցաւ: Արդ որպէսզի այս դժարութիւնը աւելի չզայրանայ եւ ժողովրդեան խաղաղութիւնն ալ չխռովի՝ Զաքարիա եւ Երզնկացին միջին եւ զգուշաւոր ճամբայ սեպեցին՝ թղթով միաբանիլ կաթուղիկոսին հետ, անձամբ չշարժիլ տեղերնէն, որ Ուռպելեանը չգրգռեն»[43]:

Մ. Օրմանեանը, իր հերթին, նոյնպէս ժամանակավրէպ պնդում է անում՝ յայտարարելով, որ իբր «1307» թուականին՝ «Սսի ժողովի ատեն», Ցովհաննէս Երզնկացին արդէն իսկ Ծործորի ուսումնագիտական կենտրոնն էր գլխաւորում, «բայց ոչ Զաքարիա եւ ոչ Ցովհաննէս չեն ուզած Սիս գալ, որչափ ալ Զաքարիա համակիր մըն էր Անաւարզեցիի ծրագիրին, եւ Ցովհաննէս ալ հետամուտ էր Արեւմուտքէ եկող ուսումնական առաւելութեանց ծանօթանալ, եւ անոնցմով զարգանալ...»[44]: Բաղձալի կը լինէր անշուշտ, եթէ այս պնդումը եւս դոյդն չափով հաւաստուէր վաւերական որեւէ աղբիւրով եւ չսահմանափակուէր լոկ դատողութեան ոլորտում: Բացի դրանից, Օրմանեանն էլ համանուն Երզնկացիներին միմեանց հետ չփոթելով՝ իբրեւ մէկ անձնաւորութիւն է ճանաչում, որով առաւել եւս արժէքազրկւում է նրա պնդման հաւաստիութիւնը: Էլ չենք խօսում նաեւ այն մասին, որ Սսի ժողովի օրակարգը, դաւանաբանական զիջումների բնոյթ կրելով, ոչ մի անմիջական աղերս չուներ «արեւմուտքից եկող մշակոյթի հետ ծանօթանալու» խնդիրների հետ:

Ժամանակագրական նման անյարիրութիւններ, պէտք ասել, անխուսափելի են բոլոր այն դէպքերում, երբ ձեռագրական փաստերի ովկիանոսում դեռեւս համադրուած քննութիւն չի կատարուել այս կամ այն կոնկրետ հարցի կապակցութեամբ:

Երզնկացու՝ Ծործորի վանք տեղափոխուելու մօտաւոր տարեթիւը ճշգրտելուն մասամբ կ'օգնի անշուշտ մշակութային-հոգեւոր այս նոր վայրում նրա ընդօրինակած, մեկնաբանած, թարգմանած եւ հեղինակած

43 Ղ. Ալիշան, *Ցուշիկք հայրենեաց հայոց*, հ. Բ, էջ 424:
44 Մ. Օրմանեան, *Ազգապատում*, Կոստանդնուպոլիս, 1914, հ. Բ, էջ 1798:



գրչագրերի եւ նրանցում պարփակուած ձիչատակարանների քննութիւնը՝ դրանց ստեղծման տարեթուերի որոշմամբ: Խնդրի լուծման համար չատ կարեւոր է պարզել Ծործորեան չրջանի մանաւա՛նդ այն առաջին ձիչատակարանները, որոնք միայն «փրկչական» թուականներով են արտայայտուած եւ զուգադրաբար չունեն Հայոց մեծ թուականը, որով առհասարակ որոշւում են նաեւ «փրկչականների» բնոյթը՝ «ըստ հայոց հաշուի՞» են, թէ՞ ըստ Հռոմէականի, կամ՝ ժամանակի արտայայտութեամբ՝ «ըստ Ֆռանգա՞ց»[45]: Եւ եթէ նկատի ունենանք եւ այն անհերքելի իրողութիւնը, որ Ցովհաննէս Երզնկացին Ծործորեան չրջանում կիրառել է «փրկչականի» թէ՛ հայկականը եւ թէ՛ հռոմէականը, ապա առաջին հայեացքից հարցի լուծման բարդութիւնը միանգամայն ակներեւ կը դառնայ:

Այսպէս, առաջին ձեռագիրը, որում յիչատակագրային կարգով Ցովհաննէս Երզնկացին իրեն անուանում է նաեւ որպէս «Ծործորեցի», «փրկչական» 1316 թուականից է. «Եւ զվերջացեալս բարեաց գործոց՝ զտարտամ գրիչս՝ զՑոհան, ծանօթ բանի եւ տեղեաւ Եզնկացի, իսկ այժմ Ծործորեցի, աղաչեմ չմոռանալ ի բարիս զիս եւ զիմսն ամենայն: Ի թուականիս Փրկչին ՌՑԺԶ»[46] (=1316): Սոյն յիչատակարանը, սակայն, Լ. Խաչիկեանը տեղադրել է 1314 թուականի ձիչատակարանների չարքում՝ տալով հետեւեալ ծանօթագրութիւնը. «Ձիչատակարանի գրութեան իրական տարեթիւը, ըստ երեւոյթին, պէտք է համարել ոչ թէ 1316, այլ 1314 թուականը, որովհետեւ «փրկչական» 1316-ին համապատասխանում է հայկական ՉԿԳ (=1314) թուականը»[47]: Բայց նման հիմնաւորում առաջադրելու ժամանակ ձիչատակարանների բանասէր-հրատարակիչը պէտք է իր եւ ընթերցողի համար պարզէր, թէ ո՞ր «փրկչականի» մասին է խօսքը, «ըստ հայոց հաշուի՞» փրկչականի, թէ՞ «ըստ Ֆռանգաց»: Եթէ յայտնի լինէր, որ Երզնկացին Ծործորեան չրջանում միայն ու բացառապէս «ըստ հայոց հաշուի» փրկչական թուականներ է կիրառել, ապա Խաչիկեանը միանգամայն իրաւացի կը լինէր իր հաշուարկում: Բայց կասկածներն ու տարակուսանքները անյաղթահարելի են մնում, երբ համադրում ենք Երզնկացու հէնց նոյն եւ մերձաւոր տարիներին օգտագործած «փրկչականները», որոնք բարեբախտաբար արտայայտուած են նաեւ զուգադիր Հայոց մեծ թուականով: Պարզւում է, որ Հայոց մեծ թուականի եւ «փրկչականի» միջեւ տարբերութիւնը ոչ թէ 553 տարի է,

45 Տարբեր «փրկչական» տոմարների առակայութիւնը հայ մատենագրութեան մէջ չատ լաւ ըմբռնել են մեր քաջահմուտ մատենագիրները դեռեւս միջնադարում, նոյնիսկ յատուկ յիշեցում անելով այդ մասին համբակ ընթերցողներին: Այս առնչութեամբ հէնց ԺԴ դարի Ցիչեցում անելով այդ մասին համբակ ընթերցողներին: Այս առնչութեամբ հէնց ԺԴ դարի Ցիչատակարանների հատորում առկայ վկայութիւններից մէկում ասուած է. «...Գրեցաւ յիչատակարանս ի թուարերութիւնն ի ծննդենէն Քրիստոսի ըստ հայոց հաշուի ՌՑՂ (=1390), եւ ըստ Յունաց՝ ՌՑՂԶ (=1396), եւ ըստ Ֆռանկաց ՌՑՁԸ (=1388), եւ ըստ Ասորոց՝ ՌՑՀԺԱ (=1381)»: («ԺԴ դարի յիչատակարաններ», էջ 575): Նչանակում է՝ միջնադարի տոմարագիտական ըմբռնման համաձայն, եղել են ոչ թէ մէկ, այլ մի չարք «փրկչականներ», հետեւաբար Հայոց մեծ թուականը, իր հերթին, տարբեր «փրկչականների» նկատմամբ թուային տարբեր համապատասխանութիւններ է դրսեւորել, ընդ որում հայերէն յիչատակարանների «փրկչական» էլ, ինչպէս ձեռագրական փաստերն են վկայում, եղել է կամ «ըստ հայոց հաշուի» (որը երկու տարով աւելի է «արդեան», այն է՝ Ցուլեան («ըստ Ֆռանգաց») տոմարից, ուստիեւ այն պէտք է իջեցնել երկու տարով Ցուլեան տոմարին համապատասխանեցնելու համար. համեմատի՛ր բերուած քաղուածքի «ըստ հայոց հաշուի» 1390-ը «ըստ Ֆռանգաց»-ի 1388-ի հետ) կամ էլ Ցուլեան տոմարի:

46 ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիչատակարաններ, էջ 111:
47 Անդ:

որը օրինաչափական է փրկչականը «ըստ հայոց հաշուի» լինելու պարագային, այլ՝ 551 տարի, որը օրինաչափական է «ըստ Ֆռանգաց» փրկչականի կամ Ցուլեան տոմարի դէպքում: Հետեւաբար՝ Ցովհաննէս Երզնկացու նշուած տարիներին օգտագործած փրկչական թուականները իր յիշատակարաններում աներկբայօրէն հռոմէական «փրկչական» են, եւ ո՛չ՝ «ըստ հայոց հաշուի» փրկչական:

*Այժմ դիմե՛նք փաստերին. Եսայի Նչեցու պատուիրած Աստուածաշունչը յիշատակագրելիս, Ցովհաննէս Երզնկացին թուականը նշում է, բարեբախտաբար, թէ՛ «փրկչականով» եւ թէ՛ Հայոց մեծ թուականով, ընդսմին առաջին իսկ թուղթիկ հայեացքից միանգամայն ակներեւ է, որ նրա «փրկչականը» տուեալ դէպքում բացառապէս ըստ հռոմէական փրկչականի կամ Ցուլեան տոմարի է, եւ ո՛չ ըստ «հայոց հաշուի» փրկչականի, հետեւաբարեւ այն երկու տարով պակասեցնելու անհրաժեշտութիւն բնաւ չկայ՝ արդեան թուագրութեան յանգելու համար: Համեմատի՛ր. «Ընդ եւ մեզ լիցի մասն անարժանի անճինս, սակաւ ինչ վաստակողի ի բանս սրբոյս, նուաստ Ցոհաննիսի եզնկացւոյ, որ եւ Մործորեցի կոչեցելոյ...: Եղեւ աշխատութիւնս մեր... ի թուիս Հայոց ՉԿԸ (765+551=1316) եւ ի մարդեղութենէ ամաց Ցի. Քի. ՌՑԺԶ ((=1316) ամին գրեալ եւ յղկեալ ըստ չափոյ տարազու մտաց մերոց...»*[48]: *Տոմարական նոյն հաշուումն է կատարել Ցովհաննէս Երզնկացին «Մեկնութիւն Դանիէլի» իր աշխատութեան ցիշատակարանը ստորագրելիս. «Ընդ սմին եւ զնուաստ գծօղ սորին զՑով. սպասաւոր բանի եզընկացեցիս որ եւ Մործորեցի հանդերձ ծնողօք: Որ եւ գրեցի զսայ ըստ մեզ մարդեղութեան թուին Ցի. Քի. տ. մերոյ ՌԳՃ եւ ԺԸ (=1318) եւ ըստ Խոսրովային տոմարին ՉԿԷ» (767+551=1318)*[49]: *Տե՛ս նաեւ մեր մատենագրի մի այլ ցիշատակարանը եւս. «Զաստուածեղէն գանձիս ստացօղն, զերջանիկ վարժապետն Եսայիաս յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նմին եւ զնուաստ բանի եզնկայեցի, որ եւ Մործորեցի, հանդերձ ծնողօք, որ եւ գրեցի զսա յըստ մեզ մարդեղութեան թուին Ցիսուսի Քրիստոսի տեառն մերոյ ՌԳՃ եւ ԺԸ (1318), եւ ըստ Խոսրովային տոմարին ՉԿԷ» (767+551=1318)*[50]:

*Տոմարագիտական այս անհերքելի ապացոյցներից ելնելով՝ առանց վերապահութեան չի կարելի ընդունել Լ. Խաչիկեանի այն պնդումը եւս, որ Մատթէի Աւետարանի Մեկնութիւնը Ցովհաննէս Երզնկացին, իբր, աւարտել է 1314 թուականին, քանի որ հեղինակագիր ցիշատակարանում հաւաստւում է, որ այդ աշխատութեան վերջակէտը դրուել է «փրկչականի» 1316 թուականին, որը, չատ հաւանաբար, Ցուլեան տոմարով հաշուարկուած լինէր, ինչպէս միւս ցիշատակարանները տուեալ ժամանակաշրջանում. «Եւ արդ, եղեւ գրութիւն սորա ի թիւ մարդեղութեան տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի եւ ՌՑԺԶ»*[51] *(1316): Ցիշատակարանների բանասէր-հրատարակիչը, դարձեալ կարծելով, թէ Երզնկացու «փրկչականը» բացառապէս «ըստ հայոց հաշուի» է, ծանօթագրում է. «Քրիստոնէական 1316-ին համապատասխանում է հայկական ՉԿԶ (763=1314) թուականը, ուստի ցիշատակարանի գրութեան*

48 *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց, հ. Ա, էջ 584–85:*

49 *Տե՛ս Գ. Ցովսեփեան, «Խաղբակեանք կամ Պռոչեանք հայոց պատմութեան մէջ», մասն Բ, էջ 226:*

50 *«Ժդ դարի յիշատակարաններ», էջ 146:*

51 *Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 513, նաեւ «Ժդ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», էջ 125, ծանօթ. 1:*



*իրական տարեթիւը համարում ենք 1314-ը»*[52]: *Սակայն այս անգամ ճիշդ է վարուել, երբ չի տեղադրել այն 1314 թուականի ցիշատակարանների բաժնում*[53]*, քանի որ, ինչպէս տեսանք, այնուամենայնիւ հարցի նման լուծումը դեռեւս երկբայելի է:*

*Բայց պէտք է ասել նաեւ, որ Ցովհաննէս Երզնկացու «փրկչականը» միասնական բնոյթի չէ, այսինքն՝ միչտ եւ բոլոր դէպքերում միայն Ցուլեան տոմարի հաշուարկմամբ չէ, ինչպէս նրա կիրառած «փրկչական» թուականների համադրական քննութիւնը ցոյց է տալիս. նրա օգտագործած «փրկչական» թուականը, առանձին դէպքերում, նաեւ «ըստ հայոց հաշուի» է, այսինքն՝ երկու տարով աւելի է, քան հռոմէական կամ Ցուլեան տոմարը, ուստիեւ այն համապատասխանեցնելու համար վերջինիս հետ (որը եւ ներկայ համընդհանուր քրիստոնէական թուականն է), անհրաժեշտ է անպայման 2 տարով իջեցնել*[54]*: Այս իմաստով ցայտուն նմուշ է Թովմա Աքուինացու «Ցաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» աչխատութեան լատիներէնից իր կատարած թարգմանութեան մի այլ ընդօրինակութեանը յարակցած ինքնագիր յիշատակարանի թուագրութիւնը. «Գրեցաւ գիրս այս Խորհրդոյ ի թիւ տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի ՌԳՃԻԵ (=1325), յամսեանն ի հոկտեմբեր Ը (8), երկու ամաւ յառաջ թարգմանեալ եւ ի թիւ Հայոց ՉՀ (1321), թարգմանեալ եւ գրեալ ի գուռն Մործորու, ընդ հովանեաւ սբ. Աստուածածնին, որոց ողորմութեամբ եւ չնորհիւ եղեւ կատարումն նորին»*[55]*: Այստեղ գրչագրի ընդօրինակման տարեթիւը երզնկացին արտայայտել է միայն «փրկչականով» (այն է՝ ՌԳՃԻԵ=1325), բայց ասում է միաժամանակ, որ դրանից երկու տարի առաջ աւարտել է դրա թարգմանութիւնը (այսինքն փրկչական 1323-ին, որ Հայոց մեծ թուականով անում է ՉՀ (=1321): Միանգամայն ակնբախ է, որ տուեալ դէպքում նրա կիրառած փրկչականը «ըստ հայոց հաշուի» է, որովհետեւ տարբերութիւնը Հայոց մեծ թուականի միջեւ ոչ թէ 551, այլ 553 տարի է, հետեւաբար Ցուլեան տոմարի կամ ներկայիս թուագրութեան վերածելու համար պէտք է իջեցնել 1323 թուականը 2 տարով՝ կը ստացուի 1321 թուական, որը եւ հաւասար է Հայոց մեծ թուականի ՉՀ (770+551=1321)-ին: Նկատենք, որ Խաչիկեանը թէեւ ճիշդ է ըմբռնել սոյն ցիշատակարանում երզնկացու օգտագործած թուականների արտաքնապէս հակասական յարաբերութիւնները, բայց սխալուել է, կարծելով որ երզնկացին տուեալ դէպքում էլ առաջնորդուել է, իբր, «Հռոմէական տոմարով»*[56]*. եթէ այդպէս լինէր, ապա նրա «փրկչականը» համապատասխանեցնելու համար ներկայ թուագրութեանը կարիք չէր լինի 2 տարով իջեցնել եւ կամ Հայոց մեծ թուականի վրայ գումարելով 551 տարիների տարբերութիւնը՝ արդեան թուագրութեան հաւասարութեանը հասնել...:*

*Ց. Քիւրտեանը, սակայն, բոլորովին գաղափար չունի «ըստ հայոց*

52 *Ժդ դարի յիշատակարաններ, էջ 125:*

53 *Անդ, էջ 124–25, ծանօթ. 1:*

54 *Տե՛ս Ց. Բադալեան, Օրացոյցի պատմութիւն, Երեւան, էջ 77:*

55 *Ժդ դարի յիշատակարաններ, էջ 174:*

56 *Լ. Խաչիկեանի տուած ծանօթագրութեան մէջ ասուած է. «Աչխատութիւնն այսպիսով, թարգմանուել է 1321 թուին եւ արտագրուել երկու տարի թարգմանութիւնից յետոյ, 1323 թ.: Ցիշատակացանում 1323-ի փոխարէն կարդում ենք 1325, որովհետեւ թարգմանիչը Քրիստոսի թուականն օգտագործել է ըստ Հռոմէական տոմարի...»: (Ժդ դարի յիշատակարաններ, էջ 174):*

հաշուի» փրկչական թուականի եւ հռոմէական փրկչականի կամ Յուլեան տոմարի տարբերութիւնների ու բնոյթի մասին: Նա գլուխ չհանելով երզընկացու այս յիշատակարանի տոմարային յարաբերութիւններից՝ խճճուել է, գրելով. «Յիշատակարանը կ'ըսէ որ «գրեցաւ գիրքս... ՌԳՃԻԵ (=1325)» եւ կ'աւելցուի որ ասկէ «երկու ամաւ յառաջ թարգմանեալ եւ ի թիւ Հայոց ՋՀ (=1321) թարգմանեալ եւ գրեալ» էր, անտարակոյս ըսել ուզելով, որ այդ ատեն պատրաստուած էր բնագիրը: Սակայն 1325-էն «երկու ամաւ յառաջ» կ'ընէ 1323 եւ ոչ թէ 1321: Արդեօք պէ՞տք է խորհիլ որ 1321-ին թարգմանուած էր, սակայն միայն 1323-ին թարգմանութիւնը ձեւի դրուած էր եւ նոյն տարին առաջին օրինակ մը գրուած էր, որմէ ծագած է Էջմիածնայ 2515-ը...»[57]:

Այսպիսով, Երզնկացու Յիշատակարանների համադրական քննութիւնից պարզւում է, որ Մործորի ուսումնագիտական կենտրոնում եղած ժամանակ իր Յիշատակարաններում նա օգտագործել է գերազանցապէս հռոմէական փրկչականը (կամ Յուլեան տոմարը), մասամբ նաեւ՝ մէկ-երկու դէպքում միայն «ըստ հայոց հաշուի» փրկչական թուականը[58]: Մինչդեռ հայ ունիթոռ մատենագիրները այս ժամանակաշրջանում կիրառում էին բացառապէս հռոմէական փրկչականը՝ Յուլեան տոմարը, որպէս առաւել ստոյգ տոմար, որը հէնց նոյնն է, ինչ արդէն իսկ գործող համընդհանուր քրիստոնէական թուագրութիւնը[59]:

57 Ց. Քիւրտեան, *Երիզա եւ եկեղեց գաւառ*, էջ 247-48:

58 Անշուշտ փաստաքննական հետեւութիւն չէ սորեւ բերուած նաեւ Ա. Սրապեանի պնդումը. «Աւելորդ չէ յիշել նաեւ, որ իրեն Մործորեցի կոչող Յովհաննէս Երզնկացին տարեթուերն ամենուրեք (ՈՈՈ) նշում է միմիայն փրկչական թուականով, ըստ հռոմէական հաշուի (*«ի թուին Փրկչի ՌՑԺԶ* (1316) եւ այլն), չյիշատակելով հայոց թուականը» (*«Յովհաննէս Երզնկացի»*, էջ 27): Անյարիրութիւններն այստեղ իրօք չափազանց ակնբախ են:

59 Տե՛ս Ա. Աբրահամեան, *«Հայոց գիր եւ գրչութիւն»*, Երեւան, 1973, էջ 111:

Ի դէպ, Լ. Խաչիկեանը յիշատակարանների իր բոլոր ծանօթագրութիւններում առաջնորդուել է միայն մէկ «փրկչականով», այն է՝ «ըստ հայոց հաշուի» փրկչականով, տեսադաշտից դուրս թողնելով հռոմէական բրիստոնէական թուականը, այդ իսկ պատճառով թիւրիմացութիւնների դուռ բացել ոչ-մասնագէտ հետազօտողների համար: Այսպէս, նոյնիսկ դոմինիկեան քարոզիչ, գիտնական Բարթուղիմէոս Բոլոնիացին, որ հայկական «փրկչական» թուականի հետ, հասկանալի է, առնչութիւն չէր ունեցել եւ տարեթուեր գործածելիս թողած Յուլեան տոմարը, բնաւ էլ պարտաւորուած չի եղել «հայկական փրկչական» տարեթուերով առաջնորդուել, Լ. Խաչիկեանը, սակայն, նրա յիշատակարանի տարեթուերը մինչեւ անգամ «մեկնաբանում» է հայկական փրկչականով, ուստիեւ փորձում, որքան էլ տարօրինակ է, նոյնիսկ... «ուղղում» մացնել: Իր Քարոզգրքի թարգմանութեան տարեթիւը նշելիս Բարթուղիմէոս Բոլոնիացին հեղինակագիր յիշատակարանում հաւաստում է. «Եւ թարգմանեցաւ գիրքս այս ի ժամանակի, որում էր թիւ մարդեղութեան Քրիստոսի Աստուծոյն մերոյ Ռ. եւ ԳՃ.ԼԱ (=1331), յաւուրս սրբազան պապին Հռոմայ...» (*«Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա»*, կազմեց՝ Ց. Տաշեան, 1895, էջ 741, տե՛ս նաեւ *«ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ»*, էջ 216): Դարձեալ չփոթ պատկերացմամբ բանասէր-հրատարակչի նոյն յախուռն մօտեցումը՝ յիշատակարանի թուականի տեղաշարժ, պնդելով այս անգամ նոր անյարիրութիւններ: Սոյն յիշատակարանը եւս ծանօթագրելիս առաջադրում է իր «հիմնաւորումը». «...Յիշատակարանը տեղադրում ենք 1329-ի թուաշարքում, որովհետեւ ԺԴ դարում գործածուող տոմարով բրիստոնէական 1331 թուականին համապատասխանում է արդեան 1329, կամ հայկ. տոմարի ՋՀԸ. թուականը: Այսպէս է վարուել նաեւ Ղ. Ալիշանը» (*ԺԴ դարի յիշատակարաններ*, էջ 217, ծանօթ. 1):

Նախ ասենք, որ Ղ. Ալիշանի հեղինակութեան վկայակոչումը այստեղ արդարացում չունի, որովհետեւ նա յիշատակարանային տարեթուերի փոփոխման նկատմամբ, առանց տոմարական խոր իմացութեան, երբեք քմահաճութիւն չի ցուցաբերել, եւ ներկայ դէպքում էլ այնպէս չի վարուել, ինչպէս ասում է Խաչիկեանը. ընդհակառակն, *«ի նմին ամի»* բառերից յետոյ Ղ. Ալիշանը փակագծում նաեւ ճշդում է՝ 1331..., եւ ոչ թէ՝ 1329... (տե՛ս Ղ. Ալիշան, *«Սիսական»*, Վենետիկ, 1893, էջ 374):



Մենք գիտակցաբար մի քիչ երկար կանգ առանք Երզնկացու՝ Յիշատակարաններում օգտագործած թուականների տոմարական բնոյթը պարզաբանելու խնդրի վրայ՝ մանաւանդ ա'յն պատճառով, որ դրանց ճչգրիտ ըմբռնումից է չատ անգամ կախուած նրա կենսագրութեան եւ ստեղծագործութեան հարցերի գիտական լուսաբանումը: Դիցուք այն կարծիքը, որ Երզնկացին Գլաձորի համալսարանից Մործորի վանք է տեղափոխուել 1314 թուականին կամ նրանից յետոյ, բանասէրները պայմանաւորում էին վերը մեր քննարկած Ծործորեան առաջին Յիշատակարանի «փրկչական» ՌՑԺԶ (=1316) թուականը իբրեւ «ըստ հայոց հաշուի» փրկչական թուական, կամ էլ հէնց հռոմէական փրկչական ըմբռնելու հիմունքով:

Այսպէս, Ց. Քիւրտեանը այդ առնչութեամբ հետեւութիւն անելով պնդում է. «Այլեւս Յովհաննէս հաստատուած է Մործոր եւ տարուած լատինամիտներու նոր չարժումէն որ հոն կ'ընձիւղէր. ան Հայոց թուականին տեղ Քրիստոսի թուականը միայն կը գործածէ, եւ ինքզինքը բնորոշելու պարագէն՝ կը սկսի զինքը կոչել Մործորեցի: Դիտել տանք որ 1316-ին ան առաջին անգամ ըլլալով Մործորեցի ըլլալը կը սկսի յիշել»[60]: Սոյն քաղուածքում հիմնական սխալ պնդումն այն է, սակայն, որ Երզնկացին, իբր, «Հայոց թուականին տեղ Քրիստոսի թուականը միայն կը գործածէ»: Աստուածի անճչդութիւնը աղաղակող է անշուշտ մեր վերը քննած Երզնկացու իսկ Յիշատակարանների ընծայած փաստերի լոյսի տակ: Երկրորդ թերիմացութիւնն այն է, որ բանասէրը «Քրիստոսի թուական» ասելով հասկացել է միջնադարում գործող մէկ ընդհանուր փրկչական թուական, այն էլ միայն Յուլեան տոմարը, առանց պատկերացում ունենալու, որ հայ մատենագրութեան մէջ հաւասարապէս գործածուել են թէ՛ «ըստ հայոց հաշուի» փրկչականը եւ թէ՛ «ըստ Ֆռանգաց» կամ հռոմէական «փրկչականը»:

Ա. Սրապեանը, կարծէք թէ դժուարանալով ընդունել Խաչիկեանի ծանօթագրութիւնը Երզնկացու Ծործորեան չրջանի առաջին Յիշատակարանի «փրկչական ՌՑԺԶ»-ն (=1316-2) 1314 թուական լինելու մասին, իր հերթին յանգում է հետեւեալին. «Մործորեցի մականունով Յովհաննէս Երզնկացու մեզ յայտնի մատենագրական գործերը շարադրուած են 1314 թուականից մեզ ՅԵՏՈՑ միայն: Հաւանաբար այդ թուականներից սկսած նա տեղափոխուել է Արտազ, Մործորի վանքը, որտեղ գրել է իր աշխատութիւնները»[61]:

60 Ց. Քիւրտեան, *Երիզա եւ եկեղեց գաւառ*, էջ 195-96:

61 Ա. Սրապեան, *Յովհաննէս Երզնկացի*, էջ 31:

Բայց եթէ երգնկացու Մործորում ընդօրինակած առաջին գրչագրի փրկչական «ՌՅԺԶ» թուականի բնոյթը՝ «ըստ հայո՞ց հաշուի», թէ՞ «ըստ Յունադաց»՝ հռոմէական փրկչական լինելը տարակուսանքի տեղիք է տալիս երգնկացու Գլաձորի համալսարանից հեռանալու եւ Մործորում հիմնադրուելու ճշգրիտ ժամանակը որոշելու առումով՝ 1316 թէ՞ 1314 թուականին համարելու համար, Լ. Խաչիկեանը յետագայում ուշադրութիւն է հրաւիրել ձեռագրական մի փաստի[62] վրայ, որը, այնուամենայնիւ, մօտաւորապէս է ճշդում քննարկուող հարցը. Մաշտոցի անուան Մատենադարանի 267 համարի ձեռագիրը, ընդօրինակուած լինելով որոշակիօրէն 1314 թուականին, իր մէջ պարփակում է նաեւ 3 քարոզներ երգնկացուց՝ վերնագրերում «Յոհաննիսի Մործորեցւոյ տիեզերալոյս վարդապետի ասացեալ» բնութագրումներով: Մենք եւս քննեցինք այդ ձեռագիրը. ներկայ դէպքում մեզ յուզող հարցի հետ առնչուող յիշատակագրութիւնները ներկայացնում ենք ընթերցողին.

«զԱաչ(իկ) յիշեցէք, այլ գրեցաւ ՉԿԳ (763+551 =1314) թուիս ի ճանճին խուղն սուրբ Գրիգորի բարեկենդանին եւ Ք(րիստոս)ի փառք»[63]:

«Յոհաննիսի Եգնկա(յ)եցոյ որ եւ Մործորեցի տիեզերալոյս վարդապետի ասացեալ» ((վերնագիրն է). «Յարարչական բանէ անեղական լուսոյն հաստատեալ»...[64]:

«Յոհաննիսի Մործորեցոյ հոգացեալ զբանքս» (երկրորդ քարոզի վերնագիրն է)[65]:

«Նորին Յոհաննէս վարդապետի ասացեալ ի փոխումն սուրբ կուսին եւ ի ծնունդն»[66] (երրորդ քարոզի վերնագիրն է):

Այսպիսով, ամենավաղ վաւերական յիշատակագրութիւնները երգնկացու Մործորի վանքում արդէն իսկ մշակութային գործունէութիւն ծաւալելսկսած լինելու մասին ստուգապէս հաղորդւում են 1314 թուականից: Սա արդէն հաստատ է, միաժամանակ եւ աներկբայելի:

## Բ.

Այսպէս, ուրեմն, 1310–11 թուականներին, իբրեւ ուսումնա-կրթական գործը կազմակերպող եւ ղեկավարող մանկավարժ-գիտնական, Յովհաննէս երգնկացին, խիստ հաւանաբար Արտազ գաւառի եպիսկոպոս, մատենագիր ու հասարակական գործիչ, Ս. Թադէի «վերադիտող» Զաքարիա Մործորեցու հրաւէրով եւ Գլաձորի համալսարանի դպրապետ Եսայի Նչեցու «հրամանաւ» ուղարկւում է Մործորի վանքը:

Մործորի վանքը աւելի շուտ Ցիշատակարաններում է նշւում իբրեւ մշակութային-հոգեւոր կենտրոն՝ ուսումնագիտական թեքումով, քան առկայ է իբրեւ տեսանելի ճարտարապետական կառոյց, թէկուզեւ միայն որպէս փլատակներ: Գտնուելով Արտազ գաւառում՝ Ս. Թադէի եպիսկոպոսական աթոռանիստ վանքի մերձակայութեան մէջ պէտք է լինի, Ս. Աստուածածնի հովանաւորութեան ներքոյ. «Վանական այս համալրի ճշգրիտ վայրն

62 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 176, նաեւ ծանօթ. 27:
63 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր 267, թ. 152բ:
64 Անդ, թ. 25ա:
65 Անդ, թ. 26ա:
66 Անդ, թ. 37ա:



առ այսօր չի որոշուած,– գրում է Լ. Խաչիկեանը,– նոյնիսկ այն կարծիքն է իշխում, որ Մործորի վանքը՝ նոյն Ս. Թադէի վանքն է, սխալմամբ տարանջատուած»[67]: Իհարկէ՝ նոյնացման այս տեսակէտը հերքւում է ձեռագրական վկայութիւնների առարկայական քննութեամբ:

Այսպէս, երգնկացին որոշակիօրէն տարբերում է իր բնակատեղի հանդիսացած Մործորի վանքը՝ «վիճակ», թեմ համարուող Ս. Թադէի վանքից, այդ մասին յիշատակագրելով. «...ես նուաստս ի Քրիստոս եւ յետինն յորդիս Սիոնի՝ ապիկար ոգիս Յոհաննէս Եգնկայեցի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի վանս Մործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս»[68]: Եւ կամ՝ դարձեալ իր նոր բնակավայրի մասին երգնկացին վկայում է մի այլ յիշատակարանում. «...Գրեալ... ի գաւառս հռչակաւոր Արտազ կոչեցեալ, ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս Մործորու կոչեցեալ, ձեռամբ նուաստ սպասաւորի Յոհաննիսի Եգնկայեցւո...»[69]:

Նաեւ անջատաբար են գործածւում հոգեւոր այս երկու կենտրոնները իրենց տարբեր բնոյթով ու նշանակութեամբ: Օրինակ, Գլաձորի համալսարանի Ներսէս վարդապետը Աստուածաշունչ ձեռք բերելու առթիւ իր ոգիսդէոս վանքի մասին՝ նրա «վերադիտող» Զաքարիայի առնչութեամբ որպէս իր «մեկենասի». «Ի թուականութեանն Հայկազնեայ տոհմին ՋՁԱ (=1332), եւ ի հայրապետութեան Տեառն Յոհաննիսի (ԻԲ) մեծի Հռոմայ պապին, եւ ի պատրիարքութեանն Յակոբայ, Հայոց նահանգի, եւ յեպիսկոպոսութեանն Տէր Զաքարիայի Ս. Առաքելոյն Թադէոսի վերադիտողի, եւ ի վարդապետութեան Եսիեա րաբունապետի...»[70]: Այնուհետեւ. «...Եւ ես յայնժամ յաբեայ անտի եւ գնացի ի Ս. Առաքեալն Թադէոս՝ առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս, եւ նա ետ ինձ Շ (500) դր(ամ)...»[71]:

Նաեւ Մործորի վանքը առանձնաբար է ներկայացւում Ցիշատակարանների: Երգնկացին յիշատակագրում է. «...Գրեալ ի դուռն Մործորու, ներում: Երգնկացին յիշատակագրում է. «...Գրեալ ի դուռն Մործորու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս...»[72]: Մխիթար գրիչը հաւաստում է. «Ցորժամ գծագրեցաւ մատեանս զայս թուական Հա(յ)ոց ՋՃԿԷ (1318), եւ թագաւոր Օչին, եւ կաթողիկոս տէր կոստընդին, եւ բնակութիւնս Մործորու վանի, եւ տեղոյս առաջնորդ տէր Զաքարիայ եւ վարժապետ եւ ուսուցիչ Յոհաննէս...»[73]:

Հ. Ոսկեանը (եւ այլ բանասէրներ), սակայն, նոյնացրել է եպիսկոպոսական աթոռանիստ Ս. Թադէի վանքը Մործորի ուսումնական վանքի հետ: Այսպէս, նա գրում է. «...հաւանական կը թուի թէ՝ Ս. Թադէի եւ Մործորու վանքերը միեւնոյն վանքն են: Գուցէ անոր եկեղեցիներէն մին նախապէս կոչուած է Ս. Աստուածածին եւ միւսը Թադէոս եւ կամ նախապէս թեմը Թադէոսի վիճակ եւ վանքը Ս. Աստուածածին անուանուած եւ ապա քանի որ առաջնորդարանը մէկ հատ էր կնքուած է՝ Ս. Թադէոսի վանք անունով»[74]: Նշենք նաեւ, որ Հ. Ոսկեանը այս անընդունելի կարծիքին

67 «Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 168:
68 ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, էջ 125:
69 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1966, հ. Ա, էջ 585:
70 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 546:
71 Անդ, էջ 546–47:
72 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 215, թ. 83ա:
73 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2104, թ. 164բ:
74 Հ. Ոսկեան, Վասպուրականի-Վանի վանքերը, Վիեննա, 1942, Բ. մաս, էջ 467–68:

յանգել է թերեւս այն պատճառով, որ առհասարակ չի զբաղուել Տործորի ուսումնագիտական կենտրոնի գործունէութեամբ, ուստիեւ համակողմանի պատկերացում կազմելու համար չի մտաստւգուել ձեռագրական աղբիւրների մէջ[75]:

Հարկ է արձանագրել, որ Տործորի վանք անունը առաջացել է Արտազ գաւառի համանուն գիւղից: Այստեղ մի առժամանակ մեծ ճանաչում գտնելուց ու հռչակ ձեռք բերելուց յետոյ Յովհաննէս Երզնկացի կրտսերը ամենուրեք իր գրուածքներում սկսում է իրեն վերանուանել գերազանցապէս իբրեւ Յովհաննէս (կամ «Յոհան», «Յովհան») Տործորեցի: «Եւ զվերջացեալս բարեաց գործոց՝ զտարտամ գրիչս՝ զՅոհան, ծանօթ բանի եւ տեղեաւ Եզնկացի, իսկ այժմ Տործորեցի, աղաչեմ չմոռանալ ի բարին զիս եւ զիման ամենայն: Ի թուականիս փրկչին ՌՅԺԶ (1316)[76]»: Ընդգծուած բառերից միանգամայն ակնբախ է, որ այս մականուանումը հէնց նոր՝ Տործորի վանքում հիմնաւորուելուց կարճ ժամանակ անց Յովհաննէս Երզնկացին սկսում է կիրառել («իսկ այժմ Տործորեցի»), որպիսի ստորագրութիւնը այնուհետեւ յաճախուած ենք տեսնում նրա բոլոր գրչագրերում ու ստեղծագործութիւններում: Դիցուք՝ Թովմա Աբուլինացու «Ցաղագս Տնօրէնութեանն Քրիստոսի» երկը Հռոմի պապի «հրամանաւ» լատիներէնից հայերէնի թարգմանելիս Յովհաննէս ուսուցչապետն իր մասին յիշատակագրում է. «...որում տենչացայ հոգւով նուաստ ոգիս եւ յոյժ կարօտ բանիս Յովհաննէս Եզնկա(յ)եցի, որ այժմ կոչիմ Տործորեցի, եւ մեծաւ թախանձանօք թարգմանեցի զսա ի հայ բարբառ հրամանաւ վեհա[պե]տին Հռովմայ...»[77]:

Յովհան Տործորեցու հեղինակութիւնն ու հռչակը ուսումնագիտական այս կենտրոնը գլխաւորելու առաջին իսկ տարիներից թափանցում է հայ իրականութեան թէ՛ ուսումնական եւ թէ՛ հոգեւոր շրջանակներում: Նրան հէնց այդպէս էլ սկսում են ճանաչել ու ներկայացնել իրենց վկայութիւններում:

Այսպէս, Գլաձորի համալսարանի նախկին սան Յովհան Քոնեցին խորին ակնածանքով վկայակոչում է մեր այս ուսուցչապետին որպէս «մեծ վարդապետն Յոհան Տործորեցին»[78]: Կիլիկիայում գումարուած դաւանաբանական ժողովների պատմիչը, ընդունելով Յովհաննէս կրտսերի վայելած հեղինակութիւնը, բնութագրում է նրան որպէս «հռչակաւոր Յոհան Տործորեցի»[79]:

Քերականական Մեկնութիւնների աղբիւրագիտական յիշեցումներում համանուն Երզնկացիները իրենց ուրոյն քերականական երկերով սահմանազատուած են ներկայացւում, ընդ որում Յովհաննէս Երզնկացի կրտսերին որպէս Եսայի Նչեցու քերականական Մեկնութիւնից յետոյ սեփական Մեկնութեամբ հանդէս եկած հեղինակի, որը Տործորեցի անուամբ է ճանաչւում: Այսպէս, առաջինը Առաքել Սիւնեցին է յիշատակում նրան՝ գրելով. «...թէ յումէ՞ թարգմանեցաւ եւ ո՞վ էր, որ մեկնութիւն արար սորա, այսինքն՝ զի Դաւիթ փիլիսոփայն թարգմանեաց եւ մեկնեաց զսա: Իսկ յետ նորա Գրիգոր Մագիստրոս այլ ընդարձակ մեկնեաց զԴաւիթ մեկնեալն: Իսկ յետոյ Յովհաննէս վարդապետն մականուն Պլուզ համառաւտեաց զնոյն

75 Անդ:
76 ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, էջ 111:
77 Ց. Տաշեան, Յուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, էջ 777:
78 Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. Ա, 1650, էջ 517–18:
79 Ց. Տաշեան, Յուցակ ձեռագրաց..., էջ 115:



վասն դիւրալուր լինելոյ: Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գլաձորոյ այլ համառաւտեաց զնոյն, որ այժմս կայ ի միջի, այսպէս եւ Տործորեցին է համառաւտեալ»[80]:

Այնուհետեւ միջնադարի հայ «Մեկնիչներին» նուիրուած մատենագիտական ցանկերում եւ ձեռագրացուցակներում Առաքել Սիւնեցու տուած մատենագիտական այս տեղեկութիւնը քերական մեկնիչների վերաբերեալ՝ համարեա նոյնութեամբ է ընդգրկւում. «Զքերականն՝ բազումք, բայց յետոյ Յոհաննէս վարդապետն Եզնկացին, յետ նորա՝ Եսային, յետ նորա՝ Յոհաննէս Տործորեցին, յետ նորա՝ վարդան վարդապետն Կիւլիկեցին յաւուրս Հեթմոյ թագաւորին»[81]:

Գրիգոր Կամախեցին (1576–1643 թթ.), մատենագրութեան մէջ եւ մասնաւորապէս քերականական Մեկնութիւններում միանգամայն ճիշդ արուած համանուն՝ աւագ եւ կրտսեր երկու Երզնկացիների սահմանազատումը ընդունելով հանդերձ[82], Տործորեցու առնչութեամբ փոքր-ինչ չփոթութիւն է թոյլ տուել՝ համարելով նրան ոչ թէ Արտազ գաւառի Տործոր վանքի, այլ Զորակ գիւղի համանուն վանքի վարդապետ, ընդ որում յայտնելով այն թիւր կարծիքը միաժամանակ, որ նա, իբր, Տործորեցի է մականուանուել «Զորակ գիւղի պատճառով»: Այսպէս, խօսքը մասնաւորելով Տործորեցու կենսագրական մոմենտների բնութագրման վրայ, նա առանձին ենթավերնագրով ներկայացնում է նրան՝ գրելով. «Վասն Զորակի վանաց Յովհաննէս վարդապետին», եւ ապա չարունակում. «Սա մականուամբ Տործորեցի կոչի վասն Զորակ գեղջին, որ այժմուս մարացիք են բնակեալ, որ ազգաւ քուրդ են...: Յայնմ ժամանակին այս Յովհաննէսս այլ Երզնկոյ լինելով եւ բնակելով ի վանս Տործորի»[83]: Այս մասնակի թիւրիմացութիւնը Արտազ գաւառում գտնուող Տործորի վանքը «Զորակ գիւղի» հետ աղերսելու մասին՝ ժամանակին նկատուել է բանասիրութեան մէջ[84]:

Ղազար Ճահկեցին, ճանաչելով հանդերձ աւագ եւ կրտսեր համանուն Երզնկացիներին, մեծ դրուատանքով է խօսում նաեւ Յովհաննէս Տործորեցու մասին. «Յոհաննէս Տործորեցին, այր քաջուսումն եւ մտապերճ: Սա մեկնեաց զաւետարան Մատթէոսի պարզ եւ դիւրահաս ոճով, եւ մեկնեաց զերբականութիւնն»[85]:

Տործորի ուսումնագիտական կենտրոնում Յովհան Երզնկացին չուրջը «բանտով արդէն «րաբունապետ» է ճանաչւում՝ համախմբելով իր չուրջը «բանասէրների» եւ «սպասաւոր բանի» տիտղոսով օժտուած խոստումնալից ուսումնականների:

80 Տե՛ս մեր աշխատասիրութիւնը՝ «Առաքել Սիւնեցի. Ցաղագս քերականութեան. Համառաւտ լուծմունք», Լոս Անճելես, 1982, էջ 73:
81 Ց. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, Երեւան, 1959, էջ LXI, տե՛ս նաեւ «Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց», Անթիլիաս, 1961, էջ 979:
82 Տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղէմ, 1915, էջ 399–402:
83 Անդ, էջ 401:
84 Տե՛ս Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, էջ 37:
85 Ց. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, էջ XLVI:

Այսպէս, Մործորի վանքի դեռ նոր նշանակուած ուսուցչապետը Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնը ամբողջացնելիս, որ չուրջ 150 տարի առաջ կիսատ թողել էր Ներսէս Շնորհալին, այդպէս էլ բնութագրում է իր աշակերտներին, հետեւաբարեւ՝ իր գլխաւորած ուսումնագիտական կենտրոնի ընդհանուր թեքումը, վկայելով յիշատակարանում. «...ես՝ նուաստս ի Քրիստոս եւ յետինն յորդիս Սիոնի, ապիկար ոգիս Յոհաննէս Եղնկայեցի սպասաւոր բանի, քնակեալ ի վիճակ սուրբ Առաքելոյն Թադէոսի ի վանս Մործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, այլեւ ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան. յորոց յորդորմանէ եւ ի փափաքելի խնդրոյ, եդեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոյ Աւետարանին Մատթէի, լնլով զթերի նորին ըստ կարողութեան իմում, շահեալ եւ օգտեալ յառաջին սրբոցն. եւ է՛ ի ծագմանէ նշուլից շնորհաց վերասացեալ առնն Աստուծոյ ի միտս մեր, դիցո՛ւք տեսութիւնս պիտանացուս յանձնիւր տեղի, խառնելով զնսեմատեսակ բանիցս տգեղութիւն ընդ չքնաղագիտ եւ լուսատեսակ իմաստիցն պայծառութեանս...»[86]:

Ձեռագրական աղբիւրներում մեծանուն ուսուցչապետների համբաւը ընդգծելիս եւ նրանց ժամանակը որոշելիս, իբրեւ գրչութեան արուեստի աւանդոյթ, ընդունուած էր նրանցից առաջ ու միասնաբար յիշատակել նաեւ նրանց ժամանակակից հայ թագաւորներին ու կաթողիկոսներին: Նման յաճախուածութեամբ բազմաթիւ են Եսայի Նչեցուն վկայակոչող գրիչների յիշատակագրութիւնները[87]: Յիշատակագիրները այդպէս են վարուում նաեւ ուսուցչապետ Յովհան Մործորեցու նկատմամբ՝ արժանաւորապէս բնութագրելով նրան իբրեւ «վարժապետի» կամ դպրապետի: Փիլոն Եբրայեցու երկերն ամփոփող Մաշտոցի անուան Մատենադարանի 2104 համարի ձեռագրի Մխիթար գրիչը այդպէս էլ հաւաստում է. «Յորժամ գծագրեցաւ մատեանս զայս թուական Հա(յ)ոց ՉՃԿԷ (767+551=1318) էր, եւ թագաւոր Օշին, եւ կաթողիկոս տէր Կոստընդին, եւ վարժապետ եւ ուսուցիչ Յոհաննէս՝ ստացող գրոյս, եւ անուն գծողիս Մխիթար»[88]: Սա յարգանքի տուրքի ու պատկառանքի զգացողութեան մեծագոյն դրսեւորումն էր ուսուցչապետների նկատմամբ՝ միջնադարում:

Ուշագրաւ է, որ 1315 («ի լրման թուականութեանս Հայոց ՉԿԴ») թուականին Ս. Թադէի վանքում Ռստակէսը գրչագրում է ստուարածաւալ մի ձեռագիր՝ բաղկացած 507 մեծադիր թերթերից, որի յիշատակարանում հաւաստում է, որ այդ ժամանակ արդէն «րաբունապետ» է ճանաչւում Յովհաննէս Երզնկացին. «...Զտաւնաւղ տաւնից տէրունական եւ պայծառացուցիչ յիշատակաց որդւոց վերին առագաստի, բազմահամբոյր պատրաստութեամբ ըստ իմանալի մտաց լուցման լապտերաց եւ բուրման խնկոց անուշահոտութեան, գրաբուճապետ գՅովհաննէս եւ գկիրակոս յիշեսջիք ի Տէր»[89]:

Յովհաննէս Մործորեցու «Քարոզգրքի» յիշատակարանում երախտընկալ

86 Ղ. Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 512–13:

87 Տե՛ս մեր աշխատութիւնները՝ «Եսայի Նչեցին եւ Գլաձորի համալսարանը», Երեւան, Պետական Համալսարանի գրադարան, Մոսկվայի Վ. Ի. Լենինի անուան գրադարան, 1968 թ., (Դոկտորական դիսերտացիա, 563 մեքենագիր էջ, 126–127 էջերը), եւ «Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ», Երեւան, 1973, էջ 66:

88 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2104, թ. 164բ:

89 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 378, թ. 465բ:



սաներից մէկը, իր հերթին, վկայում է, որ «յոգնաբեղուն» ժրաջանութեամբ ուսուցանում էր մեծարգոյ րաբունապետը իր աշակերտներին, ամէն կերպ խրախուսում գրչագրերի ընդօրինակման եւ բազմացման չնորհակալ գործը, աճեցնում՝ հմտացնում ու կատարելագործում «բանասէրների» ու մատենագիրների, որոնց նկատմամբ տածում է «զգուխ հայրական խնամոյն»: Ուսուցչապետի խօսքի կշիռը դասաւանդումների ժամանակ այնքան յագեցած է եղել իմաստութեամբ, «կորովամտութեամբն», բանականութեան «արգասաւորմամբ», որ յիշատակագիրը, երկար ժամանակ հմայուած՝ քաղցրութեամբ ունկնդրելով նրան, հարկադրաբար ու ակամայից համեմատում է նրան (իհարկէ, ակնբախ զեղումով) նոյնիսկ Ոսկեբերանի եւ Աստուածաբանի հետ իբրեւ նրանց յաջորդի, որոնք քրիստոնէական ջատագովական գրականութեան մէջ յատնի են իրենց անզուգականութեամբ ու անհասանելիութեամբ. «...Բե՛ր այժմ ի մէջ առցուք զաղբերն իմաստից՝ զայրն կորովամիտ՝ զչքեղացեալն զանազան իմաստիւք բանականութեան արգասեօք, զերկրորդն Ոսկիբաքան, եւ կամ համարձակեցայց ասել Աստուածաբան, զհայրն մեր հոգեւոր, զրաբունապետն Յոհան»[90]: Նրա բարեմասնութիւնները իբրեւ գիտնականի եւ պերճախօս հռետորի, թէեւ հանրայայտ իրողութիւններ, զանց առնելով, ուշագրութիւն ենք ուզում հրաւիրել միայն մի հանգամանքի վրայ, ասում է յիշատակագիրը, այն է՝ իր սաների հոգեւոր աճման ու կատարելագործման նկատմամբ րաբունապետի անսահման հոգածութեան ու զթասիրութեան վրայ. «...Զայս զամենեսեան ի բաց թողեալ իբրեւ զյայտնիս, զմին միայն եւեթ յիշեցից,- կարդում ենք յիշատակարանում,- զգուռ հայրական խնամոյն որ առ մեզ, զի սնոյց եւ վարժեաց զմեզ յոգնաբեղուն խրատուբեամբ, իբրեւ զորդի սիրելի, եւ կամ զճշմարտագոյնն ասել՝ ի վեր քան զբնական սիրոյն ցուցաբերութիւն, վասն զի կրկնակի տածմանն եցոյց առ իս զօրինակ, մանաւանդ յայսմ իրակերտութեան գործոյ եղեւ նպաստ եւ առիթ, յորդորական բանիւք քաջալերս տալով»[91]:

Թէ ուսման կամ գիտութեան նկատմամբ ինչպիսի՛ անմար սէր է բորբոքել ուսուցչապետ Յովհան Մործորեցին իր սաների սրտերում՝ խորապէս պիտակցել տալով նրանց դրա հոգեպարար նշանակութիւնը իմացական հորիզոնների ընդլայնման ու կատարելագործման առումով, ակնբախօրէն երեւում է նրա չափածոյ «Այբբենականի» քառեակներում[92]: Ուսուցողական նպատակով գրուած նման «Այբբենականների» յօրինումը, ի դէպ, մեր դպրութեան մէջ չատ է յաճախուած եղել ամբողջ միջնադարում, որոնք, առանձին դէպքերում միաժամանակ ուսումնականի բարոյա-դաստիարակչական կանոնների իւրովի ժողովածու (կոդեքս) էին ծառայում ուսումնագիտական կենտրոններում: Տուեալ դէպքում «Այբբենականում» պարփակուած են Յովհաննէս Մործորեցու մանկավարժական հայեացքները, որոնք, հարկ է ասել, իր կենսագործունէութեան տարերքն են կազմել:

Կարեւոր է նշել, որ «Այբբենական»-ին անմիջապէս յաջորդող «Յորդորբակ» չափածոյում, ինքնաբնութագրելով մանկավարժական բազմամեայ իր ներհուն գործունէութիւնը, ուսուցչապետը սրտառուչ անկեղծութեամբ

90 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Դ, էջ 5:

91 Անդ:

92 Այս «Այբբենականից» առանձին քառեակներ հրատարակել է Լ. Խաչիկեանը, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 191–92:

հաւաստում է, որ ինքը «միշտ բարին՝ լաւն ու գեղեցիկն է ուսուցել ուրիշներին»: Աւելին. պատկերաւոր արտայայտուելով՝ «յեսաեի» կաճ յեսաեաճարի նման ինքը շարունակ «ուրիշների միտքն է սրել»՝ պայծառացրել, հարստացրել: Նման ինքնաբնութագրմամբ, ինչ խօսք, սպառիչ իմաստաւորում է ստանում նաեւ հայ միջնադարի անխոնջ մանկավարժի առինքնող կերպարը: Բայց առաւել խտացուած ընդհանրացմամբ եւ անզրկում մորմոքով միաժամանակ հեզամրմունջ բացագանչում է Յովհաննէս Մործորեցին՝ յայտարարելով, որ «խօսքի սրութեամբ էլ ինքն աննմանապէս հիւծուել է՝ հալուել ուժգնապէս...», տալով ամէն ինչ իր սաներին անմնացորդ կերպով: Սա արդէն բոլորանուէր ուսուցչի հմայիչ կերպարի բնութագրումն է՝ իր հումանիստական համեմատաբար լայն աշխարհազգացողութեամբ, որպիսին իրօք կեանքում եղել է դասախօսական բազմավաստակ տարիների խորհրդանշական երեսին ուսուցչապետ Յովհաննէս Մործորեցին: Այդ ինքնակենսագրական սեղմ ընդհանրացումը ներկայացնում ենք իր բնագրային ընթերցմամբ.

«...Այս ինձ կրկին գործեմ,
Զի գլաւն այլոց ուսուցանեմ,
Նման յեսաեի գայլոս սրեմ,
Ի սրոյ բանին գիս յոյժ բթեմ»[93]:

Անդրադառնալով «Այբբենականի» հիմնական գաղափարներին, կանգ առնենք դրանցից ամենակարեւորների վրայ: Այսպէս, ուսուցչապետ Յովհաննէս Մործորեցին երկրորդ քառեակում այն արժէքաւոր միտքն է ընդգծում, որ հայերէնի գրահամակարգից «բեն» գրանունը սովորելիս, այն բացել է տալիս, որպէս թէ, ուսումնականի «հոգու աչքը»՝ պայծառացնում նրա բանականութիւնը, խրատելով նրան «քնաւ չսիրել» մարմնական պահանջները՝ կրքերն ու ցանկութիւնները, որպէսզի յետոյ չբողոքես, թէ ինչո՛ւ լոկ ունայնութեան ես հետամուտ եղել fn ամբողջ կեանքում: Առաջադրուած դրոյթը, առհասարակ մարմնական պահանջների բաւարարման նկատմամբ քրիստոնէական ուսմունքի ժխտական վերաբերմունքի ջատագովմամբ հանդերձ, դպրութեան իր փառաբանմամբ, մարդուն վեհացնող՝ «քաղաքակրթող» նշանակութիւն ունէր, ինքնակատարելագործման ակտիւ կոչ, յուչելով, որ «կեանքի իմաստաւորումը» ամէն մի ուսումնականի գերագոյն ձգտումը պիտի լինի, այն է՝ գիտութիւնների ամբարումով, հոգեւոր աչխարհի ընդլայնմամբ ու հարստացմամբ: Եթէ դիտենք մանկավարժութեան տեսութեան առումով, նման գաղափարի գովերգումը նաեւ մեկնակէտային նշանակութիւն է ունեցել առհասարակ միջնադարի հայ (եւ ո՛չ միայն հայ) դպրութեան բուն իսկ զարգացման համար: Ասուածի ենթատեքստը, իրականում, նաեւ ուսումնականի կոչումն արտայայտող հիմնական գաղափարի ընդգծումն է, որն իր այժմէականութիւնն ունի նաեւ բոլոր ժամանակների համար: Ահա եւ խիստ արժէքաւոր այդ դրոյթի բնագրային ընթերցումը.

«Բենն՝
Բանալ տայ բեզ գաչս հոգւոյ,
Բընաւ չընսիրել գկամըս մարմնոյ.
Զի մի՛ բողոք բառնաս յետոյ
Զունայնութեան գհետ երթալոյ»[94]:

93 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2079, թ. 143բ:
94 Անդ, թ. 142ա:



Ուսումնականի պատասխանատուութիւնը խիստ կարեւոր համարելով՝ Յովհաննէս բարեւնապետը «Դա» գրանունը սովորեցնելիս դրա իմաստաւորումը առնչում է դասասաց վարդապետի եւ ուսումնականի փոխյարաբերութիւնների ճչգրտմանը. դասասաց վարդապետի խօսքը օրէնք է եւ անպայման պէտք է կատարուի, ասում է նա. նրան հաչիւ պէտք է տայ ուսումնականը՝ լսարան մտնելիս միչտ իրեն զգալով ինչպէս ատեանում, երբ ամէն զանցանքի համար պատասխանատուութեան է ենթարկւում զանցառուն: Այդ քառեակով պատկերացում է կազմւում նաեւ Մործորի ուսումնագիտական կենտրոնում կարգապահութեան դրուածքի եւ ուսումնառական պարտականութիւնների կատարման պատասխանատուութեան բարձր գիտակցականութեան մասին.

«Դայն՝
Դասատուն ասէ՝ լինի՛,
Համայն գործոց դատ պահանջի,
Եւ դու մտերոց ես յատենի,
Համա՛ր տացես ամէն բանի»[95]:

Զափազանց ուչագրաւ է «Լիւն» գրանուան իմաստաւորումը, որով բացայայտւում է Յովհաննէս բարեւնապետի անվերապահ պաչտամունքը իմացական «լոյսի» ու կրթութեան նկատմամբ՝ մի կողմից, միւս կողմից՝ ատելութիւնն ու անհաչտութիւնը՝ խաւարի ու տգիտութեան. ընդ որում միեւնոյն զգացմունքներն էլ մչակում է իր սաների գիտակցութեան մէջ՝ հորդորականի իր ամբողջ կրքոտութեամբ: Ընդսմին՝ «լոյսն» ու «լուսաւորութիւնը» նրա մօտ երբեք էլ վերացական հասկացութիւններ չեն եղել, որոնք զրկուած լինէին ամէն մի ներգործութիւնից, այլ այնպիսի «լոյս» է հասկանում նա, որը պայծառացնում՝ «փայլատակում» է միտքը, ինչպէս «ապակին», որը կարող է «օդ» հանդուրժել ընդհանրապէս, բայց «խաւար» պարփակել՝ երբե՛ք:

«Լիւն՝
Լուսոյն խրատէ լեր հետեւող,
Այլեմ որ զմիտս առնէ փայլող,
Զերդ ապակի եւ «զաւդ կրաւդ»,
Զի խաւարի չէ՛ ընդունաւդ»[96]:

«Խէ» գրանուան իմաստաւորումը մասամբ լրացնում է նախորդ գրանուան առնչութեամբ արծարծուած լոյսի ու լուսաւորութեան ջատագովումը. բանասիրութեան հիմնական խնդիրը ըմբռնել էին միջնադարի ուսումնագիտական կենտրոններում այնպէս, որ նրանում հմտացողը պէտք է կարողանայ թափանցել բնագրերի «խորհուրդ խորին մտաց» նոյնիսկ մանուածապատում ձեւակերպումների մէջ եւ բացայայտել «զխրթին բանս», որից յետոյ նոր բանասէրի հոգին «խաղաղւում» է: Փաստօրէն, առիթ ծառայեցնելով «Խէ» գրանուան այլաբանական, այն է՝ ուսումնական նչանակութիւնը, բարեւնապետն իր սաների բանասիրութեան մէջ խորանալու կոչն է, բարեւնապետն իր սաների բանասիրութեան մէջ խորանալու եւ քննական հայեացք զարգացնելու պահանջներն է հիմնաւորում՝ այս

95 Անդ:
96 Անդ, թ. 142բ:

առթիւ գրելով.

«Խէն՝

Խորհուրդ խորին մտաց բանա,
Որ ոճ հայի մտաւ առ սա,
Զի գխրթին բանըս մերկանա,
Զխաղաղութիւն հոգւոյն սա տա»[97]:

«Կէն» գրանուան կապակցութեամբ այն միտքն է չեշտւում, որ «կատարեալին» հասնելու համար պէտք է ըմբռնել «իմաստութեան կաթը»՝ գիտութիւնը. եւ «ուսումը» պէտք է դարձնել կեանքի ոչ թէ պատահական ու ժամանակաւոր, այլ՝ անբաժան «կցորդը», եւ որ կարեւորն է, գիտէ՞ք ինչու. որպէսզի ուսումնականը ընդհանրապէս չզղջայ, որ զուր է անցկացրել իր տարիները···: Դարձեալ կեանքն իմաստաւորելու տարողունակ, բայց եւ վսեմ խնդիր: Այստեղ նկատենք, սակայն, որ նման պահանջն ինքնին բնութագրող նշանակութիւն ունի ոչ միայն անձամբ Յովհաննէս բարեւնապետի, այլեւ մանաւանդ նրա ղեկավարած Մործորի ուսումնագիտական կենտրոնի համար: Ուշագրաւ այդ քառեակի բնագրային ընթերցումն է.

«Կէնն՝

Կատարած քեզ եւ յանգումն,
Կաթն իմաստից սա ի յարբումն,
Ասյլ եւ կենաց կըցորդ գուսումն,
Զի մի՛ յետոյ գաս ի զղջումն···»[98]:

Բայց «իմաստութեան կաթի» ըմբռնումն էլ սոսկ ինքնանպատակ չպէտք է լինի. այլ այն պէտք է նպաստի, որ «հայելու նման» պայծառատես դառնայ ուսումնականը, եւ որ կարեւորն է՝ նրա «մտքի երեսը» բնաւ ժանգ չբռնի···, իսկ եթէ այդ կարգի սպառնալիք առաջանայ՝ իսկոյնեւեթ պէտք է մաքրել ժանգը, որովհետեւ ուսումնականի միտքը մշտապէս եւ ամէն ժամ «փայլատակող» պէտք է լինի, ամենեւին «ժանգ չկապելու» հրամայականով. մի ցանկութիւն-պահա՛նջ, որը անշուշտ պատիւ է բերում Մործորի ուսումնագիտական կենտրոնին: Ուսումնա-դաստիարակչական կոդեքսի այս արժէքաւոր հարցադրումների բնագրային ձեւակերպումն է.

«Հոյն՝

Հայելի պայծառ գիեզ տես,
Որ ժանգ չունի մտացդ երես,
Եթէ մեղաց պատահեսցես,
Դարձեալ արագ գայն մաքրեսցես»[99]:

Ուսումնականի կատարեալ տիպար համարում է բարեւնապետը նրան, ով որպէս երեւոյթների խորքերում թաքուն իրողութիւնները ճանաչող «ամենագէտ»՝ նման է «լոյսին» կամ «բազմադէտ արեգակին», որ մշտապէս չողարձակում է, իբրեւ «ղամբարափայլ», մտքի հրայրք՝ գիտութիւն.

«Ղատ՝

Ղամբարափայլ ծագեա՛ յաւէտ,
Զինչ գարեգակըն բազմադէտ,
Ղօղեալ խորոց ամենագէտ,
Որով լիցիս լուսոյ հանգէտ»[100]:

97 Անդ:
98 Անդ:
99 Անդ:
100 Անդ:



«Շա» գրանուան առնչութեամբ ուսուցչապետը յորդորում է ուսումնականին՝ միշտ խորասուզուած լինել բազում մատեաններուի չրջապատմամբ, մատեաննե՛ր, որոնցից ըմբռնուած իմաստութիւնը, յուշում է մեծ ուսուցչապետը, յղկում՝ «մաքրազտում» ու պայծառացնում է միտքը, ինչպէս հնոցը («բով հալոցից»)՝ քուրան, մետաղն ընդունելիս, եւ որ կարեւորն է՝ դա հնարաւորութիւն կ'ընձեռի հաղորդակից դառնալու եւ ճախրելու աստուածարանական տեսութեան, այն է՝ իմացութեան վերին ոլորտներում, որպիսի «երանութեանը», ինքնին հասկանալի է, քչերն են հասու մահկանացուներից: Սա բնորոշում է, լռելեայն կերպով, նաեւ այն մթնոլորտը, որ ներից: Սա բնորոշում է, լռելեայն կերպով, նաեւ այն մթնոլորտը, որ տիրում էր Մործորի ուսումնագիտական կենտրոնում: Դպրութեան առումով խիստ արժէքաւոր այդ քառեակը բնագրային հետեւեալ ընթերցումն ունի.

«Շայն՝

Շուրջ պատեսցես ուսման գրոց,
Որ գիտես առնէ գինչ բով հալոց,
Մաքրագործէ ի յարբունուց,
Եւ արասցէ հաղորդ վերնոց···»

Իր սաներից պահանջում է Յովհաննէս բարեւնապետը, որ լինեն նրանք պատրաստաբան՝ «մտօք արագ եւ սուր», բայց եւ միաժամանակ գիտենան «չրթունքներն ամուր զսպել» («Լրկամեն»), երբ հարկը թելադրի.

«Պէն՝

Պատասխան ասէ դու տուր,
Ով հարցանէ գրանին երիւր,
Լիցիս մտօք արագ եւ սուր,
Բայց լրկամէ գշրթունդ ամուր»[102]:

Յատկապէս խտացուած ընդհանրացում է պարփակուած «Ջէ» գրանուան առնչութեամբ յղացուած քառատողում. այդ տառը, ասում է բարեւնապետ Յովհաննէս Մործորեցին, հարկադրում է քեզ՝ ուսումնականիդ, սովորել խրատն այն մասին, որ ձեռք բերես գիտելիքների առատութիւն, ուստիեւ դատապարտուած չմնաս մշտնջենապէս գիտանքների աղքատութեան մէջ, որպէսզի կարողանաս վրէժխնդիր լինել անօրինութիւնների դէմ եւ պաշտպանել դատդ ամենուրեք: Սա գիտութեան դրսեւորած անյաղթահարելի ուժի եւ նրա գործնական նշանակութեան այնպիսի տարփողում է իր սպառիչ բնութագրմամբ, որ նոյնիսկ մեր օրերում հիացք է առթում իր թարմութեամբ ու հնչեղութեամբ.

«Ջէն՝

Ջանիւ ըզքեզ ի խրատ,
Զի գիտութիւն առցես առատ,
Եւ մի՛ մնասցես յուսմանց ադեամ,
Զի տայցես վրէժ եւ դատ···»[103]:

Յովհաննէս բարեւնապետի բարոյա-դաստիարակչական կոդեքսում արժէքաւոր է նաեւ մի դրոյթ, որով իրօք հպարտանալ կարող է Մործորի ուսումնագիտական կենտրոնը. մեծ ուսուցչապետը յորդորում է իր սաներին՝ կեանքում բարձրանալիս պէտք է միայն «բարի գործով» բարձրանալ եւ ոչ երբեք «ստոր գործով», որ ամօթ է մարդուն···: Ընդ որում հոգով եւ իմացականութեամբ հորիզոններ նուաճելիս

101 Անդ:
102 Անդ:
103 Անդ:

ճախրում ես առաւել եթերային բնագծերը, քան ամպերն անգամ...: Այդ հիասքանչ գաղափարը բնագրային ձեւակերպմամբ հետեւեալ ընթերցումն ունի.

«Փիւրն՝

Փութա՛ արագ նախքան մարմնով,
Եւ բարձրասցիս բարի՛ գործով,
Չի թէ ելցես այժմ հոգւով,
Նա վերասցիս յառաջ ամպով»[104]:

Իր ուսուցման ամբողջ կէտ-նպատակը բարունապետը յանգեցնում է սաներին «ճշմարտութեան աշակերտ»-ներ դարձնելուն, ընդ որում գեղեցկութիւններ բանդակելով նրանց հոգիներում՝ արգելում միաժամանակ «մեղքերից հիւսուած կապերտ» գործելը, պահանջում է կեանքի վերանորոգում՝ ուսման ու գիտութեան հետ սերտօրէն աղերսուած.

«Ճեն՝

Ճշմարտութեան լի՛ր աշակերտ,
Դիմաց սիրոյն ընկարակերտ,
Մի՛ առնուցուս մեղաց կապերտ,
Այլ նորոգես ուսմամբն սերտ»[105]:

Ըստ երեւոյթին, գլխաւոր կարգախօսը կամ նշանաբանը Մործորի ուսումնագիտական կենտրոնի ամբողջ կրթութեան՝ Յովհաննէս բարունապետի օրօք եղել է՝ «ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԼԵ՛Ր ԱՇԱԿԵՐՏ» պարտադիր պահանջը...:

## Գ.

Դաւանաբանական-հասարակական գործունէութիւնը ուսուցչապետ Յովհաննէս Մործորեցու տարեգրութեան մէջ կարեւոր տեղ է բռնում:

Ցայտնի է, որ ուսուցչապետ Յովհաննէս Մործորեցին ոչ միայն դասատացութեամբ է զբաղուել մինչեւ խոր ծերութիւն, այլեւ աշխատութիւններ է մատենագրել, մեկնութիւններ հեղինակել (որոնց մասին յընթացս մեր չարադրանքի յիշատակումներ եղել են), քարոզներ[106] գրել ու հանե-

104 Անդ, թ. 143բ:
105 Անդ, թ. 142բ:
106 Միայն զարմանալ կարելի է, թէ այդ ինչպէս է որ միջնադարեան հայ ձեռագրագիտութեան այնպիսի մասնագէտը, որպիսին ակադ. Լ. Խաչիկեանն է, պատշաճ է համարում պնդել, այն էլ «լրջութեամբ», որ իբր քարոզների «մանրակրկիտ ուսումնասիրութեամբ հնարաւոր է լինելու աւելի հանգամանօրէն բացայայտել միջնադարեան Հայաստանի ուսումնական կենտրոնների կազմակերպչական (°) սկզբունքների (sic!), ուսանողներին հրամցուող գիտելիքների (°°), ուսուցման եղանակների (°°°) հետ առնչուող խնդիրները» («Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 183): Եւ, որպէս թէ, «այս առումով որոշ բան արդէն (°°°) արուած է», ու վկայակոչում է, որքան էլ տարօրինակ է, ...իր յօդուածը՝ «տե՛ս մեր «Գլաձորեան համալսարանը եւ նրա սաների աւարտական առենախօսութիւնները», տպագրուած Երեւանի Պետական համալսարանի գիտական աշխատութիւնների XXIII հատորում, 1946, էջ 423–450»: Ցաւալի է հաստատել, որ հեղինակը սոյն պնդումն անելիս՝ դադարել է հասկանալուց երբեմնի տպագրած նոյնիսկ իր յօդուածի արձարձած խնդիրները՝ տարիներ յետոյ այդքան անյարիր վերագրումներ անելով դրան, այն էլ յատկանշ «ինքնաբաւականութեամբ»: Ընդհակառակն, իր յիշատակած յօդուածում Լ. Խաչիկեանը, հակադրուելով այն կարծիքին, որ առանձին բանասէրների կողմից Գլաձորի համալսարանի աւարտաճառները ընկալուել են իրրեւ «քարոզներ» կամ քարոզների «նախերգանքներ», դեռ այն ժամանակ նշել է. «Առաջին հայեացքից մեզ հետաքրքրող



լուկներ յղացել, ինչպէս եւ լատիներէնից թարգմանութիւններ կատարել աստուածաբանական երկերի: Այս բոլորի վրայ, իհարկէ, մանրամասն կանգ չենք առնի, քանի որ դրանք արդէն իսկ հանգամանօրէն բնութագրուած են բանասիրութեան մէջ[107], այլ կը սահմանափակուենք դրանցից յատկապէս միայն մի երկուսի քննութեամբ, որոնք սերտօրէն աղերսւում են Մործորեցու դաւանաբանական-հասարակական գործունէութեանը, ուստիեւ կարեւորութիւն ունեն նրա կենսագրութեան ամբողջացման համար, ինչպէս եւ, բնականաբար, ըստ էութեան կ'անդրադառնանք սերունդներին թողած նրա քերականական ժառանգութեանն, այն է՝ «Համառօտ տեսութիւն էքերականի» երկին, որը 14 ձեռագրական ընդօրինակութիւնների համադրմամբ իրրեւ գիտա-բննական բնագիր հայագիտութեան մէջ առաջին անգամ ներկայացնում ենք գիտական հասարակայնութեանը՝ ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւններով հանդերձ:

Ուսուցչապետի մատենագրական վաստակի եւ թողած ճիչատակարանների ամբողջական եւ համակողմանի քննութիւնից պարզւում է, որ Յովհաննէս Երզնկացին Գլաձորի համալսարանից բաժանուելուց յետոյ եւ Մործորի ուսումնագիտական կենտրոնը գլխաւորելու առաջին իսկ տարիներից աստիճանաբար հեռանալով գլաձորեան դաւանաբանական-քաղաքական ուղղութիւնից, ընդգրկւում է միաբարական չարժման մէջ, բայց եւ վերջնականապէս բնաւ չի խզում իր կապերը գիտական այդ կաճառի հետ իր ամբողջ կեանքում, ինչպէս դա վկայում են ձեռագրական ընդօրինակումների ու բազմացումների փոխադարձ գործառնութիւնները, մի կողմից, միւս կողմից՝ Երզնկացու իսկ չափաւորութիւնը նոր որդեգրած դաւանաբանական իր կեցուածքում: Նրա դաւանաբանական նոր կողմնորոշման մէջ անչուշտ զգալի դեր կատարեցին ինչպէս իր անմիջական հովանաւորողի՝ Արտազ գաւառի եպս. Զաքարիա Մործորեցու ազդեցութիւնը, այնպէս եւ կիլիկիայի հայկական պետականութեան նոր քաղաքական գիծը, որը փորձում էր անցկացնել Ամենայն Հայոց կաթողիկոսարանը: Այս բոլորով հանդերձ Յովհաննէս Երզնկացին երբեք ծայրայեղ ունիթոռական չդարձաւ եւ «Ճրա» մակդիրը չկրեց, ինչպէս դա պարզորոշ երեւում է իր գրութիւններից, երբ այդ չարժման համարեա բոլոր մոլեռանդ հայ գործիչները սնապար-

յօդուածները (իմա՝ Գլաձորի համալսարանականների «աւարտաճառերը» – Լ. Խ.) թողնում են քարոզների սովորական նախերգանքների տպաւորութիւն: Անգամ մեր մատենագրութեան ամենագիտակ անձնաւորութիւններից մէկը՝ բանասէր Ն. Ակինեանը իր համառօտ ցուցակում գրանցել է այդ առենախօսութիւնները, որպէս սովորական «նախերգանք քարոզից» եւ թողել է գրանցել է այդ առենախօսութիւնները, որպէս սովորական «նախերգանք քարոզից» եւ թողել է անուշադիր: Սակայն մանրակրկիտ բննութիւն կատարելուց յետոյ դժուար չէ փոխել նրանց մասին ստացած առաջին տպաւորութիւնը» (տե՛ս Լ. Խաչիկեանի նշուած յօդուածը, էջ 434–35, ընդգծումները իմն են – Լ. Խ.): Իրականում՝ Լ. Խաչիկեանը ուզենար էլ չէր կարող քննդ

ծօրէն «Ֆրա» մակդիրն ընդունեցին. վերջիններս ստորաքարշաբար պատրաստակամութիւն էին ցուցաբերել, յանուն կաթոլիկական չարժման հեռամէտ նպատակների, հրաժարուել ազգային աւանդոյթներից ու առանձնայատկութիւններից:

Այսպէս, ուրեմն, բնաւ պատահական չէր, որ Յովհաննէս Մործորեցու առաջին թարգմանական երկերը լատիներէնից էին, այն էլ կաթոլիկական դաւանաբանութեան տեսական-հիմունքային կարեւորագոյն աշխատութիւններից: Դրանք, գաղափարական մշակում նախապատրաստելով՝ անմիջաբար եւ ուղղակիօրէն առնչւում էին պապական քաղաքական ներթափանցման եւ ուժեղացման հրատապ խնդիրների հետ, որ առանձին սրութեամբ այժմէական նշանակութիւն էին ձեռք բերել պապական ծաւալապաշտական նկրտումների համար դէպի արեւելք ԺԳ դարի վերջերին եւ ԺԴ դարի սկզբներին: Կաթոլիկութեան տարածումը Արեւելեան Հայաստանում դաւանաբանական իր «զգեստաւորմամբ» յայտնի դարձաւ «ունիթոռական» կամ «միաբարական չարժում» անունով: Այն մեծ յուզում առաջ բերեց, սկզբնապէս Կիլիկեան հայկական թագաւորութեան տարածքի ուսումնագիտական եւ հոգեւոր կենտրոններում, արքունիքում ու կաթողիկոսարանում, իսկ Հայաստան բնաշխարհում՝ Հաղբատում, Գլաձորի համալսարանում եւ հոգեւոր այլ կենտրոններում: «Ունիթոռական» կամ «միաբարական» չարժման նման անուանումը արտաքնապէս այն «անմեղ» նշանակութիւնն ունէր, որ պէտք է պարզապէս քրիստոնէական երկու եկեղեցիները՝ հայկական լուսաւորչադաւան եւ հռոմէական կաթոլիկ նուիրապետութիւնները մերձեցնային եւ միաւորուէին, սակայն արդիւնքում անպայման ոչ այլ կերպ բան առաջինի դաւանաբանական բացարձակ գիջումներով ու անկախութեան կորցնտով՝ միաձուլմամբ Հռոմի կաթոլիկական եկեղեցու հետ: Ձեռագրական հարուստ նիւթերի քննութեամբ ցոյց ենք տուել մեր մի այլ աշխատութեան մէջ Գլաձորի համալսարանի, որպէս նաեւ միաբարական չարժման դէմ ծաւալուած դաւանաբանական-գաղափարական պայքարը կազմակերպող եւ գլխաւորող չտաբի, դերն ու նշանակութիւնը այս ժամանակաշրջանում՝ բացայայտելով ինչպէս դրա մերձաւոր, այնպէս եւ հեռամէտ նպատակները, այդ առթիւ գրելով. «Այս չարժման մերձաւորագոյն նպատակն էր՝ հայ եկեղեցու բացարձակ հպատակեցումը եւ միացումը Հռոմի միահեծան պապականութեանը՝ կաթոլիկութեան տարածումով եւ հայութեան ազգովին վերաներումով, մայրենի լեզուի փոխարէն լատիներէնի ընդունումով, ազգային մշակոյթի փոխարէն հռոմէական մշակոյթի արմատաւորումով, այդ պատճառով էլ դաւանաբանական այդ հոսանքը ստացել է «ունիթոռական» (լատ. Unitor, հյ. «միացնող», «միաբարական») անունը. իսկ հեռաւոր, բայց հիմնական նպատակը՝ պապական գերիշխանութեան հաստատումը Կիլիկիայում եւ Արեւելքում»[108]:

Հարկ է ընդգծել, սակայն, որ չարժման նման ուղղուածութիւնը առաւել ցայտուն ու բնորոշ էր պատմական Հայաստանում՝ այնքանով, որքանով այստեղ չկար հայկական պետականութիւն. բայց եւ անհերքելի իրողութիւն էր միաժամանակ, որ ազգային եկեղեցու անկախութեան նախանձախնդրութիւնը եւ նրա աւանդոյթների պահպանութիւնը անհամեմատ աւելի

108 «Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ (XIII-XIV դդ.)», էջ 202-203, տե՛ս նաեւ «Հասկ» հայագիտական Տարեգիրքը, Անթիլիաս, 1981-1982 թթ., էջ 56-84:



ուժեղ էր բնաշխարհում, քան Կիլիկեան հայկական թագաւորութիւնում, ուստեւ հայ ժողովրդի ազգային-կրօնական աւանդոյթների դէմ յանդգնաբար արուած ամէն մի ոտնձգութիւն դիմագրաււում էր փոթորկալի ընդդիմութեամբ: Այդ իսկ պատճառով միաբարական չարժման ներկայացուցիչները բնաշխարհում իրենց ծաւալած գործունէութեամբ առաւել հրահրիչ էին, առաւել մոլեռանդ ու նոյնիսկ թշնամական, հետեւաբարեւ՝ առաւել մարտաշունչ դաւանափոխներ, որոնք իրենց քայքայիչ ներգործութեամբ արդէն իսկ լուրջ վտանգի էին ենթարկում հայ ժողովրդի հասարակական կազմակերպութիւնը, համախմբուածութիւնը ու մինչեւ իսկ նրա յետագայ գոյատեւումը: Բնականաբար՝ միաբարների եւ նրանց գաղափարախօսութեան դէմ Արեւելեան Հայաստանի հոգեւոր կենտրոնների, մանաւանդ Գլաձորի համալսարանի մղած պայքարն էլ անողոք եւ անզիջում բնոյթ էր ստացել:

Սակայն ա՛յլ էին Կիլիկիայի հայկական թագաւորութեան պայմանները, հետեւաբարեւ՝ կաթողիկոսարանի ու արքունիքի վերաբերմունքը միաբարական այդ չարժման հանդէպ առհասարակ: Այստեղ արդէն կային պետական շահեր, երկրի անվտանգութեան պահանջներ, որոնց պէտք է ծառայէր եւ ամբողջովին ենթարկուէր Կիլիկիայի հայկական դիւանագիտութիւնը, միեւնոյն է՝ արքունիքի՞, թէ՞ կաթողիկոսարանի միջոցով: Բանն այն է, որ Կիլիկեան հայկական թագաւորութիւնը ոչ միայն իր աշխարհագրական դիրքով ու տնտեսական յարաբերութիւններով արդէն իսկ Եւրոպայի ազդեցութեան ոլորտի մէջ էր ընդգրկուած, այլեւ հէնց երկրի ներսում հաստատուած բազմաթիւ լատին իշխանական տիրոյթների առակայութիւնը եւ նրանց հետ սերտ համագործակցութիւնը ընդհանուր թշնամու դէմ՝ ռազմական սուր բախումների ժամանակ, ինչպէս եւ ազգակցական կապերի հաստատումը նրանց հետ՝ խորը նստուածք էր տուել երկրի հասարակական կացութաձեւում ու բարքերում՝ եւրոպականացման իմաստով. մի կողմից՝ երկարատեւ հակամարտութիւնը Բիւզանդիայի հետ, որը պայմանաւորուած էր տերիտորիալ նուաճումներով, միւս կողմից՝ կիլիկեան հայկական թագաւորութեան չրջապատուած լինելը մահմեդական աշխարհով, բնականաբար մղում էին նրան բաղաքական եւ ռազմական մերձեցմանը Եւրոպական պետութիւնների, բայց առաջին հերթին՝ պապականութեան հետ, որը ամենահզօր ուժն էր եւրոպական քաղաքականութեան մէջ տուեալ ժամանակաշրջանում: Հէնց առաջին գրագրութիւններից (որ տեղի են ունեցել, մի կողմից՝ Կիլիկիայի հայկական արքունիքի ու կաթողիկոսութեան, միւս կողմից՝ պապական իշխանութեան միջեւ) միանգամայն պարզ երեւում է, որ հայկական արքունիքի ու կաթողիկոսութեան մերձեցումը պապական իշխանութեան հետ՝ գերազանցապէս բաղաքական ու ռազմական դաշինքի եւ աջակցութեան շարժառիթներով է թելադրուած եղել. իսկ կրօնական-դաւանաբանականը՝ առաջադիր նպատակին հասնելու համար դիւանագիտական բանակցութիւնների ելակէտ եւ սակագին: Մինչդեռ պապական իշխանութեան համար, ընդհակառակը, առաջնայինն ու վճռականը դաւանաբանականն էր, հայ եկեղեցու բացարձակ հպատակեցումը Հռոմին՝ կաթոլիկութեան ընդունումով, որպէսզի ամենահեշտ, բայց եւ նրբամիտ ճանապարհով՝ իր գերիշխանութիւնը հաստատի Կիլիկեան հայկական թագաւորութեան տարածքում եւ նրանից էլ դուրս՝ շատ հեռուները:

Ցետագայ ամբողջ ժամանակաշրջանում, ընդհուպ Գլաձորի համալսարանի գոյատեւման ընթացքի բոլորումը եւ Կիլիկեան թագաւորութեան անկումը, հայկական արքունիքի (ինչպէսեւ՝ կաթողիկոսութեան) եւ պապա-

կան իշխանութեան դրսեւորած այս երկու տենդենցները հակադրուել են իրար, սկզբում՝ խուլ եւ յամառ պայքարով, իսկ յետագայ յարաձիգ ժամանակաշրջանում՝ բացայայտ, փոթորկալի եւ անողոք, ըստ որում առաջին տենդենցի (հայկական արքունիքի) թուլացման եւ թեք մակարդակով տեղատուութեան արդիւնքով, երկրորդի (պապականութեան) ուժեղացման ու ներթափանցման սպառնալի վտանգներով: Երբ առաւել բացայայտ ու վտանգաւոր էր դառնում երկրորդ տենդենցը, իսկ հայկական արքունիքը լիովին վերասերւում էր նաեւ ազգակցութիւններով լատինների հետ՝ ընկրկելով սկզբնական շրջանում դաւանաբանական զիջումների նկատմամբ դիմադրողական կորովից ու վճռականութիւնից, հանդէս եկաւ մի երրորդ տենդենց, որն իր սուր ծայրով ուղղուած էր, մի կողմից՝ պապականութեան դէմ յանձինս ունիթոռների, միւս կողմից՝ հայկական արքունիքի եւ հոգեւոր վերնախաւի՝ կաթողիկոսութեան դէմ, յանուն ազգային մշակոյթի ու աւանդոյթների պահպանման եւ ինքնուրոյնութեան: Որքան առաջին տենդենցը ուժեղացնում էր ճնշումը, այնքան բարձրանում էր երրորդ տենդենցի դիմադրողականութիւնն ու մարտունակութիւնը: Հէնց այս երրորդ տենդենցի գաղափարախօսական չարաբն էլ հանդիսացաւ Գլաձորի համալսարանը՝ մեծանուն գիտնական եւ բարեւնպաստ Եսայի Նչեցու գլխաւորութեամբ:

Նկատենք նաեւ, որ պապական իշխանութեան նուաճողական նկրտումների իրագործման տեսակէտից մեծ դեր խաղացին ԺԳ դարի սկզբներին հիմնադրուած կրօնական երկու միաբանութիւնները, որոնք պատմութեանը յայտնի են «Ֆրանցիսկեան» եւ «Դոմինիկեան» անուններով. էական հարցերում նոյն հիմունքներով էին ղեկավարւում կրօնական երկու միաբանութիւնները էլ՝ հաւատարմօրէն ծառայելով պապի իշխանութեանը իբրեւ չափազանց ազդեցիկ կազմակերպութիւններ. բայց առաջինները (Ֆրանցիսկեանները) ճանաչուել են իբրեւ Մինորք (Minores), այսինքն «Նուաստներ» կամ «Կրտսերներ», իսկ երկրորդները (Դոմինիկեանները)՝«Քարոզիչներ» (Predicatores):

Ինչպէս Ֆրանցիսկեանները, այնպէս եւ Դոմինիկեանները, կրօնական աքեմի տակ, հանդիսացել են, ըստ էութեան, պապական իշխանութեան քաղաքական գործակալները, որոնք չատ յաճախ նաեւ պաշտօնապէս հանդէս են եկել իբրեւ դեսպաններ, դիւանագէտներ ու բանագնացներ. ըստ որում՝ պապական իշխանութեան եւ Եւրոպական պետութիւնների՝ յատկապէս դէպի Արեւելք եւ Ասիա ներթափանցելու գործում վճռական դեր են խաղացել կրօնական ֆարաջայով քօղարկուած այս միաբանութիւնները: Հայ ունիթոռները անմիջապէս կապուած էին Դոմինիկեանների հետ, ընդորում բացայայտօրէն իրենց էլ անուանելով «Քարոզիչներ»:

Ունիթոռական բոլոր ոտնձգութիւնները, որ կատարուում էին Արեւելեան Հայաստանում՝ խմորումներ եւ երկպառակութիւններ ստեղծելով, ղեկավարւում էին Պարսկաստանում՝ Մարաղայում բուն դրած կենտրոնից, որին գլխաւորում էր պապի անձնական նուիրակ, Դոմինիկեան միաբանութեան ականաւոր ներկայացուցիչ Բարթողիմէոս Բոլոնիացին. սա իր ուսումնառութիւնը ձեռք էր բերել ժամանակի ամենանշանաւոր ուսումնականներից Թովմա Աքուինացու մօտ. «Քահանայապետն Հռովմայ Ցովհաննէս ԻԲ,– կարդում ենք Զարբհանալեանի մօտ,– արեւելեան ազգաց կրօնական ու քաղաքական դիրքը ճշնելու համար ղրկեց յարեւելս (1316) զլատին վարդապետն Բարթուղիմէոս, որ Իտալիոյ Պոլոնիա քաղաքին ընտիր տոհմի մը սերունդ էր»[108]բ: Քաղաքական առաքելութիւնը միանգամայն ճիշդ է նկատել Զարբհանալեանը՝ կրօնական աքեմի տակ ծպտուած Բարթողիմէոսի:

Պարսկաստանում եւ հարեւան քրիստոնեայ երկրներում ազդեցութեան ոլորտներ ստեղծելու համար պապի այս նուիրակը ջանադիր կերպով սովորում է պարսկերէն լեզուն եւ անմիջապէս ձեռնամուխ լինում թարգմանչական տենդագին ու ծաւալուն աշխատանքի, եւ քիչ անց մինչեւ անգամ սովորում է հայոց գրաբար լեզուն ու թարգմանութիւններ կատարում՝ հայ ունիթոռների իսկ օժանդակութեամբ: Նա դեռեւս 1320–22 թուականներից, ինչպէս ձեռագրական աղբիւրների քննութեամբ հաւաստում է Գարեգին Յովսէփեանը, կապեր է հաստատել Զաքարիա Մործորեցու եւ Ցովհաննէս Երզնկացու հետ[109]:

Մեր այս մեծանուն ուսուցչապետի եւ մտաւորականի հասարակական գործունէութիւնը ուրուագծուում է դաւանաբանական հէնց այս պայքարով, որը միաբարական չարժում անունն էր կրում: Բանն այն է, որ Յովհաննէս Երզնկացին ծործորեան իր գործունէութեան ամբողջ ժամանակաշրջանում յարում է հայ հասարակական կեանքն այդ ընթացքում յուզող վերյիշեալ երեք տենդենցներից երկրորդին, այն է՝ ունիթոռական չարժմանը, հէնց նրա չորչոփների տարածման ամենավաղ շրջանից:

Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսը անչուշտ քաջ իրազեկ էր հայ բնաշխարհում գործող հոգեւորականութեան տարբեր տրամադրութիւններին՝ իր գլխաւոր համախոհներից նամանաւանդ Զաքարիա եպս. Մործորեցու միջոցով. վերջինս չատ հեղինակաւոր ու ազդեցիկ դէմք էր, յայտնի մանաւանդ իր եւ պատմագրական աշխատութիւնների հեղինակ, որոնք մեզ չեն հասել տարաբախտաբար: Լինելով Գրիգոր Անաւարզեցու ամենաեռանդուն աջակիցը բնաչխարհում միաբարական չարժման ծաւալման գործում՝ Զաքարիա եպս. Մործորեցին «զայլս եւս յորդորէր ի նոյն»[110],– գրում է հայոց պատմութեան մութ ծալքերին քաջագիտակ Մ. Զամչեանցը: Այնքանով, որքանով Արտազի հոգեւոր իշխանաւորը հովանաւորողն էր նաեւ Մործորի ուսումնագիտական կենտրոնի, բնականաբար իր համախոհն էր դարձրել նաեւ նրա ուսուցչապետին՝ Ցովհաննէս Երզնկացուն, եւ այդ մասին անչուշտ գիտէր նաեւ կաթողիկոս Գրիգոր Անաւարզեցին: Ինչպէս երեւում է պատմական փաստերի վկայութիւնից, որ ձեռքի տակ է ունեցել Մ. Զամչեանցը, ազգին յուզող յոյժ կարեւորագոյն հարցերի քննարկմանը կաթողիկոսը մասնակից էր դարձնում, դեռ վաղ ժամանակներից, բնաչխարհի ամենակարկառուն դէմքերի հետ միասին, նաեւ ուսուցչապետ Ցովհաննէս Մործորեցուն՝ նրան եւս յատուկ ուղերձներ եւ կիլիկիա մեկնելու հրաւէրներ յղելով[111]: Նչանակում է՝ Ցովհաննէս Մործորեցին արդէն իսկ այնպիսի հեղինակութիւն էր, որ նրան զանց առնել կամ անտեսել չէր կարող մինչեւ իսկ Հայոց կաթողիկոսը համազգային կարեւորագոյն հարցերի լուծման ժամանակ:

Ինչպէս յայտնի է, Սսում գումարուած ժողովը, որն իր քննարկած կանոններով ու առաջարկութիւններով պիտի հաստատէր հայ եկեղեցու

---

108բ Գ. Զարպհանալեան, *Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց*, Վենետիկ, 1878, էջ 197:

109 *Տե՛ս* Գար. Ցովսէփեան, «Նաղարակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ», մաս Բ, էջ 257:

110 Մ. Զամչեանց, *Պատմութիւն հայոց*, հ. Գ, էջ 305:

111 *Անդ*, էջ 304–305:

միաւորումը Հռոմի եկեղեցու հետ՝ չվաւերացուեց, առաջ բերելով չփոթութիւն, տագնապ ու խռովայոյզ իրարանցում ինչպէս Կիլիկիայում, այնպէս եւ բնաշխարհում: Միայն տասը տարի անց, զարձեալ պապական իշխանութեան ճնշման առաւել ուժեղացմամբ եւ Կիլիկեան թագաւորութեան քաղաքական դիրքերի խիստ թուլացմամբ էր պայմանաւորուած Ադանայի համաժողովի գումարումը, որը կայացաւ 1317 թուականին: Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսը այլեւս չկար, նրան յաջորդել էր Կոստանդին կաթողիկոսը: Թագաւորն էլ Օշինը չէր, այլ՝ Լեւոն Գ-ն: Բնաշխարհից հրաւիրուածների մէջ էր նաեւ ուսուցչապետ Յովհաննէս Երզնկացին՝ Զաքարիա եպիսկոպոս Մործորեցու եւ այլ երեւելիների հետ միասին: Նրա ներկայութեան ու մասնակցութեան փաստացի վկայութեան վերաբերեալ կան հաստատ պնդումներ նոյնիսկ ժամանակակիցների կողմից: Այսպէս, Գլաձորի համալսարանի ուշ շրջանի ուսումնականներից Յովհան Քոնեցին, որն ամենաեռանդուն մասնակցութիւնն էր բերել ոչ միայն Ադանայի համաժողովին, այլեւ միաբարական շարժման բոլոր ձեռնարկումներին՝ ուծացողների գլխաւոր կազմակերպիչն ու ոգեշնչողը հանդիսանալու հանգամանքի պատճառով, իր «Թղթում» վկայում է. «Եւ ի մէջ եպիսկոպոսաց, որք եկեալ էին այն ժողովն եւս եղեւ արհեպիսկոպոսն Զաքարիա, որ էր իշխող եկեղեցւոյն սրբոյն Թադէոսի առաքելոյն... եւ ի մէջ նոցին էր եւ մեծ վարդապետն Յոհան Մործորեցին»[112]: Նշանակում է՝ 1317 թուականին Յովհաննէս Երզնկացին ուղեւորուել է Կիլիկիա՝ Ադանայի համաժողովին մասնակցելու լիազօրութեամբ:

Զամչեանցը այս վկայութիւնը, իրրեւ արժանահաւատ արձանագրութիւն, ընդունում է առանց վերապահութեան[113]: Մ. Օրմանեանը, սակայն, վիճարկում է եւ հաւատ չի ընծայում նրան՝ միայն այն պատճառաբանութեամբ, որ հրաւիրուածների ցուցակում (հրատարակուած կղեմէս Գալանոսի աշխատութիւնում) յականէ անուանէ չի յիշատակուած ոչ Յովհաննէս Երզնկացու, ոչ էլ Զաքարիա եպս. Մործորեցու անունը, եւ որ Քոնեցին «պարզ յիշողութեամբ» է վերարտադրել այն իր «Թղթում»: «Քոնեցին իր նամակին մէջ իրրեւ ներկայ կը յիշէ նաեւ Զաքարիա Մործորեցին՝ Արտազի արքեպիսկոպոսը եւ Յովհաննէս Երզնկացի կամ Մործորեցի ծանօթ վարդապետը: Սակայն երկուքին ալ անունները ցուցակին մէջ չեն գտնուիր եւ անհնար է մոռցուէին, մինչ Քոնեցին վերջէն կը գրէ պարզ յիշողութեամբ»[114]:

Նախ՝ Ադանայի ժողովի մասնակիցների ցուցակը, որ բերում է կղեմէս Գալանոսը, լրիւ չէ. յիշատակում է միայն 25 եկեղեցականների եւ 12 աշխարհականների՝ թագաւորի գլխաւորութեամբ 11 իշխանների անունները, ընդ որում ընդամէնը 37 հոգու անուանացանկ, վերջում անելով մի յիշեցում, որը չատ կարեւոր է տուեալ դէպքում, բայց անտեսել է Օրմանեանը. «եւ այլ եւս բազմութիւնք fահանայից եւ կրօնաւորաց»[115] ներկայ էին: Նշանակում է՝ անհրաժեշտ չի համարուել համաժողովի բոլոր մասնակիցներին ցուցակում յականէ անուանէ ներկայացնելու: Բացի այդ, օրինա-

112 Կղեմէս Գալանոս, *Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ*, հ. Ա, էջ 517–18:
113 *Տե՛ս* Մ. Զամչեանց, *Պատմութիւն հայոց*, հ. Գ, էջ 314:
114 Մ. Օրմանեան, *Ազգապատում*, Պէյրութ, 1960, հ. 1, մասն Ա, էջ 1819:
115 Կղեմէս Գալանոս, *Նշուած աշխատ.*, էջ 505:



կան հարց է ծագում. ունիթոռների գլխաւորի եւ Յովհաննէս Մործորեցու ժամանակակցի՝[116] Յովհան Քոնեցու թէկուզեւ «յիշողութեամբ» արած վկայութիւնը ինչո՞վ է թերարժէք, եթէ նոյնիսկ մի պահ ընդունենք, որ այն ամրապնդող ուրիշ որեւէ հաւաստում էլ չլիներ: Բայց կա՛յ նաեւ յաւելադիր վկայութիւն էլ, որով բոլոր տեսակի տարակարծութիւնները փարատւում են:

Այսպէս, Կիլիկիայում գումարուած զաւանաբանական ժողովների Պատմիչը, նոյնպէս անդրադառնալով Ադանայի համաժողովին նաեւ Յովհաննէս Երզնկացու իրօք ներկայ եղած լինելու փաստին, յիշատակագրում է. «...Համագումարեցին ի քաղաքն Ատանայ, ընդ որս էր եւ մեծ արքեպիսկոպոսն Մեծին Հայաստանի Զաքարիայ, վերատեսուչ վանաց սրբոյն Թադէի առաքելոյն... եւ վարդապետն հռչակաւոր Յոհան Մործորեցի»[117]:

Զարմանալիօրէն Ց. Քիւրտեանը հաւատ չի ընծայում այս վկայութեանը՝ յայտարարելով, թէ այն «կրնայ վերաբերիլ ոեւէ Յովհաննիսի»[118]: Մի՞թէ այդպէս է: Առանձին խորաթափանցութիւն հարկաւոր չէ ըմբռնելու համար, որ Պատմիչի հաղորդումը վերացական Յովհաննէսի մասնակցութեան մասին չէ Ադանայի ժողովին, այլ՝ «հռչակաւոր վարդապետ Յովհաննէս Մործորեցու» վերաբերեալ է, որը մտերիմ համախոհն էր Ս. Թադէի վանքի «վերատեսուչ»՝ հանրաճանաչ Զաքարիա եպիսկոպոսի, որի հետ միասին էլ, ինչպէս յիշատակուած է աղբիւրում, ուղեւորուել է Կիլիկիա՝ Ադանայի ժողովին պաշտօնապէս ներկայ լինելու: Հետեւաբար Ց. Քիւրտեանի յայտարարութիւնը, թէ «Պատմիչ ժողովոյն Կիլիկիոյ զուրկ կը նկատի վստահելի աղբիւր մը ըլլալէ, յապաղած գրչի մը ենթադրութիւնը ըլլալէ զատ ուրիշ արժէք մը չի ներկայացներ»[119],- բանավէճի մէջ երբեմն խոտորիօրէն կիրառուող անձնապաստան եւ քմահաճ դատում է աղբիւրների վաւերականութեան նկատմամբ առհասարակ՝ ինչ գնով էլ լինի ամէն ինչ ժխտելու եւ իր մտասեւեռումի «իրաւացիութիւնը» անպայման պաշտպանելու անկուրծ մտահոգութեամբ: Այլապէս անհիմն կերպով չէր կչտամբի Քիւրտեանը աղբիւրագիտական փաստերի նկատմամբ խստագոյն անաչառութիւն ցուցաբերող Ղ. Ալիշանին, գրելով. «Հ. Ալիշան կ'ուզէ որ գոնէ միայն Յովհաննէս Երզնկացին (Մործորեցի նոյնացուած Պլուզի հետ – Լ.Խ.) այս ժողովին... մասնակցի»[120]: Ասենք սակայն, որ քննարկուող աղբիւրի արժանահաւատութիւնը անտարակուսելի է նաեւ նրանով, որ այն ամրապնդւում է համաժամանակեայ կամ գրեթէ համաժամանակեայ վաւերական այլ վկայութիւններով, որ վերը առաջադրեցինք:

116 Ի դէպ, ակադ. Լ. Խաչիկեանը եւ Ս. Աւագեանը Յովհան Քոնեցուն «ժամանակակից» են համարում ոչ թէ Յովհաննէս Մործորեցուն, այլ՝ Յովհաննէս Երզնկացի Պլուզին..., որպիսի պնդումը, անշուշտ, ժամանակավրէպ է: Նրանք վերջերս հրատարակած «Յովհաննէս Քոնեցի. Ցաղագս քերականին» (Երեւան, 1977) աշխատասիրութեան ծաւալուն Առաջաբանում գրում են. «եւ իրօք, Յովհաննէս Քոնեցու ժամանակակից (թթթ) Յովհաննէս Երզնկացու բերական ութեան մէջ, ինչպէս նաեւ սրա հետեւութեամբ յօրինուած Յովհաննէս Մործորեցու «Համառօտ տեսութիւն բերականի» երկում...» (էջ 68): Ընդ որում ժամանակագրական այս սխալի վրայ պնդում է արւում այն դէպքում, երբ Քոնեցին, ըստ նրանց, «1328 թ. մի քանի տարի առաջ աւարտել էր արդէն Գլաձորի համալսարանը եւ կարգուել երկրակի հոգեւոր առաջնորդ (տե՛ս անդ, էջ 39): Մինչդեռ Յովհաննէս Երզնկացի Պլուզը դեռեւս 1293 թուականին արդէն իսկ կնքել էր իր մահկանացուն:
117 Ց. Տաշեան, *Յուցակ ձեռագրաց...*, էջ 115:
118 Ց. Քիւրտեան, *Երիզա եւ եկեղեաց գաւառ*, էջ 241:
119 *Անդ*:
120 *Անդ*:

Յովհաննէս Երզնկացու, որպէս հասարակական գործչի, կերպարը ուրուագծելիս չափազանց կարեւոր է նրա վարքագծի բացայայտումը դաւանաբանական բուռն տարաձայնութիւնների առթիւ, թէկուզեւ իր կողմնորոշմամբ միարարական չարժմանը յառած լինելով հանդերձ: Եւ ահա Զամչեանցը եւ Ալիշանը, իրենց միայն յայտնի ձեռագրական աղբիւրներից մեկնելով, յատկապէս ընդգծում են Յովհաննէս Երզնկացու վարքագծի չափաւորութիւնն ու հաւասարակշռուածութիւնը Լուսաւորչական հայ եկեղեցու եւ Հռոմի կաթոլիկ եկեղեցու միաւորման համար ծաւալուած պայքարի ամբողջ ընթացքում: Պարզւում է, որ Յովհաննէս Երզնկացին այնքան էլ մոլեռանդ միարարական չի եղել, ինչպէս միւս ունիթոռները: Այսպէս, խիստ հաւանաբար Ադանայի ժողովի նախօրէին Սիւնեաց աշխարհի մետրոպոլիտ Յովհաննէս Օրբելեանի եւ Արտազ գաւառի Զաքարիա եպս. Մորթորեցու գրագրութիւնների քննարկման առթիւ Զամչեանցը այն ուշագրաւ փաստն է արձանագրում, որ Յովհաննէս Երզնկացին իր խորհուրդներով՝ չափաւորութեամբ եւ հաւասարակշռուած դատումներով Զաքարիա եպս. Մորթորեցուն հեռու է պահում յախուռն քայլերից ու անհեռատես գործողութիւններից, որոնք կարող էին ծանր եւ անսրբագրելի հետեւանքներ ունենալ հայ ժողովրդի Արեւելեան հատուածի համար. «Զայս թուղթ Ուրպէլի առեալ Զաքարեայ՝ թէպէտ եւ ինչ ոչ անսաց նմա, բայց ըստ խորհրդոյ Յովհաննու վարդապետի Մորթորեցւոյ՝ որ էր առ նմա՝ սկսաւ այնուհետեւ զգաստութեամբ վարիլ առ արտաքս, զգուշացեալ յորպէլէ եւ յայլոց. քանզի ետես եւ ինքն, թէ անհնարին իմն էր միահաղոյն յայտնի կատարել զամենայն զոր կամէր կաթողիկոսն...»[121]:

Կարծիք է յայտնուած այն մասին, որ Ադանայի ժողովից յետոյ Յովհաննէս Երզնկացին, իբր, կիլիկիայից մեկնել է Աւինիոն եւ տեսակցութիւն ունեցել Յովհաննէս IԲ պապի հետ՝ ելնելով լոկ այն փաստից, որ Երզնկացին յաջորդ մի քանի տարիներին «հրամանաւ» պապի թարգմանում է լատիներէնից Թովմա Աքուինացու «Ցաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» աշխատութիւնը, որը համաբուում է կաթոլիկական եկեղեցու սկզբունքների վերաբերեալ մեկնաբանական կարեւորագոյն երկերից: Այս առթիւ Լ. Խաչիկեանը գրում է. «Հակուած ենք կարծելու, որ այս ճամբորդութիւնը չի սահմանափակուել կիլիկիայով: Մորթորեցին, հաւանաբար, ուղեւորուել է նաեւ Աւինիոն ու տեսակցել Յովհան ԻԲ պապի հետ: Քիչ առաջ ասացինք, որ Թովմա Աքուինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկի թարգմանութիւնը նա ձեռնարկել է, ինչպէս ինքն է գրում, «հրամանաւ պապին Հռոմայ», իսկ այդպիսի հրամանն Մորթորեցի վարդապետը կարող է ստանալ՝ անձամբ տեսակցած լինելով կաթոլիկ եկեղեցու վեհապետի հետ, հռոմէական եւ հայկական եկեղեցիների միաւորման հետ առնչուող տեսական ու գործնական հարցերի շուրջ բանակցելու համար»[122]:

Աւինիոն մեկնելու մասին այս վարկածը, սակայն, զուրկ է ամէն մի հաւանականութիւնից: Միայն այն իրողութիւնը, որ Երզնկացին իր յիշատակարանում հաւաստում է, թէ «հրամանաւ» պապի ստանձնել է դրա թարգմանութիւնը, դեռեւս չի նշանակում անպայման տեսակցած լինել պապի հետ եւ անձամբ ստանձնած այդ յանձնարարութիւնը. հնարաւոր է եւ միջնորդաբար փոխանցուած լինէր այդ «հրամանը» որպէս առհասարակ այն թարգմանելու ցանկալիութիւն-պահանջ, ի դէմս նրա ներկայացուցիչ Մարաղայում նստած Բարթուղիմէոս Բոլոնիացու, որից Զաքարիա եպս. Մորթորեցու օգնութեամբ բնագիրն ստանալու հաւաստումն իր Յիշատակարանում Երզնկացին պարզորոշ յայտնում է:

Արդ՝ բնական հարց է ծագում. իսկ մի՞թէ պապի հետ տեսակցած լինելու բացառիկ պատեհութիւնը, եթէ այն իրօք տեղի ունեցած լինէր, կարող էր երբեւէ «մոռացութեան» տալ մեր մատենագիրը.– հազիւ թէ: Երկրորդ՝ ոչ ոք չէր լիազօրել Յովհաննէս Երզնկացուն նաեւ «բանակցելու» այնպիսի համազգային կարեւորագոյն հարցի շուրջ, ինչպիսին է «հռոմէական եւ հայկական եկեղեցիների միաւորման հետ առնչուող», այն էլ՝ «տեսական եւ գործնական հարցերի շուրջ», ինչպէս պնդում է Լ. Խաչիկեանը: Իսկ եթէ իրօք այդպիսի առաքելութեամբ օժտուած լինէր Յովհաննէս Երզնկացին, դա անպայման ինչ-որ կերպ արձագանգ գտած կը լինէր եթէ ոչ իր գրուածքներում, ապա գոնէ ժամանակի հայ հասարակական կեանքն արտացոլող ձեռագրական աղբիւրներում՝ ինչպէս Կիլիկիայում, այնպէս եւ բնաշխարհում, թէ՛ կուսակիցների կամ համախոհների եւ թէ՛ հակառակորդների աշխատութիւններում, պաշտօնական թէ անպաշտօն գրագրութիւններում: Մի խօսքով՝ անհնարին էր, որ նման առաքելութիւնը աննկատ մնար հայ հասարակական կեանքից եւ կամ չբացայայտուէր իրօք... գերագոյնի իրողութիւն:

Բայց առեղծուածային թուացող այս հարցերի լուծման պատասխանը տալիս է հէնց Յովհաննէս Երզնկացու Յիշատակարանը՝ այն ուշադիր քննելու դէպքում. Յիշատակարանում ուսուցչապետը աներկմիտ որոշակիութեամբ հաղորդում է, որ թէեւ պապի «հրամանաւ», բայց եւ «միջնորդութեամբ Բարթողիմէոս գիտնականի եւ «ձեռնտուութեամբ», այսինքն՝ օգնութեամբ Զաքարիա եպս. Մորթորեցու ինքը թարգմանել եւ աւարտել է Թովմա Աքուինացու աշխատութիւնը 1321 թուականին, Մորթորի ուսումնագիտական կենտրոնում: Այնտեղ կարդում ենք. «Եւ մեծաւ թախանձանաւք թարգմանեցի[123] զսա ի հայ բարբառ հրամանաւ պապին Հռոմայ, եւ նաւք թարգմանեցի զսա ի հայ բարբառ հրամանաւ պապին Հռոմայ, եւ ձեռնտուութեամբ արհեպիսկոպոսին տէր Զաքարիայի, սուրբ առաքելոյն Թադէոսի վերադիտողի, եւ միջնորդութեամբ[124] տէր Բարդուղիմէոսի հեղի-

123 Ի դէպ, Ղ. Ալիշանը թերեւս վրիպել է, երբ Թովմա Աքուինացու «Ցաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» աշխատութեան թարգմանութիւնը վերագրում է Քոնայում ապրող լատին քարոզիչ Պետրոս Արագոնացուն՝ «գործակցութեամբ» Յակոբոս Քոնեցու. «Եօթն ամօք յառաջ վախճանեալ էր (յ'3 յունիս 1347) Հ. Պետրոս Արագոնացին, այն ինչ աւարտեալ գրարգմանութիւն Եօթն խորհրդոց՝ գրոց Ս. Թովմայի Ակուինացւոյ, գործակցութեամբ Ս. Յակոբոսի Քոնեցւոյ», («Սիսական», էջ 375):

124 Գար. Յովսէփեանը ճիշդ չի հասկացել «միջնորդութեամբ» բառը՝ ըմբռնելով այն «օգնութեամբ» իմաստով: «Երզնկացին այդ ժամանակ լատիներէնից թարգմանում է սր. Բարդողիմէոսի հեզահոգի քահանայի[ն] եւ յոյժ գիտնականի» օգնութեամբ Թովմա Ակուինացու եօթն խորհրդոց գիրքը» («Խաղրակեանք կամ Պոլսեանք հայոց պատմութեան մէջ», էջ 237): Նոյնիսկ ամենապարզ տրամաբանութեամբ՝ ի՞նչպէս կարելի է պատկերացնել թարգմանութեան ժամանակ այդ «օգնութիւնը», երբ Երզնկացին Մորթորում, իսկ Բարթողիմէոսը՝ Պարսկաստանում՝ Մարագայում: Ինքնին հասկանալի է, որ առեւել դէպքում բացատրութեամբ է լատիներէնի իմացութեան որեւէ «օգնութիւն» Բարթողիմէոսի կողմից՝ մատուցուած Երզնկացուն: Խօսքը բնագիրը Բարթողիմէոսի «միջնորդութեամբ» տրամադրելու եւ Զաքարիա եպս.–ի «ձեռնտուութեամբ»՝ օգնութեամբ Երզնկացուն հասցնելու մասին է միայն:

121 Մ. Զամչեանց, Պատմութիւն հայոց, էջ 308, տե՛ս նաեւ Ղ. Ալիշան, «Ցուցիկ հայրենեաց հայոց», հ. Բ, էջ 424:

122 «Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 202:

նակի Ֆրանկ եպիսկոպոսի եւ յոյժ գիտնականի»[125]: Պարզից էլ պարզ է ասուած. աշխատութիւնը, լինելով յոյժ կարեւոր՝ կաթոլիկութեան ջատագովման ու տարածման համար, պապի «հրամանաւ» կամ կարգադրութեամբ առաջադրանք է տրուած թարգմանելու ու տարածելու Արեւելքի քրիստոնեայ ազգերի, այդ թւում եւ հայերի շրջանում, իսկ դոմինիկեան քարոզիչ Բարթողիմէոսի «միջնորդութեամբ» կամ միջոցով եւ Զաքարիա եպս. Մործոբեցու «ձեռնտուութեամբ»՝ առաձեռն փոխադրութեամբ երգնկացին ստացել է կաթոլիկական նուիրապետութեան հիմունքները մեկնաբանող այդ աշխատութիւնը եւ թարգմանել ու աւարտել այն 1321 թուականին՝ «թարգմանեալ եւ գրեալ ի գուռն Մործորու ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, որոյ ողորմութեամբ եւ չնորհաւք եղեւ կատարումն սորին»[126]: Նշանակում է՝ Մործորի վանքն են բերել Թովմա Ամուինացու «Ցաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» աշխատութիւնը, եւ երգնկացին հենց էլ տեղում իրականացրել է թարգմանութիւնը, ընդ որում՝ առանց հարկադրական ճամբորդութիւններ ձեռնարկելու անհրաժեշտութեան: Հետեւաբար՝ պապի հետ ոչ մի տեսակցութեան խնդիր չի էլ եղել, եւ «հրամանաւ պապի» արտայայտութիւնը բոլորովին այլ բան է նշանակել տուեալ կոնտեքստում, քան ուզեցել է հասկանալ եւ փորձել մեկնաբանել Լ. Խաչիկեանը:

Ադանայի ժողովից իր մշտական բնակավայրը՝ Մործորի ուսումնագիտական կենտրոնը վերադառնալուց յետոյ էլ երգնկացու վարքագծում չի նկատւում որեւէ արմատական փոփոխութիւն: Նա շարունակում է իր բարեկամական սերտ կապերը պահպանել Գլաձորի համալսարանի եւ նրա դպրապետ Եսայի Նչեցու հետ. մինչեւ իսկ վերջինիս պատուէրով 1318 թուականին ընդօրինակում է Գլաձորի գրչութեան արուեստի գլուխգործոց համարուող նշանաւոր Աստուածաշունչը իր հօրեղբայր[127] կիրակոս երգնկացու հետ միասին, համբաւաւոր մանրանկարիչ Թորոս Տարօնացու հանճարեղ վրձինմամբ: Իսկ այս փաստը ինքնին շատ բան է նշանակում հէնց Երգնկացուն բնութագրելու համար իբրեւ չափաւոր եւ չրջահայեաց, հասարակչիռ հասարակական գործչի. եթէ յարել է նա միաբարական շարժմանը, ապա նախ եւ առաջ այն պատճառով, որ կիլիկիայի հայ պետական քաղաքականութեան չահերն այդպէս էին պահանջում: Երկրորդ՝ լինելով աւելի լայնախոհ մտաւորական, առանձին համակրանք էր տածում լատինական հարուստ մշակոյթի նկատմամբ: Հիմքեր ունենք պնդելու, որ Յովհաննէս Մործորեցին ազգովին դաւանափոխ դառնալու ծայրայեղ ու վնասակար հերձուածողական գիծը բնաւ չէր խրախուսում կամ ջատագովում, ինչպէս մոլեռանդ ունիթոռները իրենց պառակտիչ գործունէութեամբ, նամանաւանդ Արեւելեան Հայաստանում, որոնք մինչեւ անգամ ցուցադրաբար «Ֆրա» մակդիրն էին գործածում զրուխիւններում ամենուրեք՝ սահմանազատուելու համար նոյնիսկ հայ «մտաւորականութիւնից» եւ ստորաբաժանելով նմանուելու լատին հոգեւորականներին...:

Կարծում ենք՝ չատ ճիշդ է ըմբռնել եւ բնութագրել Ղ. Ալիշանը ուսուցչապետ Յովհաննէս Երգնկացու–Մործորեցու հասարակական–քաղաքական դիմաստուերը՝ գրելով. «Երգնկացին միշտ ճշմարտութիւն եւ իմաստութիւն եւ ազգին օգուտը դիտելով, այս բանիս մէջ ալ միաբանեց զաստնք իր մտքին եւ սրտին մէջ. ո՛չ իբրեւ զոմանս ճշմարտութեան պատուող երեւնալով՝ առանց աջ ու ձախ նայելու՝ զազգն ոտիին տակ առող, եւ ո՛չ իբրեւ զայլս ազգասիրութիւն պարծենալով՝ ազգին մէջ գտածը յամառութեամբ պաշտպանող»[128]:

Եւ իրօք, մեր այս մատենագրի ճիչատակարանների ամբողջական եւ համակողմանի քննութիւնը ցոյց է տալիս, որ նա ազգային աւանդոյթների ու մշակութային չափանիչների իր գնահատականներում ամենեւին չի տառապում նիհիլիստական ախտավարակով կամ թերարժէքութեան հոգեբանական բարդոյթով, ինչպէս թունդ ունիթոռականներ Յովհան Քռնեցին, թարգմանիչ Յակոբոսը եւ ուրիշներ: Աւելին. նա երբեք «ազգի փրկութիւնը» լոկ դաւանափոխութեան մէջ չի տեսել, ոչ էլ «կաթոլիկութիւնը... ճշմարտութեան յայտնագործում» համարել, որ մի գիչերում զարթնելով յանկարծ յայտնաբերում են, ինչպէս ճգնում էին հաւատացնել ազգուրացութեան սայթաքուն ճանապարհով ընթացող ունիթոռների պարագլուխ Քռնեցին եւ իր համախոհները: Ահա թէ բանն ուր էր հասել, երբ ուծացողների առաջնորդ Յովհան Քռնեցին յախուռն մոլուցքով եւ խելայեղ ուրացմամբ գրում էր՝ տարփողելով դաւանափոխութիւնը իբրեւ «ազգային փրկութիւն» եւ միաժամանակ մեծագոյն... առաքինութիւն. «Արդ՝ ես Յոհաննս Քըռնեցի, յետ որոյ պարապեալ էի ի համալսարանն մեծ վարդապետին Յիսայու, որ էր ի մէջ հայոց յոյժ հռչակելի, նա՛ եւս ի ձեռանէ նորին առեալ էի զգաւազանն, լուեալ զայս ամենայն, եւ անդադար զմտաւ ածեալ գնոյն, տոչորեալ փափականօք ցանկանալի յայտնի վկայ լինել ինձ դարձման ազգին իմոյ առ նաև բարդոյթով, ինչպէս թունդ ունիթոռականներ Յովհան Քռնեցին, թարգմանիչ Յակոբոսը եւ ուրիշներ: Աւելին. նա երբեք «ազգի փրկութիւնը» լոկ դաւանափոխութեան մէջ չի տեսել, ոչ էլ «կաթոլիկութիւնը... ճշմարտութեան յայտնագործում» համարել, որ մի գիչերում զարթնելով յանկարծ յայտնաբերում են, ինչպէս ճգնում էին հաւատացնել ազգուրացութեան սայթաքուն ճանապարհով ընթացող ունիթոռների պարագլուխ Քռնեցին եւ իր համախոհները: Ահա թէ բանն ուր էր հասել, երբ ուծացողների առաջնորդ Յովհան Քռնեցին յախուռն մոլուցքով եւ խելայեղ ուրացմամբ գրում էր՝ տարփողելով դաւանափոխութիւնը իբրեւ «ազգային փրկութիւն» եւ միաժամանակ մեծագոյն... առաքինութիւն. «Արդ՝ ես Յոհաննս Քըռնեցի, յետ որոյ պարապեալ էի ի համալսարանն մեծ վարդապետին Յիսայու, որ էր ի մէջ հայոց յոյժ հռչակելի, նա՛ եւս ի ձեռանէ նորին առեալ էի զգաւազանն, լուեալ զայս ամենայն, եւ անդադար զմտաւ ածեալ գնոյն, տոչորեալ փափականօք ցանկանալի յայտնի վկայ լինել ինձ դարձման ազգին իմոյ առ նաև կատարելոյ գգործս զայս, մեծաւ հառաչանօք բեկեալ անձամբ ի խորոց սրտէ, բաղձալի միաբանիլ ընդ սբ. Եկեղեցւոյն Հռովմայ: Իսկ ի յաճելն սրտէ, բաղձալի միաբանիլ ընդ սբ. Եկեղեցւոյն Հռովմայ: Իսկ ի յաճելն յիս ցանկութեանս այսորիկ օր ըստ օրէ, սոյնպէս կչտամբեաց զիս յոյսն, մինչ զի նոյն ժամայն ելայ ի խնդիրս, գուցէ գտեալ կարացից զոմն ի յառաքելական քարոզողաց»[129]:

Բնութագրական է անշուշտ նաեւ այն կարեւոր հանգամանքը, որ ուսուցչապետ Յովհաննէս Մործորեցին երբեք ազգային իր դաւանանքը վարկեան Յովհաննէս Մործորեցին երբեք ազգային իր դաւանանքը վարկեան բեկող նզովք չի կարդացել կամ դոյզն ինչ նսեմացնող արտայայտութիւն թոյլ չի տուել իրեն՝ ա՛յն դէպքում, երբ ունիթոռական ամբողջ զաղափարախօսութիւնը յագեցած էր հէնց ազգային ուրացման եւ ինքնաժխտման մոլուցքով՝ մաղձով ու թոյնով: Բաւական է աչքի առաջ ունենալ թէկուզեւ Քռնեցու յայտնի «Թուղթը», որում ազգային դաւանանքի ինքնաժխտումը հասցուած է այնպիսի գագաթնակէտի, որ արդէն ստացել է բացայայտ ու բացարձակ թշնամական բնոյթ: Լինելով «պապից աւելի պապական», նա մինչեւ իսկ յայտարարում է, որ Քաղկեդոնի ժողովից յետոյ հայերը «հետեւեցան նախասացեալ հերետիկոսացն»[130]: Աւելին. Քռնեցին հայ ժողովրդին մինչեւ անգամ «անյուսալի մոլորութեան մէջ սուզուած» է համարում միայն նրա համար, որ ...լուսաւորչադաւանութիւն է ընդունել, որը կարծէք ոչ թէ առհասարակ քրիստոնէական դաւանանք է դիտում նա, այլ՝ հեթանոսական կանութիւն կամ թերեւս աւելի վատ, քան մահմեդականութիւնը. «...ի մի

125 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2515, թ. 82ա:
126 Անդ:
127 «Զստացող գրոցս զերջանիկ եւ զանհուն բարեւնապետն գԿիրակոս եւ զեղբարորդին իւր գՅովհաննէս վարդապետ... յիշեցէք...» (Գար. Յովսէփեան, Ժողովրակեանք ամ Պոոշեանք..., մասն Բ, էջ 224, ծան. 1):
128 Ղ. Ալիշան, Ցուշիկք հայրենեաց հայոց, հ. Բ, էջ 427:
129 Կոմիտէս Գալանոս, Նչուած աշխատ., էջ 518:
130 Անդ, էջ 515:

մոլորութենէ հեշտաթար ոք առ այլ բազումս ընկղմի,– ասում է նա,– որպէս պատահեցաւ ազգին հայոց, որ անդուստ իբր ի յանհուն մոլորութիւնս ընկղմեալ է»[131]:

*Յովհան Քռնեցին, չխորչելով պայքարի ոչ մի միջոցից, ամէն տեսակ ցեխ է շպրտում բոլոր այն քրիստոնեայ ազգերին, որոնք չեն ընդունել կաթոլիկութիւն. իր սեւեռուն գաղափարի համաձայն, որպէս թէ Քրիստոս յանձնարարել է Պետրոս առաքեալին «համոզել» Հռոմի քահանայապետին քարոզիչներ ուղարկելու բոլոր քրիստոնեայ ազգերի մէջ՝ նրանց կաթոլիկութեան գիրկը վերադարձնելու նպատակով: Իսկ առաւել անխնայ եւ առանց ամօթի նուազագոյն զգացումի Քռնեցին կշտամբում ու հարուածում է սեփական ժողովրդին, յայտարարելով, որ նա, իբր, թանձրամած խաւարում է խարխափում միայն նրա համար, որ դեռեւս... լուսաւորչական է. «Այսու ամենայնիւ եւ այլ յոլով մոլորութեամբք ազգն հայոց թիւրեալ եղեւ ի ճշմարտութեան ճանապարհէն բազում ժամանակ, նստելով ի խաւարի առանց հայելոյ ի տգիտութեան իւրեան»[132]: Սա արդէն ոչ թէ կաթոլիկ եկեղեցու նկատմամբ առանձին զիջումներով կամաւոր միաւորուելու կոչ է, որ անում էին Կիլիկիայի հայոց արքունիքը եւ կաթողիկոսարանը դիւանագիտական յատուկ նկատառումներով, այլ Թունոտ մարտահրաւէր՝ Հայոց եկեղեցին իր դաւանաճոխ առհասարակ վերացնելու եւ փոխարէնը ազգովին կաթոլիկութիւն ընդունելու մերկապարանոց նկրտումներով: Իսկ իրեն եւ իր ժողովրդին յարգող մտաւորականը կամ հոգեւոր գործիչը, հասկանալի է, չէր կարող երբեւէ այդ բանը թոյլ տալ:*

*Իրականում, պէտք է խոստովանել, ուսուցչապետ Յովհաննէս Մործորեցին այնքան էլ բուռն ցանկութեամբ չէր տոչորւում Հռոմի եկեղեցու հետ Հայոց եկեղեցու միաւորման գաղափարով, ինչպէս ունիթոռական Յակոբոս թարգմանիչը կամ Բարթողիմէոս Բոլոնիացին՝ «վառեալ աստուածային նմանութեամբ եկեղեցւոյն Հռոմայ», ոչ էլ Քռնեցին իրով ի սէր միաբանութեան սուրբ եկեղեցւոյն Հռոմայ»[133]: Նա ընդամէնը կողմնակից է եղել Հռոմի եկեղեցուց ծիսական մասնակի արտօնութիւնների ներմուծումների Հայոց եկեղեցու արարողութիւններում՝ նաեւ այն նպատակով, որ մշակութային մերձեցում լինի երկու ժողովուրդների միջեւ, ինչպէս ճիշդ նկատել է Մ. Օրմանեանը[134]: Ի հաստատումն դրան՝ յատկանշական է մասնաւորապէս այն իրողութիւնը, որ ուսուցչապետի ակնածանքը իր գրութիւններում գերազանցապէս ուղղուած է եղել լատին գիտնականների կամ մատենագիրների աւելի շուտ անհատական էրուդիցիայի, նրանց ընդհանուր եւ բազմակողմանի զարգացածութեան նկատմամբ, քան ուրիշ բանի. ուստիեւ Թովմա Աբուինացու աշխատութիւնը լատիներէնից հայերէն թարգմանելու առթիւ իր հիացմունքը բնագրի հանդէպ արտայայտելու փոխարէն ուսուցչապետն իր դրուատական խօսքերն ուղղում է միայն նրա հեղինակին՝ որպէս «տրամաբանական արուեստիւ եւ ապացուցական մակացութեամբ, համառօտ բանիւ» «իմաստուն» գիտնական, որն հասել է «ի ծայրս իմաստասիրութեան»[135]: Ուշագրաւ է եւ այն, որ Յովհաննէս Մործորեցին ոչ թէ գերադասում է այդ աշխատութիւնը եւ հակադրում նոյնաբնոյթ հայ մատենագրական երկերին՝ արժէքազրկելով վերջիններս, այլ իր կողմից կատարուած դրա թարգմանութիւնը նա պարզապէս «նուիրում» է Հայոց եկեղեցուն... որպէս «ընծայ անգին» եւ «գանձ պատուական». «Եւ աւանդեցի զսա եկեղեցեացդ Հայաստանի ընծայ անգին եւ գանձ պատուական աշխատեալ իմով տկարութեամբ եւ յղկեալ ըստ կարի զրաոս եւ զրանս»[136]: Դա շատ բան է ասում հէնց իր՝ ուսուցչապետի դիրքորոշման մասին: Ցատկանշական է եւ այն փաստը, որ Թովմա Աքուինացու այդ աշխատութեան թարգմանութիւնից ընդամէնը չորս տարի յետոյ նոյնիսկ ընդօրինակւում է դա Գլաձորի համալսարանում. «ի վանս Գլաձոր մօտ ի մերձ վարժապ(ետն) Եսայի», 1325 թուին «յամսեանն հոկտեմբերի» թուագրուած է Յովհաննէս Երզնկացու եօթն Խորհրդոց գիրքը, մանրանկարուած՝ Թորոս Տարօնացու ձեռքով: Առաջին թերթերը գրուած են մի անյայտ գրչի կողմից: Ստացողն է «հեզահոգի վարդապետն Սարգիս..., որ եռափաւք սրտիւ ետ գրել զգիրքս իմաստասիրաց. եւ սա խոկայ եւ բաղձայ ի տուէ եւ ի գիշերի արհեստից եւ մակացութեան եւ իմաստասիրաց արանց»[137]: Այս փաստը խօսում է միայն Գլաձորի համալսարանական մտաւորականութեան լայնախոհութեան մասին անշուշտ, ինչպէս բերուած ցիչատակարանում է ասուած, հետաքրքրելով նրան առհասարակ աշխարհի գիտնական եւ իմաստասէր մարդկանց խոկումներն ու մտորումները:

Չնայած վերը մեր նշած հանգամանքներին, այնուամենայնիւ Յովհաննէս Մործորեցու միարարական չարժմանն յառած լինելու փաստը դրական նէս է բացասական վերաբերմունքի արձագանգ է գտել ժամանակակիցների կամ անմիջապէս յաջորդող սերունդի մարդկանց սրտերում: Միանգամայն իրաւացի է Ղ. Ալիշանը, երբ նկատում է. «Որչափ այլ չափաւորութիւն եւ խոհեմութիւն բանեցուցած ըլլայ (իմա՝ Յովհաննէս Երզնկացին – Լ. Խ.)՝ շատ դժար էր որ Լատինաց մօտենալուն համար՝ ոմանց զգուշանալի եւ ատելի եղած չըլլար, կենօք եւ յետ մահուն»[138]: Ի հիմնաւորումն բացասական վերաբերմունքի՝ Ղ. Ալիշանը մատնացոյց է անում ուսուցչապետի աշխատութիւններից մէկի հնագոյն մի ընդօրինակութեան ցիչատակարանում մատենագիտական տուեալների նկատմամբ թոյլ տրուած եղծումը անում է մի անձնաւորութեան կողմից՝ որոշակի դիտաւորութեամբ. «...Արդ յայտ մի անձնաւորութեան կողմից՝ որոշակի դիտաւորութեամբ. «...Արդ դէն վերոյիշեալ Մատթէի աւետարանի մեկնութեան հին օրինակին մէջ, որ իր մահուընէ քիչ տարի վերջ գրուած է, հակառակորդ ձեռք մը ջանացեր է ապրել թէ՛ Յովհաննու անունը, թէ՛ յիշատակարանին մէջ լատին բարոզչաց վրայ գովեստը եւ թէ՛ գրոց մէջ բանի մ'անոնց վարդապետութեան համաձայնութիւնը»[139]:

*Ուսուցչապետ Յովհաննէս Երզնկացի-Մործորեցին ապրեց չուրջ 60–63*

---

131 Անդ:

132 Անդ, էջ 517:

133 Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանի Միխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Ց. Տաշեան, էջ 741:

134 Տե՛ս Մ. Օրմանեան, «Ազգապատում», հ. Բ, էջ 1798. «...եւ Յովհաննէս ալ հետամուտ էր Արեւմուտքէ եկող ուսումնական առաւելութեանց ծանօթանալ, եւ անոնցմով զարգանալ»:

135 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2515, թ. 82ա:

136 Անդ:

Ի դէպ, Լ. Խաչիկեանը անշուշտ արդարացի է, երբ գրում է. «...Մործորեցի վարդապետը, սակայն բնաւ չէր մտածում լուծարքի ենթարկել հայոց եկեղեցու հինաւուրց կազմակերպութիւնը, զարձնելով այն սոսկ հռոմէական եկեղեցու կցորդը» («Բանբեր Մատենադարանի», No. 11, էջ 203):

137 Գար. Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պռոչեանք..., հ. Բ, էջ 236:

138 Ղ. Ալիշան, Ցուշիկք հայրենեաց հայոց, հ. Բ, էջ 427:

139 Անդ, էջ 427–28:

տարի երախտաշատ եւ արդար վաստակով, բազմաթիւ մատաղ սերունդներ դաստիարակելով իբրեւ «ամենապարկեշտ» եւ «մաքրամիտ» րաբունապետ, եւ իր մահկանացուն կնքեց ԺԴ դարի քառասնական թուականներին: Վերջին յիշատակութիւնը նրա մասին 1336 թուականից է. բազմավաստակ ուսուցչապետի երբեմնի սաներից, բայց եւ արդէն դասասաց մանկավարժ՝ րաբուն Իսրայէլի առնչութեամբ 1337 թուականին Արտազ գաւառում ընդօրինակուած մի գրչագրի յիշատակարանային վկայութեան մէջ հաւաստւում է. «Սա սնեալ եւ վարժեալ եղեւ առ ոտս ամենապարկեշտ ծերունւոյն եւ մաթրամիտ րաբունապետին՝ որ մականուն Ծործորեցի, եւ որ դաստիարակեալ զսա յերկեղն Աստուծոյ եւ ի պաշտօն եկեղեցւոյ բազում աշխատութեամբ եւ խնամօք փոյթ արարեալ վասն սորա մինչեւ յարբունս կատարելութեան հասուցեալ, զոր ըստ վաստակոցն եւ աշխատութեան նորա Տէր հասուսցէ յերանաւէտ կեանսն»[140]:

Այնուհետեւ յիշատակագրութիւնները մեծանուն գիտնական եւ ուսուցչապետ, թարգմանիչ ու մատենագիր, քերական մեկնիչ, աստուածաբան ու հասարակական գործիչ Յովհաննէս Երզնկացու–Ծործորեցու գործունէութեան մասին մեկընդմիշտ լռում են:

## Դ.

Ուսուցչապետ Յովհաննէս Ծործորեցու մատենագրական վաստակի ամենայն բնագրային ցուցարձանը նրա քերականական Մեկնութիւնն է՝ «Համառաւտ տեսութիւն բերականի» աշխատութիւնը: Այն միջնադարեան գրաւոր մշակոյթի ծանրակշիռ արժէքներից է, որով մտաւորական սերունդներ են դաստիարակուել հայերէնագիտութեան մէջ: Իր չափազանց մատչելիութեան շնորհիւ ամենաբազմացուած եւ տարածուած քերականական Մեկնութիւնն է եղել ամբողջ միջնադարում, իբրեւ լեզուի եւ գրականութեան դասընթացքի կարեւորագոյն ձեռնարկներից մէկը ուսումնագիտական ամենատարբեր կենտրոններում: Այս իմաստով արժէքաւոր վկայութիւն է պահպանուած Գրիգոր կամախեցու պատմագրական երկում. «Ցայնմ ժամանակին այս Յովհաննէսս այլ երգնկոյ լինելով եւ բնակելով ի վանս Ծործորի: Եւ սա անդ արարեալ է մեկնութիւն քերականի՝ յերկար եւ ճոխ բանիւք եւ պատմաբար նախադրութեամբ եօթն գլխաւք: Եւ այժմոյ վարդապետ ամենեքեան զսորայն ածեն ի գործ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն»[141]:

Հնագոյն ձեռագրական ընդօրինակութիւնը այս բնագրի հիմք է ծառայել Երուսաղէմի սբ. Յակոբեանց մատենադարանում պահուող No. 1257 ձեռագրի: Բարեբախտաբար նրանում արտացոլուած է նաեւ հիմք-ձեռագրի մի կարեւոր յիշատակագրութիւնը, որից պարզւում է, որ դեռեւս 1322 թուականին ուսուցչապետ Յովհաննէս Ծործորեցու քերականական Մեկնութեան բնագիրը արդէն իսկ չրջանառութեան մէջ էր դրուել ուսուցման նպատակով նաեւ ընդօրինակութիւնների ու բազմացումների համար: Պարզւում է նաեւ, որ ամենավաղ ձեռագրական այս գաղափար օրինակը ընդօրինակուած է եղել Անապատ ուխտում Յովհաննէս գրչի կողմից: Այսպէս, ուրեմն, դեռեւս ուսուցչապետ Յովհաննէս Ծործորեցու կենդանութեան օրօք գրչագրուած «Համառաւտ տեսութիւն քերականի» աշխատութեան ձեռագրական այս ընդօրինակութեան վերջում գրիչը յիշատակագրում է. «Զերջանիկ երաժշտապետս մեր զԳրիգորիոս եւ զեղկելի գծողս զատացող գրոյս՝ յիշել աղաչեմ զՅոհաննէս: Գրեցաւ ի թվ. ՉՀԱ (1322), յաստուածաբնակ ուխտս Անապատ»[142]:

Իսկ աւելի ստոյգ՝ ե՞րբ է գրուել քերականական այս ցուշարժանի բնագիրը, – որոշակիօրէն ասել չենք կարող՝ ուղղակի եւ անմիջական վկայութիւնների ու փաստերի բացակայութեան պատճառով: Բայց մօտաւոր ճշտութեամբ որոշել, կարծում ենք, հնարաւոր է:

Որ Յովհաննէս Ծործորեցին քերականական իր Մեկնութիւնը անհրաժեշտաբար գրած պէտք է լինի Ծործորի ուսումնագիտական կենտրոնում՝ ուսուցողական նպատակով իր սաների համար, – վեր է ամէն կասկածից: Իսկ որ այդ աշխատութեան չարադրմանը ձեռնամուխ է եղել եւ աւարտել, վերը մեր ցոյց տուած յիշատակարանային վկայութեան համաձայն, 1322 թուականից առաջ՝ դա եւս ոչ մի տարակոյս չի յարուցում:

Արժանագրենք, որ քերականական այս Մեկնութեան գիտա-քննական բնագիրը պատրաստելիս մենք համեմատական-համադրական տեքստում ընդգրկել ենք Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրական ֆոնդում առկայ բոլոր 14 ընդօրինակութիւնները էլ, որոնք գրչագրուել են տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերում: Այդ գրչագրերից վեցը (No.No. 2326, 2364, 2366, 3883, 5919 եւ 7037) իրենց պարփակած յիշատակագրութիւններում չունենալով ընդօրինակման թուականներ, որոշւում են հնագրագիտական տուեալներով իբրեւ ընդհանրապէս ԺԴ դարի ձեռագրեր, իսկ No. 2365 գրչագիրը՝ որպէս 1393 թուականից առաջ, բայց եւ դարձեալ ԺԴ դարում ընդօրինակուած ձեռագիր. այդ մասին ակամայից վկայում է յետագայում՝ հէնց 1393 թուականին իբրեւ յիշատակագիր հանդէս եկած Յակոբ Ղրիմեցին. ընդ որում թէկուզեւ թուղթով համեմատութիւնից ակնբախ է այն, որ վերջինիս ձեռագրական ոճը միանգամայն տարբեր է բուն իսկ գրչի ոճից. մանաւանդ որ ինքն էլ յայտնում է, որ իմաստասիրական այս գրչագիրը Յակոբ Ղրիմեցին պարզապէս յանձնում՝ փոխանցում է իր «համչիրակ» Նաչատուրին, ուրեմն ինքնըստինքեան հասկանալի է, որ Յակոբ Ղրիմեցին այս ձեռագրի գրիչը չէ. «Արդ՝ ես Յակոբ Ղրիմեցի սպասաւոր բանի ուխտազանց Աստուծոյ, եառ զարտաքին իմաստասիրական գիրքս համչիրակ եղբաւր մերոյ տէր Նաչատրի բանի սպասաւորի, զոր Տէր Աստուած վայել տացէ նմա հանդերձ վարպետութեամբ... ի թուիս հայոց ՊՆԲ (842+551=1393) մարտի ԻԲ (22) աւրն չարաթ...»[143]:

Նշուած գրչագրերից վեցի (No.No. 2326, 2364, 2365, 2366, 3883 եւ 5919) սոսկ արտագրութիւն լինելը իրենց հիմք ծառայած ձեռագրերից՝ աւելի քան ակնբախ է, քանի որ գրիչների յիշատակագրութիւններն այդ մասին ոչ մի տարակոյս չեն թողնում:

Բայց հնագոյն եւ, մեր խորին համոզմամբ՝ նաեւ հեղինակագիր (autograph) գրչագիրը Մաշտոցի անուան Մատենադարանի No. 7037 ձեռագիրն

140 Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմեց՝ Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 579:

141 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 401–402:

142 Մայր ցուցակ սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1969, հ. Դ, էջ 430:

143 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2365, թ. 120բ:

է իր ընտիր գեղագրութեամբ, որով իսկապէս հռչակուած էր իր ժամանակին Յովհաննէս Մործորեցին: Զափազանց պերճախօս է եւ այն փաստը, որ դա միակ գրչագիրն է նշուածների մէջ, որում երկու անգամ յիշեցուած է արուած հեղինակի եւ պատուիրատու–ստացողի մասին, ըստ որում՝ անփոփոխաբար միեւնոյն ընտիր գրիչով, ինչ ձեռագրինը. մէկը՝ նախքան քերականական Մեկնութեան սկսելը անմիջապէս նախորդ բնագրի վերջին էջում. «Եւ գնուաստս աշխատողս Յոհ(աննէս) յաղաւթս յիշեա», մի տող ներքեւ՝ «Զստացող սորա գվարդան եւ գծնողսն իւր յիշեցէք ի Ք(րիստո)ս»[144]. միւսը՝ քերականական Մեկնութեան վերջում բնագրի հետ միասնաբար է չարադրուած՝ կարծէք որպէս տեքստի չարունակութիւն. «Արդ սոքա են եռավանգք Ը, որք դասեալ ընդ չորից երկավանգիցն լինին երկոտասան. եւ են սոքա նման միմեանց, որպէս ցուցաւ, զի ե՛ն որ ի սկիզբն սղանան, եւ ե՛ն, որ ի վերջն, եւ այլք՝ ի մէջն, կէսք հաւասար սուղք, եւ ոմանք հաւասար երկայնք, բայց յամանակն յոլովք հաւասար են: Ցորմէ տեղեկացեալ fn ներհուն հմտութեամբ ի սակաւ աշխատութենէս, բաղձողդ արուեստիս մի՛ անճաշակ եւ զմերս թողցես փափագ, այլ յիշմամբ բարոյն ի տէր եւ մեզ մասնաւորեսցես յագեցումն ի Ք(րիստո)ս Յ(իսու)ս ի տէր մեր որ է օրհնեալ ընդ հօր եւ արարչակից հոգւոյն իւրոյ որպէս ի սկզբանէ եւ այժմ յանբաւ յաւիտեանս»[145]: Նկատառման է արժանի եւ այն իրողութիւնը, որ սոյն յիշատակագրութիւնը հիմք–ձեռագրից ընդօրինակել են համարեա միւս բոլոր նշուած գրչագրերը, հէնց նոյն ձեւով, բայց եւ նրանց գրիչներից իւրաքանչիւրը առանձնաբար թողել է եւ իւր յիշատակագրութիւնները համապատասխան ձեռագրերի տարբեր էջերում: Մինչդեռ հեղինակագիր գրչագիրը չունի արտագրող գրիչի ո՛չ մի յիշատակագրութիւն:

Բայց հնարաւո՞ր է ենթադրել, որ No. 7037 գրչագիրը սոսկ ընդօրինակութիւն լինի՝ արտացոլելով իր մէջ վերջին յիշատակագրութիւնը ճիշդ այնպէս, ինչպէս միւս ձեռագրերը: Ո՛չ, չի՛ կարելի: Քերականական բնագրից դուրս, անմիջապէս նրան նախորդող բոլորովին մի այլ բնագրի տողատակում, հեղինակի՝ իր եւ պատուիրատուի մասին յիշատակագրութիւնների առկայութիւնը բացառում է նման վարկածը, մանաւա՛նդ որ ձեռագրական միւս ընդօրինակութիւններից եւ ո՛չ մէկը չունի դրանք:

Այսպէս, ուրեմն, համադրելով այս երկու յիշատակագրութիւնները՝ հնարաւոր է պարզել մատենագիտական մի շարք կարեւորագոյն հանգամանքներ, որոնք այլապէս ճշդել առ այժմ անկարելի է թուում: Այսպէս, բնութագրող շատ կարեւոր իմաստ են պարփակում մեզ յուզող հարցի լուսաբանման առնչութեամբ «աշխատող» եւ «(յ)աշխատութենէս» բառաձեւերի գործածութիւնը յիշատակագրի կողմից. եթէ վերջինս սոսկական ընդօրինակող լինէր տուեալ ձեռագրի, ապա անտարակոյս «գրիչ» (կամ «գծող») եզրը կ'օգտագործէր իրեն բնորոշելու համար. իսկ քանի որ «աշխատող» եզրն է օգտագործել, ապա դրանով յիշատակագիրը բնորոշել է իրեն որպէս «հեղինակի», «մեկնիչի», «բնագիրն ստեղծողի», ինչպէս այդ ընդունուած է կոչել վերոյիշեալ անձնաւորութիւններին միջնադարի մեր մատենագրութեան մէջ: Մանաւա՛նդ կարեւոր է մի հանգամանք եւս ընդգծել. բնագրի վերջում, իբրեւ տեքստի չարունակութիւն, առաջադրուած

144 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 7037, թ. 11բ:
145 Անդ, թ. 75ա: Ի դէպ, յիշատակագրութիւնը տարբերելու համար բուն քերականական տեքստից՝ ընդգծել ենք:



համեմատաբար մի քիչ ընդլայնուած յիշատակագրութիւնը լինելով միեւնոյն անձնաւորութեան վկայութիւն եւ ուղղուած դարձեալ միեւնոյն պատուիրատու–ստացող «Վարդանին», առաջին դէմքի ստացական ս յօդով («[յ]աշխատութենէս») յայտնում է բնագրի պատկանելը հէնց իրեն՝ աներկբայօրէն յուշելով, որ յիշատակագիրը ինքը նաեւ բնագրի հեղինակն է:

Ի դէպ՝ պատուիրատու Վարդանի մասին. պատուիրատուի «Վարդան» անունը եւս որոշ բան մեզ ասում է. նա առաջին անգամը չէ, որ հանդիպում է ուսուցչապետ Յովհաննէս երգնկացու ձիշատակարաններում. նա մեզ ծանօթ է դեռեւս մեր մատենագրի Մեկնութիւն Դանիէլի աշխատութեան համար 1316 թուականին գրած ձիշատակարանից, որից պարզւում է, որ Վարդանը, թէեւ վարդապետ է նշւում այդ ժամանակ, բայց Մործորեցու մտերիմ ուսումնակիցն է եղել եւ նրա խնդրանքով էլ ուսուցչապետը գրել է այդ Մեկնութիւնը. «Եղեւ աշխատութիւնս մեր... ի թուիս հայոց ՉԿԵ (1316), եւ ի մարդեղութենէ ամաց Ցի. Ֆի. ՌՑԺԶ ամին, գրեալ եւ յղկեալ ըստ չափոյ տարազու մտաց մերոց, եւ կշիռ առ բանին եղեալ զմեկնութիւնն: Ի գաւառս հռչակաւոր Արտազ կոչեցեալ, ի վիճակ սբ. առաքելոյն Թադէոսի, ընդ հովանեաւ սբ. Ած.ածնիս Մործորու կոչեցեալ, ձեռամբ նուաստ սպասաւորի Յոհաննիսի եզնկայեցւոյ, ի խնդրոյ եղբօր մերոյ բանի աշակերտելոյ Վարդան կոչեցեալ վարդապետի...»[146]: Մատենագրական այս վկայութիւնը եւս հաստատում է, որ Մաշտոցի անուան Մատենադարանի No. 7037 համարի ձեռագիրը իրօք քերականական Մեկնութեան հեղինակագիր օրինակն է:

Միւս ոչ–պակաս կարեւոր մեր փաստարկումն էլ այն է, որ նշուած հանգամանքների միասնաբար ընդգրկման դէպքում երբեք սոսկ պատահականութիւն չի կարող դիտուել յիշատակագրի «Յովհաննէս» անունը՝ առանց աղերսելու այն հէնց ուսուցչապետ Յովհաննէսի հետ:

Եւ, վերջապէս, մանաւա՛նդ համեմատաբար ծաւալուն յիշատակութիւնն այնպիսին է, որ բացառապէս հեղինակի՝ պատուիրատուի հետ փոխյարաբերութեան բնոյթն ունի, եւ ո՛չ՝ գրչի եւ ընթերցողի: Պատուիրատուն որպէս քերականական արուեստի «բաղձող» է բնորոշւում, որը միաժամանակ դրուատանքի է արժանանում հեղինակի կողմից իր «ներհուն հմտութեան» համար, իսկ յիշատակագիրն էլ, իբրեւ հեղինակ եւ պատուիրատու ցանկութիւնը կատարող, իրեն լիովին բաւարարուած է համարում, եթէ վերջինս իրեն յիշման արժանի դարձնի իր աղօթքներում..., մի ցանկութիւն պահա՛նջ, որն իբրեւ նուիրագործուած աւանդոյթ լայն կիրառութիւն է գտել, ինչպէս յայտնի է, մեր գրչութեան արուեստում:

Ձեռագրագիտական այս փաստերի քննութիւնից, սակայն, յանգեցինք միայն այն հետեւութեան, որ No. 7037 գրչագիրը հեղինակագիր ձեռագիրն է, ուստի եւ ամենաառաջնակը բնագրի բոլոր ընդօրինակութիւնների մէջ: Բայց դարձեալ առկախ մնաց այն հարցի պարզաբանումը, թէ ստուգապէս ե՞րբ է ստեղծուել քերականական այս ցուշարձանը: Ժամանակագրական հաւաստի տուեալներով այնքանը յայտնի դարձաւ, որ յանձին Երուսաղէմի No. 1257 գրչագրի, դեռեւս 1322 թուականին Անապատ ուխտում արդէն իսկ ընդօրինակուել է բնագիրը: Բայց այժմ պարզելով, որ բնագիրը Մաշտոցի անուան Մատենադարանի No. 7037 ձեռագիրն է, հետեւաբար այն աւելի վաղ է իր ծնունդով, քան Երուսաղէմի No. 1257 գրչագիրը: Եթէ այդ այդպէս է, ապա ե՞րբ է հեղինակուել այն: Այստեղ համարեա թէ փակուղու

146 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց, հ. Ա, Երուսաղէմ, 1966, էջ 584–85:

առաջ ենք կանգնում: Հարցի վերջնական լուծման համար ունենք չատ քիչ տուեալներ. գիտենք միայն, որ այն Մործորի ուսումնագիտական կենտրոնում է ստեղծուել, ուր եւ տեղափոխուել էր ուսուցչապետ Յովհաննէս Երզնկացին, ամենայն հաւանականութեամբ, 1310–11 թուականներին: Եւ քանի որ քերականութեան դասընթացքը միջնադարի ուսումնագիտական ծրագրում գիտակարգերի համակարգում դիտւում էր ամենաառաջնայինը, հետեւաբար ուսուցչապետը մտահոգուած պիտի լինէր առաջին հերթին քերականական այդ Յուշարձանի հեղինակմամբ. բայց դարձեալ հետապնդում է մեզ նոյն հարցը՝ իսկ ե՞րբ է ձեռնարկել ու աւարտել այն: Մեզ մասամբ է միայն օգնում բնագրի վերնագրային յիշեցումը, ուր Յովհաննէս ուսուցչապետը յիշատակուած է ոչ թէ Երզնկացի, այլ՝ Մործորեցի: Այնուամենայնիւ սա մի կռուան է, որից կարելի է կառչել: Իսկ այս յորջորջման վաղագոյն գործածութիւնը Երզնկացու կողմից, ինչպէս մեր քննարկման ընթացքում վերը ցոյց տուեցինք, 1314 թուականից է: Նշանակում է՝ «Համառուտ տեսութիւն բերականի» աշխատութիւնը Յովհաննէս ուսուցչապետը հեղինակած պէտք է լինի մօտաւորապէս 1314–1322 թուականների ընթացքում:

*Այժմ անդրադառնանք քերականական սոյն Յուշարձանի բնագրագիտական բնութագրմանը:*

Նախապէս ասենք, որ քերականական այս Մեկնութեան մասին պատկերացումը հայագիտական գրականութեան մէջ բաւական խաթարուած է եւ խճճուած՝ մանաւանդ ա՛յն պատճառով, որ նրա գիտա-քննական բնագիրը առ այսօր հրապարակուած չի եղել եւ նրա բոլոր ձեռագրական ընդօրինակութիւնների ուսումնասիրմամբ ու սկզբնաղբիւրների հետ ունեցած աղերսների բնագրագիտական վերլուծութեան չի ենթարկուած: Դրա հետեւանքով բանասիրութեան մէջ տիրող կարծիքները քերականական սոյն Յուշարձանի մասին մեծաւ մասամբ մակերեսային են եւ թռուցիկ տպաւորութիւնների արգասիք, ուստիեւ հայեցողական բնոյթ կրելով՝ ըստ էութեան խաբուսիկ են:

Բնագրական այս աղբիւրի հրատարակման առթիւ հարկաւոր է, բնականաբար, փարատել մի շարք թիւրիմացութիւններ ու հիմնազուրկ վերագրումներ, որոնք տարաբախտաբար երկար ժամանակ արմատաւորուել են հայագիտութեան մէջ եւ բնագրագիտական վերլուծմամբ պարզելով քերականական սոյն Յուշարձանի աղերսները իր սկզբնաղբիւրների հետ՝ միաժամանակ գիտական ճշգրտութեամբ բնութագրել նրա տարբերիչ յատկանիշները ու առանձնայատկութիւնները, որոնք եւ, իբրեւ մատենագրական միաւորի, նրա ինքնուրոյնն են կազմում:

Յուշարձանի բնագրագիտական վերլուծութիւնը թելադրում է քերականական այս Մեկնութիւնը, բանաքաղական (կոմպիլեատիւ) բնոյթի լինելով, առնչութիւնների մէջ դնել մի կողմից՝ Յովհաննէս Երզնկացի Պլուզի «Հաւաքումն Մեկնութեան Քերականի» ընդարձակ երկի, միւս կողմից՝ Եսայի Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան» աշխատութեան հետ, որոնց անմիջականօրէն աղերսւում է Յովհաննէս Մործորեցու մեկնողական այս երկը: Հասկանալի է, վերջինս աղբիւրագիտական ոչ մի առնչութիւն չունենալով Մագիստրոսի, Վարդան Արեւելցու եւ Յովհան Քոնեցու քերականական Մեկնութիւնների հետ, բացառում է դրանց հետ ընդհանրութիւններն ու հնարաւոր համեմատութիւնները:

Նկատենք, որ հայ բանասիրութեանը առ այսօր յուզող կարեւոր հարց է, թէ բնագրային ինչպիսի՛ առնչութիւնների մէջ է գտնւում Յովհաննէս Մործորեցու «Համառուտ տեսութիւն քերականի» աշխատութիւնը, մի կողմից՝ Յովհաննէս Երզնկացի Պլուզի, միւս կողմից՝ Եսայի Նչեցու վերը նշուած աշխատութիւնների հետ: Փրոֆ. Ն. Ադոնցը իր «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին» աշխատասիրութեան մէջ Մործորեցու քերականութեան կապակցութեամբ գրում է. Մործորեցու աշխատութեան «մատենագրական հետաքրքրութիւնն այն է, որ լուսաբանուի նրա առնչութիւնը Եսայի Նչեցու նոյնանունոյթ աշխատութեան, ինչպէս եւ Երզնկացու (իմա՝ Պլուզի – Լ. Խ.) ընդարձակ քերականութեան հետ»[147]: Այս դիտողութեամբ էլ սահմանափակւում է նա՝ առանց ձեռնամուխ լինելու ինչպէս Մործորեցու եւ Պլուզի, այնպէս եւ Մործորեցու եւ Նչեցու բնագրերի վերլուծութեանը: Այս հարցում, բնականաբար, մեր ելակէտը Մործորեցու աշխատութիւնն է, թէեւ վերջին հաշուով, հետազօտութեան արդիւնքներն ու եզրակացութիւնները մեծ մասամբ վերաբերում են նաեւ ինչպէս Պլուզին, այնպէս եւ Նչեցուն: Այս խնդրի քննութիւնը առ այսօր դուրս է մնացել նաեւ այլ հետազօտողների տեսադաշտից:

1. Բնագրային առնչութիւններ Յովհաննէս Երզնկացի Պլուզի «Հաւաքումն Մեկնութեան Քերականի» երկի հետ:– *Ինչպէս վերը նշեցինք, միջնադարի քերական մեկնիչները միանգամայն զերծ չէին համանուն երկու Երզնկացիներին միմեանց հետ չփոթելու մոլորութիւնից եւ յաճախօրէն տարբերում էին երկու առանձին Յովհաննէս Երզնկացիներ՝ Պլուզ եւ Մործորեցի, համապատասխան իրենց քերականական երկու տարբեր աշխատութիւններով:*

*Առաքել Սիւնեցու վերը մեր բերած քաղուածքում հաւաստումը երկու տարբեր հեղինակների տարբեր քերականական Մեկնութիւնների մասին՝ միանգամայն ճշմարտացի է, երբ քննութեան ենք առնում, իբրեւ ամենավաւերական ապացոյցներ, հէնց երկու Երզնկացիների յիշատակարանային ինքնագիր վկայութիւնները, որոնք փարատում են բոլոր տեսակի տարակուսանքներն ու անորոշութիւնները այդ հարցում: Բնութագրական է, որ Վարդան Արեւելցու աշակերտ Յովհաննէս Երզնկացի Պլուզը յիշատակուում է մատենագրական աղբիւրներում մինչեւ 1293 թուականը, իսկ Եսայի Նչեցու աշակերտ Յովհաննէս Երզնկացի-Մործորեցին՝ մինչեւ 1337 թուականը:*

*Ցետագայ ձեռագրական աղբիւրներում, ինչպէս եւ հայագիտական ուսումնասիրութիւններում, տարաբախտաբար, այս յստակ տարբերակումը երկու տարբեր հեղինակների քերականական երկերից բացի նաեւ ընդհանրապէս նրանց մատենագրական ժառանգութեան՝ չպահպանուեց, որով կրիք զգացուեց առաւել հանգամանալից հետազօտութիւնների՝ նրանց երկերի մատենագիտական ստուգութիւնը վերականգնելու մտահոգութեամբ:*

*Հայագիտական գրականութեան մէջ լուսաբանելով հանդերձ մասնաւորապէս Յովհաննէս Երզնկացի Պլուզի եւ Յովհաննէս Մործորեցու մատենագրական ժառանգութեան հետազօտման ու գնահատման մի չարք հանգուցային հարցեր, այնուամենայնիւ դեռեւս կան չլուծուած խնդիրներ եւ առկախ մնացած պարզաբանումներ: Դրանց թուին է պատկանում, անշուշտ, Յովհաննէս Մործորեցու «Համառուտ տեսութիւն քերականի» երկի բնագրական առանձնայատկութիւնների ստոյգ պարզաբանումը եւ Յովհաննէս Երզնկացի Պլուզի «Հաւաքումն Մեկնութեան քերականի» աշխատութեան*

147 Ն. Ադոնց, նշուած աշխատ., էջ LVIII:

հետ նրա ունեցած առնչութիւնների ու տարբերութիւնների բնորոշումը, ինչպէս եւ Եսայի Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան» աշխատութեան հետ նրա յարաբերակցութեան կնճռոտ հարցերի լուսաբանումը:

Բանն այն է, որ եթէ երկու մատենագիրների՝ Պլուզի եւ Մործորեցու, որպէս պատմական տարբեր անձնաւորութիւնների հարցը գիտականօրէն լուծուած է արդէն եւ ամենեւին կասկած չի յարուցում, ապա քերականական այս երկու աշխատութիւնների բնոյթի մասին հայագիտութեան մէջ տիրող կարծիքը միեւնոյն աշխատութեան երկու տարբերակներ (Ընդարձակ եւ Համառօտ) լինելու վերաբերեալ՝ կարիք ունէր արմատական վերանայման եւ վերագնահատման, որը եւ տողերիս հեղինակը, հիմնականում, իրականացրել է «Ցովհաննէս Երզնկացի. Հաւաքումն Մեկնութեան» աշխատասիրութեան աղբիւրագիտական ընդարձակ Ներածութիւնում[148]: Ուստի, կրկնութիւնից խուսափելու համար, այստեղ կը սահմանափակուենք միայն ու միայն մեր առաջադրած դրոյթների ու եզրակացութիւնների հաստատման առնչութեամբ խնդրոյ առարկայ երկու հեղինակների աշխատութիւնների բնագրային համեմատութիւնների քննութեամբ:

Այսպէս, ուրեմն, մեր խորին համոզմամբ՝ Մործորեցու քերականական Մեկնութիւնը «համառօտ» տարբերակը չէ Երզնկացու «Հաւաքումն Մեկնութեան Քերականի» աշխատութեան՝ այն պատճառով, առաջին հերթին, որ դրանք իրրեւ քերականական դասընթացքի ուսումնագիտական ձեռնարկներ, ունեցել են տարբեր նպատակադրումներ, հետեւաբար եւ նիւթի մատուցման եւ շարադրման տարբեր մօտեցումներ, ըստ որում հնարաւորին չափ սպառիչ կերպով մեկնաբանել փորձելով Դիոնիսիոս Թրակացու էբրականական դրոյթներն ու հարցադրումները:

Դիցուք՝ Երզնկացու ծրագիրը եղել է չափազանց ընդգրկուն, նպատակադրումը՝ ստեղծել Կիլիկիայի կաթողիկոսարանի բարձրագոյն դպրատան սաների համար քերականական համադրական մի ձեռնարկ-դասագիրք՝ բոլոր նախորդ քերական մեկնիչների ու գրչութեան արուեստի տեսաբանների երկերի ներմուծմամբ՝ սկսած Ե դարից մինչեւ ԺԳ դարը ներառեալ, ծաւալին առանց սահմանափակման, հետեւաբար եւ գործնական նշանակութեան անտեսմամբ, ընդ որում համադրուած բնագրահատուածների լեզուական մշակման բացառմամբ: Այդ իսկ պատճառով նրա աշխատասիրութիւնը ներկայացնում է ոչ թէ իր ժամանակի գրաբարեան «միասնական» լեզուն, այլ Ե–ԺԳ դարերի գրաբարեան լեզուական խայտաբղետութիւն, իսկ ծաւալային առումով էլ այն ամենատուարն է միջնադարի բանաքաղային[148բ] բնոյթի բոլոր

148 Տե՛ս «Ցովհաննէս Երզնկացի. Հաւաքումն Մեկնութեան Քերականի», աշխատասիրութեամբ Լ. Գ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1983, Ներածութիւն, էջ 17–25:

148բ Ի դէպ, ծարգելի բանասեղծ, գրականագէտ եւ իմաստասէր Իսահակ Մ. Վրդ. Ղազարեանը մեր աշխատասիրութեան՝ «Ցովհաննէս Երզնկացի, Հաւաքումն Մեկնութեան Քերականի» վերաբերեալ գրած իր մատենախօսութեան մէջ մեր օգտագործած «բանաքաղութիւն» բնագրագիտական եզրի առնչութեամբ առարկում է. «Մենք այստեղ դիտողութիւն ունինք ընդգծուած «բանաքաղային» բառին նշանակութեան մասին: Քոմփելատիւ եւրոպական բառը բանաքաղ չի նշանակեր: Ինչպէս «Հայկազեան» մեծ բառարանը կը հաստատէ գրելով՝ «որ քաղէ կցկտուր բանս ի կարկատել զնոսին կարծիս»: Մագիստրոսը այդպիսի մէկը չէր: Այլ կը նշանակէ՝ մէկը որ գրական նիւթեր, յիշատակարաններ, տոքումէնթ կը հաւաքէ եւ հատորի կը բերէ. ինչ որ ըրած է Գրիգոր Մագիստրոս: ...Թերեւս՝ «մատենահաւաք» կամ «մատենաքաղ» ճիշդ ըլլար, բայց ոչ «բանաքաղ» («Նոր Օր», Օգոստոս 28, 1984, սիւնակ 2):

Նախ ասենք, որ խնդրոյ առարկայ եզրը արդի հայագիտութեան մէջ կիրառուող բնագրագիտական տերմին է՝ իրրեւ տարբեր աղբիւրներից ձեռնաքաղութեամբ համադրուած



քերականական Մեկնութիւնների մէջ:

Մինչդեռ Մործորեցու ծրագիրը եղել է յօրինել լեզուի եւ քերականութեան տեսական, բայց եւ առաւելապէս գործնական բնոյթի մի ձեռնարկ-դասագիրք Մործորի ուսումնագիտական բարձրագոյն կրթութեան սաների համար՝ ամենայն մանրակրկիտութեամբ ու գիտա-մանկավարժական տարբեր մեթոդով մեկնաբանելով Թրակացու աշխատութիւնը հայերէնի տուեալների հիման վրայ, ընդգրկուած բնագրահատուածների լեզուական յղկմամբ ու մշակմամբ, չարադրելով իր դասընթացքը ԺԴ դարի գրաբարեան դիւրամատչելի միասնական լեզուամտածողութեամբ:

Մեր այն հետեւութեան ապացուցման համար, որ Մործորեցու քերականական աշխատութիւնը Երզնկացու Մեկնութեան «համառօտումը» չէ, առայժմ բերենք մի երկու բնագրահատուածներ՝ բաղդատելու դիտումով.

ՄՈՐՄՈՐԵՑԻ

[Բան]

«Զի ի կիտէն կարի յոյժ մեծ է բացատն, իսկ ի ստորակիտէն՝ ամենեւին նուազ»:

[Մեկնութիւն]

Զանազանութիւն դնէ կիտի, որ է աւարտն, եւ ստորակիտի, որ է մէջկին, քանզի լինի չարադրութիւն բանիդ այսպէս՝ թէ յաւարտմանէ խորհրդոյն կարի յոյժ հեռի է մէջակ կիտին բանն, վասն զի ինքնրտինքեան ոչ կարէ յայտնել զխորհուրդն, այլ յաւարտ կիտին հասանելով լինի բացերեւութիւն բանին:

Իսկ ստորն ամենեւին նուազ է ի խորհրդոյն կցորդութենէ: Կամ ասաց, թէ ամենայն բաժանի կէտ, որ է վերջինն, ի ստորակիտէ՝ որ է առջինն. այժմ ասէ, թէ

---

աշխատասիրութիւն, որ գարգացում էր ունեցել միջնադարեան մատենագրութեան մէջ, ուստիեւ նրա իմաստը չի կարելի բխեցնել սոսկ «Հայկազեան բառարանից»: Ակադ. Էդ. Բ. Աղայեանի Առանց ինքնուրոյն հետազօտութեան ու վերամշակման՝ ուրիշ աղբիւրներից բաղուածքներ անելով գիրք՝ յօդուած կազմելը: Այդ եղանակով կազմած աշխատութիւն (կոմպիլյացիա): 3. Տե՛ս Գրագողութիւն» (Երեւան, 1976, հ. Ա, էջ 168): Ակադեմիական Քառահատոր Բացատրական Բառարանում կարդում ենք. «ԲԱՆԱՔԱՂՈՒԹԻՒՆ, գ. 1. Բանաքաղելը, ուրիշ գրական աղբիւրներից օգտուելով բաղուածքաբար յօրինուած գրուածք: 2. Գրագողութիւն» («Ժամանակակից Հայոց լեզուի Բացատրական բառարան», Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիա, Ճր. Ամառեանի անուան Լեզուի Ինստիտուտ, Երեւան, 1969, հ. 1, էջ 281):

Երկրորդ՝ անգլերէնում էլ, իրրեւ գիտական եզր, նոյն նշանակութիւնն ունի, ինչ մեր կիրառած իմաստը. այսպէս, անգլերէնի ամենահաւաստի բառարանագիրներից Ուեբսթրը "New World Dictionary of the American Language" բառագրքում գրում է. "*Compile* 1. to gather and put together (statistics, facts, ect.) in an orderly form. 2. *to compose (a book, etc.) of materials gathered from various sources*" (էջ 280, երկրորդ հրատ., Միացեալ Նահանգներ, 1980 թ.):

Մենք հէնց այս բերուած վկայութիւնների ընդգծուած իմաստով ու կիրառութեամբ էլ օգտագործել ենք բնագրագիտական «բանաքաղութիւն» եզրը՝ ինչպէս մեր նախորդ, այնպէս եւ գիտական հասարակայնութեանը ներկայացուող սոյն աշխատասիրութեան մէջ: Իսկ առաջարկուած «մատենահաւաք» կամ «մատենաքաղ» բառերը միայն չփոթութիւն կը ստեղծէին րնթերցող մասնագէտի մօտ իրենց անյարիրութեամբ, որովհետեւ «մատենահաւաք» նշանակում է՝ «Մատենների Ձեռագրեր հաւաքող (հաւաքած), ժողովող (ժողոված)», իսկ «մատենաքաղ»՝ «Մատենից կամ Ձեռագրից դուրս բերուած» եւ կամ «Ձեռագրեր, Մատեաններ ձեռք բերող»: Երկու դէպքում էլ՝ առաւելապէս ֆրանսերէն Bouquiniste բառի իմաստով...:

կարի բնդարձակ է բացատ ժամանակին, քանզի ի սկզբանէ բանին մինչ ի կատարումն նորին յոլով ծախի ժամանակ: Իսկ մինչ ի ստորակէտն առաջին յոյժ նուազ, որ է աւրինակն այսպէս՝ «Ժողովուրդ իմ, հարկահանք ձեր ճոաքաղ առնեն գձեզ»: Կամ թէ՝ գաւրինակ կիտին դրութեան ուսուցանէ, որպէս գտանեմք ի հին մատեանս, զի բացատն, որ է դատարկ վայր, յոյժ մեծ է աւարտ կիտին այսպէս: Իսկ միջակին սակաւ ինչ սուղ, իսկ ստորին՝ ամենեւին նուազ» (Սոյն աշխատ. էջ 157–58):

### ԵՐԶՆԿԱՑԻ

«Իսկ ասէլն՝ «զի ի կիտէն կարի յոյժ մեծ է բացատն, իսկ ի ստորակիտէն՝ ամենեւին նուազ»· «բացատ», ասէ, զմիջին կէտն, իսկ կէտ՝ զաւարտեալն, որ լինի ի չարադրութեան բանիդ այսպէս. յաւարտանէ խորհրդոյն կարի յոյժ հեռի է ստորակիտին բան վասն միջակ սահմանին, եւ ինքնըստինքեան ոչ կարէ յայտնել ստորակէտն զխորհուրդն, քանզի յաւարտեալ կէտն հասանելոյ ի կարգի չարամանեալ լինի բացերեւութիւն բանին:

Արդ, եղից զաւրինակն նոցա. ստորակէտն՝ նախերգան է, իսկ միջակն՝ պատճառ, իսկ աւարտն՝ խոստումն կամ վճիռ:

Արդ՝ յայտնի ցուցից զասացեալս. ստորակէտ՝ «Ժողովուրդ իմ», «հարկահանք ձեր»՝ միջակ, «ճոաքաղ առնեն գձեզ»՝ աւարտ, իսկ «պահանջուղք տիրեն ձեզ»՝ այլ աւարտ. քանզի այսպէս վարին կէտք՝ երբեմն մի դնելով զկէտն կատարէ զխորհուրդն, երբեմն երկուս երկուս, երբեմն երիս երիս կամ չորս չորս եւ կամ այլ աւելի» (մեր աշխատասիրութիւնը՝ «Հաւաքումն Մեկնութեան Քերականի», էջ 154):

Բնագրահատուածների նման համադրումից յետոյ «համառօտման» մասին իհարկէ խօսք լինել չի կարող. ո՛չ ոք լրջօրէն չի պնդի, թէ այս երկու բնագրահատուածներից առաջինը միւսի «համառօտումն» է: Նախ՝ Մործորեցին մանկավարժական–մեթոդական տարբեր մօտեցում է ունեցել երզնկացուց, որը եւ բանասիրական–աղբիւրագիտական կարեւոր արժէք է ստացել ներկայ դէպքում. եթէ Երզնկացին Թրակացու քերականական ասոյթները ձուլել է իր չարադրանքում «ասելն» կամ «ասէ» ընդմիջարկմամբ, ապա Մործորեցին սկզբում առանձնաբար է առաջադրել Թրակացու քերականական ասոյթը, յետոյ նոր՝ տուել իր սեփական չարադրանքը: Այդպէս է վարուել, իբրեւ կանոն, բոլոր դէպքերում: Սա մեթոդական–մանկավարժական կարեւորագոյն սկզբունք է, ուսուցման ընթացքը յստակացնող ու հեշտացնող, որով մեկնելի ու մեկնող քերականական հարցադրումների ու պատասխանների յարաբերակցութիւնը տրւում է ճշգրտապէս: Ընդ որում Մործորեցու բնագիրը, ի տարբերութիւն Երզնկացու երկի, լիովին եւ սպառիչ կերպով ընդգրկելով Թրակացու քերականական ասոյթները մէկ առ մէկ՝ օժտել է դրանք մեկնութիւններով, դարձնելով իր դասագիրքը քերականական առարկայի ուսուցման առաւել կատարեալ տիպար, մեթոդական տեսակէտից առաւել յաջողուած՝ ոչ միայն Երզնկացու աշխատութիւնից, այլեւ նոյնիսկ Եսայի Նէեցու նմանաբնոյթ երկից:

Իսկ ինչ վերաբերում է Մործորեցու եւ Երզնկացու վերը բերուած մեկնաբանող բնագրահատուածներին, ապա այստեղ առաւել քան ակնբախ է «համառօտման» իսպառ բացակայութիւնը: Իմաստային նոյն ծաւալն է առկայ Մործորեցու բնագրահատուածում, ինչ նրա երկի համար գլխաւոր աղբիւր ծառայած Երզնկացու աշխատութեան համապատասխան բնագրահատուածի իմաստային ծաւալը, ըստ որում նոյնիսկ միեւնոյն լեզուանմուշների ցուցադրմամբ, բայց բոլորովին ա՛յլ չարադրմամբ եւ տարբե՛ր լեզուաոճաւորմամբ, առաւել պարզ եւ յստակ, կուռ եւ կապակցուած, շարահիւսրէն միասնական լեզուամտածողութեամբ, դիւրընկալ գրաբարով՝ զերծ յուներաւնութիւնից եւ մանուածապատումից ու «գիտական» խրթնաբանու-



միից, որ առհասարակ յատուկ է ինչպէս Երզնկացու, այնպէս եւ, մանաւանդ, Մագիստրոսի քերականական աշխատութիւններին՝ ամբողջութեամբ վերցրած: Վերջիններիս երկերի լեզուառճական խայտաբղէտութիւնն ու չեչտուած յուներանութիւնը պայմանաւորուած են, բնականաբար, այն քերական մեկնիչների աշխատութիւնների լեզուով, որոնցից բանաքաղաբար ընդգրկելով կազմել են իրենց աշխատութիւնները Մագիստրոսն ու Երզնկացին:

Ի դէպ, ելնելով քերականական ձեռնարկ–դասագիրք կազմելու նպատակադրումից, Մործորեցին անմիջապէս իր նախորդ քերական մեկնիչի՝ Նչեցու հետեւողութեամբ ակնյայտ ճիգեր է գործադրել յաղթահարելու Երզնկացու քերականութեան յուներան հայերէնի խրթնաբանութիւնը: Եթէ Երզնկացու կապակցութեամբ Առաքել Սիւնեցին ասում է «վասն դիւրալուր լինելոյ» յօրինեց իր Մեկնութիւնը, եւ դա վերաբերում էր գերազանցապէս նրա կառուցուածքային կողմին՝ Մագիստրոսի համեմատութեամբ, ապա Մործորեցու առնչութեամբ պէտք է ասել՝ «դիւրալուրութիւնը» վերաբերում է ե՛ւ կառուցուածքային, ե՛ւ մանաւանդ լեզուառճական կողմերին: Վերջինիս աշխատութեան առաջացման անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է նաեւ լեզուառճական պահանջով: Բնականաբար, յուներան հայերէնը չատ էր խանգարում Երզնկացու աշխատութեան ուսուցմանը եւ նրա ընկալմանը ուսումնականների կողմից: Հէնց այս առումով էլ Մործորեցու (մասամբ եւ Նչեցու) երկի բնագրում կատարուած լեզուառճական յղկումն ու խմբագրումը մեծ նուաճում էր եւ արդիւնք՝ բանասիրական խորաքնին վերլուծման, որով խստօրէն տարբերւում է Մործորեցու աշխատասիրութիւնը Երզնկացուց: Վերը բերուած բնագրահատուածների քննութիւնից հետեւում է այն, որ մի դէպքում չարադրանքը ըստ էութեան սեփական՝ ինքնուրոյն բնոյթ ունի (Մործորեցունը), միւս դէպքում՝ ո՛չ (Երզնկացունը):

Այնուհետեւ. մի՞թէ «համառօտման» մասին կարող է վկայել, դիցուք, նաեւ հետեւեալ բնագրահատուածների համեմատութիւնը.

### ՄՈՐԾՈՐԵՑԻ

[Բաց]

«Ի՞ւ առանձնանայ կէտ ի ստորակիտէ,– ամանակաւ»:

[Մեկնութիւն]

«Ամանակ»՝ զմիջին կէտն ասէ, զի գաւուցանէ եւ առանձնացուցանէ զվերջինն եւ զստորակէտն ամանակաւ, զի թէ քթթումն ական «ամանակ» ասի, որչա՞փ եւս արտաբերութիւն բանին լեզուաւ, զոր ոմանք այսպէս ասեն. նչանիւ առանձնանայ կէտ ի ստորակիտէ՝ ամանակաւ: Նչան եւ ամանակ զմիջին կէտն ասէ» (Սոյն աշխատ. էջ 157):

### ԵՐԶՆԿԱՑԻ

«Իսկ ասելն՝ «Ի՞ւ առանձնանայ կէտ ի ստորակիտէ,– ամանակաւ»՝ գայս զմիջին կիտէն ասէ, վասն զի գաւուցանէ ի միմեանց զվերինն եւ զստորին կէտն: Եւ սոյն ասի ամանակ, զի եթէ քթթումն մի ական ժամանակ ասի, ո՞րչափ եւս առաւել արտաբերութիւն բանին լեզուաւն» (էջ 153):

*Իհարկէ՝ ո՛չ: Դարձեալ իմաստային նոյն ծաւալն ենք տեսնում երկու բնագրահատուածներում էլ, բայց տարբե՛ր լեզուաոճաւորմամբ:*

*Կան նաեւ բնագրահատուածներ Մործորեցու աշխատութիւնում, որոնք հաւասարապէս աղերսակցութիւն ունեն ինչպէս Երզնկացու, այնպէս էլ Նչեցու երկերին: Դիցուք՝ զուգադրենք հետեւեալ բնագրահատուածները ըստ համապատասխանութեան.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

**[Բաճ]**

*«Եւ զդամբանականն ուժգնակի <վերծանեսցուք>:*

**[Մեկնութիւն]**

*Դամբանական, ասէ, զգերեզմանականն, որ են լալական բանք եւ ձայնք ի վերայ մեռելոց,* երիւմս այսոմիւ կերպարանելով յանկարծադիպութեան անխոհեմս եւ անհեդեդ ձայնիւ եւ անյարմար ձեւով լալումն յիմիթեանս մակագանչել ուժգնակի, որպէս ի վերայ Արտաշիսի եւ Դարեհի դէպ գրեալ, *դրոյ պարտ է նմանել ի յընթեռնուլն»* (*Սոյն աշխ.*, էջ 143):

**ԵՐԶՆԿԱՑԻ**

*«Եւ զդամբանականն, որ է գերեզմանականն».* երիւմ այսոմիկ կերպարանելով՝ ըստ յանկարծակի դիպութեան անխոհեմս, անհեթեթ ձայնիւ, *անհամ* եւ անյարմար ձեւովմ լալումն յիմիթեան, *որովք* պարտ է նմանել ի յընթեռնուլն:

*Եւ բանք* սոցա որպէս ի վերայ Արտաշեսին եւ Դարեհին դէպք գրեալ *եւ զայսպիսի բանս յընթեռնուլն պարտ է համառաբար, իբրեւ կսկծողական ձայնիւ մակագանչութեամբ ձայնել ուժգնակի, որպէս ինքն վչտացեալսն»* (էջ 127–128):

**ՆՉԵՑԻ**

**[Բաճ]**

*«Եւ զդամբանականն ուժգնակի <վերծանեսցուք>:*

**[Մեկնութիւն]**

*Դամբանական, ասէ, զգերեզմանականն, որ են լալական բանք եւ ձայնք ի վերայ մեռելոց:* Երիւմս այսոմիւ կերպարանելով՝ յանկարծադիպութեան, անհեթեթ ձայնիւ եւ անյարմար ձեւով, կսկծողական ձայնիւ լալումն յիմիթեանս մակագանչել ուժգնակի, *որոյ* պարտ է նմանել յընթեռնուլն» (*մեր աշխատասիրութիւնը՝ Եսայի Նչեցու «Վերլուծութիւն Քերականութեան»*, էջ 72):

*Ուշադիր համեմատութիւնից միանգամայն ակներեւ է, որ չեզատառ եւ ընդգծուած տողերը համապատասխանում են միայն Նչեցու երկին, որոնք չկան Երզնկացու մօտ, իսկ միայն չեզատառ տողերը ծածկում են Երզնկացու բնագրահատուածի համապատասխան տողերը: Այս եւ այլ փաստերից, ի դէպ, հետեւցնում ենք, որ* Մործորեցու սկզբնաղբիւրները մեկնութիւններում երկուսն են՝ Երզնկացու եւ Նչեցու աշխատութիւնները (*վերջինիս մասին ըստ էութեան խօսք կ'ասուի քիչ յետոյ*): *Իսկ իմաստային ծաւալի*



*տեսակէտից ո՛չ թէ «համառօտում», ա՛յլ՝ նոյնիսկ «ընդարձակում» ենք նկատում Երզնկացու աշխատութեան տուեալ բնագրահատուածի յարաբերութեամբ:*

*Մործորեցին ունի նաեւ բնագրահատուածներ, որոնք մասամբ նաեւ սեփական գրչի արդիւնք են՝ յարաղրուած իր աղբիւրներից կատարած բանաքաղումներին, հետեւաբար եւ աւելի «ընդարձակ» են, քան իր աշխատութեան համար հիմք ծառայած Երզնկացու կամ Նչեցու համապատասխան բնագրահատուածը: Որպէսզի ասուածը առարկայական լինի նաեւ ընթերցողի համար՝ առաջադրենք թէկուզեւ մէկ բնագրային փաստ.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

«ՑԱՂԱԳՍ ՈԼՈՐԱԿԻ

**[Մեկնութիւն]**

Տակաւին վարդապետական եղանակաւս ի վերծանութեան մասունսն խաղայ, որ է ոլորակն եւ կէտն, զոր այժմ զոլորակն սահմանաւ ծանուցանէ: *Բայց տարակուսին ոմանք, թէ ընդէ՞ր արդեաւք զոլորակն կիտին նախադասեաց.– ասեմք. զի հարկաւոր է յաստուածին նախ ոլորակին ունել զկարգ եւ ապա կիտին, որպէս աւդասլական երամբք նախ վերանն եւ ապա իջեալ հանգչին»* (*Սոյն աշխատ.*, էջ 149):

**ԵՐԶՆԿԱՑԻ**

*«Եւ դարձեալ տարակուսելի է, թէ ընդէ՞ր արդեաւք զոլորակն կիտին նախադասեաց:– Ասեմք. վասն զի հարկաւոր է յաստուածին նախ ոլորակին ունել զկարգ, եւ ապա՝ կիտին, որպէս աւդասլից երամոցն»* (էջ 149):

**ՆՉԵՑԻ**

ՑԻՒ

*Ինչպէս նկատելի է, նոյնիսկ իր հիմքից՝ Երզնկացուց վերցրած բանաքաղումները Մործորեցին նոյնութեամբ չի ընդգրկել իր դասագրքում, այլ լեզուաոճական մշակման ենթարկելով դրանք ներկայացրել է գերազանցապէս սեփական լեզուամտածողութեան անդրադարձմամբ: Իսկ իմաստային ծաւալները քննարկուող բնագրահատուածներում, իհարկէ նոյնական չեն, բացառելով, հետեւաբար, «համառօտութեան» որեւէ հիմնաւորուած պնդում: Համեմատի՛ր նաեւ ստորեւ բերուող բնագրահատուածները.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

**[Բաճ]**

*«Իսկ դրութեամբ՝ կամ յորժամ յերկուս բաղաձայնս յանգեսցի, որկէն՝ աղց»:*

**[Մեկնութիւն]**

*Որպէս միամաւր ոք, որ զերկուս սահինան ձեռ կամ զհաւրն եւ զմաւրն ինչսն ժառանգէ, այսպէս եւ աղցդ, կամ անց, կամ արջ զերկու[ս] ձայնորդսն զինքեամբ*

*ձգելով, թէպէտ ոչ հանգոյն առաջնոյն, սակայն գեր քան զկնիսն դրութեամբ ասի երկար փաղաւութիւն» (Սոյն աշխատ., էջ 182):*

**ԵՐՋՆԿԱՑԻ**

*«Իսկ դրութեամբ լինի, յորժամ յերկուս բաղաձայնս յանգեսցի, որկէն՝ աղց» (էջ 179):*

**ՆՉԵՑԻ**

**[Բառ]**

*«Իսկ դրութեամբ լինի, որ դնելով է եւ ոչ բնութեամբ, յորժամ յերկուս բաղաձայնս յանգիցի, որկէն՝ աղց»:*

**[Մեկնութիւն]**

*Իբրեւ զմիամաւր ոք զերկու ձայնորդան ձգելով զինքեամբ դասեցաւ, թէպէտ ոչ հանգոյն առաջնոյն, սակայն առաւելեալ գեր զկնիսն» (էջ 95):*

***Այս դէպքում, սակայն, Երզնկացու իրօք «համառօտ»՝ ընդամէնը մէկ տող մեկնութեան դիմաց Մործորեցին առաջադրել է հինգ տող, այն էլ ինչպիսի՛ արժէքաւորումով, որ զարձրել է նոյնիսկ մեկնելի եւ մեկնող բնագրահատուածներ, ընդ որում դրսեւորելով քերականական տուեալ հարցադրումը ամբողջական զարձնելու որոշակի միտում: Այստեղ եւս ակներեւ է իր լրացումների մասնակի հիմքը՝ Նչեցին:***

***Դիցուք՝ քննենք նաեւ հետեւեալ բնագրահատուածները.***

**ՄՈՐԾՈՐԵՑԻ**

**[Բառ]**

*«Եւ են սերք՝ արական, իգական, չէզոք»:*

**[Մեկնութիւն]**

*Սերք՝ ոչ ի գոյութեան վերայ կոչին, զի ոչ զբնութիւն յայտնեն, այլ զձայնի նշանակս, որք ի յունին եւ ի հռոմայեցին լիով է եւ յատուկ անուն արականին եւ իգականին եւ չէզոքին, զի որք յանուան սկզբունս ունին զով, որպէս ասելն՝ «Ով այիովս ապաւստաւլաւս», որ լսի «սուրբ առաքեալք»,- արական է, իսկ ասելն՝ «Իայէ իայէ Աւդաւկաւս»՝ իգական է, իսկ տաւքսաւլա[յ]՝չէզոք է, զի անուն, որ ի սկիզբն տո ունի՝ չէզոք է: Այսպէս եւ ի վախճանս անուանց, յորում պատահին՝ զնոյն նշանակութիւն ունին:*

*Իսկ հռոմայեցւոյն եւս յատուկ, բանգի անուն պատահական, որ ունիցի յանգի իւրում զուս՝ արական է, եւ որ ունի զայ՝ իգական է, իսկ զում՝ չէզոք. այսպէս ալպուս, ալպա, 'ալպում: Եւ որք ոչ են պատահական անուն, այլ էական, ունին եւ այլ նշանակութիւն, զի արականն ունի առաջի իւր իր, եւ իգականն՝ էր, եւ չէզոքն՝ օր:*

*Եւ բովանդակ սերքն այսու նշանակին զանազանութեամբ, որում տեղեակք են ի մեծաց մինչեւ ցփոքունս արականացն եւ իգականացն եւ չէզոքացն անուանց: Իսկ ի հայումս թէպէտ գտանի սերիցս նշանակութիւն, սակայն տարած եւ սփիւռ է՝ ոչ ընդ միում վանգիւ փակի, վասն այսորիկ դժուարին իմանի, որպէս հայր, եւ որդի, եւ ուստր՝ արականք են կոչումն. իսկ մայր, եւ դուստր, եւ աղջիկ՝ իգականք, եւ տղայ,*



*եւ զաւակ, եւ ժառանգ՝ չէզոք: Եւ գարձեալ Խոսրով՝ արական, Խոսրովուհի՝ իգական, Խոսրովիդուխտ՝ չէզոք: Այսպէս եւ ի խաւսս «Ընդ բեզ եմ»՝ արական, «Այ դու»՝ իգական, «Աղէ, լսէ»՝ չէզոք: Նոյնպէս եւ այլք ի կենդանեաց եւ ի տնկեաց ունին զայս նշանակութիւն, որպէս՝ ցուլ, կով, մոզի, խոյ, մաքի, շիշակ, նոյնպէս եւ այլքն» (Սոյն աշխատ. էջ 198-99):*

**ԵՐՋՆԿԱՑԻ**

*«Եւ հետեւին անուան հինգ՝ սերք, տեսակք, ձեւս, թիւք, հոլովք»: Իսկ սերք ոչ ի գոյութենէ վերակոչին, զի ո՛չ էր զբնութիւն քննել, ա՛յլ՝ զձայնի նշանակս յայտնել: Ա՛րդ՝ ասեն ոմանք, եթէ է հռոմին լիով արական եւ իգական եւ չէզոքական՝ ի՛ւ եւ կամիցի ոք յայտնել,- ըստ երիցունց կարողութիւն է յայտնել:*

*Իսկ յաղագս մերոյ լեզուոյ եթէ ոչ է ի սոսա արական եւ իգական եւ չէզոք չարադասեալ, որպէս ի յունականին եւ յոմանց նշանակեալ ունել մեզ: Բայց զայս ոչ իբրու պարսաւանս եդեալ մեզ վարկցիս, զի է՛ եւ մեր սովորաբար բարբառ, զի եւ ոչ առ նոսա է մի արականն եւ իգականն: Քանզի այսոքիկ են արականք յունաց, որք ունին ի սկզբունս բանի՝ ով, որպէս ասելն՝ ով այիովս ապաւստովլաւս, այսինքն՝ «սուրբ առաքեալք», եւ է՛ իգական: Իսկ ասելն՝ «ի այէ այէ Աւդաւկաւս», որ է անուն իգական. եւ որք միանգամ ի սկզբունս ունին ի, նոքա՛ են իգականք: Իսկ որք ունին ի սկզբունս տաւ բաւլա, եւ ամենա՛ն որ ի սկզբունս ունին տաւ, նոքա չէզոք են: Եւ ե՛ն այլ եւս, որք ի վախճանին զնա՛ն որ ի սկզբունս ունին տաւ, նոքա չէզոք են: Եւ ե՛ն այլ եւս, որք ի վախճանին զնշանակութիւնս զայսոսիկ, իմաստասիրելով զսոսա, տրոհեալ զմարգս փոքր աչխարհ, որպէս եւ է՛ իսկ: Զի որպէս երկիր բուսուցանէ եւ անուցանէ արականս եւ իգականս եւ չէզոքս, նոյնպէս եւ մարդկայինս բուսոյ եւ պտղոյ բանականութեանս խնդրի:*

*Իսկ մերս յորժամ ասեմք՝ «Այ այս անուն»,- իգական է. ի սկզբունսն՝ «Այ դուք»՝ իգական է, եւ այս սկզբանցն[ն] նշանակութիւնք: Եւ ասելն՝ «Ընդ քեզ եմ»,- արական է: Իսկ ասելն՝ «Աղէ՛, լսեա՛»,- չէզոք: Իսկ ի յանգին [ով], որպէս՝ Խոսրով,- արական է: Իսկ ասելն՝ «Աղէ՛, լսեա՛»,- չէզոք: Իսկ ի յանգին [ով], որպէս՝ Խոսրով,- արական, [ի, որպէս] Խոսրովուհի՝ իգական, Խոսրովիդուխտ՝ չէզոք: Եւ այսոքիկ թէ արական, [ի, որպէս] Խոսրովուհի՝ իգական, Խոսրովիդուխտ՝ չէզոք: Եւ այսոքիկ թէ զմտաւ ածցէ ոք՝ յանհունս վարեսցի: Ա՛րդ՝ այսոցիկ մարդոյն բաւականասցի յարացոյց, որպէս վերոյ գրեալ է:*

*Իսկ չորքոտանեացդ ստուգաբար իմացեալ եմք, թէ մերոյ բաղդատութիւն...» (էջ 196-197):*

*Ինչպէս բնագրահատուածների համեմատութիւնից միանգամայն ակնբախ է, Մործորեցու չարադրանքում ընդգծուած տողերը ամենեւին չկան Երզնկացու տեքստում. դրանք չկան նաեւ Նչեցու դասագրքում (տե՛ս «Վերլուծութիւն քերականութեան», էջ 69): Իսկ մնացած մասում Մործորեցու չարադրանքի իմաստային ծաւալը ոչնչով չի զիջում ո՛չ Երզնկացուն, ո՛չ էլ Նչեցուն, հետեւաբար եւ «համառօտման» մասին վարկածը այս դէպքում եւս ապացուցել անկարելի է:*

*Զուգադրե՛նք նաեւ հետեւեալ բնագրահատուածները եւ սահմանափակուենք.*

**ՄՈՐԾՈՐԵՑԻ**

**[Բան]**

*«Վերծանութիւն է մասն քերդածոց կամ չարագրաց անվթար յառաջբերութիւն»:*

**[Մեկնութիւն]**

Ըստ առձեռն տեսութեան գոյ ի տեղիս տարակուսանս, զի թէ զվերծանութիւնս բերականութեանն ասաց մասն, այժմ զի՞արդ բերդածոց եւ շարագրաց մասն դնէ:

Գիտելի է, զի բերականութիւնն ի բերդածոց եւ ի շարագրաց հմտանայ, որպէս ասաց, վասն այսորիկ այժմ մասն բերդածոց գվերծանութիւնն ասէ:

[Մեկնութիւն]

*Այսինքն՝ յորժամ գբերդածս եւ գշարագրացս ուրուք ընթեռնուցումբ եւ անվթար եւ անսխալ յառաջերեմք առաջի լսողաց գվերծանութիւնն, որ է ընթերցողութիւն, արձանանայ յարմար: Իսկ բերդած՝ «գչափաւոր բանս» ասէ, եւ շարագրած՝ «պատմագրականս»: Բայց գբերդածսն նախակարգել չարադրութեանցն. նախ՝ զի ամենայն ոք գիւրն կամի յարգել արուեստ. երկրորդ՝ զի սկիզբն արուեստիս գբերդողութիւնս ասեն քերականքն. երրորդ՝ զի թէ ոչ քերդութեամբ գվերծանութիւնն ուսցի, զիա՞րդ կարասցէ շարագրութիւնս առնել»* (*Սոյն աշխատ.*, էջ 135–36):

ԵՐԶՆԿԱՑԻ

*«Եւ զի՞ նախակարգէ գվերծանութիւն քերթողաց, եւ ապա՝ շարագրաց. նախ՝ զի ամենայն արուեստաւոր գիւրն կամի յարգուն ցուցանել. երկրորդ՝ զի նախադուռն իսկ եւ սկիզբն բանաւոր արուեստիս գիւրեանցն ասեն լինել քերթաւոքն. երրորդ՝ զի թէ ոչ նախ կրթութեամբ գվերծանութիւն ուսցի եւ տիրապէս գնորայն յառաջերութիւն, զիա՞րդ կարասցէ ցուցադրել՝ որումն ոչ էր հմուտ, վասն որոյ ասէ»* (էջ 124):

*Նոյնն է պարագան նաեւ ներկայ դէպքում. ընդգծուած տողերը, լինելով Մործորեցու սեփական գրչի արդիւնք, իսպառ բացակայում են Երզնկացու երկում, հետեւաբար՝ Մործորեցին առաւել տարողունակ է քննարկուող բնագրահատուածներում քան Երզնկացին:*

*Հաւանաբար՝ Երզնկացու «միեւնոյն» աշխատութեան «Ընդարձակ» եւ «Համառօտ» տարբերակների մասին հայագէտների չփոթ պատկերացման «հիմք» ծառայած լինի միջնադարում ստեղծուած քերականական Մեկնութիւնների յաջորդականութեան վերաբերեալ Առաքել Սիւնեցու հաղորդած մատենագիտական տեղեկութիւնը, որում սկսած Յովհաննէս Երզնկացի Պլուզից, իւրաքանչիւր քերական մեկնիչի աշխատութիւնը տարօրինակ կերպով բնութագրւում է որպէս նախորդի «համառօտումը». «Ցումէ՞ թարգմանեցաւ եւ ո՞վ էր, որ մեկնութիւն արար սորա (իմա՝ Քերականութեանն Դիոնիսեայ – Լ. Խ.),– հարցման կարգով ասում է նա եւ պատասխանում,– այսինքն՝ Դաւիթ փիլիսոփայն թարգմանեաց եւ մեկնեաց զսա: Իսկ յետ նորա Գրիգոր Մագիստրոս այլ ընդարձակ մեկնեաց զԴաւիթի մեկնեալն: Իսկ յետոյ Յովհաննէս վարդապետ մականուն Պլուզ համառաւտեաց զնոյն վասն դիւրալուր լինելոյ: Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գալիճորոյ այլ համառաւտեաց զնոյն, որ այժմս կայ ի միջի, սոյնպէս եւ Մործորեցին այլ համառաւտեալ»[149]:*

*Եթէ սոյն քաղուածքում «համառօտել» բայը ըմբռնենք ելնելով նրա արդի իմաստից, ապա անյաղթահարելի հակասութեան առաջ կը կանգնենք: Ինչո՞ւ. որովհետեւ անհերքելի փաստ է, որ Երզնկացու քերականական աշխատասիրութիւնը ամենածաւալուն է միջնադարի բոլոր քերականական Մեկնութիւնների համեմատութեամբ, ըստ որում յատկապէս Մագիստրոսի երկի նկատմամբ համարեա եռակի ընդգրկում ունի: Հետեւաբար՝ ինքնին հարց է ծագում. եթէ «համառօտել» բայը տուեալ կոնտեքստում*

149 *Մեր աշխատասիրութիւնը՝* «Առաքել Սիւնեցի. *Ճաղագս քերականութեան. Համառաւտ լուծմունք», Լոս Անճելոս*, 1982, էջ 82:



*«կրճատել», «ամփոփել», «սեղմել», «փոքրացնել» նշանակութիւնը ունենար, ապա մի՞թէ Առաքել Սիւնեցու նման լրջմիտ հեղինակը այդպիսի անճիշդ եւ չփոթ յայտարարութեամբ հանդէս եկած կը լինէր: Իհարկէ՝ ո՛չ: Նոյնպէս եւ Նչեցու ու Մործորեցու քերականական Մեկնութիւնները ծաւալով համարեա թէ չեն զիջում իրար, ապա ինչպէ՞ս «համառօտած» կարող է լինել Մործորեցին Նչեցու աշխատութիւնը…: Մի՞թէ երզնկացու, Նչեցու եւ Մործորեցու քերականական Մեկնութիւնները «համառօտումն» են յաջորդաբար մէկը միւսի, իսկ երզնացու բնագիրն էլ… Մագիստրոսի երկի «համառօտումը»:*

*Բայց այս հակասական կնճիռը լուծւում է եւ ամէն ինչ իր տեղն է գըտնում, երբ Առաքել Սիւնեցու գործածած «համառօտել» բայը ըմբռնում ենք գրաբարեան հէնց այն իմաստով, որը եղել է նրա երկրորդական նշանակութիւնը, եւ սակայն՝ բնագրագիտական միա՛կ առումը: Ըստ այդմ «համառօտել» նշանակել է՝ «քաղելով բովանդակել, աւարտել»[150]: Ահա իմաստային ա՛յս ընկալմամբ էլ լիովին փարատւում են անյարիրութիւնները. այսինքն ըստ Առաքել Սիւնեցու՝ երզնկացին «քաղելով» Մագիստրոսի երկում ընդգրկուած մեկնիչների բնագրահատուածները, «բովանդակել» է դրանք իր նոր աշխատասիրութեան մէջ. Նչեցին, իր հերթին, «քաղելով» երզնկացու երկում ընդգրկուած մեկնիչների բնագրահատուածները՝ «բովանդակել» է դրանք իր աշխատասիրութեան մէջ. Մործորեցին էլ, իր հերթին, «քաղելով» Նչեցու աշխատութեան մէջ ընդգրկուած մեկնիչների բնագրահատուածները՝ «բովանդակել» է դրանք իր աշխատասիրութեան մէջ: Այս դէպքում նման պնդումը, պէտք է ասել, իրօք համապատասխանում է իրերի դրութեանը. չէ՛ որ, վերջին հաշուով, նշուած չորս աշխատասիրութիւններն էլ բանաբաղային բնոյթի բնագրեր են…: Այսպիսով՝ իսպառ բացառւում է «մէկը միւսի համառօտումը» լինելու թիւրըմբռնումը առհասարակ եւ բանաբաղային բնոյթի բերականական Մեկնութիւնների բնորոշումը տրւում է միանգամա՛յն գիտական–բանասիրական ճշգրտութեամբ:*

*Այս առթիւ առհասարակ պիտի նշել, որպէս օրինաչափական երեւոյթ, որ չնայած նրանց ընդգրկումների ընդհանրութեանը, միջնադարի հայ քերական մեկնիչներից իւրաքանչիւրը առաջնորդւել է դասընթացային առարկայի իր սեփական պատկերացմամբ, այն է՝ ստեղծե՛լ, ըստ ժամանակի գիտական պահանջների եւ մեթոդական ըմբռնումների, ուսումնական ձեռնարկ–դասագիրք, չկրկնելով երբեք իր նախորդին: Բացառութիւն չի կազմել նաեւ Մործորեցին: Բանն այն է, որ հայ քերական մեկնիչների բնագրերը կիրառութիւն պէտք է գտնէին համալսարաններում ու վարդապետարաններում՝ «ի կրթութիւն մանկանցն Սիոնի»: Ըստ որում նրանցից իւրաքանչիւրը ունեցել է քերականական բնագրեր կազմելու համար իր ուրոյն ձեռնարկ–դասագրքերի ընդգծուած մաղրական այս կամ այն համակարգը՝ մասնաւորումների ընդգծուած տարբերութեամբ, սեփական ծրագիրը եւ մեթոդական սկզբունքները: Ընդսմին՝ դրանց յատկանշական կողմն այն է, որ բոլոր ձեռնարկ–դասագրքերի քերականական նիւթը եղել է այն ընդհանուր ժառանգութիւնը, որ առաջին անգամ համարեա ամբողջութեամբ ընդգրկել են իրենց աշխատասիրութիւններում Գրիգոր Մագիստրոսն ու, մանաւա՛նդ, Յովհաննէս Երզնկացին՝ ձերում Գրիգոր Մագիստրոսն ու, մանաւա՛նդ, Յովհաննէս Երզնկացին՝ նիչների համար արդէն իսկ մատենագրական հազուագիւտ նմուշներ էին*

150 *Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ*, 1837, հ. Բ, էջ 20–21:

դարձել: Վերջիններս չեն էլ թաքցնում, որ իրենց աշխատասիրութիւնները ոչ թէ հեղինակային բնոյթ ունեն, այլ՝ բանաքաղային (իրենց տերմինով՝ «հաւաքումն մեկնութեանց»), այստեղից եւ՝ քերականական բովանդակութեան համարեա նոյնութիւնը բոլոր Մեկնութիւններում: Մինչեւ ԺԱ. դարը հայ քերական մեկնիչները՝ իւրաքանչիւրն առանձնաբար, արդէն հեղինակել էին, ստեղծագործական բեղմնաւորմամբ, իրենց աշխատութիւնները՝ վերլուծելով Թրակացու քերականութեան տարբեր հարցադրումները տարբե՛ր տեսանկիւններով ու մօտեցումներով: Իսկ ԺԱ, մանաւանդ ԺԳ. դարում սուր անհրաժեշտութիւն զգացուեց համադրելու դրանք եւ իրրեւ ամբողջական բերականական տեսութիւն ներկայացնելու, որին եւ ձեռնամուխ եղան Գրիգոր Մագիստրոսն ու Յովհաննէս Երզնկացին: Դա նոյնպէս բանասիրական չատ բարդ, բայց եւ չնորհակալ աշխատանք էր, արժէքաւոր նպաստ հայ դպրութեան զարգացման համար ընդհանրապէս, իսկ քերականագիտութեան ուսուցման համար՝ մասնաւորապէ՛ս: Ուստի բնաւ պատահական չէ, որ յետագայ բոլոր մեկնիչները, առանց բացառութեան, յատկապէս Երզնկացու աշխատութեանը նայել են իրրեւ բերականական ըմբռնումների եւ հասկացութիւնների մի շտեմարանի, որում ամփոփուած բերականական ամբողջ նիւթը համարել են որպէս ընդհանուր նուաճում, իրրեւ ընդհանուր բերականական–լեզուաբանական գիտութիւն՝ անկախ հեղինակային պատկանելութիւնից եւ կամ այլ մասնաւորումներից: Այդ պատճառով էլ նրանց համար, ըստ էութեան, նշանակութիւն չեն ունեցել աղբիւրների առնչութիւնները, որոնք թէեւ անփոխարինելի արժէք են ներկայացնում միջնադարի քերականագիտութեան պատմութեան գիտական չափագրման համար:

Նկատենք, որ հէնց բերականական նիւթի ընդհանրութիւնը՝ ընդգրկման այս կամ այն ծաւալով, միշտ էլ այն խթանող ստացուածքն է ստեղծում առաջին հայեացքից, որ Յովհաննէս Երզնկացուց յետոյ հանդէս եկած քերական մեկնիչների բոլոր երկերն էլ կարծէք «համառօտութիւնն» են իրենց համար գլխաւոր աղբիւր ծառայած «Հաւաքումն Մեկնութեան Քերականի» աշխատութեան: Այս առումով առաւել պատշաճ կը լինէր պնդել, որ Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան» երկը «համառօտումն» է Երզնկացու աշխատութեան, քան Մործորեցու «Համառաւտ տեսութիւն քերականի» բնագիրը, որովհետեւ Նչեցու դասագիրքը աւելի մերձ է ու հարազատ բնագրային իր աղբիւրներով Երզնկացու երկի հետ, քան Մործորեցու աշխատութիւնը: Բայց հայագէտներից ոչ ոք չի պնդում, որ Նչեցու քերականական Մեկնութիւնը... «համառօտումն» է Երզնկացու աշխատասիրութեան, եւ ճիշդն էլ հէնց դա է անշուշտ: Բանն այն է, որ միջնադարի քերականական Մեկնութիւնների գլխաւոր արժանիքը ո՛չ թէ իրենցում պարփակած քերականական նիւթի ընդհանրութեան մէջ է, ա՛յլ՝ իրրեւ դասագիրք թրակացու աշխատութեան դրոյթների ու հարցադրումների հնարաւորին չափ սպառիչ մեկնաբանումը՝ ուսումնականներին բերականագիտութիւն սովորեցնելու դիտումով, մեթոդական ու ծրագրային կատարելագործման նպատակադիր նիգերով:

Համոզուելու համար, որ Նչեցու աշխատութիւնը առաւել մերձ է ու հարազատ Երզնկացու երկին, քան Մործորեցունը, զուգադրենք մի երկու բնագրահատուածներ Նչեցուց, Երզնկացուց (որպէս հիմքի) եւ Մործորեցուց.



**ՆՉԵՑԻ**

«Ճետ ասելոյ զվեց մասանց բերականութեան զանուանս, դարձեալ ի ձեռն առնու զվերծանութիւնն՝ զառաջին մասն, եւ նախադասէ զսա իրրեւ զաստիճան առաջին կամ զմուտ դրան ի բաղաձ իմաստութեան: Եւ զարմանալ արժան է ընդ արուեստաւորս, զի յառաջ ասաց զսորին մասունս, իսկ այժմ ասելոց է զմասանց մասունս՝ մինչեւ տարեալ հասուսցէ յանհատն, ուստի առաւելապէս շահիցն մատակարարեսցէ աւգուտ:

*Եւ զի՞ նախ կարգէ զվերծանութիւնն եւ ասէ»* (էջ 69):

**ԵՐԶՆԿԱՑԻ**

«Ճետ ասելոյ զվեց մասանց բերականութեան զանուանս դարձեալ ի ձեռն առնու զվերծանութիւնն՝ զառաջին մասն: Եւ նախադասեալ դնէ զսա իրրեւ զաստիճան առաջին կամ զմուտ դրան ի բաղաձ իմաստութեան: Բայց զարմանալ գոյ ընդ արուեստաւորիս, զի յառաջ ասաց զսորին մասունս, իսկ այժմ ասելոց է զմասանց մասունս՝ մինչեւ զի յառաջ ասաց զսորին մասունս, իսկ այժմ ասելոց է զմասանց մասունս՝ մինչեւ տարեալ հասուսցէ յանհատն, ուստի առաւելապէս շահիցն մատակարարիցի աւգուտ» (էջ 124):

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

*«Ճետ ասելոյ զվեց մասունս քերականութեան դարձեալ զառաջին մասնէն՝ զվերծանութենէն բուռն հարկանէ եւ նախադասէ զսա իբր զաստիճան առաջին կամ զմուտ դրան ի քաղաք իմաստութեան: Վասն որոյ զարմանալ արժան է ընդ արուեստաւորս, զի առաջ ասաց զմասունսն, իսկ այժմ ասէ զմասանց մասունսն՝ մինչեւ տարեալ հասուսցէ յանհատսն, ուստի առաւելապէս շահիցն մատակարարիցի աւգուտ: Իսկ թէ զմնացեալ մասունս ոչ ըստ վերծանութեանս աւրինակի բացայայտէ՝ գիտելի է, զի զոմանս յանուանն ճառի եւ զայլս ի հոլովիցն գաղափարաւ ծանուցանէ, նաեւ յառողանութիւնսն ուսուցանէ եւ զկէտս, իբր դիւրինս, առանց յիշատակելոյ թողու: Բայց զառաջիկայս սկսանի այսպէս»* (էջ 135):

Տարակոյս չի մնում բնագրահատուածների համեմատութիւնից, որ Նչեցու եւ Երզնկացու ընդգրկումները համարեա բացարձակութեան հանող նոյնութիւն են, ընդ որում Երզնկացու, իբրեւ հիմքի եւ աղբիւրի, առաջնայնութեան հաւատամքը անչուշտ. մինչդեռ Մործորեցու բնագրահատուածը մասամբ է միայն աղերսւում, բայց առաւելապէս տարբերւում է իր ինքնուրոյնութեամբ թէ՛ Նչեցուց եւ թէ՛ Երզնկացուց: Համեմատի՛ր նաեւ.

**ՆՉԵՑԻ**

«Եւ արդ որոշէ զձայնաւորքս ի բաղաձայնից իբրեւ պատուականս եւ պատճառս ձայնին յարմարման, քանզի ձայնաւորքս են որպէս զգայութիւնք կամ հոգի կենդանական ի մարմնի, զի ըստիցէիցն առանձինն են զայլսն խառնելով՝ բաւականանալ առ հնչումն եւ կամ բան յաւդաւոր պատկանաւոր, իսկ այլդ շաւշափումն միայն առնեն ի բերանն՝ առանց սոցա խառնման եւ ոչ կարեն արտայայտել զձայնն: Իսկ ապա յորժամ ընդ իւր բնական շարժումն յառաջ անցանէ իւրաքանչիւր ի սոցանէ եւ անկանի ի սոսա՝ լինի ձայն. որպէս՝ բեն, գիմ, դա, զա, թոյ, ժէ, լիւն, խէ եւ այլ ամենեցեան մի ըստ միոջէ՛ն. ոմն այրիւն ձայնաւորի, եւ ոմն այլաւրն:

Եւ զի՞ ասէ ձայնաւորք. ասին՝ վասն զի ձայնս յինքեանց անպակաս ելուզանեն, որ է ելուցանեն, այս է՝ հանեն: Եւ արդ ունի են ձայնաւորքս ոչ միայն մերս, այլ ամենայն բանականաց, եւ ոչ արտաքոյ սոցա գուցէ ոք սկսեալ կամ յանգեալ, նոյնպէս եւ ոչ բայ, քանզի ունիցս այսոքիւք ամենայն բան պատկանաւոր չարադասի, նոյնպէս եւ գործնական աղեաց եւ արուեստաւոր երաժշտական» (էջ 83):

### ԵՐԶՆԿԱՑԻ

«Իսկ ձայնաւորքս են որպէս զգայութիւնք կամ հոգի կենդանական ի մարմնի, վասն զի սոքա իսկ կարեն արտաբերել ի դուրս զբանն եւ զձայնն առանց խառնման յայլսմ[ն]: Իսկ այլքն շաւշափիւն միայն առնեն ի բերանն, առանց սոցա խառնմանն եւ ոչ կարեն արտայայտել զձայնն: Իսկ ապա յորժամ ընդ իւր բնական շարժումն յառաջ անցանէ, իւրաքանչիւր ոք ի սոցանէ եւ անկանի ի սոսա՝ լինի ձայն, որպէս՝ բ, գ, դ, զ, թ, ժ եւ այլքն ամենեքեան մի ըստ միոջէքն. ոմն այրիւն ձայնաւորի եւ ոմն այլովքն» (էջ 163):

### ՏՈՐՏՈՐԵՑԻ

*«Որպէս բնութեամբ շարժուն է հոգի եւ շարժէ յորս լինի, նոյնպէս եւ սոքա անընդհատ ձայն յինքեանց հանեալ յառաջ ածեն՝ թէ ըստ ինքեան առանձին եւ թէ ընդ այլսն խառնմամբ բաւականն հնչումն եւ բան յաւգաւոր պատկանաւորել, քանզի այլքդ շաւշափումն միայն առնեն ի բերան առանց սոցա խառնման, եւ ոչ կարեն արտաբերել ձայն:* Իսկ յորժամ ընդ իւր բնական շարժումն յառաջ անցանէ, իւրաքանչիւր ի սոցանէ անկանի ի սոսա եւ առնու ձայն, որպէս՝ *բեն, գիմ, դա, զա, թոյ, ժէ, լիւն, խէ* եւ այլքն ամենայն. բանզի ոմն այրիւն ձայնաւորի, եւ ոմն՝ այլաւքն:

*Եւ դարձեալ՝ ձայնաւոր ասաց, զի մի՛ կարծիցես, թէ ստացմամբ ունին զձայնս, ասաց՝ «անպակաս», այսինքն՝ բնութեամբ»* (*Սոյն աշխատ.*, էջ 164–65):

*Այս դէպքում եւս, ինչպէս տեսնում ենք, Նչեցու եւ Տործորեցու բնագրահատուածներից իրենց հիմքի՝ Երզնկացու նկատմամբ միայն Նչեցու բնագրահատուածը մերձ է եւ հարազատ՝ լիակատար բանաբաղմամբ, որ ցոյց ենք տուել չեղատառերով. մինչդեռ Տործորեցունը բաւականին ինքնուրոյն է եւ միայն չատ սակաւ աղերսներով է առնչւում իր հիմքին: Իհարկէ միշտ չէ, որ այդ այդպէս է, ինչպէս դրանում կը համոզուի ընթերցողը Նչեցուն նուիրուած մեր աշխատասիրութիւնը աչքի առաջ ունենալիս*[151]:

*Բնագրագիտական վերլուծման առումով կարեւոր է պարզել նաեւ, թէ ինչպիսի՞ն է Տործորեցու բնագրային կառուցուածքը իբրեւ համադրական սիստեմ՝ բանաքաղային բնոյթի լինելու պատճառով. որի՞ն է նա հետեւում՝ Մագիստրոսի՞, թէ՞ Երզնկացու Մեկնութիւնների բնագրային համակարգին: Այս հարցի լուսաբանումը խիստ անհրաժեշտ է որպէս հարկադրական մեկնակէտ՝ նրա բնագրի առանձնայատկութիւնները բացայայտելու թելադրանքով:*

*Սկիզբից եւեթ նչենք, որ Երզնկացու քերականութեան բնագրային կառուցուածքն իր բնոյթով ու առանձնայատկութիւններով հակադրւում է Մագիստրոսի մեկնութեան համադրական կառոյցին. Մագիստրոսը Թրակացու բոլոր ղրոյթներն ու քերականական հարցադրումները չէր կարողացել լիովին մեկնաբանել՝ բաց թողնելով դրանցից չատերը. իսկ Երզնկացին, հիմնականում, վերացրել է այդ թերութիւնը: Երկրորդ աղաղակող վրիպանքը, որ թոյլ էր տուել Մագիստրոսը, քերականական նոյն հարցի վերաբերեալ բազմիցս կրկնուող տաղտկալի համադրումներն էին. մի չարք քերական մեկնիչների բնագրահատուածները Մագիստրոսը յարակցում էր իրար ետեւից՝ առանց տրամաբանական փոխյաջորդականութիւն ու միաճուլում ստեղծելու: Երզնկացին յաղթահարել է նաեւ այդ չափազանց լուրջ անյարիրութիւնը, որն արդէն ներքին կառոյցի համակարգային նշանակութիւն ուներ: Բացի դրանից. Երզնկացին ընդգրկել է Մագիստրոսի ամբողջ աշխատութիւնը եւ յաւելադիր ղրան նաեւ Համամ Արեւելցու, Արիստակէս Գրչի, Գէորգ Սկեւռացու եւ այլոց աշխատութիւնները, սակայն վերակառուցելով ու ներկայացնելով ղրանք բոլորովին նո՛ր եղանակով եւ նո՛ր համակարգմամբ: Դա բանասիրական բարդ եւ դժուարին գործ է, որը պահանջում է խոր հմտութիւն՝ ինչպէս բուն քերականական առարկայի նկատմամբ, այնպէս էլ՝ ձեռնարկ-դասագիրք կազմելու գիտա-մանկավարժական սկզբունքների:*

*Իսկ ի՞նչ է ցոյց տալիս Տործորեցու բնագրի համեմատութիւնը Մագիստրոսի եւ Երզնկացու բանաքաղային Մեկնութիւնների հետ. ա՛յն, որ Տործորեցու* բնագրի հիմքում ընկած է Երզնկացու աշխատասիրութիւնը: *Այդպիսին է նաեւ բնագրի համադրական կառոյցի սիստեմը: Տործորեցին հետեւել է, Նչեցու օրինակով, ո՛չ թէ Մագիստրոսի, ա՛յլ՝ Երզնկացու մեկնաբանման համակարգին, որը բնագրագիտական եւ բանասիրական առումով մեծ նուաճում էր այդ ժամանակ: Բոլոր տուեալների համաձայն՝ Տործորեցու Մեկնութիւնում քերականական նիւթերի չարադրման ընթացքը եւ այդ նիւթերի ընդգրկումը հիմնականում համապատասխանում է Երզնկացու չարադրանքի ընթացքին եւ նիւթերի ընդգրկմանը: Այս պնդման համոզչականութիւնը առանձին դժուարութիւն չի ներկայացնում եւ դրա համար ապացուցելու փաստարկներ բերելու անհրաժեշտութիւն չկայ ամենեւին: Այս երեք աշխատութիւնների հէնց առաջին իսկ քննական համեմատութիւնը անհերքելի է դարձնում այն: Բաւարարուենք միայն նչելով, որ եթէ Մագիստրոսն իր Մեկնութեան մէջ ընդգրկում է բացառապէս Դաւթի (այն էլ՝ ոչ լրիւ), Մովսէսի, Ստեփանոսի, Անանունի եւ իր ասոյթները, իսկ Երզնկացին, ի յաւելումն դրանց՝ նաեւ Համամ Արեւելցու, Արիստակէս Գրչի, Գէորգ Սկեւռացու եւ այլոց աշխատութիւնները, ապա Տործորեցու բնագիրը Երզնկացու հետ է հիմնականում համընկնում, մասամբ էլ՝ Նչեցու: Միւս կողմից՝ ինչպիսի լրացումներ կամ մասնաւորումներ, որ Տործորեցին կատարում է իր բնագրում, իրագործում է դրանք միայն Երզնկացու աշխատութեան ընթացքի պահպանմամբ: Դրանում մեր բոլոր տարակուսանքները փարատուեցին, երբ կազմեցինք Մագիստրոսի, Երզնկացու, Նչեցու եւ Տործորեցու քերականական չորս աշխատութիւնների կառուցուածքային համեմատական պատկերը: Ընդ որում պարզուեց նաեւ, որ նչուած հանգամանքներով էլ սպառւում է Տործորեցու Մեկնութեան ընդհանրութիւնը Երզնկացու աշխատութեան հետ, եւ որից յետոյ սկսւում են բնագրային այն սկզբունքային տարբերութիւնները, որոնց մասին խօսելու ենք այժմ:*

*Իբրեւ առաւել ակնբախ եւ բնութագրական երեւոյթ պէտք է ընդգծել, որ Տործորեցու երկի բնագիրը Երզնկացու երկի բնագրից տարբերւում եւ սահմանազատւում է, առաջին հերթին,* բանասիրական կարգի առանձնայատկութիւններով: *Նչեցին առաջին ուղին հարթողն է այս առումով: Բայց դրաւ եւ հմտալից աշխատանքներ է կատարել իր բնագրական կառոյցում: Եթէ վերը ասուեց, որ Տործորեցու երկի բնագրի հիմքում ընկած է գերազանցապէս Երզնկացու աշխատութիւնը, ապա դա չպէտք է հասկանալ այնպէս, որ նա պարզապէս վերցրել է Երզնկացու աշխատութիւնը եւ նոյնութեամբ դրել իր կազմած բնագրի մէջ: Ո՛չ, ամենեւին: Ասուածի պայմանականութիւնը («հիմքում ընկած») պէտք է ընկալել այնպէս, որ քերականական հարցադրումների ընդհանուր ընթացքն ու նիւթերի ընդգրկումը Տործորեցու բնագրում, ըստ էութեան, համընկնում է Երզնկացու բնագրին,*

151 *Տե՛ս* «Եսայի Նչեցի. *Վերլուծութիւն քերականութեան*», Երեւան, 1966:

*բայց* մասնաւորումների մէջ, մանաւանդ լեզուաոճական ձեւակերպումների ամբողջականացմամբ, յղկման ու բիւրեղացման առումով, շատ է տարբերւում ինչպէս Երգնկացուց, այնպէս եւ Նչեցուց: *Որոշ բան արդէն ասուեց վերը բերուած բնագրահատուածների համեմատութեան ու վերլուծութեան ժամանակ: Այն ամբողջացնելու համար այժմ քննարկենք բնագրագիտական այս հարցը ըստ էութեան:*

*Ներկայ դէպքում սահմանափակելով մեր քննական համեմատութիւնը Մործորեցու եւ Երգնկացու երկերի բնագրերի լեզուաոճական առանձնայատկութիւնների բացայայտման ուղղութեամբ, նկատում ենք Մործորեցու բանասիրական աշխատանքի չափազանց ուշագրաւ եւ միաժամանակ բնութագրական կողմերը եւս: Մի դէպքում՝ վերցնելով Երգնկացու միայն ընդհանուր միտքը, նա հիմնովին նոր ձեւակերպման է ենթարկում այն, երբեմն էլ՝ տալով նրան իմաստային փոքր ինչ տարբեր նրբերանգ: Համեմատե՛լ.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

[Բան]

*«Կէտք են երեք՝ կէտ աւարտեալ, միջակ, ստորակէտ»:*

[Մեկնութիւն]

*Զայս ոչ ըստ ոլորակին սահմանէ, այլ բաժանէ, թէպէտ ոմանք զբաժանումն սահման կարծեն կիտիս, ապա ինձ թուի ո՛չ բնութեանն, այլ՝ ներգործութեանն, քանզի բնութեան սահմանն է այս՝* կէտ է անյայտ նիշ՝ պատճառ գծի, ոչ ունելով երկայնութիւն կամ լայնութիւն կամ խորութիւն:

Կամ թէ հոմանուն է կէտն. նախ՝ բաժանէ եւ ապա զկնի սահմանէ: Իսկ յերիս միայն, եւ ոչ՝ յաւելիս, զի ամենայն ենթադատութիւն երեք կիտիւք կատարի, որպէս մարդ բանական յերից ունի զգոյացութիւն:

Իսկ ասելն «կէտ աւարտեալ»՝ միայն զպատիւն տեղեաւն *եւ ձայնիւն* իբր զբազաւոր ցուցանէ, իս զերկուսն՝ իբր սպասաւորս նորին, *աւրինակ իմն զպակասեալն եւ զառաւելեալն այնոքիւք կոչէ նշանակութեամբ, իսկ գչափաւորն՝ պարզաբար: Վասն որոյ* «աւարտեալ կէտ»՝ գվերջինն ասէ, գկատարումն տրամախոհութեան խորհրդոյն, *զոր ոմանք ստիւքս ասեն, որ է «տուն»* (*Սոյն աշխ.*, էջ 154–55):

**ԵՐԶՆԿԱՑԻ**

«Կէտ է պատճառ գծի՝ ո՛չ ունելով երկայնութիւն, եւ ո՛չ լայնութիւն, եւ ո՛չ խորութիւն:

*Իսկ ասելն՝ եթէ «կէտ է տրամախոհութեան անգեգելոյ նչան»* – զայս գաւարտեալ կիտէն ասէ՝ գվախճան ենթադատութեանն (էջ 153):

*...Բայց ծանուցանէ զիւրաքանչիւր ոք ի կիտիցն, նախ՝* սահմանաւ, եւ ապա՝ տեղեաւ, *զի ի ձեռն սահմանին եւ տեղւոյն գաւարտեալ կէտն* որպէս թագաւոր ցուցցէ, իսկ գայլ եւս երկուսն՝ որպէս սպասաւորս» (*էջ* 155):

*Ընդգծուած տողերը այն ընդհանրութիւններն են, որ իր հիմքից՝ Երգնկացուց է քաղել Մործորեցին, բայց այդ տողերում պարփակուած մտքերին տուել է ամբողջական հասկացութիւնների ձեւակերպում՝ ընդլայնուած իմաստներով եւ ոճական նոր իմբագրմամբ, որ չափազանց ակնբախ են եւ, հետեւաբար՝ մեկնաբանութիւնների կարիք չեն զգում: Ի դէպ, այս*



*եւ միւս բանասիրական աշխատանքների առանձնայատկութիւնները, որ նչում ենք Մործորեցու կամ Նչեցու առնչութեամբ, թելադրւում են անչուշտ բանաճաղային բնոյթի դասագիրք գրելու պահանջներով: Հետեւաբար առանձին հեղինակների նոյնատիպ աշխատութիւնների բանասիրական կարգի առանձնայատկութիւնները բացայայտելու միջոցով միայն հնարաւոր է դառնում նաեւ առհասարակ բանաճաղային բնոյթի դասագրքերի ներկառուցուածքային բնորոշ կողմերը պարզաբանել, որոնք այլապէս մնում են անմեկնելի:*

*Ուրեմն՝ չարունակե՛նք մեր քննարկումը. եթէ նոյնիսկ առանձին նախադասութիւնների բառային կազմը Մործորեցու երկում հիմնականում նոյնն է լինում Երգնկացու համեմատութեամբ, ապա դրանց չարադասութիւնը ամբողջութեամբ փոփոխութեան է ենթարկւում՝ համապատասխանեցուելով ժամանակի լեզուամտածողութեանը, քերականագիտական արտայայտութեամբ՝ չարահիւսութեանը, կամ էլ նոյն միտքը վերարտադրում է ինքնուրոյնաբար՝ ստեղծելով բոլորովին նոր կոնտեքստ: Ձեռնարկ-դասագրքերի յօրինման այս առանձնայատկութիւնը անչուշտ բնորոշ է միջնադարի բանաքաղային աշխատութիւնների համար (ինչպէս այդ ցոյց ենք տուել նաեւ Նչեցու կապակցութեամբ), որոնք դրականօրէն էին գնահատւում մեր դպրութեան պատմութեան տուեալ ժամանակաշրջանում: Ջուդարե՛նք թէկուզեւ հետեւեալ բնագրահատուածները.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

*«Սահմանաւ ծանուցանէ զբառ, եւ զմասնդ փոխանակ սեռի դնէ, զի ունի ընդ իմիեամբ տեսակս: Եւ «դուզնաբեայ» ասէ առ բանիմ մեծութիւն, զի բառ նուազ մասն է առ «բանն» բաղդատութեան. կամ թէ* բաղն՝ *նախդիր է միայն, որպէս թէ ասել՝* «դասեալով միանայ բառ», որով լինի շարադրութիւն բանի, զի բառ շարադրութիւն է փաղառութեանց եւ ի հեգիցն կցմանէ լինի, *ուստի գոյանայ բան, որպէս յորժամ չարէ ոք գԴաւ եւ գիքն եւ առնէ բառ՝ գԴաւիթ, նոյնպէս եւ զայլսն՝* ընդ-դու-թիւն, ար-բա-յութիւն: *Եւ ամենայն այսպիսիքս կցեալ ի սղից եւ յերկարաց ասի բառ, եւ չարադրեալ զբառ ընդ միմեանս՝ առնէ բան, որպէս յառաջիկայսդ ցուցանէ»* (*Սոյն աշխ.*, էջ 189–90):

**ԵՐԶՆԿԱՑԻ**

*«Եւ բառ կոչէ զնոյն վանգս. եւ փոխեաց զանունն յաղագս ծածկելոյ ի մէնջ:*

*Եւ լսի բառ «ասացուած[ն]» կամ «ասումն», որ է ըստ միում վանգի կամ [ըստ] երկուց եւ կամ [ըստ] երից՝ նչանակդ մի է:* Իսկ մասնդ սեռ է, զի ունի ընդ իմիեամբ տեսակս. եւ «դուզնաբեա[յ]» ասի առ բանն, որ է մեծագոյն բան գդա:

...Իսկ «բաղն» ասելով նախդիր միայն է, *որով ճոխացոյց զբանն: Իսկ «դասուելն բանին» ասելով՝ զհեգն ասէ, յորժամ դասես ընդ միմեանս շարամանելով՝ լինի այնուհետեւ բան, այսպէս՝* ար.բա.յութիւն:– *Այսոքիկ առանձնապէս յատկացեալք ոչինչ ունին խորհուրդ, իսկ դասելով ընդ միմեանս լինի* ար.բա.յու.թիւն: *Նոյնպէս յորժամ ասես՝* ընծ.դու.թիւն, *կամ* աննձ.կու.թիւն *կամ* զաւ.րու.թիւն,– *զի այսոքիկ վանգս մասն են բառի, զոր ասէ՝ «ըստ բաղդասութեան բանի», այսինքն է բառ՝ ի շարադրութեան բանի մասն է շարադրութեան, վասն զի* բառ շարադրութիւն է փաղառութեանց, *որպէս յորժամ շարադրիցէ ոք* գԴաւ եւ գիքն, *եւ առնէ բառ՝* գԴաւիթ: *Եւ դարձեալ շարադրէ* գԲա *եւ* գկուր, *եւ առնէ բառ՝* գԲակուր...» (էջ 188–89):

*Եւ կամ՝*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

*«Ամենայն արուեստաւորի սովորութիւն է զպէսպէս նիւթս յաղագս գործոյն կա-*

*տարման հաւաքել, որպէս եւ այս յոգնիմաստ արուեստաւորս զգանագան մասունս բանի պատրաստեաց՝ ի տառիցն սկսեալ, այժմ կատարելութեան գործոյն սկիզբն առնէ, որ է «բանն», որպէսզի ցուցցէ եւ զսորայն մասունս եւ զայլ եւս կիրս ի սմանէ պաշտեցեալս» (Սոյն աշխ., էջ 190)։*

ԵՐԶՆԿԱՑԻ

*«Պարտ է իմանալ զայն, զի ամենայն արուսեստաւոր ի կամել իրս արկանել առաջի՝ ոչ առանց նիւթոյ գիւտի մտաբերէ, որպէս եւ այս յոգնիմաստ արուեստաւոր յառաջ եգիտ զնիւթն՝ զմանրկութիւն մասանց գրոյ՝ ե՛ւ գիազառութեան, ե՛ւ գհագագի, ե՛ւ զվանգի, զոր բառ եւ բայ ասեմք, եւ չարականեալ զվերծանութիւն չաղկապիցն եւ ելեալ ընդ աստիճանն, եւ հասոյց մինչեւ ի բան։*

*Եւ արդ՝ կամի ցուցանել որքա՞ն ի սմանէ բաժանմունք մասանց եւ այլ եւս պաշտեցեալ լինին կիրք, վասն որոյ ասէ՝ «բան է հետեւակ բանի» (էջ 190)։*

***Մի այլ դէպքում՝ Մործորեցին ոչ միայն ձեւակերպումներն է լեզուաոճական փոփոխութիւնների ենթարկում, այլեւ միեւնոյն պարբերութեան ձեւակերպումների չարակցումը միմեանց հետ՝ ներկայացնում է բոլորովին նո՛ր յարաբերութեամբ ու յաջորդականութեամբ։ Փաստօրէն նա ե՛ւ յղկում ու բիւրեղացնում է լեզուն, ե՛ւ խմբագրական-կառուցուածքային փոփոխութիւններ մտցնում բնագրում։ Բնականաբար նա իր աչքի առաջ ունէր նաեւ իր ուսուցչապետի՝ Նչեցու դրական մեծ փորձը։ Այս տեսնելու համար համեմատե՛նք նաեւ ստորեւ բերուող բնագրահատուածները։***

ՄՈՐՄՈՐԵՑԻ

[Բան]

*«Եւ նախ զբնութեամբն՝ զի առաջին է, եւ բնութեամբ՝ յորժամ երկար տառիւք արտաբերեսցի, որպէս Մով-սէս»։*

[Մեկնութիւն]

Ասացաւ ի բաժանման ձայնաւորացն, թէ ոմանք բնութեամբ երկարք են, որպէս՝ է, աւ։ *Արդ, յորժամ առքաւք փաղառի անունն, որպէս Մովսէսն կամ խաւսող՝ կոչի է, աւ։ Արդ, յորժամ առքաւք փաղառի անունն, որպէս Մովսէսն կամ խաւսող՝ կոչի բնութեամբ։ Եւ քանզի ինքնաբաւ եւ անկարաւտ է լծորդութեան ձայնորդի, սակս որոյ եւ առաջին տեղւոյ ասացաւ» (Սոյն աշխ. էջ 180–81)։*

ԵՐԶՆԿԱՑԻ

*«Յորժամ երկար տառիւքն արտաբերիցի, որպէս՝ Մովսէս։ Յառաջագոյն ասացաւ ի բաժանման ձայնաւորացն, թէ ոմանք [բնութեամբ] երկարք են, որպէս՝ է եւ ով, եւ ոմանք սուղք, որպէս՝ ե, ո, ւ։ այլ յորժամ երկար ձայնորդք փաղառին՝ կոչին բնութեամբ» (էջ 179)։*

*Եւ կամ՝*

ՄՈՐՄՈՐԵՑԻ

[Բան]

*«Եւ ոգեալ է հագներգութիւն ի հագնելոյ կարկատուն բանս»։*



[Մեկնութիւն]

Մեկնէ գհագներգութիւնն, *թէ ասացեալ է ի հագուցանելոյ ընդ միմեանս եւ կարկատելով բանս յիրեարս յեռել, զոր առնլով երգեցողք երգեն, բանզի արդարեւ կարկատուն բանիւ շարամանին ամենայն մրմունջք եւ երգք գուսանութեան, զոր այժմ ի հայումս առաւել գտանեմք չափ եւ կշիռ բանի արուեստաւորեալ ի գովս եւ ի պարսաւս ոտանաւոր յարմարութեամբ՝* վեցոտանիս եւ քառոտանիս։

*Կամ հագներգութիւն յաղագս չնչոյ ելից հագագին ասէ, որով նուագէն ի տաղս պարանցիկ երգոցն, կամ հագնին փայտ է անուշահոտ, որպէս սարդենին, որով երգէին, որպէս ասէ» (Սոյն աշխ., էջ 159)։*

ԵՐԶՆԿԱՑԻ

*«...Իսկ հագներգութիւն, ըստ որում ասէ՝ «ի հագնելոյ կարկատուն բանս». կարկատուն բանիւք յարմարին շարամանեալ ամենայն մրմունջք եւ երգք գուսանութեան, քանզի բազում բանից պէտք են կարկատել եւ աւարտել զսա, զոր այժմ ի հայումս առաւել, քան ի յունականին գտանեմք։ Քանզի չափ եւ կշիռ բանի արուեստաւորեալ ներգործեն զայսոսիկ յոյժ չքնաղ եւ դժուարագիւտ եւ հրաշալի առասպելիս։ Քանզի աւարտեն միով գծիւ բազում բանս՝ եթէ՛ գովասանութիւն [եւ] եթէ՛ պարսաւ։ Երբեմն երիս տեն միով գծիւ բազում բանս՝ եթէ՛ գովասանութիւն [եւ] եթէ՛ պարսաւ։ Երբեմն երիս գիրս յաւարտին ունելով զմիմեանս բախելով, եւ երբեմն՝ երկուս։ Եւ այսպէս ոտանաւորս ստեղծանեն վեցոտանիս եւ քառոտանիս» (էջ 157)։*

***Իսկ Մործորեցու վերջին պարբերոյթը ամբողջութեամբ վերցրած՝ չունի Երզնկացուն. այդ լրացումը լիովին Մործորեցուն է պատկանում, որը կատարելագործել է Երզնկացու (ինչպէս եւ Մագիստրոսի) Մեկնութիւնները հակադրում են Երզնկացու (ինչպէս եւ Մագիստրոսի) Մեկնութեանը ուրիշ կողմերով եւս։ Եթէ Մագիստրոսին եւ Երզնկացու դեռեւս հետաքրքրել են մեկնիչները, եւ այդ պատճառով էլ Մագիստրոսը մեկնաբանող նիւթերը դասաւորել է հատուած առ հատուած, մեկնիչների որոշակի յաջորդականութեամբ, իսկ Երզնկացին՝ չարահիւսական ներքին ձուլուածք ստեղծելիս այդ նիւթի տեղաբաշխման ժամանակ լուսանցքներում թողել է իւրաքանչիւր մեկնիչի անունը, ապա Մործորեցուն (ինչպէս եւ Նչեցուն) դա ամենեւին էլ չի հետաքրքրել։ Ընդհակառակն, նրան բացառապէս հետաքրքրել է մեկնաբանուող առարկան որպէս այդպիսին, վերացարկուած [աբստրահուած]՝ բոլոր կողմնակի հանգամանքներից։ Այս իմաստով էլ բնագիր կազմելիս Մործորեցին իրեն ազատ է զգացել Երզնկացու չարադրանքի նկատմամբ. ամենեւին հաշուի չի առել, թէ ո՛ր մեկնիչից ի՛նչն է վերցնում եւ ձուլում միւսի հետ։ Արդիւնքը եղել է այն, որ երբեմն մի պարբերութեան մէջ ամփոփուում են մի չարք մեկնիչների ասոյթների հիմնական մտքերը։ Համեմատե՛լ։***

ԵՐԶՆԿԱՑԻ

Դաւթի — «Եւ «դիւցազնաբար» ասէ. զի է՛ ողբերգութիւնն ոչ աշխարհական ձայն գոհչաց, քան թէ արարուած քերթողացն վհչականաց՝ զքաջացն գործեալ իրս եւ զաւրութիւնս պատմել ահաւորապէս եւ չքնաղս հանգոյնս գործեցելոցն գերազանցութեամբ ամենայնի[ւ] դիւցազնաբար, եւ ո՛չ՝ կաղս ի կաղս ինչ եւ քամահելիս։ Զի

Ստեփ — քերթողացն է արարուած եւ զի դիւցազանց իմն եղելոց իրք են եւ պիտանացու, նաեւ միխթարական, զորս ի վերայ մեռելոցն եւ կամ այլ ինչ թշուառութիւն կրելոցն առ-

նեն: Իսկ դիւցազնաբար՝ զյորդորականն ասէ եւ զքաջալերականն, եւ զներբողականն ի կենցաղս վախճանելոցն» (էջ 123–124):

ՕՐՕՏՈՐԵՑԻ

[Բաց]

«Իսկ զդիւցազնաբար» <վերծանեսցուք>:

[Մեկնութիւն]

Զի է՛ «ողբերգութիւն» ոչ աշխարհական, քան թէ արարուածքս քերդողական պատմել ահաւորապէս հանգոյն գործեցելոցն գերազանցութեամբ բանից, եւ ոչ կաղս ինչ եւ քամահելիս: Այլ ոմանք ասեն, թէ ողբերգութիւն գմխիթարական բանից ասէ, զոր ի վերայ մեռելոց կամ այլ ինչ թշուառութիւնս կրողացն առնեմք: Իսկ դիւցազնաբար՝ «զյորդորականն» ասէ եւ «զքաջալերականն» եւ «զներբողականն» ի կենցաղս վախճանեցելոցն» (Սոյն աչխ., էջ 140):

*Եւ կամ՝*

ԵՐԶՆԿԱՑԻ

Դաւթի եւ Անանուն

Ստեփ

«Իսկ ասելն՝ թէ «զկատակերգութիւնն» աշխարհաւէրն»: Կատակերգութիւնն արարուածք է քերթողացն, որ եւ պիտանացու իսկ է, եւ բաժանի երկակի. ոմանց՝ յանդիմանութիւն վատ կենցաղավարութեան, եւ ոմանց՝ յաւժարութիւն ի բարի կենցաղավարութեան, որ ունի խրատս բազումս պէսպէս դիմաւք կարգեալ յաւրինակ եւ ի խրատ վայելչական պիտոյիցն. վատ կենցաղավարելոցն՝ է՛ւ անարի, է՛ւ ծուլիցն, է՛ւ ընչասիրացն, է՛ւ ի վերայ նոյնպիսեացն գեպերականն եւ գհեգնականն առնել ճառ եւ սոքինջս, որպէս ոամիկքն սովորաբար ստեղծանեն առ այնոսիկ: Սոյնպիսեաւ վարեսցիս եւ դու յընթեռնուլն» (էջ 134–35):

ՕՐՕՏՈՐԵՑԻ

[Բաց]

«Իսկ զկատակերգութիւնն աշխարհաւէրն <վերծանեսցուք>:

[Մեկնութիւն]

է՛ եւ սա արարուածք քերթողական երկակի դիմաւք արարեալ՝ բարի կենաց յաւժարութիւն եւ վատաց յանդիմանութիւն, որ խրատ բազում ունի յինքեան եւ պիտանացու յաշխարհական իրս՝ անարի ծուլիցն եւ ընչասիրացն եւ ժլատիցն եպերանս, եւ արեացն եւ գեղեցկացն՝ գովասանս, որով եւ դու վարեսցիս յառնելն կամ յընթեռնուլն» (Սոյն աչխ., էջ 140–143):

*Մի ուրիշ առանձնայատկութիւն եւս. Օրծորեցին փաստօրէն նոր սինթեզի է ենթարկում Երզնկացու եւ Նչեցու աշխատութիւնները, այլ կերպ ասած՝ եթէ Երզնկացու աշխատութիւնը սինթեզումն է եւ աւելի բարձր մակարդակի բնագրային յօրինուածք՝ Մագիստրոսի երկի նկատմամբ, ապա Նչեցու աշխատութիւնը, իր հերթին, նոր սինթեզումն է Երզնկացու երկի նկատմամբ, իսկ Օրծորեցու մեկնութիւնը սինթեզումն է այս երկուսի էլ: Նչեցուն նուիրուած մեր աշխատասիրութեան մէջ բնագրային հիմնաւորումներով ցոյց էինք տուել, որ Նչեցին իր երկի բնագրում բեռնաթափել է*



*փիլիսոփայական, բնագիտական, աստուածաբանական, երաժշտական եւ այլ կարգի մանրամասնութիւնները, որոնք այնքան ազատօրէն եւ անհարկի խճողումով տեղ են գտել ինչպէս Մագիստրոսի, այնպէս էլ, մանաւանդ, Երզնկացու աշխատութիւններում, եւ թողել է իր երկում այդ գիտելիքներից միայն այն չափով, որչափով դրանք անհրաժեշտ են լեզուական այս կամ այն երեւոյթի մեկնաբանման համար իրրեւ օժանդակ նիւթ կամ կոուանիներ: Շատ անգամ Երզնկացու մօտ 3–4 էջից բաղկացած նման բնոյթի հատուածից Նչեցին վերցնում է միայն հիմնական այն գաղափարները, որոնք աղերսի մէջ են քերականական այս կամ այն երեւոյթի հետ. եւ իր ձեւակերպումներով ամփոփում է դրանք ընդամէնը մի քանի տողի մէջ, որով նա իր Մեկնութեանը տուել է աւելի լեզուաբանական–բերականական բնոյթ, որը նոյնպէս կարեւոր նուաճում է մեկնողական կարգի քերականական բնագրերի յօրինման գործում: Մեթոդական այս արժէքաւոր ներդրումը քերականական դասագիրք կազմելու արուեստում, իրրեւ ղրական երեւոյթ, ամբողջութեամբ ընդունել է նաեւ Օրծորեցին իր բնագրի կառոյցում:*

*Բնագրերի մինչեւ այժմ մեր կատարած համեմատական քննութիւնից յանգում ենք հետեւեալ հիմնական եզրակացութիւնների.*

*ա. «Համառաւտ տեսութիւն քերականի» երկը բնաւ էլ «համառօտ» տութեան:*

*բ. Այն պատկանում է Օրծորի ուսումնագիտական կենտրոնի ուսուցչապետ Յովհաննէս Օրծորեցու գրչին աներկբայօրէն:*

*գ. Այս քերականական Մեկնութեան բնագրային առանձնայատկութիւնները լիովին իրաւունք են տալիս Օրծորեցու աշխատասիրութիւնը համարելու իրրեւ բանաստեղծական բնոյթի ամբողջական մատենագրական միաւոր հէնց նո՛յն հիմունքներով, ի՛նչ հիմունքներով ճանաչուում են Մագիստրոսի, Երզնկացու եւ Նչեցու բանաստեղծական Մեկնութիւնները որպէս միջնադարի ուսումնագիտական կենտրոնների լեզուի եւ բերականութեան ձեռնարկ-դասագրքեր:*

2. Առնչութիւններ Նչեցու աշխատութեան հետ:– *Նչեցու երկի բնագրի՝ Օրծորեցու աշխատութեան հետ ունեցած ընդհանրութիւնների մասին վերը հիմնականում ասուեց, երբ զուգահեռներ անցկացրինք, մի կողմից՝ Նչեցու, միւս կողմից՝ Մագիստրոսի եւ Երզնկացու Մեկնութիւնների միջեւ, ուստի այստեղ անդրադառնալու ենք սկզբունքային այն տարբերութիւններին, որոնցով հակադրուում են Օրծորեցու եւ Նչեցու երկերի բնագրերը, ինչպէս եւ բնագրական միայն այն հատուածների ընդհանրութիւններին, որոնք յատուկ են բացառապէս այդ բնագրերին: Այս վերջին հանգամանքի լուսաբանմամբ է պայմանաւորուած նաեւ բնագրական սոյն երկու կառոյցներից մէկի առաջնայնութեան հարցի գիտական լուծումը:*

*Նախ՝ դարձեալ այս առթիւ պէտք է յիշել, որ այս երկու մեկնիչներից իւրաքանչիւրն ունի իր ձեռնարկի, իրրեւ քերականական դասընթացքի, ուրոյն պատկերացումը, որով պայմանաւորուած են քերականական այս կամ այն դրոյթի ընդգծումը կամ նուազ չեշտումը, դրա մեկնաբանութեան նկատումը կամ անտեսումը եւ այլն: Օրծորեցու եւ Նչեցու քերականագիտական մօտեցումների չափազանց նուրբ տարբերութիւնների բացայայտմամբ միայն հնարաւոր է ըմբռնել մատենագրական այս երկու ցուչարձանների բնագրական արժէքը, որով եւ պայմանաւորուած է նրանց դերն ու նչանա-*

*կութիւնը մեկնողական բնոյթի քերականական մեր հարուստ գրականութեան մէջ։*

*Այսպէս, ներածական բաժնում քերականութեան, իբրեւ ուսումնական առարկայի, ծագման, բնոյթի, կարեւորութեան ու նպատակի մասին տեղեկութիւնները չարադրանքի տարբեր ծրագրով են մատուցում Մործորեցին եւ Նչեցին։ Մործորեցին եօթ գլուխների մէջ է բացատրում այդ հարցադրումները (ինչպէս. Երզնկացին), իսկ Նչեցին՝ չորս։ Համեմատե՛լ.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

*«...ցաղագս որոյ հարկաւորեալ մեր կանոնս ինչ արտադրեսցուք եւ ցուցցուք, նախ՝ թէ ո՞ւստի գտեալ եղեւ գիր, յորմէ՞ գոյացաւ արուեստ քերականութեանս։ Եւ երկրորդ՝ թէ զի՞նչ է քերականութիւն եւ կամ դիտումն սորին. եւ երրորդ՝ թէ է՞ր աղագաւ գրեալդ քերել կոչի. եւ չորրորդ՝ թէ ո՞յք գտաւղք այսմ արուեստի. եւ հինգերորդ՝ թէ է՞ր վասն փոյթ յանձին կալան հետեւող լինիլ քերականութեանս, եւ վեցերորդ՝ թէ առ որո՞ւմ յարուեստիցն ունի զհամեմատութիւն, եւ եւթներորդ՝ ծանուցանել զպիտանացուն առ որս ունի զաւգտակարութիւն» (Սոյն աշխ. էջ 113–14)։*

**ՆՉԵՑԻ**

*«ի ձեռնտուութենէ հոգւոյն հանդերձեալ եմք բուռն հարկանել առաջիկայ իրողութեանս. նախ՝ ուսանել արժան է, թէ զի՞նչ է քերականութիւն, եւ երկրորդ՝ զի՞նչ յայտնէ անուն քերականութեան, եւ վասն է՞ր գրեալդ «քերեալ» կոչի. երրորդ՝ ո՞յք են գտաւղք այսմ արուեստի. չորրորդ՝ եթէ է՞ր աղագաւ փոյթ յանձին կալեալ եղեն վասն քերականութեանս» (էջ 55)։*

*Առաջրուած քաղուածքների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Նչեցին ոչ միայն որոշ հարցադրումներ միացնում է մէկ գլխի մէջ (իսկ ուրիշներ ուղղակի զանց է առնում Մործորեցու համեմատութեամբ), այլեւ մեկնաբանման յաջորդականութեան առումով էլ տարբերւում է Մործորեցուց։*

*Ապա՝ Մործորեցու եւ Նչեցու բնագրերի քննական բաղդատումներով պարզւում է, որ Մործորեցու մօտ կան բնագրական ամբողջական հատուածներ, որոնք բացակայում են Նչեցու երկի բնագրում, եւ հակառակը՝ Նչեցու մօտ կան նոյնպէս չատ հատուածներ, որոնք չկան Մործորեցու երկի բնագրում։ Դրանց ակունքները գտել եւ համեմատել ենք միմեանց հետ. դրանք մեծ մասամբ գալիս են Երզնկացուց եւ սակաւ դէպքերում՝ նաեւ այլ աղբիւրներից։ Այստեղից հետեւութիւնը միանգամայն ակնբախ է՝ երկուսն էլ օգտագործել են Երզնկացու աշխատութիւնը՝ իրարից անկախ։ Այս պնդման ճշդութիւնը հաւաստւում է նաեւ այն ակնառու փաստով, որ չաճախ Երզնկացու մօտ եղած միեւնոյն պարբերութեան մի մասը գտնում ենք Մործորեցու մօտ, միւս մասը՝ Նչեցու, կամ էլ՝ լինում են առանձին նախադասութիւններ Երզնկացուց, որ Մործորեցին բաց է թողել, իսկ Նչեցին ընդգրկել է։ Վերջին դէպքի համար համեմատե՛լ.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

*«Ցառաջագոյն վանգ կոչեաց եւ այժմ բառ անուանէ՝ յաղագս ծածկելոյ ի մէնջ։ Եւ լսի բառ «ասացուած» կամ «ասումն», որ է ըստ միում վանգի, կամ երկուց կամ երից, քանզի մի է նշանակն» (Սոյն աշխ., էջ 189)։*



**ԵՐԶՆԿԱՑԻ**

*«Եւ բառ կոչէ գնոյն վանգս եւ փոխեաց զանունն յաղագս ծածկելոյ ի մէնջ։ Եւ լսի բառ «ասացուած» կամ «ասումն», որ է ըստ միում վանգի կամ երկուց եւ կամ երից,– նշանակդ մի է...» (էջ 200)։*

**ՆՉԵՑԻ**

*«Լսի բառ՝ «ասացուած» կամ «ասումն», որ է ըստ միում վանգի կամ երկուց, կամ երից,– նշանակդ մի է» (էջ 100)։*

*Ինչպէս նկատելի է, ընդգծումները Երզնկացու եւ Մործորեցու մօտ համընկնում են իրար, որոնք, սակայն, իսպառ բացակայում են Նչեցու բնագրում։ Այս հանգամանքը, ինչ խօսք, անառարկելի է դարձնում այն ենթադրութիւնը, որ Նչեցին եւ Մործորեցին միմեանցից անկախաբար են օգտուել Երզնկացուց։ Զուգադրենք նաեւ հետեւեալ բնագրահատուածները, մի քիչ առաւել ընդգրկուն ծաւալով.*

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

**[Բաճ]**

*«Զի որք ոչ ըստ սոցայցն լինին խտրութեանց՝ զբերդողացն արուեստիւնս տապալէ եւ զյոյնան վերծանողացն ծիծաղելիս յարկացոցէ»։*

**[Մեկնութիւն]**

Ամենայն ընթերցողութիւնք բերդածաց կամ շարագրաց եթէ ոչ ըստ այսպիսեաց խտրութեանց լինին, *որպէս փոքր ի չատէ ցուցաւ ընտրութեան եղանակն*, գբերդողացն արուեստիւնս եւ զջանս տապալէ, *որ բազում աշխատութեամբ եւ երկամբք զսոյն արուեստս գտին։ Եւ զոյնս,, որ է զգաւրութիւն վերծանողացն, առողանութեամբ ընթեռնուլ, ծիծաղելիս բազմաց միշտ կացուցանէ եւ զարուեստս նպերելի առնէ։*

Արդ՝ այս վերծանութեանն մասուին երիւ բաժանմամբ ասացեալ յարուեստուորէս *եւ ըստ կարի աւրինակաւ ցուցեալ մեկնութեամբ, կամիմ այժմ զգլուխ Վերծանութեան կարգել, որք են թուով լե (35), եւ ապա զրանն յաստուածաշունչ գրոց մերձ դնել։*

*Եւ ե՛ն այսոքիկ.* նախերգան, պարզ, շարադրեալ, ժամանակեան, միջակաւոր, բերդողականն, ւ՛անակաւորն, թուականն, ներտաղականն» .. *(թուարկում է բոլորն էլ, եւ ապա լեզուանմուշներով օժտում դրանք, տե՛ս էջ 146–47)։*

**ԵՐԶՆԿԱՑԻ**

*«Եւ եթէ ոչ ըստ սոցայն լինի խտրութեան՝ զբերթողացն արուեստիւնսն տապալէ, այսինքն՝* ամենայն ընթերցողութիւն բերբածաց կամ շարագրաց եթէ ոչ ըստ այսպիսեաց խտրութեանցն լինի *ըստ ասացեալ առողանութեանցս եւ մի ըստ միոջէ այլոց ձեւոցն՝* զարիապէս բերբողացն գաշխատութիւնս եւ զջանս տապալէ, *եւ զիւր ունակացեալ արուեստն ի վերծանելն ծիծաղելիս երեւեցուցանէ։*

*Արդ*, այսոքիկ ըստ վերծանութեան մասին ասացեալ *ըստ եռակի որոշմանն՝ ըստ ենթադատութեան, ըստ առողանութեան եւ ըստ տրոհութեան։*

*Եւ զի ենթադատութիւնն* ի բազումս բաժանի մասունս, *զոր սակաւս ի բազմացն եցոյց* արուեստաւորս՝ *զողբերգութիւնն, զկատակերգութիւնն եւ զայլսն՝ որ ասացաւ։ Այժմ յիշեմք եւ զայլ մասունսն, որք են գլուխք վերծանողացն՝ արուեստի գտեալ յի-*

*մաստնոցն եւ փոքր բանիւ գաւրինակս նոցա յաստուածային գրոց մերձ դիցուք:*

Եւ այս են գլուխք վերծանութեան·

Նախերգան, պարզ, շարագրեալ, ժամանակեան, միջակաւոր, էրրոդական, բանակաւոր, թուական, ներտաղական...» (*թուարկում է բոլորն էլ, եւ ապա լեզուանմուշներով օժտում դրանք, տե՛ս էջ* 145–48):

## ՆԶԵՑԻ

### [Բաց]

*«Զի որք ոչ ըստ սոցայն լինին խորութեանց, զբերդողացն արութիւնս տապալէ եւ զյոյնս վերծանողացն ծիծաղելիս յարկացոցէ»:*

### [Մեկնութիւն]

*Եւ զոր ասէ՝ ա՛յս ինչ է.* ամենայն ընթերցողութիւն էրդածոց կամ շարագրոց եթէ ոչ այսպիսեաց խորութիւն լինի, *որ է* ընտրութիւն եւ եղանակ, զբերդողացն արութիւնսն եւ զջանսն տապալէ *եւ զիւր արուեստն ծիծաղելի կացուցանէ. իսկ յոյնս զգաւրութիւնս եւ զքաջարուեստս ընթերցողացն եպերելի ցուցանէ»* (էջ 174):

*Բնագրահատուածների քննութեամբ պարզւում է, որ չեղատառ ընթերցումները Մործորեցու եւ Նչեցու չարադրանքներում համընկնում են Երզնկացու երկի հետ, ուստիեւ բանաքաղումներ են այդ աղբիւրից· իսկ չեղատառ ցրիւ ընթերցումները Մործորեցու եւ Նչեցու բնագրահատուածներում՝ համընկնում են միմեանց հետ, հետեւաբար Մործորեցին դրանք քաղել է Նչեցու բնագրից, եւ ո՛չ՝ հակառակը (այդ մասին առաւել հանգամանօրէն քիչ յետոյ):*

*Ամենաուշագրաւ տարբերութիւնը այս երեք բնագրահատուածներում էլ այն է, որ Մործորեցին եւ Երզնկացին ունեն ընթերցանութեան արուեստի 35 ձեւեր՝ համապատասխան լեզուանմուշներով, մինչդեռ Նչեցին դրանցից ո՛չ մէկը չունի: Եւ եթէ բնագրային որեւէ ընդհանրութիւն Մործորեցու եւ Երզնկացու (ինչպէսեւ Նչեցու եւ Երզնկացու) միջեւ հանդիպում է, ապա, իբրեւ կանոն, բանաքաղումը միշտ էլ Երզնկացուց է իբրեւ աղբիւրի· իսկ հակադարձը բացառուած է: Նշանակում է՝ Մործորեցին, անկախ Նչեցուց, ձեռքի տակ ունեցել է Երզնկացու աշխատութիւնը եւ ազատօրէն օգտուել է նրանից՝ ըստ իր դասագրքի պահանջների:*

*Բացի բնագրական հատուածների մասնակի տարբերութիւններից, Նչեցին իր բնագրում ունի նաեւ Գէորգ Սկեւռացուց վերցուած ամբողջ ուսմունքը վանկատման եւ գրադարձութեան մասին, որը իսպառ բացակայում է Մործորեցու երկի բնագրում (տե՛ս «Վերլուծութիւն Քերականութեան» աշխատութեան «Ցաղագս հեգից եւ գրադարձից այլուստ» գլուխը, էջ 176–81)[152]:*

*Քերականական նիւթի մատուցման վերաղասաւորում ունի Մործորեցին իր գլխաւոր աղբիւրի՝ Երզնկացու երկի նկատմամբ, որով եւ տարբերւում է նաեւ Նչեցու բնագրի յարաբերութեամբ:*

*Եթէ Նչեցին Թրակացու մեկնելի դրոյթները բերում է, իբրեւ կանոն, իւրաքանչիւր գլխի կամ պարբերութեան հէնց սկզբում՝ սահմանազատելով*

152 *Համեմատե՛լ մեր «Գրչութեան արուեստի լեզուական–քերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում» աշխատութեան (Երեւան, 1962–63) 288–96 էջերը:*



*այն բուն կոնտեքստից որպէս «բան» (որին ամէն անգամ հետեւում է «մեկնութիւն»-ը), ապա Մործորեցու մօտ Թրակացու դրոյթները բերւում են քերականական ամբողջ տեքստում ներհիւսուած ձեւով՝ միայն չակերտների մէջ առնուած: Ըստ որում դրանց ծաւալն ու բաշխումը յաճախ են տարբերւում այս երկու բնագրերում:*

*Դիցուք՝ «Ցաղագս կիտից» գլուխը ներկայացնելիս Մործորեցին Թրակացու վեց դրոյթները առաջադրում է առանձնաբար՝ իւրաքանչիւրը օժտելով համապատասխան մեկնութեամբ (տե՛ս սոյն աշխ., էջ 154–58): Այդ դրոյթներն են.*

*ա.* «Կէտք են երեք՝ կէտ աւարտեալ, միջակ, ստորակէտ»·

*բ.* «Կէտ է տրամախոհութեան յանգեցելոյ նշան. եւ միջակ նշան՝ յոգի սակս ընդունելոյ, եւ ստորակէտ՝ տրամախոհին չեւ եւս յանգեցելոյ, այլ եւս կարաւտացելոյ նշան»·

*գ.* «Իսկ միջակ նշան յոգի սակս ընդունելոյ»·

*դ.* «Եւ ստորակիտին՝ տրամախոհին չեւ եւս յանգեցելոյ»·

*ե.* «Ի՞ւ առանձնանայ կէտ ի ստորակէտէ,– ամանակաւ»·

*զ.* «Զի ի կիտէն կարի յոյժ մեծ է բացատն, իսկ ի ստորակիտէն՝ ամենեւին նուազ»:

*Մինչդեռ Երզնկացին Թրակացու այս վեց դրոյթներից միայն երեքն (բ, ե, զ կէտերը) է առաջադրել (այն էլ ոչ լրիւ), իսկ Նչեցին Թրակացու մէկ ընդհանուր դրոյթով եւ մէկ ընդհանուր մեկնութեամբ բաւարարուել է այս գլխի չարադրանքը ներկայացնելիս·*

## ՆԶԵՑԻ

## ՑԱՂԱԳՍ ԿԻՏԻ

### [Բաց]

*Կէտ է տրամախոհութեան յանգեցելոյ նշանն. եւ միջակ նշան՝ յոգի սակս ընդունելոյ, եւ ստորակէտ՝ տրամախոհին չեւ եւս յանգեցելոյ, այլ եւս կարաւտացելոյ նշանի:*

### [Մեկնութիւն]

*...» (էջ 78–79):*

*Այս եւ այլ համեմատութիւններից հետեւում է, որ Մործորեցին ակընյայտ ճիգեր է գործադրել, վերաղասաւորելով քերականական նիւթը Երզնկացու եւ Նչեցու դասագրքերի համապատասխան գլխի նկատմամբ՝ առաւել մանրակրկիտ եւ ամբողջական մեկնաբանելու Թրակացու աշխատութիւնը:*

*Բերենք մի այլ ցայտուն օրինակ եւս, երբ Թրակացու քերականական ութ դրոյթները միաանաբար է առաջադրում Նչեցին եւ «մեկնում» ընդամէնը երեք տողով: Այսպէ՛ս·*

## ՆԶԵՑԻ

## ՑԱՂԱԳՍ ԵՐԿԱՐ ՎԱՆԳԻ

### [Բաց]

*Երկար փաղառութիւն լինի ըստ յեզանակս ութ. բնութեամբ՝ երեք, եւ դրութեամբ՝*

հինգ։

*Եւ բնութեամբ՝ <1> յորժամ երկար տառիւքն արտաբերեսցի, որպէս՝* Մով–սէս։

*Եւ կամ՝ <2> յորժամ զմին յերկամանակաց՝ ըստ երկարման առեալ, որպիսի՝* սի–րով։

*Եւ կամ՝ <3> յորժամ զմի ոք ի կոչեցելոցն երկբարբառոցն եդեալ, որպիսի՝* հաւ–ուկ։

*Իսկ դրութեամբ՝ <1> կամ յորժամ յերկուս բաղաձայնս յանգեսցի, որկէն՝* աղց։

*Եւ կամ՝ <2> յորժամ սղի եւ սղացելոյ ձայնաւորի ձայնակից վերաբերեսցի երկու բաղաձայնքն, որպիսի՝* տատրակ։

*Եւ կամ՝ <3> յորժամ ի պարզ ձայնորդն յանգեսցի եւ զյետին ունիցի ի ձայնորդէ հաւացեալ, որպիսի՝* երկիր։

*Եւ կամ՝ <4> կրկին ձայնակիցն վերաբերեսցի, որպիսի՝* հեզիկ։

*Եւ կամ՝ <5> յորժամ ի կրկին ձայնորդ յանգեսցի, որպիսի՝* աջ։

[Մեկնութիւն]

*Եւ յորժամ ծանոյց զրնութիւն վանգի, զեկուցանէ այժմ զքանիաւնութիւն երկարիցն եղելոցն՝ բնութեանն եւ դրութեանն միանգամայն, թէ որքան զոր երիցագոյն ունի աստիճան»* (էջ 93–94)։

***Ինչպէս նկատելի է, Նչեցու «մեկնութիւն»–ը՝ փաստօրէն ոչ թէ «բացատրութիւն» է Թրակացու քերականական դրոյթների, այլ պարզապէս «տեղեկատուական» նշանակութիւն ունի այն իրողութեան արձանագրման, թէ Թրակացին «ըստ բնութեան» եւ «ըստ դրութեան» քանի՛ վանկեր է ընդունել եւ ինչպիսի՛ աստիճանականութեամբ։***

***Մինչդեռ Մործորեցին այս ութ դրոյթներն էլ առանձնաբար է ներկայացնում եւ իւրաքանչիւրը օժտում համապատասխան «մեկնութիւններով»՝ բացայայտելով միաժամանակ քերականական այդ ըմբռնումների իրական նշանակութիւնը** (տե՛ս մեր սոյն աշխ., էջ 180–84)։ **Իսկ «Ցաղագս ոլորակի» գլուխը վեց պարբերոյթներով է ներկայացնում Մործորեցին** (տե՛ս սոյն աշխ., էջ 149–53), **մինչդեռ Նչեցին՝ ընդամէնը մէկ ծաւալուն պարբերոյթով** (տե՛ս էջ 74–77) **եւ այլն։***

***Այս բոլորից միանգամայն ակնբախ է դառնում, որ Մործորեցին իր ձեռքի տակ է ունեցել նաեւ Թրակացու աշխատութեան հայերէն թարգմանութիւնը՝ անկախ Երզնկացուց եւ Նչեցուց։***

***Նչեցին ըստ Թրակացու քերականութեան իր դասագրքի գլուխները յիշատակելիս հազուադէպ է օժտում դրանք մեկնութիւններով (միայն երեք դէպքերում՝ Վերծանութեան, Շաղկապի եւ Ոտից), այնինչ դրանց կարիքը իւրաքանչիւր գլխի համար խիստ զգացւում է. ինչքան կարեւոր է դասագրքի գիտա–մեթոդական կատարելագործման առումով իւրաքանչիւր գլխի վերնագրից յետոյ տալ նաեւ ընդհանրացնող եւ բնութագրող թէկուզ ամենասեղմ ներածական խօսք։ Այդ բացը, ահա, լրացրել է Մործորեցին։ Թէեւ պէտք է անվերապահօրէն նշել, որ այդ «ներածական խօսքերը» գլուխների յաճախ վերցուած են լինում հէնց Երզնկացու կամ Նչեցու բնագրերից։ Դիցուք՝***

ՄՈՐԾՈՐԵՑԻ

ՑԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՇԱՂԱՇԱՐԱՑ

[Մեկնութիւն]

*Ըստ կարգի զարուեստս աճեցուցանէ, քանզի նախ զվանգս եւ զփաղաւութիւնս*



*ուսոյց, այժմ յաղագս հասարակաց չաղաչարաց խաւսի, որ ասի զուգաչարաց, այսինքն՝ չարեցելոցն ի հասարակաց խաւսս զրուցատրութեան եւ բանից պատմութեան»* (Սոյն աշխ., էջ 185–86)։

ԵՐԶՆԿԱՑԻ

*«Ցետ ուսուցանելոյ զվանգ եւ զփաղաւութիւն՝ ցուցանէ եւ յաղագս հասարակ չաղաչարաց, որ ասի զուգաչարաց, այսինքն՝ չարեցելոցն ի հասարակաց խաւսս զրուցատրութեան եւ բանից պատմութեան»* (էջ 191)։

ՆՉԵՑԻ

«ՑԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՇԱՂԱՇԱՐԱՑ»

[Մեկնութիւն]

ՋիՔ (էջ 97)։

*Եւ կամ՝*

ՄՈՐԾՈՐԵՑԻ

ՑԱՂԱԳՍ ՀԱԳՆԵՐԳՈՒԹԵԱՆ

[Մեկնութիւն]

*Հագներգութիւնս ոչ է ի հարկաւոր մասանց արուեստիս որպէս եւ այլքն, այլ ի կրթութիւն մանկանց գրեցաւ առ ի յիշատակ Հոմերոսի»* (էջ 158)։

ՆՉԵՑԻ

ՑԱՂԱԳՍ ՀԱԳՆԵՐԳՈՒԹԵԱՆ

[Մեկնութիւն]

ՋիՔ (էջ 79)։

***Բայց Մործորեցու մեկնութիւնն էլ, իրականում, վերցուած է Երզնկացուց՝ լեզուաճական որոշ խմբագրման ենթարկելով։ Համեմատի՛ր.***

*«Ցետ որոյ զհագներգութիւն ասելի է, զի ոչ թէ ի հարկաւորացն է մասանց արուեստիս որպէս եւ այլքն, այլ ի կրթութիւն մանկանց»* (էջ 158)։

***Երբեմն էլ «ներածական խօսքը» ինքն է կազմում՝ իւրովի մեկնաբանմամբ։ Դիցուք՝***

ՄՈՐԾՈՐԵՑԻ

ՑԱՂԱԳՍ ԿԻՏԻՑ

[Մեկնութիւն]

*Ասացաւ յառաջագոյն պատճառ նախադասութեան ոլորակին եւ ստորադասութեան կիտին ոչ վասն պատուականութեան, քան թէ ըստ տեղւոյն հարկաւորութեան։ Բայց*

են ոմանք, որ գակիզն կիտիս ի կատարած ճառի ոլորակին յարմարին եւ ասեն պատճառ արուեստաւորիս առնել գայս վասն գժուարութեան հասման: Իսկ այլք՝ թէ երեք ասաց գոլորակն՝ այժմ դնէ գկէտն գկնի՝ յերիս բաժանեալ, զի ցուցցէ, թէ ո՞ր ոլորակ յորո՞ւմ կիտի ունի գդրութիւնն. քանզի չէշտն յաւարտ կիտին դնի, իսկ բուքն՝ ի սառրին, եւ պարոյկն՝ ի միջակիտին: Զի որպէս միջակէտն երկուցն է համեմատ, այսպէս եւ պարոյկն միջակ է երկուց ոլորակացն: Այլ ինձ թուի գրչին սխալել, եւ սխալանքս այս յաղագս հնութեանն աւրէնք կարծեցաւ քննոդաց: Քանզի յոլով աւրինակս տեսի առանձին կարգեալ զճառ կիտիս» (*Սոյն աշխ.*, էջ 153–54):

## ԵՐԶՆԿԱՑԻ

### ՁԻՔ

### ՆՀԵՑԻ

### ՁԻՔ

Նէեցու եւ Ծործորեցու երկերի բնագրերի առնչութիւնների հարցը քննելիս չենք կարող չանդրադառնալ նաեւ մի կարեւոր հարցի լուսաբանմանը, որը յուզում է նաեւ հայ բանասիրութեանը. արդեօք Նէեցու եւ Ծործորեցու աշխատութիւններից ո՞ւմ բնագիրն է առաջինը ստեղծուել: Այլ կերպ ասած՝ բնագրագիտական վերլուծման տեսակէտից՝ Նէեցո՞ւ բնագիրն է առնչւում Ծործորեցու բնագրին, թէ՞ ընդհակառակն:

Այս հարցի քննութիւնը մենք կատարել ենք Նէեցու քերականական Մեկնութեան գիտա-քննական բնագրի հրատարակման առթիւ, որը հաւասար չափով վերաբերում է նաեւ Ծործորեցու քերականական այս ցուշարձանի աղերսների բացայայտմանը, ուստի եւ անհրաժեշտաբար ներկայացնում ենք մեր փաստարկները նաեւ այստեղ:

Ն. Ադոնցը այս կապակցութեամբ գրում է. «Եսայի Նէեցու քերականութիւնը չատ կողմերով նման է Յովհաննէսի (Երզնկացու) նախորդ (իմա՝ «Համառօտ» կոչուած – Լ. Խ.) աշխատութեանը. Եսային՝ Գլաձորի վանահայրը, ականաւոր մանկավարժը, Գլաձորում հիմնադրեց դպրոց, որտեղից դուրս եկան հարիւրաւոր գիտնական վարդապետներ: Նա աւագ է ժամանակակից Յովհաննէսից, որը գտնւում էր նրա դպրեվանքում եւ նոյնիսկ ունկնդրել էր նրա դասախօսութիւններին: Ակներեւաբար դրանով է բացատրւում նրանց աշխատութիւնների ընդհանուր կէտերի համընկնումը»[153]:

Նշենք, սակայն, որ սոյն քաղուածքում մի քանի հարցեր ժամանակավրէպ բնոյթի են: Ինչպէս վերը տեսանք, Ն. Ադոնցը չի տարբերակում մեր երկու մատենագիրներին՝ Յովհաննէս Պլուզ Երզնկացուն, որ Վարդան Արեւելցու աշակերտն է եղել Գէորգ Սկեւռացու եւ Ներսէս Մշեցու հետ միասին, եւ Ծործորեցուն, որ Եսայի Նէեցու աշակերտն է եղել, եւ կարծում է, թէ դրանք միեւնոյն անձնաւորութիւնն են: Ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել Ն. Ադոնցի այս պնդումը՝ քաղուածքում բերուածի հետ. չէ՞ որ ժամանակավրէպ է հնչում այն, որ Ներսէս Մշեցու եւ Գէորգ Սկեւռացու ուսումնակից Յովհաննէս Պլուզ Երզնկացին աշակերտած լինէր ե՛ւ Վարդան Արեւելցուն (որը վախճանուել է 1269 թուականին), ե՛ւ Եսայի Նէեցուն (որը Ներսէս Մշեցու աշակերտն էր եւ Գլաձորի բարեւնապետը 1284–1338 թուականներին):

153 Ն. Ադոնց, *Նշուած աշխատ.*, էջ LVIII-LIX:



Երկրորդ հակասութիւնը այս քաղուածքի եւ Ն. Ադոնցի միւս պնդումների միջեւ այն է, որ ելնելով երկու երզնկացիներին մէկ անձնաւորութիւն ճանաչելու սխալ հիմքից՝ Ն. Ադոնցը կարծում է, թէ նրանց անունով մեզ հասած քերականական երկու Մեկնութիւններն էլ միեւնոյն աշխատութեան երկու տարբերակներն են, մէկը՝ «Ընդարձակ», միւսը՝ «Համառօտ»: Այս պնդումը նոյնպէս անյարիր է քաղուածքում արտայայտուած այն մտքին, որ իբր Նէեցուն ժամանակակից Յովհաննէսը, կրտսեր լինելով նրանից, գտնուել է նրա դպրեվանքում եւ նոյնիսկ ունկնդրել Նէեցու դասախօսութիւններին. «Ակներեւաբար դրանով է բացատրւում,– եզրակացնում է Ն. Ադոնցը,– նրանց (Երզնկացու եւ Նէեցու – Լ. Խ.) աշխատութիւնների ընդհանուր կէտերի համընկնումը»: Ուրեմն՝ ի՞նչ է ստացւում. այս վերջին պնդման տրամաբանական հետեւութիւնը կը լինի այն, որ Երզնկացու «Համառօտ» կոչուած քերականութեան եւ Նէեցու Մեկնութեան միջեւ չփման եզրերը արդիւնք են Նէեցու դասախօսութիւններին Երզնկացու ունկնդիր լինելուն, ուստիեւ Նէեցու աշխատութիւնը, բնականաբար, առաջնային պէտք է լինի, իսկ Երզնկացու «Համառօտը»՝ յետագայի: Հապա ո՞ւր մնաց միեւնոյն աշխատութեան «Ընդարձակ» եւ «Համառօտ» տարբերակների պնդումը...

Այս բոլորը, ինչ խօսք, առաւել քան խճճում են հարցի էութիւնը եւ դրանով էլ բազմապատկում տարակուսանքները: Իրականում, սակայն, այս հակասութիւնների մէջ էլ պէտք է փնտռել ու վերականգնել ճշմարտութիւնը Նէեցու եւ Ծործորեցու բնագրերի առնչութիւնների իրական բնոյթի մասին: Մեզ թւում է, որ Ն. Ադոնցի վերոբերեալ քաղուածքում արուած պնդումները հակասութեան մէջ լինելով հանդերձ նրա նախորդ պնդումների հետ՝ արդիւնք են նոր եզրայանգումների, որոնք դեռ պէտք է յստականային ու բիւրեղանային՝ յենուելով միայն բնագրական վերլուծութիւնների տոյգ տուեալների վրայ: Սակայն, Ն. Ադոնցը հնարաւորութիւն չունեցաւ ձեռնամուխ լինելու այդ գործին: Այս քաղուածքի բովանդակութեանը խորամուխ լինելու դէպքում բաւական է, որ վերանանք «մի երզնկացի եւ մի աշխատութեան երկու տարբերակներ» ընդունելու կանխակալ կարծիքից, եւ եթէ ըմբռնենք քաղուածքը այնպէս, ինչպիսին նա կայ, ապա մեծ մասամբ ընդունելի է: Եւ իրօք, պատմական անժխտելի իրողութիւն է (եւ այդ ապացուցւում է, ինչպէս տեսանք, բազմաթիւ յիշատակագրութիւններով ու վկայութիւններով), որ Ծործորեցին եղել է Նէեցու աշակերտը, հետեւաբարեւ ունկնդրել է նրա դասախօսութիւններին:

Փրոֆ. Գ. Ջահուկեանի աշխատութեան մէջ, սակայն, այլ կերպ են մեկնաբանւում արծարծուած հարցերը: Նա գրում է. Գլաձորում Նէեցին «գրել է այլ աշխատութիւնների թւում նաեւ իր «Մեկնութիւն քերականին» երկը, որը չատ ընդհանուր կէտեր ունի Երզնկացու Համառօտ Մեկնութեան հետ. Նէեցին եղել է նաեւ Յովհաննէս Երզնկացու մօտ եւ լսել նրա դասախօսութիւնները բերականութեան մասին, թէեւ իմբը տարիքով նրանից մեծ է եղել»[154]: Այս պնդումը իսկ եւ իսկ Ն. Ադոնցի պնդման հակառակն է: Ենթադրւում է, որ ոչ թէ Յովհաննէս Երզնկացին է աշակերտել Նէեցուն եւ ունկնդրել նրա դասախօսութիւններին, այլ, ընդհակառակն, Նէեցին է աշակերտել Յովհաննէս Ծործորեցի Երզնկացուն եւ լսել նրա դասախօսութիւնները: Սակայն մատենագրական տուեալներով ոչ մի տեղ չի հաւաստւում

154 Գ. Ջահուկեան, *Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում*, Երեւան, 1954, էջ 283:

նման պնդման ճշտութիւնը:

Ելնելով իր յիշեալ պնդումից՝ Փրոֆ. Գ. Ջահուկեանը գտնում է, որ Նչեցին իր աշխատութեան մէջ «ստրկօրէն հետեւում է» Յովհաննէս Երզնկացու քերականական մեկնութեան «Համառօտ» տարբերակին: Նա գրում է. «Երզնկացին իր Համառօտ Մեկնութեան թէ՛ բուն տեքստում եւ թէ՛ դրան կցուած աղիւսակում հանդէս է գալիս թարգմանչի միեւնոյն քննադատութեամբ. մինչդեռ Նչեցին, որ այդպէս ստրկօրէն հետեւում է նրան, հէնց բայի վերաբերեալ բաժնում չեղւում է նրանից եւ հետեւում թարգմանչին»[155]:

Ինչպէս տեսնում ենք, եթէ Փրոֆ. Գ. Ջահուկեանի պնդումը այն մասին, որ իբր Նչեցին եղել է նաեւ Յովհաննէս Երզնկացու մօտ եւ լսել նրա դասախօսութիւնները քերականութեան մասին՝ Փրոֆ. Ն. Ադոնցի պնդման հակառակն է, ապա եւ դրանից արուող հետեւութիւնը նոյնպէս Փրոֆ. Ն. Ադոնցի պնդման հակառակն է, քանի որ ենթադրում է, թէ Նչեցին «ստրկօրէն հետեւում է» Երզնկացու «Համառօտ» Մեկնութեանը, ապա դրանից ինքնըստինքեան բխում է, որ բնագրերից առաջնայինը պէտք է լինի Երզնկացու «Համառօտ» Մեկնութիւնը եւ ոչ Նչեցունը:

Հայագիտական գրականութեան մէջ այս հարցի չուրջ եղած իրարամերժ տեսակէտները չարադրելուց յետոյ (որ անհրաժեշտ է, իբրեւ նախադրեալ ու շաղկապող օղակ, հարցի ամբողջական պատկերացման համար՝ մի կողմից, միւս կողմից՝ ըմբռնելի դարձնելու համար ընթերցողին մեր չարադրանքի անմիջապէս չարունակութիւնը), այժմ քննենք այն ըստ էութեան:

Իրօք, չի կարելի ժխտել, որ ընդհանուր կէտեր չատ կան Նչեցու եւ Մործորեցու երկերի բնագրերի միջեւ. այդ մասին, ընդհանուր կարգով, խօսուեց վերը, ինչպէս նաեւ ըստ էութեան բացայայտուեցին բնագրային այն տարբերութիւնները, որոնցով այդ երկերը հակադրուում են միմեանց: Սակայն առաջադիր հարցի լուծման համար ամենաստոյգ եւ հաւաստի միջոցը բնագրական վերլուծութիւնն է այն հատուածների, որոնք բացառապէս առկայ են Նչեցու եւ Մործորեցու Մեկնութիւններում: Ըստ որում նկատենք, որ տուեալ դէպքում մեզ համար բնաւ նշանակութիւն չունեն ժամանակակից այս երկու մատենագիրների վայելած ո՛չ յարաբերական հեղինակութիւնը, ո՛չ ուսուցչի եւ աշակերտի փոխյարաբերութեան հանգամանքը, ո՛չ էլ հասարակական կեանքում նրանց գրաւած տարբեր դիրքերը: Դրանք արտաքին, ուստիեւ կողմնակի հանգամանքներ են, որոնք չեն կարող ապացուցման որեւէ հիմք կամ նախադրեալ հանդիսանալ մեր առջեւ ծառացած խնդրի լուծման համար:

Ելնելով Մործորեցու ազատ չարադրանքի ոճից՝ չատ բնական է ենթադրել, որ բնագրային առաջնութիւնը վերագրուի նրան, քանի որ Մործորեցին չատ քիչ դէպքերում է բառացի հետեւում որպէս հիմք ծառայած իր սկզբնաղբիւրին. ընդ որում, ի նպաստ այդ ենթադրութեան «հաւաստի» լինելուն կային նաեւ այլ կարգի կռուաններ, որոնք յուսալի նեցուկի երեւութականութիւնն ունէին: Սակայն մեր առաջին կասկածը առաջացաւ այն ժամանակ, երբ Երզնկացուց վերցուած Նչեցու եւ Մործորեցու միեւնոյն հատուածների համեմատութիւնը կատարեցինք իրենց սկզբնաղբիւրների նկատմամբ: Պարզուեց, որ Նչեցին աւելի հարազատ է Երզնկացուն իր լեզուա-ոճական առանձնայատկութեամբ, իսկ Մործորեցին ազատ է վարուել

155 *Անդ*, էջ 287:



իր բանաձեւումների նկատմամբ: *Բայց միայն այս իրողութիւնը դեռ բաւարար չէր հաստատուն եզրայանգումների հասնելու համար՝ նրանց բնագրերից որեւէ մէկի առաջնութիւնը որոշելու տեսակէտից: Դրան խանգարում էր այն հանգամանքը, որ Երզնկացուց քաղած միեւնոյն հատուածների համամասնութիւնը չափազանց յարափոփոխ է այս մատենագիրներից իւրաքանչիւրի մօտ: Ըստ որում ոչ թէ, իբրեւ կանոն, մէկի անպայման աւելի ծաւալուն քաղուածքներ, եւ միւսի՝ անպայման պակաս ծաւալի հատուածներ ունենալու յարաբերութեամբ են հանդիպում այս բնագրերում (այս դէպքում կարելի կը լինէր որոշակի հետեւութեան յանգել), այլ՝ մերթ մէկի, մերթ միւսի ծաւալային տարբեր ընդգրկումներով: Այստեղից, բնականաբար, երկու հետեւութիւն կարելի է անել. ա) Նչեցին եւ Մործորեցին օգտագործել են Երզնկացու Մեկնութիւնը իբրեւ սկզբնաղբիւր՝ միմեանցից անկախ, բ) Նչեցին սկզբնաղբիւրներից օգտուելու իր մեթոդով աւելի մօտ է կանգնած իր հիմիին, քան Մործորեցին:*

*Մնում է գտնել Նչեցու եւ Մործորեցու երկերի բնագրերում միայն առկայ հատուածների հիմքը, բացայայտել այդ հիմքի նկատմամբ եղած առնչութիւնների բնոյթը, որից ելնելով էլ կարելի է վճռականապէս լուծել Նչեցու եւ Մործորեցու երկերի բնագրերից մէկն ու մէկի առաջնութեան հարցը: Ջուգադրե՛նք այդ փաստերը.*

**ՆՉԵՑԻ**

«եւ յորժամ ծանոյց զբնութիւն վանգի, զեկուցանէ այժմ զգանիաւնութիւն երկարիցն եղելոցն՝ բնութեանն եւ զդրութեանն միանգամայն, թէ որքան զոր երիցագոյն ունի աստիճան» (էջ 94):

**ԴԱՒԻԹ**

«եւ յորժամ ծանոյց զվանգին բնութիւն, զեկուցանէ զգանիաւնութիւն երկարիցն եղելոց բնութեամբ եւ զդրութեամբն միանգամայն, թէ որքան զոր երիցագոյն ունի աստիճան» (*«Բանբեր Մատենադարանի»*, No. 3, 1956, էջ 252):

**ՄՈՐՄՈՐԵՑԻ**

*«Նախ ծանոյց զբնութիւն վանգի, զեկուցանէ այժմ զգանիաւնութիւն երկարիցն եղելոցն, բնութեանն եւ զդրութեանն միանգամայն, թէ որքա՞ն զոր ունի երիցագոյն աստիճան, զի որպէս ի տառսն գոյր զանազանութիւն, այսպէս եւ ի վանգս եւ ի փաղառութիւնս, քանզի ի նոցանէ է գոյացեալ»* (*Սոյն աշխ.*, էջ 179–80):

*Եւ կամ՝*

**ՆՉԵՑԻ**

«Արդ սկիզբն բնութեամբ՝ երկարն է, իմբնաբաւն եւ անկարաւտ լծորդութեան ձայնորդի, սակս որոյ եւ առաջին տեղւոյ հասաւ» (էջ 94):

**ԴԱՒԻԹ**

«Արդ սկիզբն բնութեամբ երկարն է՝ իմբնաբաւ եւ անկարաւտ լծակցութեան ձայնորդի, սակս որոյ եւ առաջին տեղոյ հասաւ» (*«Բանբեր Մատենադարանի»*, No. 3, 1956, էջ 252):

«Ասացաք ի բաժանմանէ ձայնաւորացն, թէ ոմանք բնութեամբ, որպէս՝ է, աւ: Արդ, յորժամ սոքաւք փաղաղի անունն, որպէս Մովսէս կամ խաւսող՝ կոչի բնութեամբ: Եւ քանզի ինքնաբաւ եւ անկարաւտ է յծորդութեան ձայնորդի, սակս որոյ եւ առաջին տեղոյ ասացաւ» (*Սոյն աշխ.* էջ 181):

*Մէջբերումների համեմատութիւնից ակնբախօրէն երեւում է, որ Նչեցու երկի բնագիրը բացարձակօրէն արտացոլում է իր սկզբնաղբիւրը՝ Դաւթի Մեկնութիւնը, իսկ Ծործորեցունը՝ մասնակիօրէն՝ հեղինակային խօսքի մէջ ներհիւսելով: Բնականաբար հարց է ծագում. ո՞վ ումի՞ց է օգտուել. Նչեցի՞ն Ծործորեցուց, թէ՞ ընդհակառակն:*

*Իհարկէ, Նչեցին չէր կարող Ծործորեցուց օգտուել, որովհետեւ իր քաղուածքը անմիջապար առնչւում է Դաւթի Մեկնութեանը, իսկ Ծործորեցունը՝ միջնորդաւորուած է: կարելի էր ենթադրել, որ Նչեցին եւ Ծործորեցին անկախաբար օգտուած են եղել Դաւթի Մեկնութիւնից: Բայց այս դէպքում նման ենթադրութիւնը բացառուած է, որովհետեւ* բացի Նչեցու մօտ Դաւթի Մեկնութիւնից առկայ բնագրահատուածներից, այլ բնագրահատուածներ չկան Ծործորեցու մօտ: Բացի դրանից, այդ բնագրահատուածների վերաշարադրումը Ծործորեցու մօտ հանդէս է գալիս իր երկի բնագրի հէնց այն տեղերում, որտեղ ճշգրտօրէն համապատասխանում է Նչեցու բնագրական կառոյցին:

*Նոյնն է պարագան, երբ Նչեցին անմիջապար է օգտւում իր մի այլ աղբիւրից՝ Գէորգ Սկեւռացուց, իսկ Ծործորեցին՝ միջնորդաւորուած ձեւով. օրինակ՝*

ՆՉԵՑԻ

«Այլ գայս ոչ գտանիմք ձեռվս այսու դրոշմեալ գիարցականսն ի խրատս տասն առոգանութեանցն յառաջնոցն մերոց հարց, թէեւ յանուանէ յիշեն գիարցականն՝ այլ ձեւ ինչ, որպէս գտասանցն, ոչ ցուցանեն, բաւական համարելով ի բնաւսն գտասնեակս գայսոսիկ, թերեւս յետոյ յաւելաւ այս ձեւս ի համբակագունից ոմանց» (էջ 171):

ԳԷՈՐԳ ՍԿԵՒՌԱՑԻ

«Այլ գայս ոչ գտանիմք ձեւով այսու դրոշմեալ գիարցականս ի խրատս տասն առոգանութեանցս յառաջնոցն մերոց, թէպէտ եւ յանուանէ յիշեն գիարցականն, այլ ձեւ ինչ որպէս գտասանցս ոչ ցուցանեն, բաւական համարելով ի բնաւսն գտասնեակս գայսոսիկ, թերեւս յետոյ աւելաւ այս ձեւս եւ համբակագունից ոմանց» (*մեր աշխատութիւնը՝ «Գրչութեան արուեստի լեզուական քերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում», 1962 թ., Երեւան, էջ 301*):

ԾՈՐԾՈՐԵՑԻ

«Բայց գիտելի է եւ այն, զի գձեւ պարուկիս գտանեմք եղեալ եւ ի հարցականն, որգոն՝ այս, այժմիկ, ոսկր, եւ՝ «Ո՞ւր էիր, մինչ ես հիմունս արկանէի երկրի», որ ինձ թուի, թէ յաղագս երկրաբրառացն պարոյկ է այս յառաջնոցն եղեալ, որպէս ի վերայ ուր-ին:

Իսկ յետոյ համբակագոյնքն «հարցական» կոչեցին կամ այլագգ, զի ձայն հարցականին զգաւրութիւն պարուկին ունի, քանզի բեկումն է ձայնի, ապա թէ ոչ՝ ոչ գտանեմք զհարցականիս ձեւ ի տասն առոգանութիւնսն» (*Սոյն աշխ.*, էջ 207–208):



*Եւ ընդհակառակն. չկայ Ծործորեցու երկի բնագրից հեղինակային մի ինքնուրոյն տող՝ նախադասութիւն կամ բառակապակցութիւն, որ արտացոլուած լինի նաեւ Նչեցու երկում. Ծործորեցու երկից բնագրային ոչ մի հետք չունենք (ինչ բնոյթի ուզում է լինի), որ ընդգրկուած լինի նաեւ Նչեցու աշխատութիւնում: Այս հակադարձ կապի բացակայութիւնը եւս, իրրեւ զօրեղ եւ ծանրակչիռ ապացոյց, վկայում է Նչեցու քերականական Մեկնութեան յօրինման առաջնայնութիւնը Ծործորեցու աշխատութեան նկատմամբ:*

*Այս բոլորից պէտք է հետեւցնել, որ* Ծործորեցու աշխատութեանը նախորդել է Նչեցու աշխատութիւնը, իսկ Ծործորեցին իր ձեռքի տակ է ունեցել Նչեցու աշխատութիւնը եւ մասամբ օգտագործել է այն իր երկի բնագիրը կազմելիս: *Դրանով էլ պայմանաւորուած են այն ընդհանրութիւնները, որ ակներեւ զուգադիպութիւններով առկայ են երկու բնագրերում էլ:*

***

*Թէեւ Ծործորեցու աշխատութիւնը կոչւում է «Համառաւտ տեսութիւն քերականի», սակայն բանաքաղային բնոյթի լինելով՝ հեղինակային ինքնուրոյն տեսական դրոյթներ ու հարցադրումներ չեն զարգացւում նրանում, ուստիեւ ձեռնպահ ենք մնում քերականագիտական տեսական հարցերի արծարծումից ու քննութիւնից: Բայց նոյնը ասել չի կարելի բնագրի վերջում ներկայացուած «Թելադրութիւն ի խոնարհմունս բայի» հատուածի վերաբերմամբ, ուր առաջադրուած է արդէն հեղինակային նոր չարադրանք հայերէնի բայական համակարգի մասին, որը իսպառ բացակայում է նախորդ քերական մեկնիչների երկերում*[156]: *Բնագրի այս հատուածի վերջում դարձեալ հեղինակային յիշատակագրութիւն է առկայ այն մասին, որ բայական համակարգի այս տեսութիւնը հէնց իր՝ Յովհաննէս Ծործորեցու գրչին է պատկանում՝ վկայելով այդ մասին ամենայն հանդիսաւորութեամբ. «Նոյնպէս ի վերայ անցեալ զանազանիցդ իմա՛ եւ զնուաստ աշխատաւդս Յովհաննէս յիշեա՛»*[157]:

*Փրոֆ. Գ. Ջահուկեանը բայական համակարգի այս հատուածը եւս թիւրիմացաբար վերագրում է Յովհաննէս Երզնկացի աւագին եւ ոչ թէ Ծործ-*

156 *Փրոֆ. Ն. Ադոնցը «հաւանական» է համարում, որ եսայի Նչեցին եւս բայերի խոնարհման աղիւսակ գրած լինի (տե՛ս Ն. Ադոնցի նշուած աշխատութիւնը, էջ 65): Սակայն Փրոֆ. Գ. Ջահուկեանը, որոշ վերապահութեամբ, «անհաւանական» է համարում Ն. Ադոնցի այդ պնդումը այն իրաւացի դիտողութեամբ, որ խոնարհման աղիւսակի սկզբունքները հակասութեան մէջ են Նչեցու քերականական Մեկնութիւնում առաջադրուած խոնարհման յարացոյցների ու սկզբունքների հետ: Իսկ մենք այդ տեսակէտը բաժանելով հանդերձ, միաժամանակ չենք կարող համաձայնել Փրոֆ. Գ. Ջահուկեանի այն կարծիքի հետ, երբ նա խոնարհման այդ աղիւսակը համարում է «մօտաւորապէս Նչեցու ժամանակի գործ» (տե՛ս նշուած աշխատ., էջ 287): Ելնելով խոնարհման աղիւսակի բացատրական խօսքի լեզուա-ոճական առանձնայատկութիւններից եւ բուն իսկ աղիւսակում օգտագործուած տերմինների բնոյթից այն համոզմանն ենք, որ խոնարհման աղիւսակը ոչ միայն Նչեցուն չի պատկանում (պդտում ենք՝ արդէն առանց վերապահութեան) , այլեւ նրա ժամանակներում ստեղծուած գործ չէ, ուստիեւ Ծործորեցու առաջադրած բայական համակարգը համեմատական զուգահեռներով քննութեան չենք առնի այստեղ վիճարկուող խոնարհման աղիւսակի հետ:*

157 *Սոյն աշխատութիւնը, էջ 327:*

ծորեցուն[158], թէեւ դրա քերականագիտական նշանակութիւնը միանգամայն ճիշդ է գնահատում՝ գրելով. «Երզնկացու գլխաւոր արժանիքներից մէկը նրա Համառօտ Մեկնութեանը կցուած խոնարհման աղիւսակն է: Այս աղիւսակը կարեւոր է երկու տեսակէտից. այստեղ՝ ա) վերջնականապէս դէն են նետուում բայի խոնարհման բոլոր յունաբան արհեստական ձեւերը, բ) օգտագործւում են միջին հայերէնի բայական ձեւերը եւ յատկապէս կու-ով ներկան եւ անկատարը»[159]: Բայց այս հաւաստման հետ ուղղակի հակասման մէջ է Գ. Ջահուկեանի մի այլ պնդումը, երբ նոյն էջի տողատակում, առանց փաստական լուրջ ապացուցման, միաժամանակ նա յայտարարում է. «Աղիւսակը հանդիպում է նաեւ քերականական կատեխեզիսներում (տե՛ս երկրորդ յաւելուածը) եւ առանձին: Հնարաւոր է, որ վերջինս լինի Երզնկացու աղբիւրը եւ ոչ թէ հակառակը, թէեւ ձեռագրերից մէկում հեղինակ է համարւում Երզնկացին»[160]:

Նախ՝ ոչ թէ «ձեռագրերից մէկում հեղինակ է համարւում Երզնկացին», այլ Մաշտոցի անուան Մատենադարանի հօթ ձեռագրերում (N.N. 2364, 2365, 2366, 2380, 2383, 3504, 6395) հաւաստւում է, այն էլ հեղինակային վկայութեամբ, որ բայական համակարգի տեսութիւնը հէնց Յովհաննէս Մործորեցունն է: Իսկ քերականական կատեխեզիսներում ու առանձնաբար ներկայացուած ընդօրինակութիւններում բացակայում են մատենագիտական որեւէ ցուցում կամ նշում, որով կասկածի տակ առնուէր հեղինակային վկայութեան արժանահաւատութիւնը: Բնագրագիտական առումով՝ աւելի բնական ու տրամաբանական կը լինէր ենթադրել, որ միւս ձեռագրերում հանդիպող բայական այս համակարգի ընդօրինակութիւնները բխում են հէնց Մործորեցու «Համառօտ տեսութիւն քերականի» երկից, եւ բնա՛ւ՝ «հակառակը»: Դա կասկածից դուրս է, որովհետեւ նոյնիսկ համարեա ժամանակակից՝ ԺԴ դարի գրիչ Մկրտիչ գպիրը Մործորեցու քերականական այս բնագիրը ընդօրինակելիս բայական համակարգի վերնագրում որոշակի յիշեցում է թողել այն մասին, որ այն պատկանում է աներկբայօրէն Յովհաննէս Մործորեցուն՝ հաւաստելով. «Թելադրութիւն ի խոնարհմունս բային վեհայգոյն վարդապետի Յոհաննու Մործորեցոյն ասա՛», իսկ այդ հատուածի վերջում արդէն հեղինակային մեզ յայտնի վկայութիւնը՝ «Եւ զնուաստ աշխատողս Յ[ով]հ[աննէ]ս յաղօթս յիշեա՛»[161]:

Այժմ անցնենք այն նորոյթների վերհանմանը, որոնք միաժամանակ բնորոշում են Մործորեցու տեսական հարցադրումները հայերէնի բայական համակարգի վերաբերեալ:

Առաջին ակնբախ նորոյթն այն է, որ Մործորեցին, սթափ հայեացքով քննելով իր ժամանակի խօսակցական հայերէնի բայական համակարգը, առանց կանխակալ պատկերացումների կաչկանդման, փորձում է ընդհանուր յայտարարի բերել արդէն գործածութեան մէջ գտնուող բայաձեւերը իրենց յարացոյցներով. եթէ Թրակացու «Արուեստ քերականութեան» հայ թարգմանիչը, հետեւելով յունարէնին, ստեղծել էր բոլորովին արհեստական՝ մտացածին բայաձեւեր հայերէնի համար իր առաջադրած բայական աղիւսակում, որոնք իրբեւ հնարովի՝ չինծու «լեզուանմուշներ» դարեր շարունակ նոյնութեամբ մեխանիկաբար կրկնուելով ընդգրկուել էին քերական մեկնիչների երկերում, ապա Մործորեցին գիտական արիութիւն է ունենում հրաժարուելու այդ կաշկանդիչ աւանդոյթից եւ առաջադրելու, ստեղծագործական մտայղացմամբ, իր ժամանակի խօսակցական հայերէնի բայական համակարգը, որը մեծաւ մասամբ թէեւ թերի, բայց եւ առաջին համարձակ քայլն էր, որով հետազօտական ճիշդ ուղին էր մատնանշւում հայերէնի գործող բայաձեւերի յետագայ ուսումնասիրութիւնների համար: Այս իմաստով ուշագրաւ է այն առաջաբար լեզուաբանական-քերականագիտական սկզբունքը, որն համարձակ պաշտպանում էր Մործորեցին՝ յայտարարելով, որ ստրկաբար հարկաւոր չէ հետեւել այլ լեզուների, այդ թւում եւ յունարէնի լեզուական օրինաչափութիւններին, եթէ դրանցից զուրկ է քո մայրենի լեզուն, հետեւաբար, իբրեւ ենթատեքստ առաջադրուած տեսակէտի լռելեայն բխում է միաժամանակ եւ այն կարեւոր հետեւութիւնը, որ պէտք է ամէն կերպ ձգտել սեփական լեզուի օրինաչափութիւնները բացայայտել եւ ուսումնասիրել, ընդ որում՝ հէնց նրա իսկ ընձեռած լեզուական ատաղձի ու փաստերի վրայ. դա՛ է քերական մեկնիչների հիմնական խնդիրը: Եթէ նոյնիսկ թուայ, որ, դիցուք, յունարէնը աւելի «հարուստ» է լեզուա-քերականական իրողութիւններով, քան հայերէնը, ապա զարձեալ կարիք չկայ՝ «բռնահարել եւ, հատելի կարեւորութիւնը նկատի ունենալով՝ առաջադրում ենք այդ դրոյթն իր ամբողջութեան մէջ: Այսպէս, խօսելով բայի արտայայտած թուի համար կարգում «երկուորականի» (իմա՝ երկակի թուի) իսպառ բացակայութեան մասին հայերէնում, Յովհաննէս Մործորեցին գրում է. «Բայց մեք զերկուորականն ոչ ունիմք, որպէս եւ ո՛չ լատինն, եւ ո՛չ փարսին, այլ միայն զտանի ի յոյնն եւ յարապին, վասն որոյ զո՛ր ոչ ունիմք՝ ո՛չ է պարտ բռնահարել եւ աղճատ գոլով փարթամ երեւել. այլ միայն ունիմք զեզականն եւ զյոգնականն, զոր ասելոց եմք»[162]:

Ըստ Մործորեցու ներկայացրած բայական համակարգի, այն բաղկացած է հինգ եղանակներից, որոնք են՝ «անեղեւոյթ», սահմանական, հրամայական, ըղձական եւ ստորադասական: Բայի այս հինգ եղանակային ըմբռնման մէջ, իհարկէ, ոչ մի տարբերութիւն չկայ Մործորեցու եւ Թրակացու հայ թարգմանչի ներկայացրած բայական աղիւսակների միջեւ: Բայց ներկայ դէպքում կարեւորը բայական համակարգի խոնարհման եղանակների բաժանման քանակի եւ անուանման մէջ չէ, այլ նրանո՛ւմ, թէ այդ ըմբռնումներում ինչպիսի՛ նոր մօտեցում է ցուցաբերւում ու բովանդակութիւն դրւում:

Այսպէս, ուրեմն, յատկանշական է, որ «անեղեւոյթ եղանակ» ասելով հեղինակը հասկանում է միայն անորոշ դերբայը, որը, անշուշտ, աւանդական ըմբռնում լինելով՝ «եղանակային» իմաստ բնաւ չի արտայայտում, ո՛չ էլ բայաժամանակները դասական հայերէնում. անդէմ բայ լինելով՝ ինքնուրոյնաբար հանդէս չի գալիս որպէս ստորոգեալ, այդ պատճառով զուրկ է քերականական այդ կարգերից: Բացի այդ, եթէ յունարէնում անորոշ դերբայը տարբեր ձեւափոխութիւնների էր ենթարկւում ինչպէս տարբեր ժամանակների դրսեւորման, այնպէս էլ տարբեր բայաեռեր արտայայտելու առնչութեամբ, ապա դասական հայերէնում անորոշ դերբայը զուրկ է յունարէնի դերբայի այդ առանձնայատկութիւնից, որպիսի հանգամանքը, տարաբախտաբար, հաշուի չեն առել ո՛չ Թրակացու հայ թարգմանիչը, ո՛չ էլ

---

158 Գ. Ջահուկեան, նշուած աշխատ., էջ 276:
159 Անդ:
160 Անդ:
161 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. No. 2366, թ. 125բ:
162 Սոյն աշխատ., էջ 325:

*նրա մեկնիչները: Դասական հայերէնում անորոշ դերբայը անփոփոխ էր մնում թէ՛ ժամանակների եւ թէ՛ բայասեռերի նկատմամբ: Չնայած այս իրողութեանը, հայ թարգմանիչը այնուամենայնիւ բազմաթիւ մտացածին՝ արհեստական ձեւեր է յօրինել իբրեւ անորոշ դերբայ՝ տարբեր ժամանակների եւ բայասեռերի համար: Այսպէս՝*

«Աներեւոյթ գործաւորականիւ
Ներկայ ամանակի եւ յարաճգականի
կոփել·

Ճարակայի եւ գերակատարի
էկոփել, էկոփոցել·

Անորիշի
կոփոցել·

Ապառնւոյ
կոփոցոցել *կամ* կոփոտոցել·

Աներեւոյթ կրաւորականիւ
Ներկայի ամանակի եւ յարաճգականի
կոփիլ·

Ճարակայականի եւ գերակատարի
էկոփիլ, էկոփիցիլ·

Անորիշի
կոփոցիլ·

Ապառնւոյ
կոփոտոցիլ *կամ* կոփոցոցիլ»[163]:

*Մորձորեցու բայական համակարգում, սակայն, նորութիւնն այն է այս հարցում, որ նա հրաժարւում է բոլոր վերոյիշեալ բռնագբօսիկ ձեւերից եւ առաջադրում է անորոշ դերբայի դրսեւորման միակ իրական բայաձեւը դասական հայերէնում՝ բայի ներկայի հիմքով եւ ել դերբայական ձեւոյթով (իհարկէ՝ ե խոնարհման բայերի համար միայն). «Արդ աներեւոյթ բայիս խոնարհմունքն է այս՝ սիրել, շինել, գրել, գործել եւ այլ սոյնպիսիք»[164]: Ընդ որում Մորձորեցին այդ լեզուանմուշները առաջադրելիս յորդորում է միաժամանակ, որ նրանց հետեւողութեամբ կամ նմանութեամբ կազմուեն եւ միւս բայերը՝ այն ճիշդ պատճառաբանութեամբ, որ իր ցուցադրածները բացառապէս «կանոնական» բնոյթ ունեն. «Արդ, սոքա կարգեսցին իբրեւ զքանոն...»[165]:*

*Հարցի նման ըրուածքը, ինչ խօսք, անսայթաք ուղի է մատնացոյց անում՝ հայերէնի անորոշ դերբայի (կամ՝ հին տերմինով «աներեւոյթ»ի) ուսումնասիրման համար, որպիսի մօտեցումը, բնականաբար, չատ կարեւոր ծառայութիւն է հայ քերականագիտութեան զարգացմանը նրա պատմութեան տուեալ փուլում:*

*Բայց անչուշտ Մորձորեցին լրիւ չի յաղթահարում աւանդական ըմբռնումը «աներեւոյթ»-ի մասին, երբ պնդում է միաժամանակ, որ «եւ այլքն ի սոյն յարմարեսցին* ըստ երից ամանակաց եւ երից դիմաց եւ երկուց թուոց»[166],-

163 Ն. Ադոնց, *նշուած աշխատ.*, էջ 49-50:
164 *Սոյն աշխատ.*, էջ 325:
165 *Անդ*:
166 *Անդ*:



*առանց լեզուանմուշներով փաստարկել կարողանալու իր այս պնդումը:*

*Սահմանական եղանակի ներկայ ժամանակի մասին խօսելիս, Մորձորեցին գրաբարեան բայաձեւերի փոխարէն «կու» եղանակիչի համադրմամբ բայաձեւեր է առաջադրում, որոնք միջին հայերէնի կենդանի բայաձեւերն են անշուշտ: Այսպէս, ներգործականի համար՝ «Սահմանականին եզական, ըստ ներկայ ամանակին երից դիմաց՝ կու սիրեմ, կու սիրես, կու սիրէ: Իսկ բազմաւորական՝ կու սիրեմք, կու սիրէք, կու սիրեն»[167]: Սահմանական եղանակի ներկայ կրաւորականի համար Մորձորեցին առաջադրել է «կու» եղանակիչով «սիրիմ», «սիրիս», «սիրի», «սիրիմք», «սիրիք» եւ «սիրին» բայաձեւերի յարադրութիւնները՝ գրելով. «Նոյնպէս եւ զկրիցն իմասցիս ամենայն յեղանակաց. սահմանականի ըստ ներկայի եզական՝ կու սիրիմ, կու սիրիս, կու սիրի. բազմաւորական՝ կու սիրիմք, կու սիրիք, կու սիրին»[168]:*

*Այս բայաձեւերը անչուշտ ոչ զուտ միջին հայերէն են, ոչ էլ զուտ գրաբեան, այլ երկուսի համադրումը. մէկի եղանակիչը համադրուել է միւսի կրաւորաձեւ խոմարհման հետ: Ընդհանուր կարգի մի թերութիւն, որ ակնեբեւ է՝ Մորձորեցին բայի բոլոր եղանակներով ու ժամանակներով խոնարհելիս նկատի է ունեցել միայն «ե» լծորդութիւնը՝ տեսադաշտից դուրս թողնելով միւսները, որպիսի հանգամանքը, տարաբախտաբար, միակողմանիութիւն է վերագրում իր բայական համակարգին:*

*Մորձորեցու նորութիւնը, բացի նշուածից, նաեւ այն է այստեղ, որ նա բեռնաթափել է Թրակացու թարգմանչի բոլոր արհեստական բայաձեւերը սահմանական ներկայի, որոնք բնաւ չէին համապատասխանում թէկուզեւ դասական հայերէնի օրինաչափութիւններին: Այսպէս, թարգմանիչը, դասական հայերէնում իբր թէ «երկուորական» թիւ արտայայտող բայաձեւերի համար յօրինել էր «կոփոմ», «կոփոս», «կոփոյ» մտացածին բայաձեւերը, իսկ եզակի եւ յոգնակի թուերի բայաձեւերը երեք դէմքերում էլ ներկայացրել է գրաբարեան կազմութիւններով: Բացի այդ, յունարէնի նմանութեամբ նա առաջադրել է նաեւ դասական հայերէնի սահմանական եղանակի ներկայի կրաւորաձեւ «երկուորականները», որոնք նոյնպէս հնարովի ձեւեր են, ինչպէս՝ կոփովմ, կոփովս, կոփով յարացոյցը[169]: Մնացած եզակի եւ յոգնակի երեք դէմքերն էլ առաջադրուած են գրաբարեան խոնարհմամբ:*

*Սահմանական եղանակի անցեալ անկատար ժամանակը (իր տերմինով՝ «յարաճգական») կազմելիս Մորձորեցին առաջադրում է դարձեալ «կու» եղանակիչով եւ «սիրէի», «սիրէիր», «սիրէր», «սիրէաք», «սիրէիք», «սիրէին» բայաձեւերի զուգադրմամբ յարադրութիւնները՝ հետեւեալ յարացոյցով.*

*«Իսկ յարաճգականին՝ որ է անցեալ եւ ո՛չ կատարեալ, եզական՝ կու սիրէի, կու սիրէիր, կու սիրէր. բազմաւորական՝ կու սիրէաք, կու սիրէիք, կու սիրէին»[170]:*

*Անցեալ անկատարի այս յարացոյցը, պէտք է ասել, բոլորովին նոր*

167 *Սոյն աշխատ.*, էջ 325:
168 *Անդ*, էջ 326:
169 Ն. Ադոնց, *նշուած աշխատ.*, էջ 45 եւ 47:
170 *Սոյն աշխատ.*, էջ 326: :

յարացոյց է՝ համեմատած Թրակացու թարգմանչի ներկայացրածի, որն ունի այսպիսի տեսք.

«Բայ սահմանական,
...ներգործական յարաձգականի
Եզական. կոփէի, կոփէիր, կոփէր.
Երկուորական. կոփոյի, կոփոյիր, կոփոյր.
Ցոգնական. կոփէաք, կոփէիք, կոփէին:
...կրաւորական յարաձգականի
եզ. կոփիի, կոփիիր, կոփիւր.
Եզ. կոփիի, կոփուիր, կոփուր.
Բազմ. կոփիաք, կոփիիք, կոփիին»[171]:

Ինչպէս պարզւում է համեմատութիւնից, Թրակացու թարգմանիչը դասական հայերէնի անցեալ անկատարը ներկայացրել է բոլորովին արհեստական, չինծու բայաձեւերով՝ երբ զուգադրում է նաեւ սահմանականի կրաւորական անցեալ անկատարի յարացոյցը, որը իսպառ բացակայում է դասական հայերէնի բայական համակարգում. իրականում, ինչպէս յայտնի է, ներգործական եւ կրաւորական բայասեռերը դասական հայերէնում արտայայտւում էին ընդհանուր ձեւով, ուստիեւ կոնտեքստի համաձայն էլ դրսեւորում կա՛մ ներգործական, կա՛մ կրաւորական բայասեռի իմաստը: Իսկ «երկուորական» թիւ արտայայտող բայական խոնարհում առհասարակ չի ունեցել դասական հայերէնը, հետեւաբար Թրակացու թարգմանիչը յունարէնի օրինաչափութիւններին «հարազատ» մնալու նախանձախնդրութեամբ յօրինել է ինքնահնար բայաձեւերը ներգործականի եւ կրաւորականի համար, որոնք քերականագիտական արժէք ունենալ, բնականաբար, չէին կարող դասական հայերէնի տեսակէտից:

Ներկայ դէպքում եւս Մործորեցու քերականագիտական նորութիւնն այն է, որ նա չէմքից հրաժարուել է բոլոր այն արհեստական հնարովի բայաձեւերից, որոնք առհասարակ խորթ են եղել հայերէնին. իսկ իր բայական համակարգը առաջադրելիս ընդհանրապէս նկատի է ունեցել ոչ թէ դասական հայերէնը, այլ իր ժամանակի կենդանի հայոց լեզուն՝ միջին հայերէնը, որը, անկասկած, զարգացման հեռանկար ուներ. մի անգամ ճիշդ որոշելով սահմանականի ներկայ ժամանակի յարացոյցը, Մործորեցին սկզբունքային հետեւողականութեամբ առաջադրում է նաեւ նրա անցեալ անկատարը իր ընդհանուր յարացոյցով՝ թէ՛ ներգործական եւ թէ՛ կրաւորական բայասեռերը արտայայտելու ներուկայութեամբ: Սա նոյնպէս կարեւոր քերականագիտական նուաճում էր՝ հէնց հայերէնի բայական համակարգը իր բոլոր յարացոյցերով բացայայտելու ճանապարհին. միակ թերութիւնն այն է անկատարի յարացոյցի դէպքում, որ յոգնակի երրորդ դէմքում («կու սիրէաք») փոխզիջումային ձեւ է ստեղծել՝ միջին հայերէնի եւ գրաբարի դիմային եւ եղանակային ձեւոյթների համադրմամբ:

Սահմանական եղանակի անցեալ կատարեալը իր բայահամակարգում Մործորեցին ներկայացրել է միայն դասական հայերէնի սահմանականի ներգործական անցեալը, որը յարացոյցի բոլոր անդամների բացայայտմամբ այնուամենայնիւ նորութիւն է միջնադարի քերականական Մեկնութիւննե-

171 Ն. Ադոնց, նշուած աշխատ., էջ 45:



րում՝ ամբողջովին կանգնելով հայոց լեզուի համապատասխան իրողութիւնների ուսումնասիրման ուղու վրայ: Այսպէս, նա գրում է. «Իսկ գերակատարին, որ է անցեալ եւ կատարեալ, եզական՝ սիրեցի, սիրեցեր, սիրեաց, բազմաւորական՝ սիրեցաք, սիրեցիք, սիրեցին»[172]:

Մինչդեռ Թրակացու թարգմանիչը, յունարէն տեքստի բացարձակ նմանողութեամբ ձեւելով որպէս թէ հայերէնին համարժէք մտացածին յարացոյցները, ներկայացրել է անցեալ կատարեալի բազմաթարդ յարացոյցներ, ընդ որում թէ՛ ներգործականի եւ թէ՛ կրաւորականի համար առանձին-առանձին.

Բայ սահմանական, ներգործական
...գերակատարի

Եզ. էկոփեցի, էկոփեցեր, էկոփեաց,
Երկ. էկոփոցի, էկոփոցեր, էկոփոցր,
Ցոգն. էկոփեցաք, էկոփեցէք, էկոփեցին:

Անսահմանականի

Եզ. կոփեցի, կոփեցեր, կոփեացր.
Երկ. կոփոցի, կոփոցեր, կոփոցր.
Ցոգն. կոփիցաք, կոփեցէք, կոփեցին:

Ապառնւոյ

Եզ. կոփեցից, կոփեսցես, կոփեսցէ,
Երկ. կոփոցից, կոփոսցես, կոփոսցէ,
Բազմ. կոփեսցուք, կոփեսցէք, կոփեսցեն:

Սահմանական կրաւորական
...Առաւելատարականի

Եզ. էկոփեցայ, էկոփեցար, էկոփեցաւ.
Երկ. էկոփոցայ, էկոփոցար, էկոփոցաւ,
Բազմ. էկոփեցաք, էկոփեցայք, էկոփեցան:

Անսահմանականի

Եզ. կոփեցայ, կոփեցար, կոփեցաւ,
Երկ. կոփեցայ, կոփոցար, կոփեցաւ,
Ցոգն. կոփիցաք, կոփիցայք, կոփիցան:

Ապառնւոյ

Եզ. կոփեցայց, կոփեսցիս, կոփեսցի,
Երկ. կոփոցայց, կոփոսցիս, կոփոսցի,
Բազմ. կոփիսցուք, կոփիսցիք, կոփիսցին»[562]:

Մործորեցու բայական համակարգում սահմանական եղանակի անցեալի վաղակատարի *ըմբռնումը*՝ համապատասխան յարացոյցով, արտացոլում է միջին հայերէնի բայական համակարգի նշուած բայաձեւերը: Նրա մօտ կարդում ենք. «Իսկ յարակային՝ որ է անցեալ վաղակատարին, եզական՝ սիրել էի, սիրել էիր, սիրել էր. բազմաւորական՝ սիրել էաք, սիրել էիք, սիրել էին»[174]: Միայն յոգնակի 1-ին դէմքի օժանդակ բայն է, որ յիշեցնում է դրաբարեանը. բայց միջին հայերէնը, որն իր ծնունդով անմիջապէս դրաբարեան է, պարտական է դասական հայերէնին, բնականաբար լեզուական չատ իրողութիւններ, այդ թւում եւ քերականական ձեւոյթներ արտացոլում էր իր մէջ

172 Նոյն աշխատ., էջ 326:
173 Ն. Ադոնց, նշուած աշխատ., էջ 46 եւ 48:
174 Անդ:

լեզուական այդ համակարգից:

Նկատենք նաեւ, որ վաղակատարի ըմբռնումը ամբողջական կը լինէր անշուշտ, եթէ Մործորեցու բայական համակարգում ներկայացուած լինէր նաեւ վաղակատարի ներկան: Չնայած այդ թերութեանը, արուածը եւս կարեւոր նուաճում էր հայոց լեզուի բայական համակարգը ուսումնասիրելու ուղղութեամբ՝ մանաւանդ, երբ աչքի առաջ ենք ունենում, թէ ինչպիսի ճապաղ՝ արհեստական ու մտացածին բայական համակարգ էր ներկայացնում թրակացու թարգմանիչը նաեւ վաղակատարի ըմբռնման հարցում, որը բնաւ աղերսակցութիւն չունէր դասական հայերէնի բայական համակարգի համապատասխան յարացոյցի հետ: Համեմատի՛ր.

Բայ սահմանական, ներգործական
···յարակայի

*Եզ.* էկոփէի, էկոփէիր, էկոփէր,
*Երկ.* էկոփոյի, էկոփոյիր, էկոփոյր,
*Բազմ.* էկոփէաք, էկոփէիք, էկոփէին:

Սահմանական կրաւորական
···յարակայականի

*Եզ.* էկոփիի, էկոփիիր, էկոփիւր,
*Երկ.* էկոփուի, էկոփուիր, էկոփուր,
*Ցոգ.* էկոփիաք, էկոփիիք, էկոփիին[175]:

Այնուհետեւ, Մործորեցին, բնականաբար, հրամայական եղանակի միայն երկու թուերն է ներկայացրել՝ միջին հայերէնով ու գրաբարախառն. «Հրամայականին եզական՝ սիրեա՛, սիրէ՛· բազմաւորական՝ սիրէ՛ք, սիրեցէ՛ք, սիրեսցե՛ն»[176]: Իհարկէ, առաւել ճշգրիտ կը լինէր Մործորեցին, եթէ «սիրեսցեն» բայաձեւը առհասարակ չներկայացնէր, որը դասական հայերէնի ստորադասական եղանակի երկրորդ ապառնու յոգնակի երրորդ դէմքն է՝ «յորդորական», եւ ո՛չ թէ հրամայական իմաստով: Բայց այնուամենայնիւ արուածը դարձեալ առաջընթաց կարեւոր քայլ էր աւանդականի համեմատութեամբ:

Առաւել ուշագրաւը, հարկ է նշել, հրամայական կրաւորականի համար Մործորեցու առաջադրած ու>վ ձեւոյթով կազմութիւններն են, որոնք միջին հայերէնում գործածական լինելով՝ տիրապետող դարձան հայերէնի յետագայ պատմական ամբողջ ընթացքում, ընդհուպ մինչեւ արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուներում: Այսպէս, Մործորեցին գրում է կրաւորականի առնչութեամբ. «Հրամայականին եզական՝ սիրուի՛ր, սիրուի՛, բազմաւորական՝ սիրուի՛ք, սիրուի՛ն»[177]: Միակ վրիպումը այստեղ եզակի եւ յոգնակի երրորդ դէմքի համար առաջադրած երկրորդ բայաձեւերն են՝ «սիրուի՛», «սիրուի՛ն», քանի որ հրամայականի դիմային վերաբերութիւնը, ինչպէս յայտնի է, ապերասում է միայն երկրորդ դէմքերին (թէ՛ եզակի եւ թէ՛ յոգնակի)՝ բացառելով միւսները: Փաստօրէն «սիրուի՛» եւ «սիրուի՛ն» բայաձեւերը ստորադասական բնոյթ ունեն: Եւ որպէսզի ասուածի համոզչականութիւնը աներկբայելի լինի՝ համեմատենք այն աւանդականի հետ: Բանն այն է, որ Թրակացու հայ թարգմանիչը, յունարէնի հետեւողութեամբ հրամայական եղանակի համար յարացոյցների այնպիսի բազմայարկ կառոյց է

175 Ն. Ադոնց, նշուած աշխատ., էջ 46 եւ 47:
176 Միեւնոյն աշխատ., էջ 325:
177 Անդ, էջ 326:



ներկայացրել՝ արհեստական բռնաճիգ բայաձեւերով, որոնք բոլորովին անհասկանալի են եղել նոյնիսկ քերական մեկնիչների համար: Դիցուք՝

Հրամայականի ներգործականի
ներկայ ամանակի եւ յարաճգականի

*Եզ.* կոփեա՛, կոփեսցէ՛,
*Երկ.* կոփոա՛, կոփոսցէ՛,
*Բազմ.* կոփեցէ՛ք, կոփեսցե՛ն:

Ցարակայի եւ վաղակատարի

*Եզ.* էկոփեա՛, էկոփեսցէ՛,
*Երկ.* էկոփո[յ]ա՛, էկոփոսցէ՛,
*Բազմ.* էկոփեցէ՛ք, էկոփեսցե՛ն:

Անորիշի եւ ապառնւոյ

*Եզ.* կոփեսջի՛ր, կոփեսցէ՛·
*Երկ.* կոփոսջի՛ր, կոփոսցէ՛,
*Բազմ.* կոփեսջի՛ք, կոփեսցե՛ն[178]:

Հրամայականի կրաւորականի
ներկայ ամանակի եւ յարաճգականի

*Եզ.* կոփեա՛ց, կոփ[ի]ցի՛,
*Երկ.* կոփոեա՛ց, կոփովցի՛,
*Բազմ.* կոփեա՛յք, կոփիցի՛ն:

Ցարակայի եւ գերակատարի

*Եզ.* էկոփիցի՛ր, էկոփիցի՛,
*Երկ.* էկոփո[ւ]ցի՛ր, էկոփովցի՛·
*Բազմ.* էկոփի[ց]ա՛յք, էկոփիցի՛ն:

Անսահմանականի եւ ապառնւոյ

*Եզ.* կոփեսցի՛ր, կոփեսցի՛,
*Երկ.* կոփոսցի՛ր, կոփոսցի՛·
*Բազմ.* կոփեցարո՛ւք, կոփեսցի՛ն»[179]:

«Ըղձական եղանակ» հասկացութիւնը, Մործորեցու ըմբռնմամբ, բնաւ էլ յստակ չէ· նա ընդունում է ըղձականի ժամանակային դրսեւորման երեք պահեր՝ ներկայ, անցեալ եւ ապառնի, իսկ դրանց կազմութիւները պատկերացնում չփոթ ընկալմամբ:

Այսպէս, ներգործական ներկայի համար առաջադրած յարացոյցը փաստօրէն միջին հայերէնի սահմանական ներկան է՝ սկզբից եթէ չաղկապի յարադրմամբ, որով, իրականում, ստացուել են եզակի եւ յոգնակի պայմանական կամ ենթադրական նախադասութիւններ՝ երեք դէմքերով, եւ ո՛չ թէ կազմել բայական իւրայատուկ յարացոյցներ: Այսպէս, նա գրում է· «Ըղձականին ներկա[յ], եզական՝ եթէ կու սիրեմ, եթէ կու սիրես, եթէ կու սիրէ· բազմաւորական՝ եթէ կու սիրեմք, եթէ կու սիրէք, եթէ կու սիրեն»[180]: Ինչպէս տեսնում ենք՝ սահմանական ներկայի կիրառութիւնն է տուել ստորադասական նշանակութիւն, որը բնորոշ է ե՛ւ գրաբարի, ե՛ւ, մանաւանդ, միջին հայերէնի համար: Հետեւաբար «ըղձական եղանակը», որպէս առանձին ինքնուրոյն եղանակ, կորցրել է Մործորեցու բայական համակարգում իր ամէն մի հիմքը:

178 Ն. Ադոնց, նշուած աշխատ., էջ 50:
179 Անդ, էջ 51:
180 Միեւնոյն աշխատ., էջ 325:

«Ըղձական եղանակի» անցեալը Մործորեցին ներկայացրել է միջին հայերէնի սահմանական եղանակի վաղակատար անցեալով՝ դարձեալ սկզբից պայմանական կամ ենթադրական իմաստ արտայայտող «եթէ» չաղկապի զուգադրմամբ. «Անցեալ՝ եթէ սիրել էի, եթէ սիրել էիր, եթէ սիրել էր. բազմաւորական՝ եթէ սիրել էաք, եթէ սիրել էիք, եթէ սիրել էին»[181]:

Իսկ ապառնի ժամանակի համար Մործորեցու ներկայացրած յարացոյցը արտայայտել է դասական հայերէնի ներկայով եւ սկզբից դարձեալ պայմանական կամ ենթադրական իմաստ դրսեւորող «եթէ» չաղկապի համադրմամբ «Ապառնի՝ եթէ սիրեմ, եթէ սիրես, եթէ սիրէ. բազմաւորական՝ եթէ սիրեմք, եթէ սիրէք, եթէ սիրեն»[182]:

Ըղձական եղանակի կրաւորական կազմութիւնները համարեա նոյն հիմունքներով են առաջադրուած. ներկայի յարացոյցը՝ սկզբից «եթէ» չաղկապով, միջին հայերէնի «կու» եղանակիչով եւ գրաբարի ներկայի կրաւորաձեւ խոնարհման բայանմուշներով յարադրուածներն են. «Ըղձականին ըստ ներկային, եզական՝ եթէ կու սիրիմ, եթէ կու սիրիս, եթէ կու սիրի. բազմաւորական՝ եթէ կու սիրիմք, եթէ կու սիրիք, եթէ կու սիրին»[183]:

Արհեստական կազմութիւնները ունեն «ըղձական եղանակի» կրաւորական անցեալի բայաձեւերը. սկզբից «եթէ» չաղկապով եւ գրաբարեան վաղակատար-յարակատար անցեալի բայամիջեան «ւ» ձեւոյթով («սիրեւել էր») ինքնահնար յարադրութիւնները: Այսպէս, Մործորեցին գրում է. «Անցեալ, եզական՝ եթէ սիրեւել էի, եթէ սիրեւել էիր, եթէ սիրեւել էր. բազմաւորական՝ եթէ սիրեւել էաք, եթէ սիրեւել էիք, եթէ սիրեւել էին»[184]:

Իսկ ապառնի կրաւորականը Մործորեցին կազմել է «եթէ» չաղկապով եւ գրաբարի կրաւորաձեւ ներկայով. «Ապառնի, եզական՝ եթէ սիրիմ, եթէ սիրիս, եթէ սիրի. բազմաւորական՝ եթէ սիրիմք, եթէ սիրիք, եթէ սիրին»[185]:

Այս վրիպումի պատճառն այն է, որ դասական հայերէնը չունէր «ըղձական» իր յարացոյցային բայաձեւով, միջին հայերէնը եւս դեռեւս այդ եղանակի առաջացման ձեւաբանական արտայայտութիւնը չունէր: Եւ եթէ Մործորեցին վրիպել է այդ եղանակը իր յարացոյցներով ստուգապէս ներկայացնելու՝ առաջադրելով ճապաղ ու չփոթ յարացոյցներ, ապա պատճառը վերեւի մեր տուած բացատրութիւնն է: Իսկ թէ ինչո՛ւ է Մործորեցին ճիգ գործադրել նաեւ «ըղձական եղանակը» ներկայացնելու, ապա պէտք է ասել, որ դա սոսկ աւանդականութեան թելադրանքի արդիւնք էր. թրակացու թարգմանիչը, նախանձախնդիր լինելով յունարէնի բայական համակարգի օրինաչափութիւնները թարգմանելու եւ հայերէնի համարժէքները դրսեւորելու հարկադրանքին՝ ստեղծել է ըղձական եղանակի ներգործական եւ կրաւորական յարացոյցների բազմայարկ մի համակարգ, որ անհասկանալի է մնում նոյնիսկ հայ քերական մեկնիչներին: Համեմատութեան համար բերում ենք ստորեւ այդ յարացոյցը.

181 Անդ: Անդ, էջ 325–26:
182 Անդ: Անդ, էջ 326:
183 Անդ:
184 Անդ:
185 Անդ: Անդ, էջ 327:



Ըղձական[ք] ներգործական[ք]
ներկայ ամանակի եւ յարածգականի.

*Եզ. կոփերմ, կոփերս, կոփեր,*
*Երկ. կոփերմ, կոփերս, կոփեր,*
*Բազմ. կոփերմք, կոփերք, կոփերն:*

Ցարակայի եւ գերակատարի

*Եզ. էկոփեցիւ, էկոփեցիւր, էկոփեցեր,*
*Երկ. էկոփոցիւ, էկոփոցիւր, էկոփոցեր,*
*Բազմ. էկոփեցիւք, էկոփեցիւրք, էկոփեցին:*

Անսահմանականի եւ ապառնւոյ

*Եզ. կոփեցիւց, կոփեսջիւր, կոփեսցեւ,*
*Երկ. կոփոցիւց, կոփոսցեւս, կոփոսցեւ,*
*Բազմ. կոփեսցիւք, կոփեսջեւք, կոփեսցեւն:*

Ըղձականիք կրաւորականիք
ներկայ ամանակի եւ յարածգականի

*Եզ. կոփիւմ, կոփիւս, կոփիւ,*
*Երկ. կոփում, կոփուս, կոփու,*
*Բազմ. կոփիւմք, կոփիւք, կոփիւն:*

Ցարակայի եւ վաղակատարի

*Եզ. էկոփեալ իմ, իւս, իւր,*
*Երկ. էկոփուեալ ուք, ուիւս, ուիւր,*
*Յոգն. էկոփեալք իսն[ն]ք, իւք, իւն:*

Անսահմանականի եւ ապառնւոյ

*Եզ. կոփիցայց, կոփիսցիւս, կոփիսցիւ,*
*Երկ. կոփոցայց, կոփոսցիս, կոփոսցիւ,*
*Բազմ. կոփիսցուք, կոփիսցիւք, կոփիսցիւն*[186]:

argumentations we have demonstrated that **Nəčəcəi** in his text has rid himself of all philosophical, theological (in most part), perceptions of the natural sciences, musical and generally irrelevant details of various arts, which so vastly and without any necessity are heaped up in the Compilations of Magistros and Erzenkaci, and has left of the mentioned arts and sciences only in such a measure **as auxilliary material are indispensible for explaining linguistico-grammatical issues of this or that kind.** In most cases, from 3-long pages of similar passages Corcoreci picks up only essential notions, which naturally relate to linguistico-grammatical this or that phenomena, formularizing in this way he sums up in a few lines, **attributing to his Interpretation preponderently linguistico-grammatical character**, which is also an important achievement in composing grammatical treatises of interpretative order. This valuable methodical-scientific input in the skill of composing text-books, as positive issue, Corcoreci has thoroughly adopted in his compostion too.

**Relationship of Corcoreci's Compilation with Nəčəcəi's Interpretative Treatise.** About common features that are manifest in the mentioned two treatises we have already spoken in the course of our above observation; here we shall concentrate our examination on the **differences of principal character** that endows them their respective identities as literary units, on the one hand, and on the other, it helps us to decide which one is composed earlier than the other. The last problem is complicated because of the fact that the biographies of these scholars were fundamentally confused in Armenology, about which we have spoken in detail in our previous publication: "Hovhannēss Erzenkaci, Collection of Commentaries (on the work) of the Grammarian" (Los Angeles, 1983, see the Introduction).

First of all we ought to emphasize, that each of the two Commentators of the Interpretations **has its own conceptions,** which depends on the underlining or abatement of the importance of this or that grammatical paragraph or preposition, theory or thesis, its character of interpretation, its consideration or neglecting of the comparative value of lingustico-grammatical perception etc. By revealing not only major differences, but also all the nuances and even seemingly extremely secondary features, it is possible to comprehend the worth of these two Literary Monuments, by which is circumstiated their role and significance in the Armenian linguistico-grammatical rich literature of interpretative character.

We have, with textological facts and argumentations, confirmed that **Nəčəcəi** and Corcoreci have presented their treatises in different projects and pedagogical approaches.

Secondly, in the text of Corcoreci there are whole passages that are absent in the Compilation of **Nəčəcəi**, and adversely, in **Nəčəcəi**'s text we find passages that are absent in Corcoreci's Interpretaiton. Their sources we have discovered and compared reciprocally; mostly they belong to Erzenkaci's Compilation, and in scarce cases to other sources. Hence the inevitable conclusion that is obviously drawn: both Compilations have used Erzenkaci's Interpretation **independently of each other**. The preciseness of this assessment is fortified by the fact that sometimes a part of Erzenkaci's **same passage** is employed by one and the remaining by other compilors, or it happens that seperate sentences that **Nəčəcəi** has borrowed from Erzenkaci's treatise, Corcoreci has completely dismissed.

Thirdly, Corcoreci and Erzenkaci, for example, have for Recitation 35 specimens of manners, endowed by corresponding linguistical samples, whilst **Nəčəcəi** has none.

Beside partial differences of textual passages, **Nəčəcəi** in his Interpretation has also



the whole theory of calligraphy, orthography, distributions of syllables and, in a word, about the Art of writing generally narrated by Geworg Skewraci (see our publications: "Esayi **Nəčəcəi**, Analysis of Grammar", pp. 176-81, "Linguistico-grammatical Theory of the Art of Writing in Armenia through the Middle Ages", Yerevan, Academy of Sciences of Soviet Armenia, 1962, pp. 288-96) which definitely is absent from Corcoreci's Interpretation.

Forthly, **Nəčəcəi**, in forwarding the paragraphs and prepositions of Dionysus of T'race seldom endows them with introductions before Quotations (only in three instances: "About the Recitation", "Conjunction" and "Versification"), revealing their actual significance, their need is felt for every case beginning a new chapter. How direly important it is, from the viewpoint of scientifical and methodical perfectness to have introductory sayings with characterizing generalization concised even though in a few words. This lacune too has filled Corcoreci in his narration.

Examining the textual relationship of the treatises of Corcoreci and **Nəčəcəi** we cannot circumambulate one of extremely complicated textological problem, which has concerned Armenology for a long time but has not been solved. That is: whose Interpretation has been created primarily? In other words, of the textological analyzes point of view, **Nəčəcəi**'s text is related to Corcoreci, or adversely, Corcoreci's text to **Nəčəcəi**'s.

Departing from the fact that Cocoreci's style of language in his treatise is original and independent of the one traditionally used in other grammatical compilations, it is natural to conclude that priority must be attributed to him by the reason that he very rarely follows verbatim the sources that he has quoted. By the way, in favor of this seemingly "true" presumption, there are other kinds of hinges, which have the appearance of being "hopeful sustainers" of them. But our first doubt arose when common passages picked up by **Nəčəcəi** and Corcoreci from their main source of Erzenkaci's Compilation were compared. It became evident that **Nəčəcəi** is more close and akin by linguistico-stylistic features to Erzenkaci than Corcoreci, because the latter has **behaved in renarrating the interpretations independently from his sources, being guided solely and exclusively by his own linguistical thought and style.** As it is a well known fact, Erzenkaci has borrowed in his Compilation the interpretations of the authors from V-XI centuries, the language and the style of his sources being hellenized armenian ( "Յունաբան հայերէն" ) of scientific language with its strong stylistic variations, was very hard to comprehend for the later scholars and students. But Corcoreci has overcome this linguistico-stylistic barrier too in his treatise. Anyhow, this fact alone was not sufficient to come to a conclusive and firm decision regarding the problem of primacy of the texts that interests us in this case. To that goal impedes the circumstance that the passages picked up both by **Nəčəcəi** and Corcoreci from their common main source is ever-changing. And the point is that not inevitably, as a rule, one picked up every time more extended passages, the other briefer ones (in that case it would be possible to come easily to a conclusion), but in very changeable proportions. From this, naturally, we may do two feasible presumptions: a/ **Nəčəcəi** and Corcoreci have profitted from their mutual main source Erzenkaci's Compilation **independently**; b/**Nəčəcəi** is **more close by his method of picking up passages** to his sources than Corcoreci.

It remains to find other sources that are present **only** in the treatises of **Nəčəcəi** and Corcoreci, to reveal the character of their relationships toward that sources, by which we can decisively solve their primacy.

For example, there are passages from the Interpretation of David Invincible that have been picked up both by **Nəčəcəi** and Corcoreci. Textological comparison obvious-

ly and undoubtedly shows that **the text of Nəčeči is verbatimly true to its source**, whilst Corcoreči's text has embraced them only partially and general grammatical notions are narrated by his own words. Naturally the question faces us again: who has profitted of whom: **Nəčeči** from Corcoreči's treatise, or vice versa?

Of course, **Nəčeči** couldn't profit from Corcoreči by the very reason that his passages are related **directly** to the Interpretation borrowed, whilst Corcoreči's passages are explainable **indirectly** and only **by mediation**. We may presume that **Nəčeči** and Corcoreči have profitted **independently** from this source. In this case a similar presumption is drawn, **because beside the passages present in Nəčeči's treatise borrowed from David Invincible there aren't others in Corcoreči's Compilation. Beside that, these passages are located in Corcoreči's treatise in the same places of narration as one found in Nəčeči's Composition.**

It is the same instance when **Nəčeči** has profitted **directly** from another source as Geworg Skewraci's text on Art of writing, whilst Corcoreči again **by a mediator** has benefitted.

On the contrary; **there isn't** in the text of Corcoreči any single authorial lines, sentence or word-combination of his own that has been reflected at the same time in **Nəčeči**'s text. There isn't any trace (whatever kind) that was included in **Nəčeči**'s grammatical Interpretation. The absence of the adverse tie too is a strong and weighty proof that makes evident the **primacy** of compostion of **Nəčeči**'s treatise than of Corcoreči's.

From all these facts and textological argumentations **we firmly arrive to the conclusion that Corcoreči had at his dispositon the treatise of Nəčeči when he narrated his.** Only this way can we explain **all the commonalities** that are apparent in both compositons of treatises.

In the **Second Section** of this volume (pages 109-327) appears the critical text of the treatise of Yovhannēss Corcoreči, in comparison with fourteen Manuscripts involving the same text. By analyzing all the deviations and variations in wording and sentence structure, we have restored for the first time in Armenology the critical text with the greatest possible precision.

The **Third Section** ( pp. 329-379 ) contains philological, historical and cultural commentaries to help the reader to deal with the obscure, ambiguous passages and formulations that can present confusion. A specific vocabulary of words form the classical period which sometimes cause difficulty is also included, as well as indexes of proper names and literary terms.



# Ծանօթագրութիւններ

1· «Ռերական» ասելով տուեալ կոնտեքստում Մործորեցին նկատի ունի յոյն նշանաւոր հեղինակ Դիոնիսիոս Թրակացու աշխատութիւնը, որը մեկնաբանում են միջնադարի բոլոր հայ քերականները, այդ թւում եւ Յովհաննէս Մործորեցին։ Թրակացին ապրել եւ ստեղծագործել է 170–90 ՔՔ· մ·թ·ա·։ Աշակերտել է ալեքսանդրեան դպրոցի կարկառուն քերականներից Արիստարքոսին։ Մշակոյթի պատմութեան մէջ յայտնի է « τέχνη γραμματική » փոքրածաւալ, բայց մեծարժէք աշխատութեամբ, որը յունարէն լեզուի քերականական, ընդ որում՝ գերազանց ձեւաբանական իրողութիւնների ուսումնասիրման համակարգն ստեղծեց։ Այն մեծ չափով տուեց քերականագիտութեան զարգացմանը ինչպէս բիւզանդական աշխարհում, այնպէս եւ քաղաքակիրթ չատ երկրներում, այդ թւումիս՝ Հայաստանում։ Հայերէն թարգմանութիւնը, ունենալով փոքր–ինչ ազատ փոխադրութեան բնոյթ, ամենահին թարգմանութիւններից է, որն իրականացրել է Դաւիթ Անյաղթը։ Առաւել մանրամասնութիւններ տե՛ս մեր աշխատասիրութիւնը՝ «Յովհաննէս Երզնկացի· Հաւաքումն Մեկնութեան Քերականի», էջ 315–16։

2· Եբերը, ըստ բիբլիական աւանդապատումի, Սաղի որդին էր· եղել է հրէական նահապետներից մէկը, որն, իբր, աշտարակաշինութեան ժամանակ, երբ լեզուները խառնակուում են, միայն ինքն է կարողանում պահպանել անաղարտ վիճակում ադամեան «առաջին» լեզուն։ Ըստ որում նրա անունով էլ հրէական ժողովուրդը յետագայում կոչուել է «Եբրայեցի»։

3· Ենովսը, ըստ բիբլիական աւանդապատումի, Ադամի թոռն էր՝ Սեթի որդին, որն իր հերթին ճանաչուել էր որպէս Իսրայէլի նահապետներից մէկը։ «Ենովս» անունը եբրայեցերէն նշանակել է «մարդ»։ Ըստ մեր թուագրութեան 1–ին դարի հրեայ նշանաւոր պատմիչ Յովսէպոս Փլաւիուսի հաղորդումների, Ենովսը միւս եղբայրների հետ միասին եղել է ճանաչուած աստղաբաշխ. կանխագուշակելով աշխարհի կործանումը տարերային երկակի ուժերի՝ ջրհեղեղի եւ հրի միջոցով, կանգնեցնում է երկու սիւն՝ մէկը պղնձից, միւսը կաւից, եւ դրանց վրայ փորագրում աշխարհի արարածների եւ երեւոյթների անունները, որ··· տուել է Ադամը, հաղորդելով միաժամանակ աշխարհի իրադարձութիւնները։ Սեւեռուն նպատակն է եղել՝ յաւերժօրէն պահպանել իրադարձութիւնների պատմութիւնը աշխարհի ինչպէս ջրհեղեղային կործանումից, այնպէս էլ «հրոյ ճարակ աւերածութիւններից» յետոյ։ Գրաստեղծման այս գեղեցիկ նուիրից, աւանդապատումը ընդգրկուել է միջնադարի հայ դպրութեան տեսութեան ոլորտում (տե՛ս մեր յօդուածը՝ «Լեզուների առաջացման ու զարգացման տեսութիւնը եւ գրի ու մատենագրութեան սոցիալական նշանակութիւնը ըստ Վարդան Արեւելցու» («Լրաբեր», ամսագիր ՀՍՍՀ ԳԱ հասարակական բաժանմունքի, 1972 թ·, No. 2)։ Փաստօրէն՝ Ենովսը դիտուում է առաջին ժամանակների նահապետներից մէկը (տե՛ս Հ· Մ· Թէոփիլեանց, «Վարք Երեւելի Արանց», հ· Ա, էջ 227, Հ· Աճառեան, «Հայոց անձնանունների բառարան», հ· Բ, էջ 120–21)։

4· Ենովքը իսրայէլական ցեղերից մէկի նահապետն է եղել, սերունդի յաջորդականութեամբ՝ Ադամից յետոյ եօթներորդը: Սա եւս եղել է, ըստ աւանդապատումի, հռչակաւոր աստղաբաշխ եւ տոմարագէտ: Ենովքը եւս, Ենովսից յետոյ, հնագոյն տարեգիրներից է: Առաջին մարգարէն է համարուել: Երրայեցերէն այդ անունը նշանակում է «նուիրեալ» (տե՛ս Հ· Մ· Թէոփիլեանց, «Վարք երեւելի արանց», հ· Ա, էջ 227, Հր· Աճառեան, «Հայոց անձնանունների բառարան», հ· Բ, էջ 126):

5· Ցուդաս ոչ թէ Քրիստոսի աշակերտներից յայտնի մատնիչն է, այլ, ըստ բիբլիական աւանդապատումի, Յակոբ նահապետի 4–րդ որդին, որ ուրիշ կերպ կոչւում է «Ցուդայ Յակորեան»: Սա նա է, որ փրկեց Յովսէփին եղբայրների որոգայթներից ու վրէժխնդրութիւնից՝ վաճառելով նրան եգիպտացի առեւտրականներին: Վերջինս, պետական նշանակութիւն ունեցող իր «գուշակութիւնների» շնորհիւ, ճանաչւում է իբրեւ Եգիպտոսի թագաւոր: Իր սերունդի բազմանալով Իսրայէլի թագաւորութիւնը ժառանգում է հէնց Ցուդայ Յակորեանը: Ցետագայում ամբողջ հրեայ ժողովուրդը անուանւում է իբրեւ «յուդայեանք», որոշ ձեւափոխմամբ՝ «հահուդի» կոչւում առանձին լեզուներում:

6· Արփաքսադը, ըստ բիբլիական աւանդապատումի, Սեմի անդրանիկ որդին էր, Սաղայի հայրը· Ծնուել է այսպէս կոչուած Ջրհեղեղից յետոյ երկրորդ տարում (տե՛ս Մննդոց, ԺԱ, 10–13):

7· «Քաղդէացիք» կոչւում էին ընդհանրապէս բաբելոնացիները· Նրանց մօտ աստղաբաշխութիւնը լայն զարգացում էր ապրել, համարւում էին հնագոյն քաղաքակիրթ ժողովուրդ, ստեղծել էին գիր ու դպրութիւն: Նրանց գիտա–մշակութային նուաճումները ամբողջութեամբ փոխանցուել է յոյներին, մասամբ՝ հայերին եւ այլ հին քաղաքակրթութիւն ժառանգած ժողովուրդներին:

8· Մովսէսը Հին կտակարանի կենտրոնական դէմքերից է՝ մեծահամբաւ օրէնսդիր, «հրաշագործ» մարգարէ: Ըստ աւանդապատումի, գերեվարուած իր հրեայ ժողովրդին Եգիպտոսից հայրենադարձնում է դէպի Իսրայէլ:

9· Ցեսու երրայեցերէն նշանակել է՝ «Աստուած է մեծանձն»· հայերէն տառադարձուել է նաեւ «Ցիշով» ձեւով՝ ասորերէնից: Նկատի է առնուած Մովսէսի յաջորդին, որը եղել է հրեաների ռազմական առաջնորդը: Տաճեւացին այդ յատուկ անունը բացատրել է իբրեւ «Ցեսու՝ փրկիչ եւ Ցիսուն փրկիչ լսի» (տե՛ս Հր· Աճառեան, Անձնանունների բառարան, հ· Գ, էջ 526): Համանուն մի քանի Ցեսուներ են յիշւում աւանդապատում մատենագրութեան մէջ: Նրանցից մէկը Սիրաքի որդին է, որը երրայեցերէն լեզուով Աստուածաշնչի մատեաններից «Իմաստութիւն Սիրաքայ» գիրքն է գրել՝ Քրիստոսից ենթադրաբար 234 տարի առաջ: Հէնց սրա թոռներից մէկը կոչուելիս է եղել նոյն անուամբ· մեկնել է Եգիպտոս, ուր իր ազգակիցների համար թարգմանել է իր պապի վերոյիշեալ աշխատութիւնը յունարէնի, քանի որ իր համերկրացիները երրայեցերէն լեզուն արդէն վաղուց մոռացել էին եւ գիտէին միայն յունարէն: Երրայեցերէն բնագիրը կորստեան է մատնուել եւ պահպանուել է միայն յունարէն թարգմանութիւնը, որը հիմք է ծառայել նաեւ 5–րդ դարում հայերէնի փոխադրութեան (տե՛ս «Վարք երեւելի արանց», հ· Ա, էջ 889–90):

10· Նաւէ–ն (սեռ·–տր· «Նաւեայ») վերոյիշեալ Ցեսուի հայրն էր:

11 եւ 12· Անէսը եւ Ամրէսը աւանդոյթի կամ սկզբնաղբիւրի հիման վրայ Յովհաննէս Մործորեցուն յայտնի եգիպտացի այն գիտուն անձնաւորութիւններն են, որոնց օգնութեամբ դեռեւս մարդկային քաղաքակրթութեան արշալոյսին Ասորիքում կազմոսն ու Փիւնիկը ստեղծում են գրահամակարգ՝ իրենց ժողովրդի համար: Այս անուններին հանդիպում ենք նաեւ Գրիգոր Նարեկացու «Թուղթ»–ում, որ գրել էր կճաւայ ուխտի վանահօրը· «Զոր գրեաց ի հոյակապ ուխտն կճաւայ, վասն կարծեաց անիծելոց Թոնդրակեանց Յանէսի եւ Յամրէսի···»:

13· Կիկրոփսը (աւելի ստոյգ՝ Կեկրոփս, յուն· Κέκροψ) Աթէնքի հիմնադիրն է եւ յոյների թագաւորը, որն ապրել է, ըստ աւանդոյթի, 1562 թուականին Ն·մ·թ·: Ազգութեամբ, սակայն, եղել է եգիպտացի, գաղթականների հետ միասին Եգիպտոսից մեկնելով գալիս է նախ Ատտիկէ, ամուսնանում տեղւոյն իշխաններից մէկի դստեր հետ եւ այնտեղ, ի նշանաւորումն իր անուան փառքի, քաղաք կառուցում, որը յետագայում վերանուանւում է Աթէնք: Իր իշխանութեան



տակ համախմբելով տեղւոյն բնակիչներին, Կեկրոփսը վարչական եւ տնտեսական փոփոխութիւնների գծով կազմակերպչական մեծ աշխատանքներ է կատարում, քաղաքական ինստիտուտներ եւ իրաւական նորմեր ներմուծում, ծերակոյտ հիմնադրում: Կեկրոփսին յորջորջել են նաեւ Երկրոյս (յն· Տիփիս)՝ կամ բարձրահասակ, կամ էլ երկլեզուեան՝ եգիպտախօս եւ յունախօս լինելու պատճառով: Բազմամշակութային փոխարէն, առաջին անգամ ծունաստանում ներմուծում է մենամշակութեան օրէնքը, այդ պատճառով էլ Կեկրոփսը երկրորդաբար անուանուել է նաեւ Երկճակատ՝ այդ իրողութիւնը հաւաստող ու խորհրդանշող դրամ հատելու առիթով· ըստ որում դրամի մի երեսին տղամարդու դիմագիծ է դրոշմել, միւս երեսին՝ կնոջ (տե՛ս «Վարք երեւելի արանց», հ· Ա, էջ 496–97): Հայ քերական մեկնիչներին, սակայն, աւանդաբար փոխանցուել է այն պատումը Կեկրոփսի մասին, ըստ որի նա՛ է ստեղծել յունարէնի գրահամակարգը եւ ճանաչուել միաժամանակ յունական մատենագրութեան հիմնադիրը:

14· Մեմփիսը կամ Մենֆիսը միջին Եգիպտոսի երբեմնի նշանաւոր մայրաքաղաքն է՝ բուրգերով հարուստ:

15· Հոմերոսը անտիկ ծունաստանի քնարերգութեան չգերազանցուած ներկայացուցիչն է, որը մեր հին մատենագրութեան մէջ եւ քերականական երկերում վկայակոչուել է նաեւ երկրորդաբար «Հոմերոն» ձեւով: Համաչխարհային փառք են բերել նրան իր երկու գլուխգործոցները՝ «Իլիական»–ն ու «Ոդիսական»–ը, որոնք տրոյական պատերազմի հերոսապատում դրուագներն են գեղարուեստօրէն վերարտադրում՝ ժամանակի հասարակական կացութեաձեւի «հանրագիտարանային» տեղեկութիւնների պարփակմամբ: Ցոյն պատմիչ Հերոդոտի հաւաստմամբ՝ Հոմերոսը ապրել եւ ստեղծագործել է իրենից 400 տարի առաջ, այլ կերպ ասած՝ մ·թ·ա· IX–X դարում (տե՛ս Ա· Գ· Առաքելեան, «Ծունական գրականութեան պատմութիւն», 1962, Երեւան, էջ 54):

16· «Արուեստ գրչութեան»:– Հայ ձեռագրագիտական տեսութեան մէջ սոյն հասկացութիւնը իր մէջ բովանդակում է ոչ միայն գեղագրութիւնը, իրբեւ տառատեսակների գեղեցիկ եւ նրբաճաշակ կիրառման հմտութիւն, այլեւ բանասիրական՝ լեզուական–քերականական տեսութիւնը: Միջնադարում ստեղծուել են հայ գրչութեան արուեստին նուիրուած առանձին աշխատութիւններ (Արիստակէս Գրչի, Գէորգ Սկեւռացու, Գրիգոր Տաթեւացու համապատասխան տուեալներ), որոնք մեծ դեր են կատարել հայ ձեռագրական արուեստը բարձրացնելու առումով: Կարեւոր է նշել, որ այդ աշխատութիւնները պատմական նշանակութիւն են ունեցել ոչ միայն հայ ձեռագրական արուեստի, այլեւ հայ քերականագիտութեան համար· դրանք միաժամանակ եղել են առաջին ինքնուրոյն քերականական աշխատութիւնները միջնադարեան Հայաստանում (տե՛ս Գ· Ջահուկեան, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները···, Լ· Խաչերեան, Գրչութեան արուեստի լեզուական–քերականական տեսութիւնը···):

17· «Տիեզերակալն Ադեքսանդրոս»–ը Մակեդոնացին է, որն ապրել է 356–324 թթ· մ·թ·ա·: Եղել է Ցունաստանի Փիլիպպոս թագաւորի նշանաւոր որդին, աչակերտել է «համապարփակ մտածող» Արիստոտէլին: Պատերազմներ մղելով Դարեհի դէմ՝ նուաճել է Պարսկաստանը, Բաբելոնը, պարտութեան մատնել եգիպտացիներին եւ տիրել նրանց երկրին, իր անուամբ մեծամեծ համբաւ քաղաք կառուցել (Ալեքսանդրիա), հովանաւորել է արուեստներն ու գիտութիւնները, նուաճել Հնդկաստանը եւ այլն: Վախճանուել է 33–ամեայ հասակում:

18· Աքիլլէսը Տրոյան պատերազմին մասնակցած յոյն ամենանշանաւոր զօրավարն էր, որն իր մարտունակութեամբ մրցակիցը չունէր: Նրա մայրը՝ աստուածուհի Թէտիսը, ըստ յունական դիցաբանութեան, նորածին Աքիլլէսին անխոցելի դարձնելու համար՝ ոտքից բռնած սուզում է Ստիգէս աղբիւրի մէջ: Եւ Աքիլլէսը, ըստ Հոմերոսի նկարագրութեան, իրօք անխոցելի է դառնում, բացի գարշապարից, որին կախարդական ջուրը չէր հասել՝ մօր ձեռքը այն ծածկած լինելու պատճառով: Այստեղից՝ «աքիլլէսեան գարշապար» արտայայտութիւնը համաչխարհային գրականութեան մէջ՝ որեւէ անձնաւորութեան թոյլ եւ խոցելի տեղը մատնանշելու առումով:

19· Թերսիտէսը Հոմերոսի «Իլիական»–ում բացասական հերոսներից է՝ մանաւանդ ֆիզիքական իր թերութիւններով, թէեւ, հոգեկան բարեմասնութիւնների տեսակէտից՝ չափազանց դրական է իրականում· Նա արտայայտում է ժողովրդի ցասումը Տրոյան անարդարացի պատերազմի դէմ, հակադրւում արքայից արքայ Ագամեմնոսին, պախարակում Աքիլլէսին, հալածւում եւ ապա սպանւում իր ազնիւ ըմբոստացումների համար: Ֆիզիկապէս եղել է այ-

լանդակ՝ կուզ, կաղ, չիլ աչքերով եւայլն (տե՛ս Ա. Գ. Առաքելեան, Ծունական գրականութեան պատմութիւն, էջ 46, 48, 49 եւ այլուր)։

20 եւ 21. «Բանական եւ գործնական (արուեստ)»։ Դաւիթ Անյաղթը իր քերականական Մեկնութեան մէջ էլ աւելի է զարգացնում եւ ամբողջական դարձնում «բանական» եւ «անբան» արուեստների տեսութիւնը, որն ամբողջ միջնադարում տիրապետող էր մեր դպրութեան մէջ։ Դաւիթը առաջ է քաշում այն հիմնադրոյթը, որ մարդու էութիւնը օժտուած է երկակիութեամբ, այն է՝ մարդը հոգեկանի եւ մարմնականի միասնութիւնն է կազմում. «Ծերկուք իմն պատճառաց մարդոյս գոյացեալ հաստատեցաւ բնութիւն՝ յոգւոյ եւ ի մարմնոյ»։ Այս հաւաստումից յետոյ Դաւիթը դիտել է տալիս, որ հոգեկանով եւ մարմնականով համապատասխանաբար առանձին «արուեստներ» են ստեղծուել, որոնք, սակայն, հաւասարապէս աղերսակցութեան մէջ են իրար հետ։ Այստեղից էլ հետեւութիւն է արւում՝ հոգեկան արուեստները բանական բնոյթ ունեն, իսկ մարմնական արուեստները՝ գործնական։ Ընդսմին՝ եթէ հոգեկանին վերաբերող արուեստները ուսուցւում են բանականութեամբ, կամ՝ որ նոյնն է՝ տեսական քննութեամբ, ապա մարմնականին վերաբերող արուեստները՝ պրակտիկայով եւ հմտութեամբ։ Այս հարցադրումը առաւել յստակ է ձեւակերպուած եւ սկզբունքօրէն տարբեր է երզնկացու մէջբերած քաղուածքից հէնց Դաւթի քերականական Մեկնութիւնում, որը եւ առաջադրում ենք ընթերցողին. «Եւ սոցա արուեստ որոշեալ առանձին ըստ ինքեանց, ոգւոյն՝ բանականն, եւ մարմնոյն՝ գործնականն, բայց հաւասարութեամբ առ միմեանս կապակցեալք, մինն՝ մտածաւրէն առաջնորդելով, եւ միւսն՝ զնոյն գործովք կատարելովք» («Բանբեր Մատենադարանի», No. 3, 1956, էջ 244)։

22. Բանական եւ գործնական արուեստները, իրենց հերթին, նոյնպէս բաժանման են երթարկուում սուբյեկտիւ հիմունքով. այսինքն՝ նայած կենցաղի կամ հասարակութեան համար նրանց ունեցած օգտակարութեան ու անհրաժեշտութեան չափանիշի՝ արուեստները բնութագրուում են իբրեւ «բարի», «չար» ու «միջակ» բանական եւ գործնական արուեստներ։ Ըստ այդմ՝ բանական արուեստների դասից՝ «բարի» կամ «օգտակար» են համարուում գրքերը կամ հոգեւոր երգերը, «չար» կամ անպէտք արուեստներ են դիտուում թովչութիւններն ու կախարդանքները, իսկ «միջակ» (այն է՝ ոչ շատ օգտակար, ոչ էլ շատ անպէտք) արուեստներ են ճանաչուում «մրմունջները» եւ դրանց նմանները։ Այստեղ ուշագրաւ է դիտել, որ մեր դպրութիւնը չէմքից մերժում է թովչութիւնը, կախարդանքը եւ ամէն սնոտիապաշտութիւն իբրեւ վնասակար՝ «չար» արուեստներ։

Այնուհետեւ, ըստ դաւթեան հարցադրման, «արուեստները» միմեանց նկատմամբ յատկանշուում են երկու առանձնայատկութիւններով եւս. արուեստների մի մասը «կայուն» է եւ յարատեւ, մի մասն էլ՝ «անկայուն» եւ «անցողիկ»՝ ըստ օբյեկտի բնոյթի եւ նրա յարաբերութեան ժամանակի նկատմամբ։ Բացի այդ՝ արուեստների մի մասը ընդհանրական բնոյթ ունի, մի մասը՝ մասնակի, ըստ այդմ բանական արուեստի կայուն եւ ընդհանրական դասին է պատկանում գիրքը, անցողական եւ մասնակի բանական «արուեստների» չարքին՝ մրմունջքները եւ ինքնամփոփ մտածողութիւնը. իսկ գործնական կամ «անբան» արուեստներից կայուն եւ ընդհանրական չարքին պատկանում են բերդերը, ջրհորները. մինչդեռ անցողական եւ մասնակի՝ բոլոր աննկատ կամ պրոցեսային աշխատանքները, որոնք հետք չեն թողնում ֆանէբացական ձեւով։

23. «Քերդողութեան արուեստ»։ Բանաստեղծական արուեստ, վիպասանութիւն (չափածոյ)։ 2. Համանիշ է՝ «արուեստ քերականութեան»։

24. Դիոնէսիոսը նոյն Դիոնիսիոս Թրակացի քերականն է (տե՛ս ծան. 1)։

25. Հերովդիանոսը մ.թ. 2-րդ դարի յոյն նշանաւոր պատմաբան է, Մարկոս Աւրելիանոս կայսեր օրօք համբաւ ձեռք բերած։ Երկար ժամանակ գործել է Հռոմում։ Հեղինակ է ութ հատորից բաղկացած պատմագրական երկի՝ յունարէն «ընտիր» լեզուով։ Նրան է վերագրուում նաեւ քերականական մի աշխատութիւն, որը եւ ակնարկուում է այստեղ (տե՛ս «Վարք երեւելի արանց», հ. Ա, էջ 624–25)։

26. Ապողինարը, ինչպէս պարզուած է մասնագիտական գրականութեան մէջ (տե՛ս Gram. Graeci I, III, p. 129, Christ, Geschichte des gr. litterature, Ն. Ադոնց, նշուած աշխատ., էջ III, Առաքելեան, Գ. Ջահուկեան, «Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները...», էջ 29) Ապոլլոնիոս Դիսկոլոսն է, որը ապրել է 2-րդ դարի երկրորդ կէսին. նախապէս իր գործունէութիւնը ծաւալել է Հռոմում, յետագայում՝ Ալեքսանդրիայում, ուր եւ, իբրեւ քերական, հռչակ ձեռք բերել։ Գերազանցապէս յայտնի է յունարէնի չարահիւսութեան մասին գրած աշխատութեամբ ("Περὶ Συντάξεως"), որն անծանօթ է մնացել, տարաբախտաբար, հայ իրականութեանը։

27. Պասիփան Ապոլլոնի դուստրն է կամ Արեւի. իր ծնունդով պարտական է կրէտա կղզու թագաւորի կենակցին՝ յաւերժահարս Փերսէիդէին։ Ըստ առասպելաբանութեան, Պասիփան ցուլի հետ կենակցելով ծնում է Մինոտաւրոսին, որ հայերէն նշանակում է «Մինոսացուլ»։ Ի դէպ, այս առասպելը մեկնել են հետեւեալ կերպ. «Տաւրոս» բառը նշանակել է «ծուլ», իսկ այդ անուամբ եղել է մի սպարապետ Մինոս թագաւորի, որը կենակցելով նրա դստեր հետ, մի որդի է ունեցել նրանից եւ նորածինին անուանել են «Մինոտաւրոս»։ Երբ այս հրէշը մեծանում է, Մինոս թագաւորը նրան արգելափակում է Լաբիրինթոսում, ուր եւ սպանւում է Թէսէոսի կողմից (տե՛ս «Վարք երեւելի արանց», հ. Բ, էջ 156–57)։

28. Դինաո, ըստ աւանդապատումի, ծակոր նահապետի դուստրն էր, իսկ մայրը՝ հօր քեռու աղջիկը՝ Լիան։ Երբ ծակոր նահապետը եղբօր հետապնդումներից փախչելով հասնում է աղջիկը՝ Լիան։ Երբ ծակոր նահապետը եղբօր հետապնդումներից փախչելով հասնում է Սիւքեմ բնակավայրը, տեղի իշխանորդին Դինայի հետ կենակցում եւ պղծում է նրան։ Դինայի երկու եղբայրները համաձայնում են տալ իրենց քրոջը կրիսպոսին կնութեան՝ պայմանով, որ Սիւքեմի բնակիչները թլփատման ենթարկուեն։ Մինչ այդ՝ եղբայրները անակընկալօրէն յարձակւում են քաղաքի վրայ եւ սրի քաշում մեծ մասին, իսկ բնակավայրը իրենց հօր իշխանութեանը ենթարկում։ Ահա այս միջադէպը նկատի պէտք է ունեցած լինի Ծործորեցին՝ Դինայի եւ կրիսպոսի մասին ակնարկելիս։

29. Պատմական Հայաստանի բարբառների մեկնութեան հիմքը ամբողջութեամբ պատկանում է Ստեփանոս Սիւնեցուն։ VIII դարի այս հեղինակը չափազանց արժէքաւոր տեղեկութիւն է յայտնում այդ ժամանակաշրջանում Հայաստանում գոյութիւն ունեցող բարբառների մասին, որոնք անգնահատելի հաւաստում են հայոց լեզուի պատմութեան զարգացման անցած ուղու վերաբերեալ։ Ստեփանոս Սիւնեցին, ելնելով բարբառների դասակարգումը աշխարհագրական դիրքից բնորոշելու սկզբունքային կարեւորութիւնից, որը եւ պայմանաւորում է այս կամ այն բարբառի յարաբերական հասկանալիութիւնը, երեք բաժանում է կատարում. դրանք են՝ ա) Հայաստանի ծայրամասերում՝ «չուրջերկրեայ» բարբառներ, հեղինակի արտայայտութեամբ՝ «զբառն գեգերականսն», որոնց մէջ ընդգրկուում են՝ կորճայքի, Տայքի, Խութի, Ջորրորդ Հայքի, Սպերի, Սիւնիքի եւ Արցախի բարբառները։ բ) Երկրի ներսում եղած բարբառները, հեղինակի խօսքով՝ «զբառսն միջերկրեայսն», եւ վերջապէս, գ) մայրաքաղաքային, կենտրոնական բարբառը, որը կոչւում է «ոստանիկ»։ Սա հայ մատենագրութեան մէջ բարբառների առաջին դասակարգումն է՝ նրանց աշխարհագրական դիրքի մեկնաբանմամբ (տե՛ս Ա. Ղարիբեան, «Հայ բարբառագիտութիւն» Երեւան, 1953, էջ 80–81)։

30. Կորճայքը մատենագրութեան մէջ հանդիպում է նաեւ «Կորճէք» ձեւով։ Հայաստանի վեցերորդ նահանգն է. այն յիշատակւում են Փաւստոսը եւ Խորենացին։ Ենթադրւում է, որ Կորճայքը Սալմաստին անմիջապէս մերձ նահանգ է. «Ուրմիոյ լճին արեւմտակողմն էր,– գրում է Հ. Հիւբշմանը,– ճիշդ հոն՝ ուր այսօր կեցած է պարսկական Սալմաս քաղաքը..., ուստի Տիգրիսի վրայ գտնուող Կորդուաց երկրէն բաւական հեռու էր» («Հին հայոց տեղւոյ անունները», Վիեննա, 1904, էջ 65)։ Արշակունիների օրօք Կորճայքը հանդիսանում էր Մեծ Հայքի չորս բդեշխութիւններից մէկը եւ մատենագրութեան մէջ գերազանցապէս յայտնի է որպէս «Կորդուաց բդեշխութիւն»։ Ծատկանշական է, որ Կորդուաց կամ Կորճէից բդեշխը Արշակունեաց ժամանակ դիտուել է իբրեւ «երկրորդ սահմանակալն Ասորեստանեայց կողմանէն» (տե՛ս Ս. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 60)։ Ակադ. Ա. Ղարիբեանը իր բարբառագիտական ուսումնասիրութիւններում հաւաստում է նոյնպէս, որ Կորճայքի բարբառը Ուրմիայի բարբառն է (տե՛ս «Համառօտութիւն հայ բարբառագիտութեան», Երեւան, 1941, էջ 24)։

31. Տայքը նոյնպէս ծայրամասային գաւառ է (14-րդը թուարկմամբ)։ Այն եղել է Մամիկոնեների տիրոյթը։ Փաւստոսը Տայքը անուանում է «աշխարհ» եւ «գաւառ». Եղիշէն՝ «ժողագաւառ», Փարպեցին՝ «գաւառ»։ «Հայաստանի բաժանման ատեն 387-ին Տայք մնաց Խոսրով թագաւորին բաժնին մէջ,– գրում է Հիւբշմանը,– 428-ին Պարսից գերիշխանութեանը տակ մտաւ, 450-ին մասնակցեցաւ Հայոց այն չարժմանը, որով պարսիկներէ ապստամբեցան, եւ 591-ին Հռոմայեցւոց պետութեան անցաւ, որուն մէկ գաւառն ըրաւ Մաւրիկոս Տայքը՝ «Խոր-

գոյն Հայք» անունով (անդ, էջ 116–17)։ Ակադ. Ա. Ղարիբեանը Տայքի բարբառը համարում է «այժմեան Արդուինի բարբառի նախնին» (տե՛ս «Հայ բարբառագիտութիւն», Երեւան, 1953, էջ 80)։

32. Խութի բարբառը *խութեցիների խօսուածքն է։ Տեղանքը՝ Աղձնիքի եւ Տարօնի միջեւ գտնուող լեռնաբնակ վայր է։ Այն մատենագրութեան մէջ հանդիպում է «Խոյթ» եւ «Խութ» գրութեամբ։ Տեղանքի այս անուանումը Թովմա Արծրունին ժողովրդական ստուգաբանութեան ենթարկելով՝ բխեցնում է նրա բնակչութեան վայրենաբարոյ նկարագրից եւ լեզուի խրթնաբան բնոյթից. «Եւ կոչին սոքա մեկնազնիք սուրհանդակք,– գրում է պատմիչը,– բնակեալք ի լերինն որ բաժանէ ընդ Աղձնիս եւ ընդ Տարօն. եւ յաղագս խրթնի եւ անհետազօտելի խօսիցն եւ բարուցն կոչին Խութ, յորոց անուն եւ լեառն Խոյթ անուանի» («Թովմայ վարդ. Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 201)։ Ակադ. Ղարիբեանը իրաւացիօրէն «Խութի բարբառը սասունցիների խօսուածքն* է համարում (տե՛ս «Հայ բարբառագիտութիւն», էջ 80)։

33. Զորրորդ Հայքը *Բարձր Հայքից յետոյ երկրորդ նահանգն է։ Հիւբշմանի կարծիքով՝ «Զորրորդ Հայք անունը հայ մատենագրութեան մէջ 536-է ետք միայն կրնայ յիշուած ըլլալ» («Հին հայոց տեղւոյ անուննները», էջ 70)։ Ակադ. Ղարիբեանի հաւաստմամբ՝ «Զորրորդ Հայքի բարբառը Սալմաստի բարբառն է» (տե՛ս «Հայ բարբառագիտութիւն», էջ 80)։

34. Սպերացին *Թագաւիր Բագրատունիների տիրոյթն հանդիսացող Սպեր գաւառի բնակիչն է ու նրա բարբառը։ Տայքին սահմանակից է, Ճորոխ գետը անցնում է նրա միջով։ Այս երկրամասը յիշատակում է դեռեւս Հերոդոտը (տե՛ս Հիւբշման, նշուած աշխ., էջ 10–12, նաեւ էջ 132)։ Ակադ. Ղարիբեանը յայտնում է այն կարծիքը, որ «Սպերացոց լեզուն կարնոյ բարբառն է» (տե՛ս «Համառօտութիւն հայ բարբառագիտութեան», էջ 25, նաեւ «Հայ բարբառագիտութիւն», էջ 80)։

35 եւ 36. Պէտք է ենթադրել, որ դեռեւս VIII դարում Սիւնիքի եւ Արցախի բարբառները տարբերակիչ հակադրութիւններով էին օժտուած, այն է՝ իրրեւ Ղարաբաղի բարբառի տարբեր խօսուածքներ։

37. «Միջերկրեայ» բարբառները, *ինչպէս վերը նշուեց, երկրի ներսում, համեմատաբար կենտրոնական մասին մերձ եղող բարբառներն են։ Ա. Ղարիբեանի համոզմամբ՝ «Արարատեան, կարնոյ, Մշոյ եւ այլ բարբառները, որոնք եղել են միջերկրեայ բարբառներ» (տե՛ս «Հայ բարբառագիտութիւն», էջ 81)։

38. «Ոստանիկ» բարբառը *մայրաքաղաքի, կենտրոնի բարբառն է, որն առաւել հասկանալի, ընտիր, մշակուած, կիրթ լեզուական համակարգ է՝ գրական լեզու դառնալու բոլոր բարեմասնութիւններով օժտուած, մանաւանդ՝ պետական–վարչական լեզու հանդիսանալու իր վճռական նշանակութեան չնորհիւ։ «Ոստան» տերմինը 4–5րդ դարում նշանակում էր արքունիքին պատկանող տիրոյթ, յետագայում՝ «թագաւորանիստ կամ իշխանանիստ» քաղաք, մայրաքաղաք (Ստ. Մալխասեան, «Բացատրական բառարան», հ. 3, էջ 579)։ Այդ իսկ պատճառով «ոստանիկ» տերմինը արտայայտում էր մայրաքաղաքի բնակիչ, ինչպէս եւ թագաւորական տոհմի ներկայացուցիչ։ Իսկ «ոստանիկ բարբառը» հէնց այն խօսուածքն է, որը գրական լեզուի մակարդակի բարձրացաւ ի դէմս դասական հայերէնի՝ V դարի գրաբարի։

*Ուշագրաւն այն է ծանօթագրուող այս հատուածում, որ Ստեփանոս Սիւնեցին տաղաչափութեան համար պիտանի «լեզուներ» է համարում ոչ թէ «եզերական», այն է՝ ծայրամասային անմշակ ու կոպիտ բարբառները իրենց անհասկանալիութեամբ, այլ՝ «ոստանիկ» եւ «միջերկրեայ» բարբառները, որոնք առաւել յղկուած եւ կիրթ «լեզուներ» են։ Այս հետեւութիւնը միանգամայն ճիշդ է եւ փաստարկուած։

39. Արիստոտէլը *անտիկ աշխարհի «համապարփակ» մտածողն է, Պլատոնի բազմաքանքար աշակերտը, որն ապրել է 384–322 թթ. մ.թ.ա.։ Նա կոչւում է նաեւ Ստագիրացի՝ Ստագիրում ծնուած լինելու պատճառով։ Եղել է Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը, համարւում է ճեմարանների («պերիպատետիկեանների դպրոցի») հիմնադիրը։ Իր ժամանակակիցների կողմից բնութագրուել է իրրեւ «իշխան փիլիսոփայից»։ Ունի բազմաթիւ մեծարժէք աշխատութիւններ փիլիսոփայութեան, տրամաբանութեան, բնագիտութեան, ճարտասանութեան, առաքինութեան տեսութեան վերաբերեալ, որոնք ամբողջ միջնադարում ենթարկուել են յարաճուն մեկնութիւնների բազմաթիւ քաղաքակիրթ ժողովուրդների մատենագրութիւններում։ Դրանք, իբրեւ հիմնական դասագիրք, կիրառութիւն են գտել նաեւ միջնադարեան համալսարաններում։ Հայ դպրութիւնը դեռեւս VI դարում Արիստոտէլի մի շարք կարեւորագոյն աշխատութիւնները թարգմանելով՝ զարգացրել է հայ գիտական մտածողութիւնը տեսութեան տարբեր բնագաւառներում։

40. Դիոնիսիոսը *անուանւում է նաեւ «Սպանդարամետ» եւ «Բաքոս»։ Ծուննական դիցաբանութեան վկայութեամբ՝ Արամազդի եւ Սէլէի որդին է դիտւում գինու ստեղծողը, այտեղից եւ՝ խորհրդանիշ ցոփութեան եւ չուայտութեան։ Մատենագրութեան մէջ Բաքոս անունը շատ յաճախ համարժէք է գինուն, իսկ «Տաճար Բաքոսի» արտայայտութիւնը՝ գինետան, «Խնկարկու Բաքոսի» արտայայտութիւնը՝ հարբեցողի, ցոփութեան հակամէտ մարդու։

41. Հեղինակը *հնագոյն հայ վիպասանութեան մէջ «լալեաց բանաստեղծութիւնների» կապակցութեամբ է յիշում Արտաշէսին։ Ինչպէս յայտնի է Խորենացու հաղորդումներից, հայոց Արտաշէս թագաւորի մահուան առթիւ «չուրջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահունք», «ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք եւ հարճք եւ մտերիմ ծառայք» (Խոր. Բ, 4)։ Խօսքը վերաբերում է անշուշտ Արտաւազդեան Արտաշէսին։ Ղ. Ալիշանը «եղերերգական երգ» է բնորոշում վիպասանական այս յուշը Արտաշէսի մահուան առթիւ ստեղծուած (տե՛ս «Բազմավէպ», 1850, էջ 345)։

42. Նկատի ունի, *ըստ երեւոյթին, Խորենացու պատմութեան երկրորդ գրքի ԽԸ պարբերութեան պատմական դէպքերի նկարագրութիւնը, ուր հաղորդւում է այն պայքարի մասին, որ ծաւալւում է Արտաշէսի եւ Երուանդի միջեւ, բազարանի ամրոցի գրաւման, Երուանդի եղբօր՝ Երուազի սպանման եւ պարսից թագաւոր Դարեհին ընծաներ ուղարկելու մասին եւ այլն, որոնք գրառուած են պարսից մատեաններում։ Ղ. Ալիշանը փորձում է ճշդել վիպասանական այս յիշեցումների բնոյթը՝ գրելով. «...միայն քանի մը ուրիշ վիպասանական այս յիշեցումների բնոյթը՝ գրելով. «...միայն քանի մը ուրիշ վիպասանական են քիչ ճանչցուած երգերն յիշենք, որոնցմէ մէկը Արտաշիսի, մէկն ալ Դարեհի մահուան վրայ եղերերգական երգեր են, ինչպէս կը յիշեն հին քերականի մեկնիչք, առանց իմացնելու Մէ ո՛ր Արտաշիսի եւ ո՛ր Դարեհին վրայ գրուած էին. միայն այս յայտնի կ'երեւայ որ Ժ եւ ԺԱ դարերու մէջ ալ դեռ Հայաստան կը գտնուէին այս երգերս եւ թերեւս դեռ գտ|ն|ուին, գուցէ վերոյիշեալ Մագիստրոսէն բերածնիս ալ Արտաշիսի դամբանականէն ըլլայ» («Բազմավէպ», 1850, էջ 345)։

43. «Դաւթեան *քերդուքիւն»։ Ակնարկում է Դաւիթ Անյաղթին վերագրուող վիպասանական երկը Մեծն Տիգրանին եւ նրա քրոջ՝ Տիգրանուհուն ձօնուած, որից պահպանուել է միայն մի բեկոր՝ 3 տողից բաղկացած, այն էլ՝ միայն քերականական մեկնութիւններում, ինչպէս այն առկայ է նաեւ սոյն բնագրում։ Այլ կերպ՝ Դաւթեան քերթութիւնը ճանաչւում է գտել «Պատերազմն Հայոց եւ Մարաց» յորջորջմամբ։ Ըստ Ալիշանի՝ «կ'երեւայ թէ անոր վրայ (իմա՝ Մեծն Տիգրանի – Լ. Խ.) չինած հին Հայկազանց վիպասանութեան կտորները գտեր, եւ անկէ չարժեալ՝ նոր տաղաչափութեամբ գրեր է իր վիպասանութիւնը» Դաւիթը (տե՛ս «Բազմավէպ», 1850, էջ 345)։ Իսկ Ստ. Մալխասեանցը ենթադրում է, որ «Դաւթեան քերթութիւնը» նոյնն է, ինչ Խորենացու յիշատակած «չորս հագներգութիւնք» ժողովրդական ստեղծագործութիւնը, որից օգտուելով Խորենացին չարադրել է Մեծն Տիգրանի ռազմական գործողութիւններն ու պետական գործունէութեան պատմութիւնը (տե՛ս «Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն», աշխարհաբար թարգմանութիւն Մալխասեանցի, Երեւան, 1940 թ., էջ 270, ծանօթ. 69)։ Մ. Աբեղեանը «Հայ գրականութեան պատմութեան» մէջ Դաւթեան քերթութիւնը բնութագրում է իրրեւ «Մեծ Տիգրանի վէպ» (Երկեր, հ. Ա, էջ 97)։

44. «...յաղագս *Տիգրանայ»։ Նկատի է ունեցուած «Դաւթեան քերթութեան» վիպական հերոս Մեծն Տիգրանը, որի մասին բերուած չափածոյ վկայակոչումը «դամբանական» խօսքի բնոյթ ունի, որը եւ հիւսուած է Մեծն Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու մահուան առնչութեամբ. Դաւիթը «գրեր է, ինչպէս յայտնի կ'իմացնեն,– նշում է Ղ. Ալիշանը,– Տիգրանուհւոյ մահուանը վրայ հին ատեն երգուած դամբանական երգը եւ այն երգն ալ իրեն ոճովը խառներ է վիպասանութեանց մէջ, ուր կը յիշէ թէ Փողարը, այսինքն հին դամբանական երգիչը անանկ վարպետութեամբ կ'երգէր ողբը, որ Տիգրանայ սրտէն անցածը՝ դուրս կը բացատրէր» («Բազմավէպ», 1850, էջ 345)։

45. Դեբովրան կամ Դեբորան հրեայ մարգարէուհի է եղել, ըստ աւանդապատումի, 1285 տարի առաջ մ.թ.: Նա, ըստ իր սովորութեան, արմաւենու տակ նստած դատաստան է արել եւ մարգարէութիւններ գուշակել, այդ պատճառով էլ իր նստավայրը կոչուել է «Արմաւենի Դեբորայ»: Գործուն մասնակցութիւն է ունեցել հրեաների ազատագրմանը՝ քանանացիների գերութիւնից. ըստ աւանդական զրոյցների՝ յաղթանակի ելքը պայմանաւորուած է եղել «գեղեցիկ այն երգաբանութեամբ», որ Դեբորան երգել է, որով ոգեշնչելով իր ազգակիցներին՝ հնարաւոր է դարձել հրէական փոքրաթիւ զօրքով յաղթանակ տանել ընդդէմ քանանացիների մեծաթիւ զօրքերի: Կարծիք է յայտնուած նաեւ այն մասին, որ Հոմերոսի «Իլիականի» համար իբրեւ «ուղեցոյց աստղ» է ծառայել Դեբորայի չարադրած այս երգը (տե՛ս «Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց», Վենետիկ, 1850, էջ 254–55):

46. Սիսարան Դեբորա մարգարէուհուն ժամանակակից է, քանանացիների թագաւորը եւ նրանց զօրքերի հրամանատարը, որին եւ սպանում է Դեբորայի հրամանատար իսրայէլացի Բարակ զօրավարը:

47. Այս Դաւիթը հրեաների նշանաւոր թագաւորն է, որն իր պատանեկութեան ժամանակ յաղթում է Սաւուղին եւ յաջորդում նրան իբրեւ թագաւոր:

48. Ցովնաթանը, բիբլիական աւանդապատումի համաձայն, Սաւուղ թագաւորի որդին էր, որն, իբրեւ թագաժառանգ, պէտք է յաջորդէր Սաւուղին՝ նրա մահուանից յետոյ: Սակայն, լինելով ականջալուր ժողովրդի պահանջներին ու ցանկութեանը, իր տեղը զիջում է Դաւթին: Եւ երբ Սաւուղի հետ միատեղ ընկնում է պատերազմի դաշտում, Դաւիթը ձօնում է նրան մի երգ՝ հետեւեալ խօսքերով. «Ցաւ լիցի ինձ ի վերայ քո, եղբայր իմ Ցովնաթան, գեղեցկացար ինձ յոյժ, զարմանալի եղեւ սէր քո ինձ...» (տե՛ս «Վարք երեւելի արանց», հ. Ա, էջ 951–52):

49. Սաւուղը հրեաների առաջին թագաւորն էր Բենիամինի ցեղից, եւ, ըստ բիբլիական աւանդապատումի, 1095 տարի Քրիստոսից առաջ յաջող պատերազմներ է մղել կռապաշտների դէմ:

50. Գեղրուայ լեռը գտնւում է Ցորդանան գետի մօտ: Այստեղ ծաւալուած ճակատամարտում զոհւում են Սաւուղ թագաւորն ու նրա որդին՝ Ցովնաթանը:

51. Ապոլլոնը նոյնպէս Զեւսի որդին էր. դիցաբանութեան մէջ նա համարւում է բժշկութեան եւ գուշակութեան հայրը, ինը մուսաների պարագլուխը եւ լոյսի աղբիւրը: Պաշտուել է իբրեւ հեթանոսական աստուած, քանդակներում նրան ներկայացրել են իբրեւ անմօրուս գեղեցիկ պատանի, ձեռքին՝ քնար, ոտքերի առջեւ՝ նուագարան:

52. Խօսքը վերաբերում է Հոմերոսի երկու հանրաճանաչ ստեղծագործութիւններին՝ «Իլիականին» եւ «Ոդիսականին»:

53. «Ս.Ցարութեստ խաւսֆ եւ արձակ եւ բարբարիկոն լեզու»: Մաշտոցեան գրերի քանակային «չատութեան» վերաբերեալ բացատրութեան առաջին մասը համեմատաբար աւելի առածգական է եւ տարատամ: «Անարուեստ խաւսք» ասելով կարելի է հասկանալ ռամկական խօսակցական լեզուն՝ ի տարբերութիւն նրա գրական մշակուածութեան ենթարկուած «արուեստաւոր» լեզուի: Բայց եւ «անարուեստ խաւսք» ասելով կարելի է հասկանալ նաեւ «բարբառային խօսուածք» կամ պարզապէս բարբառ: Իսկ ինչ վերաբերում է «բարբարիկոն լեզու» արտայայտութեանը, ապա դա չէր կարող իրեւ «բարբառ» ըմբռնուել Դաւթի կողմից (աղբիւրը Դաւթի «Սեկնութիւն քերականի» աշխատութիւնն է, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», No. 3, 1954), որովհետեւ «բարբարիկոն լեզու» բառակապակցութեան իմաստը չի առնչւում «բարբառ» հասկացութեանը, այլ դա նշանակել է, դեռեւս վաղնջական ժամանակներից, պարզապէս «օտար՝ ոչ մայրենի լեզու», կամ, որ նոյնն է՝ «այլալեզու խօսուածք»: Ընդսմին այդ արտայայտութիւնը փոխառութիւն է յունարէն βαρβαρικόν բառի, որ նշանակել է «ոչ յունարէն՝ օտար լեզու»: Հետեւաբար՝ Դաւթի մօտ օգտագործուածը պէտք է ըմբռնել որպէս հայերէնի կողքին օտար փոքրամասնութիւնների կիրառած «ոչ-հայերէն» լեզուները, որոնք շատ հաւանաբար եղել են V-VI դարերի դարերի Հայաստանում: Բայց ինչպէս էլ ըմբռնելու լինենք «անարուեստ խաւսք» եւ «բարբարիկոն լեզու» արտայայտութիւնները, միեւնոյն է, դրանք չէին կարող նշանակութիւն ունենալ մաշտոցեան գրահամակարգի հիմքում ընկած ընդհանուր եւ միասնական արտասանական բազայի համար՝ եթէ իրօք դրանք նոյնիսկ բարբառային կամ



այլալեզու հնչոյթային հակադրութեամբ տարբերակուած լինէին մեսրոպեան հայերէնից: Իրականում՝ Մաշտոցը ոչ միայն Հայաստանում տակաւ բոլոր բարբառների հնչոյթային տարբերակումների ընդգրկումով համադրեց ու յօրինեց իր գրահամակարգը, այլ միայն մէկ իսկական լեզուի արտասանական բազայի հնչոյթային արժէքների բացայայտումով ստեղծեց հայերէնի այբուբենը, ըստ որում հիմք ընդունելով այն ժամանակ վարչա-քաղաքական կեդրոն հանդիսացած եւ էթնիկական լեզուի հասարակական դերով օժտուած Արարատեան դաշտավայրի իսկական լեզուն:

54. «Պարէս ումն տրովացի» Պրիամոս թագաւորի որդին էր, որը Սպարտայի Մենելաւոս թագաւորի կին գեղեցկուհի Հեղինէին առեւանգելով պատճառ է դառնում Տրոյան պատերազմի:

55. Դիոմիդէսը յիշւում է «Իլիական»-ում իբրեւ Ոդիսեւսի գինակից. վերջինիս հետ միասին որպէս թէ նա վիրաւորած է եղել Տրոյան քաղաքի պաշտպան աստուածուհուն:

56. Բոլոր ձեռագրերը տալիս են «Պրիամուս» ազաւաղուած ձեւը փոխանակ «Պարիսի». պատմականօրէն՝ Պրիամոսի որդին Պարիսն է եղել, եւ ոչ՝ Պրիամուսը. անյարիր բան է ստացուել. դա պարզապէս մեխանիկական բնոյթի վրիպում է: Ուղղում ենք ըստ Ադոնցի, տե՛ս նշուած աշխատ., էջ CLX-CLXI:

57. Պատրոկլէսը Հոմերոսի «Իլիական»-ում յիշւում է որպէս Աքիլլէսի ամենամտերիմ ընկերը, որը, վերցնելով Աքիլլէսի գէնքերը, մենամարտի է դուրս գալիս Տրոյայի թագաւոր Պրիամոսի ամենափոքր որդու՝ Հեկտորի դէմ եւ մարտադաշտում սպանւում վերջինիս կողմից: Այս դէպքը փոխում է իրադարձութիւնների ամբողջ ընթացքը՝ ստիպելով Ագամեմնոնից խռով Աքիլլէսին, որ նա յանուն իր սիրելի ընկերոջ՝ Պատրոկլէսի, վրէժխնդրութեան անհուն ցասումով լցուած նորից մտնի ռազմադաշտ, որով եւ ապահովում է յոյների յաղթանակը տրոյացիների դէմ:

58. Նեստորը Հոմերոսի «Իլիականի» դրական հերոսներից է, որի մասին ասուած է՝ «Նեստոր ումն ծեր, հմուտ պատերազմի...»:

59. Բոլոր ձեռագրերը տալիս են «Մաքսան» ազաւաղուած անունը. ուղղում ենք ըստ հիմքի՝ «Հաւաքումն մեկնութեան քերականի»՝ «Մաքաոն» ճիշդ անուամբ (տե՛ս մեր աշխատասիրութիւնը, «Հաւաքումն մեկնութեան քերականի», էջ 183): Մաքաոնը Հոմերոսի «Իլիականի» գործող դէմքերից է, որն իբրեւ բժիշկ մասնակցում է Տրոյան պատերազմին Աքիլլէսի բանակում:

60. «Ով այիովս ապաւստաւլաւս» յունարէն նախադասութեան հայերէն տառադարձութիւնն է, ինչպէս՝ ὁ ἅγιος ἀπόστολος , որի իմաստային բովանդակութիւնը ճշդութեամբ տրուած է չարունակութեան մէջ՝ «այսինքն՝ սուրբ առաքեալք» (էջ 198):

61. «Իայէ իայէ Աւղաւկաւս»՝ դարձեալ յունարէն նախադասութեան հայերէն տառադարձութիւնն է, ինչպէս՝ ἡ ἁγία Ἐδδοκία , որ նշանակում է՝ «սուրբ Եւդոքիա», որը չի ներկայացուած բնագրում:

62. «Տաւբսաւյա|յ|»՝ յունարէն բառի հայերէն տառադարձութիւնն է, ինչպէս՝ τὸ Ἑβδο(ν), որ նշանակում է «ծառ», «փայտ»:

63. «Տօ»՝ հայերէն տառադարձութիւնն է յունարէն չէզոք սեռի յօդի՝ τό :

64. Տուեալ դէպքում Մորթորեցին անդրադառնում է լատիներէնի ածականի սեռացուցիչ վերջաւորութիւններին, որոնք իրօք ունեն us, a եւ um ձեւերը, իսկ հայերէն տառադարձած «ալպուս», «ալպա» եւ «ալպում» բառաձեւերը լատիներէն «սպիտակ» բառիմաստն արտայայտող "albus", "alba", "album" բառաձեւերն են, որոնք համապատասխանաբար արտայայտում են նշուած բառօյքի արականը, իգականը եւ չէզոքը: Լատիներէնի «անուան» (առաւել ստոյգ՝ ածականի) այս քերականական օրինաչափութեան բացատրութիւնը առաջին անգամ տալիս է Մովհաննէս Մորթորեցին իր սոյն աշխատութեան մէջ եւ որը իսպառ բացակայում է Մովհաննէս Երզնկացի Պլուզի «Հաւաքումն Մեկնութեան քերականի» երկում: Հետեւաբար հիմնադրուրկ յայտարարութիւն պիտի համարել Մովհան Քռնեցու քերականական Մեկնութեան հրատարակիչների պնդումն այն մասին, որ իբր «սեռանիշ տեսութեան աղբիւրը» Մովհաննէս

*երգնկացու [ᵖᵖᵖ] եւ Ցովհաննէս Մորձորեցու քերականութիւններն են: Այս առնչութեամբ Առաջաբանում ասուած է. «Համառօտ հաւաքման» մէջ հայերէնին վերագրուած անունների, նաեւ դերանունների սեռանիշ մասնիկների մասին տեսութեան ադրիւրը համարելով Ցովհաննէս Երգնկացու [sic!] եւ Ցովհաննէս Մորձորեցու քերականութիւնները, անհրաժեշտ ենք համարում այդտեղից մէջբերել յատիներէնի սեռային կարգի մասին հեղինակների [ᵖᵖᵖ] դատողութիւնները. իսկ հռոմայեցոյն եւս յատուկ, բանզի անուն պատահական (= մակադրական, ածական), որ ունիցի յանգի իւրում գոս՝ արական է, եւ որ ունի գայ՝ իգական է, իսկ գում՝ չէզոք է. այսպէս՝ ալպուս, ալպա, ալպում... (Մատենադարան, ձեռագիր 7037, էջ 39ա , Ցովհաննէս Փոնեցի. Ցաղագս քերականին, աշխատասիրութեամբ Լ. Խաչիկեանի եւ Ս. Աւագեանի, Երեւան, 1977, էջ 69):*

*Մատնանշուած ձեռագրական ադրիւրը միայն Մորձորեցու «Համառօտ տեսութիւն քերականին» երկն է, որից եւ քաղուածքը մէջ է բերուած, բայց եւ անհիմն կերպով վերագրուած է նաեւ Ցովհաննէս Երգնկացու աշխատութեանը. այս թիւրիմացութիւնը չէր լինի, եթէ Առաջաբանի հեղինակակիցները նեղութիւն կրկին գէթ սուգելու բնագրային իրենց թիւր վկայակոչումը: Դժբախտութիւնն էլ հէնց այն է, որ բնագրի հրատարակիչները իրենց «նպատակներից դուրս» են համարել հրատարակուող երկի բնագրագիտական վերլուծութիւնը, բայց եւ բնական համարել իրենց Առաջաբանի խճողումն ու սուտաբացումը բնագրի հետ չառնչուող բազմապիսի ու խառնիճաղանճ տեղեկութիւններով. մի կողմ թողած բնագիր հրատարակելու համար նախատեսուող բուն խնդիրները, Առաջաբանի հեղինակակիցները նոյնիսկ փորձում են «հիմնաւորել» իրենց չպատճառաբանուող անհարկի չեղումներն ու խճողումները. «Փոնեցու քերականութեան անմիջական ազդեցութիւնը հայ քերականագիտական մտքի յետագայ րնթացքի վրայ հաւաստիօրէն կարելի է որոշել «Համառօտ հաւաքման», նրա ադրիւրների եւ նոյն բնոյթի յաջորդ քերականութիւնների բնագրագիտական զուգորդութիւնների ու համեմատական քննութեան միջոցով, մի բան, որ դուրս է մեր նպատակներից եւ արժանի առանձին հետազօտութեան...» (անդ, էջ 147): Եւ սա ա՛յն դէպքում, երբ ընդամէնը Ցովհաննէս Փոնեցու քերականական երկի մէկ Ձեռագրի արտատպութիւնը իրականացնելու համար ընդգրկուել են մէկ ակադեմիկոսի եւ երկու գիտութեան թեկնածուների միացեալ ջանքերը: Բանից պարզւում է, որ Փոնեցու բնագրի ձեռագրական մէկ տարբերակի արտատպութեան կէտադրութիւնն անգամ ճշդելու համար ակադեմիկոսը հարկադրուած է եղել դիմելու, իր իսկ խոստովանութեամբ՝ «մասնագէտի»... օգնութեանը. «Ձեռագրի կէտադրութիւնը,– գրում է Լ. Ս. Խաչիկեանը,– չկնուած է բան արդի կէտադրական կանոնների: Այս գործում մեզ օգնել է Մատենադարանի գիտական աշխատող Ս. Զէյթունեանը, որին յայտնում ենք շնորհակալութիւն» (անդ, էջ 151):*

*Իսկ Փոնեցու երկում օգտագործուած մինչեւ իսկ չարահիւսական եզրերի մասին հեղինակակիցների ունեցած թիւր ըմբռնումների, չփոթ ու ճապաղ մեկնաբանումների քննադատութիւնը տե՛ս Ց. Ն. Սիրխարեանի աշխատութիւնում, որ վերնագրուած է՝ «Էջեր հայ չարահիւսութեան պատմութիւնից (5–15–րդ դարեր)», Կիրովական, 1979, Ձեռագրի իրաւունքով, էջ 30–91:*

65. «Զի արականն ունի առաջի իւր իբ, եւ իգականն՝ էբ, եւ չէզոքն՝ օբ»: *Այս երեք սեռանիշ ձեւոյթները լատիներէնի համապատասխան* hic, haec, hoc *ցուցական «այս» դերանուան սեռականը, իգականը եւ չէզոքն են, որոնք, ըստ Մորձորեցու բացատրութեան, դրւում են գոյական անունների սկզբում. լատիներէնից առաջադրուած այս լեզուանմուշները իրենց մեկնութեամբ ունի միայն Մորձորեցին իր քերականական սոյն աշխատութեան մէջ, որից վերցրել է Ցովհան Փոնեցին. մինչդեռ Ցովհաննէս Երգնկացի Պլուզը իր Մեկնութեան մէջ բոլորովին անգիտանում է այդ մասին: Բայց դա ամենեւին չի խանգարել, որ Փոնեցու աշխատութեան հրատարակիչները «լրջութեամբ» պնդեն, թէ այդ հարցադրումը առկայ է եղել, իբր, նախ «Հաւաքումն Մեկնութեան քերականի» երկում, ապա նրա «հետեւողութեամբ» էլ... վերաքաղում է Մորձորեցին իր աշխատութեան մէջ: Բայց Փոնեցու Մեկնութեան Առաջաբանի հեղինակակիցները խճճուելով՝ առաւել անտրամաբանական «ենթադրութիւն» են անում՝ այս անգամ էլ պնդելով, թէ իրենք դժուարանում են «հաւաստիօրէն» որոշել՝ Փոնեցու սկզբնաղբիւրը ո՞րն է. գուցէ Փոնեցին ո՛չ Երգնկացի Պլուզից է քաղել (չեղածից ինչպէ՞ս կարող էր քաղել...), ո՛չ էլ Մորձորեցուց, այլ... բոլորովին ուրիշ աղբիւրներից: Առաջաբանում այս առնչութեամբ կարդում ենք. «Համառօտ հաւաքման» մէջ հայերէն անուններին ու դերանուններին յատուկ համարուած՝ իբ, էբ, օբ *սեռանիշ մասնիկները իրականում ներկայացնում են լատիներէնի* hic (արական), haec (իգական) եւ hoc (չէզոք) – «այս» ցուցական դերանուան հնչիւնափոխուած ձեւերը՝ hic = իբ, haec = էբ, hoc = ոբ, որոնք հայ էքերականագիտութեանը յայտնի են դարձել Երգնկացու (ᵖᵖᵖ) եւ Մորձորեցու երկերից: Հաւաստիօրէն դժուար է ասել, թէ*



*Փոնեցին որտեղից է քաղել այդ մասնիկները, արդեօք յիշեալ հայերէն քերականութիւններից, թէ լատիներէնի նկարագրութիւնից կամ երրորդի ունիթեոռական կենտրոններում ստեղծուած իմաստասիրական աշխատութիւններից» («Ցովհաննէս Փոնեցի. Ցաղագս քերականին», էջ 69–70): Փաստերի վերլուծութեան տարօրինակ տրամաբանութիւն. մի՞թէ հնարաւոր է, թողած նախընթաց յայտնի փաստերի հետ բացայայտ առնչութիւնը, ընկնել անյայտի անպտուղ որոնումների յետեւից...:*

66. «գկորճայ լեզուն» *Հայաստանի Կորդուաց աշխարհի բարբառն է, կոկորդախօս, դժուարահասկանալի, դժոխալուր. նոյնն է նաեւ «Գորդայ լեզուն»: «Կորճայք»-ը հանդիպում է նաեւ «Գորդայք» ձեւով:*

67. *Փրոֆ. Լ. Խաչիկեանը թիւրիմացութեան մէջ է, երբ պնդում է, յենուելով մասնաւորապէս այս հատուածի վրայ, որ իբր քերականական սոյն ճուշարձանում արծարծուած իմաստասիրական նման հարցադրումները հնարաւորութիւն են ընձեռում Մորձորեցու «փիլիսոփայական» հայեացքները ուսումնասիրելու՝ այն խարկանքն ունենալով, որ իմաստասիրական այդ հարցադրումները որպէս թէ Մորձորեցու «սեփական» մտորումների արդիւնքն են: Մինչդեռ դրանք առկայ են ինչպէս Վարդան Արեւելցու, այնպէս եւ բանաքաղային բնոյթի քերականական իր Մեկնութեան համար հիմք ծառայած Ցովհաննէս Երգնկացի Պլուզի եւ Եսայի Նչեցու աշխատութիւններում: Այսպէս, նա գրում է. Մորձորեցու «աշխատութիւնն արժէքաւոր է նաեւ հեղինակի փիլիսոփայական հայեացքների ուսումնասիրութեան առումով: Մասնաւորի (անհատի) եւ ընդհանուրի (տեսակի) յարաբերութեան հարցը քննութեան նիւթ դարձնելով, մեր հեղինակը մերժում է Պլատոնի իդէալիստական տեսակէտը, պաշտպան կանգնելով Արիստոտէլին. «Ցայսմ տեղւոջ,– գրում է նա,– արուեստաւորս (իմա Դիոնիսիոս Թրակացին) Արիստոտէլի կարծեաց հետեւի, որ զանհատն պատուական եւ առաջին գոյացութիւն վարկանի, քան զտեսակն, քէպէտ պղատոն զառասականն ասաց առաջին, իբր թէ ի տեսակաց ոմանց տիրական գաղափարեալս ըստ ժամանակի: Իսկ Արիստոտէլէս զիսկն ասելով, թէ տեսանելն հաստատուն է բան զլուրն, որպէս գարեգակն ոչ ոք կարէ ժխտել, որ է անհատ, իսկ զաներեւելի ինչ՝ բազումք, վասն որոյ եւ սա նախադասեաց զառասականին» («Բանբեր Մատենադարանի», No. 11, 1973, էջ 178): *Այս քաղուածքում ոչ մի միտք չկայ, որ Մորձորեցու մտայղացումը լինէր, ուստի եւ Մորձորեցին ոչ թէ «մերժում է պլատոնի իդէալիստական տեսակէտը, պաշտպան կանգնելով Արիստոտէլին», այլ... պարզապէս բանաքաղում է իր նախորդ քերական մեկնիչներին: Համեմատի՛ր.*

Վարդան Արեւելցի

*«Սակս իսկիդ եւ առասականիդ վէճ եղեւ, վասն զի պղատոն զառասականն յառաջ ասաց, քան զիսկն ժամանակաւ՝ որպէս ընդհանուր եւ նախագաղափար: Եւ Արիստոտէլէս զիսկն յառաջ ասաց՝ զՄարկոսն կամ զՄարիան, զի զոր տեսանես՝ այն է հաստատն. զքո մերձակայն՝ քան զանցած մարդկութիւնն, զլուեալն եւ զտեսեալն, զի արեգակն չկարէ ոք ուրանալ զոր տեսանէ, բայց զչտեսած իրն բազումք ուրանան...» (տե՛ս մեր աշխատասիրութիւնը՝ «Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի», 1972, էջ 114):*

Ցովհաննէս Երգնկացի Պլուզ

*«Եւ սկիզբն արարեալ յիսկէն, որ եւ վասն իսկիդ եւ առասականիդ հակառակութիւն եղեւ յոմանս: Պղատոն զառասականն ասաց առաջին՝ իբրեւ թէ ի տեսակաց ոմանց տիրական գաղափարաւ ըստ ժամանակի: Իսկ Արիստոտէլէս զիսկդ այսպիսի՝ թէ տեսանել հաստատուն է բան զլուր, որպէս գարեգակն ոչ ոք կարէ ժխտել, իսկ զաներեւելի ինչ՝ բազումք, վասն որոյ նախադասեաց զառասականին՝ տիրականս Մարկոս, քան զառասականն մարդ» (տե՛ս մեր աշխատասիրութիւնը՝ «Ցովհաննէս Երգնկացի. Հաւաքումն Մեկնութեան քերականի», Լոս Անճելըս, 1983, էջ 213):*

Եսայի Նչեցի

*«...Եւ սկիզբն արարեալ յիսկէն. բայց վասն իսկիդ եւ առասականիդ հակառակութիւն եղեւ յոմանց. Պղատոն զառասականն դասեաց առաջին, իբր թէ ի տեսակաց ոմանց, տիրական գաղափարեալս ըստ ժամանակի: Իսկ Արիստոտէլէս [ասէ] զիսկդ այսպիսի՝ թէ տեսանել հաստատուն է, բան զլուր, որպէս զարեգակն ոչ ոք կարէ ժխտել, իսկ զաներեւելի ինչ՝ բազումք: Վասն որոյ նախադասեաց՝ տիրականս Մարկոս, բան զառասականն՝ մարդ» (տե՛ս մեր աշխատասիրութիւնը՝ «Եսայի Նչեցի. Վերլուծութիւն քերականութեան», Երեւան, 1966, էջ 118):*

*Փաստացի այս առաղրումից յետոյ, մեկնաբանութիւնն, ինչպէս ասում են, աւելորդ է:*

68. Բնագրագիտութեան պահանջով պէտք է ճշդում մացնել «քերթուխիւն» տերմինի (էջ 282) կիրառման նկատմամբ: Իրականում՝ դեռեւս Թրակացու Քերականութեան ժամանակ թոյլ է տրուել չփոխուխիւն: Այսպէս, երրորդ մակրայատեսակը Թրակացին համարում է ποιότης կոչուող բառախումբը, որը հայ թարգմանիչը «քերդուխիւն» տերմինով է ներկայացրել, որով եւ մխագնուել է Թրակացու հարցադրումը: Հին յունարէնում ποιότης բառը նշանակում է «որակային», «բնոյխային», իսկ առաւել մերձ բնկալմամբ՝ «ձեւային»: Հետեւաբար՝ նշուած մակրայատեսակը պէտք է ըմբռնել եւ թարգմանել իբրեւ ձեւի մակբայներ, եւ ոչ թէ՝ «քերխուխեան» մակբայներ, որն անիմաստ է տուեալ դէպքում: Հայ թարգմանիչը, ըստ երեւոյթին, չփոխել է բնագրի ποιότης–ը հին յունարէնի ποίησις բառի հետ, որն իր բառիմաստով համրկնում է հյ. «քերխուխեան»–ը՝ «բանաստեղծուխեանը»: Քննենք նաեւ բնագիրն ու թարգմանուխիւնը ամբողջուխեամբ՝ ասուածի հաւաստիուխեան մէջ համոզուելու համար: Այսպէս, Թրակացին գրում է. « Τὰ δὲ ποιότητος, οἷον πόε, λόε, βοτροδόν ἀγεληδόν », (Ն. Ադոնց, նշուած աշխատ., էջ 31): Սրա հայերէն թարգմանուխիւնը տրուած է հետեւեալ կերպ. «Եւ քերխուխեանն, որպիսի մուրցացի, ծղացի, աքացի, ողկուգաւրէն, տարմաբար» (անդ): Համեմատուխիւնից պարզուում է, որ լեզուանմուշները երկու րնխերցումներում էլ նոյնական են. միայն հայերէնը յաւելադիր ունի «ծղացի» մակբայը, որը, հաւանաբար, յետագայ ընդօրինակումներում է ներմուծուած: Սակայն թուարկուած լեզուանմուշները, ամբողջուխեամբ վերցրած, հաստատում են, որ Թրակացին այստեղ նկատի է ունեցել ձեւի մակբայները: Հետեւաբար հայ թարգմանչի վրիպումը «քերդուխեան» տերմինի կիրառմամբ՝ առաւել քան ակնբախ է: Մի անգամ մուտք գործելով այս տերմինը նշուած ընխերցման հետ, այնուհետեւ հանդիպում է միջնադարի մեր բոլոր քերականական Մեկնուխիւններում անխտիր:



# ԲԱՌԱՑԱՆԿ

## ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՒ

## ԴԺՈՒԱՐԻՄԱՑ ԲԱՌԵՐԻ

**Ազգական** - *ազգ՝ տոհմ ցոյց տուող բառերը, քերականական առումով՝ իրրեւ առանձին անուանատեսակ:*

**Ալի** - *եզակին «ալիք» բառի, կոհակ, չերտ, տատանում:*

**Ախտ** - *կիրք, մոլուխիւն, մեղք, մարմնի տկարուխիւն, հիւանդուխիւն, ցաւ:*

**Ականց** - *անիւի գունդի ծակը, որի միջով անցնում է լիսեռը:*

**Աղի** - *յոգ. Աղիք – տեքստում՝ աղիքից պատրաստած նուագարանի լար:*

**Աղխել** - *փակել, կողպել, փականք դնել:*

**Այլազգ** - *ուրիշ տեսակ, այլ կերպ, այլ ձեւով:*

**Այլասեր** - *ուրիշից սերուած կամ ուրիշին սերող. ուրիշ սերնդից՝ ցեղից:*

**Անբաղյաւդ** - *յօդ չվերցնող կամ չընդունող (բառ):*

**Անգայտ** - *տաղաչափական տերմին, նչ. երկվանկ բառ՝ երկու սուղ ձայնաւորներից բաղկացած (⏑ ⏑):*

**Անգոսնեմ** - *արհամարհել, բանի տեղ չդնել, չտեսնելու տալ, պախարակել, պարսաւել, ականջ չդնել:*

**Անգուշնեմ** - *հոմանիշ Անգոսնել բայի:*

**Անդեայ** - *նախիր, երամակ խոշոր եղջերաւոր անասունների:*

**Աներեւոյթ** - *անորոշ դերբայ՝ սիրել, տանել, գրել:*

**Անհեդեդ** - *անճոռնի, անշուք, տձեւ, այլանդակ, խոշոր, անվայել, անկարգաբար:*

**Անորիշ** (կատարեալ) – *գործածուել է սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակը նչելու համար:*

**Աշխարապէս** - *ողբական կամ վշտակոծ եղանակով: Ըստ առոգանութեան տեսութեան՝ ասուել է ընխերցման յատուկ՝ ողբական եղանակի համար:*

**Աշխարել** - *1. վիշտ ապրել, սգալ, կսկծալ, ողբալ: 2. Ափսոսալ, զղջալ:*

**Աշխարհաժողովութիւն** - *աշխարհի բնակչուխիւնը, բազմուխիւնը, մարդկուխիւնը:*

**Առասական** - *1. կոչական: 2. Հասարակ (անուն)՝ ի տարբերուխիւն յատուկ անուան:*

**Առասպելավարժութիւն** - *հմտութիւն առասպելների կամ դիցաբանութեան:*
**Առասութիւն** - *յորջորջում, անուանում, կոչում:*
**Առաքական** - *գործածուել է իբրեւ անուանում գործիական եւ բացառական հոլովների համար:*
**Առեղ** - *կառքի կամ սայլի ղեկը:*
**Առինչունակ** - 1. *իմաստային աղերսակցութիւն կամ յարաբերութիւն ունեցող, վերաբերական կապ հանդէս բերող զուգադիր (բառեր), ինչպէս՝ տէր–ծառայ, հայր–որդի:* 2. *Մէկը միւսով բացատրելի:*
**Առոգանութիւն** - 1. *եղանակաւոր կամ ելեւէջաւոր ընթերցում՝ ըստ գրուածքի բովանդակութեան.* 2. *ուսմունք ընթերցանութեան կանոնների մասին՝ պայմանաւորուած նիւթի բովանդակութեամբ:*
**Արտաձայնեալ** - *հնչարտաբերած, հնչարտաբերուած, հնչարտաբերել, հնչարտաբերուել:*
**Աստուածազգեաց** - 1. (*կրօն.*) *Աստծուն իր վրայ կամ իր մէջ կրող:* 2. *Աստծուց պարգեւուած:*
**Աստուածազգեստ** - (*կրօն.*) *Աստծուց ներշնչուել (մարգարէանալ):*
**Արապի** - *արաբերէն:*
**Արուեստաւոր** - *գիտնական, քերական:*
**Արուորագոյն** - *արիագոյն, քաջագոյն, ժրագոյն, զօրագոյն:*
**Աւաչ** - *մրմունջ, երգի ելեւէջում, եղանակ, խաղ, մանր. արտաբերուող ձայն եղանակաւորումով: Նաեւ՝ տնազել՝ մէկի խօսելաձեւը կամ չարժուձեւը կրկնել:*
**Աւդասլական** - *օդի մէջ ճեղքող՝ սլացող (թռչուն), սրընթաց թռչող:*
**Աւցտել** - *բաժանել, իրարից անջատել, հեռացնել, ցրել:*

**Բագձաձական** - *ձեւով՝ եզակի, բայց հաւաքական իմաստ արտայայտող բառ, ինչպէս՝ ժողովուրդ, տարմ, հոյլ, տոհմ եւ այլն: Հմմշ. Բակառական:*
**Բաղազանութիւն** - *մերձաւորութիւն, սերտ առնչութիւն, իմաստային լծորդութիւն, իմաստային յարաբերութիւն:*
**Բաղասական** - *չատերի վերաբերմամբ վերագրուող, «յոգնակի» նշանակութեամբ:*
**Բաղդասութիւն** - *Շարահիւսութիւն:*
**Բաղդասութիւն բանի** - *խօսքի կապակցութիւն, շարահիւսութիւն:*
**Բաղյաւդ** - *կցուող յօդեր, ինչպէս՝ ս, դ, ն: Իսկ յունարէնում՝ գոյականների սկզբում յարադրաբար կիրառուող յօդեր, ինչպէս՝ ὁ ἡ τό :*
**Բայածական** - *բայից ածանցուած (բառ), ինչպէս՝ սիրել > սիրուն, մարթել («կարողանալ») > մարթուն («կարելի»):*
**Բացականատարել** - 1. *Իրօք կատարել, անել:* 2. *լինել, դառնալ:*
**Բացատութիւն** - (*քրկ.*) *ժխտական բնոյթի նախադասութիւն: Հկտ. Ստորասութիւն:*
**Բացատ** - *բաց տարածութիւն, դատարկ տեղ, պահ (իբրեւ ժամանակամիջոց), դադար:*
**Բացերեւութիւն** - *դատողութիւն՝ ժխտական կամ դրական բնոյթի: (Քրկն.) Մի բանի հաւաստումը՝ հաստատական կամ ժխտական նախադասութեամբ:*
**Բերանուն** - *դիպուածի կամ պատմական որեւէ իրադարձութեան հետ կապուած յատուկ անուն:*
**Բիր** - *հաստ գաւազան, լախտ, խարազան:*
**Բոյթ** - *անուի շրջանակ, յեց:*



**Բոնաբարբառ** - *բռնի՝ կեղծ բարբառ, երկբարբառ յօրինուած, ինչպէս՝ էւ, ըւ, ոի գուգադրութիւնները:*

**Գաղափար** - *տիպ, նախատիպ, սկզբնաձեւ, արմատ, օրինակ:*
**Գեհ** - *հօտ ոչխարաց:* 2. *Նաեւ՝ գերեզման:* 3. *Վիհ:*
**Գերակատար** - *վաղակատար–յարակատար անցեալ, ինչպէս՝ գործեալ էր, սիրեցեալ էր: Բայց մեկնիչների մօտ պարզապէս ըմբռնուել է նաեւ որպէս անցեալ կատարեալ, ինչպէս՝ գործեցի, սիրեցի, կամ յունաբան ձեւով՝ էգործեցի, էսիրեցի, էկոփեցի եւլն:*
**Գոլ** - «*եմ*» *բայի անորոշ դերբայը. նչ. առկայ լինել, լինել: Իբրեւ գոյական՝ գոյութիւն, էակ:*
**Գունչ** - *գնչու:*

**Դալապր** - *տապար, կացին կամ միասայրի սուսեր, մեծ դանակ:*
**Դաշնակցութիւն** - *նուագակցութիւն, նուագարանի ձայնակցութիւն:*
**Դերհատուցական** - *բառացի՝ փոխարինական, քերականական առումով՝ նոյնանիշ (բառ):*
**Դզի** - *նժոյգ, ձի, երիվար:*
**Դիել** - *մօր ստինքը ծծել. մօր կաթով սնուել:*
**Դժոխալուր** - *դժուարալուր, դժուարիմաց, անախորժ կամ մթին, անհասկանալի:*
**Դիւանադպիր** - *քարտուղար, դիւանի գրագրութիւնները վարող, գրագիր:*

**Ենթադատութիւն** - *հռետորական չարժուձեւերի կիրառումը նաեւ ընթերցանութեան ժամանակ՝ համաձայն ասոյթի եղանակային երանգաւորման եւ իմաստի:*
**Ենթամնայ** - 1. *տողադարձի գծիկ:* 2. *Բարդ եւ բարդ ածանցաւոր բառերի իմաստային եզրերի տակից դրուող աղեղնաձեւ գծիկ, ինչպէս՝ օրէնսուսոյց, ևորընծայ:*
**Ենթանկեալ** - *բառացի՝ տակն ընկած, ստորադասուած, բայց տրամաբանական եւ քերականական առումով՝ ենթակայ:*
**Եպերական** - 1. *պարսաւող, յանդիմանող, պախարակող:* 2. *պարսաւելի, նախատելի, պախարակելի:*
**Եպերան** - *մեղադրում, պարսաւում, կշտամբում, ամօթանք:*
**«Ես եմ ալֆա եւ ω »** - *ես եմ սկիզբը եւ վերջը (փոխաբերութիւն՝ յունարէն այբուբենի առաջին եւ վերջին տառերի յիշեցմամբ):*
**Երիւրել** - *նոյնն է՝ «Յերիւրել»:* 1. *Հնարովի՝ չինծու բան ստեղծել, մոգոնել:* 2. *Շահել, կարգի բերել, ուղղել:*
**Երիւրումն** - *նոյնն է՝ «Յերիւրումն» բառի հետ. հնարում, չինծու, կեղծիք. Նաեւ՝ չտկելը, կարգաւորելը:*
**Երամակապան** - *ձիերի երամակի՝ հօտի պահապան, ախոռապետ:*
**Երկանուն** - *կրկնակի անուն ունեցող, կրկնակի անուններով յորջորջուող, միեւնոյն անձին տրուող երկու յատուկ անուններ:*
**Երկաքանչիւր** - *երկուսն էլ՝ թէ՛ մէկը, թէ՛ միւսը. երկուսից ամէն մէկը, ամէն մէկի:*
**Երկուորական** - *երկակի թիւ:*

**Զարմանազանութիւն** - *տեսակ, տարբերակ:*

**Զուգաշար** - *վանկ: Հոմանիշներն են՝* շաղաշար, փաղառութիւն, հեգ, վանկ:
**Զրուցատրութիւն** - 1. *աւանդական վէպ, պատմութիւն, ճառ.* 2. *մեկնաբանութիւն.* 3. *խօսակցութիւն, զրուցակցութիւն:*

**Ընդդիմակ** - *ներհակական՝ իբրեւ չաղկապի տեսակ, ինչպէս՝* սակայն, համայն *(վերջինս՝ «բայց», «իսկ» իմաստով),* բայց, միևչդեռ...:
**Ընդունելութիւն** - *դերբայ. ըստ Թրակացու «ընդունելութիւն» է կոչւում բառերի այն կարգը, որ թէ՛ բայի եւ թէ՛ անուան յատկութիւնն ունի, այդ պատճառով էլ հայ թարգմանիչը Թրակացու* μετοχή *տերմինի բառապատճենմամբ կազմել է «ընդունելութիւն» տերմինը:*
**Ըմբոն** - *յարմար, պատշաճ, վայելուչ: Ըմբոն է – տեղին է, յարմար է:*
**Ըստգտանել** - 1. *յանցանքի մէջ գտնել մէկին.* 2. *մեղադրել, պախարակել, դատապարտել, յանդիմանել:*

**Թարշիշ** - *աստրական բառ. նշ. «թանկագին քարի տեսակ»:*
**Թարսիս** - *հոմանիշ «թարշիշ» բառի:*
**Թաւ** - 1. *թանձր արտաստնուող: Հոմանիշ բառերն են՝* ստուար, յոյր, խաժ, հականիշ՝ նուրբ: Թաւ *բաղաձայններ են համարուել՝* բ, փ, f, խ, ց, լ, չ, ջ, ռ *հնչիւնները: Իբրեւ առոգանութեան նշան (՝) նշելու համար թաւութիւնը կամ չնչեղութիւնը:*
**Թոթովատ** - *թոթովելով աղճատել՝ աղաւաղել, խեղաթիւրել:*
**Թուլակի** - *թոյլ կերպով, մեղմաբար:*

**Իսկ** - *քերականական տերմին, յատուկ անուն:*

**Լաւդակ ջրոց** - *ջրում ապրող կենդանի, ձկան տեսակ:*
**Լաւել զտանիս** - *լողքարով տանիքը տափակացնել, հարթել:*
**Լերկ** - *(քրկն.) անձայնեղ կամ անթրթիռ, խուլ բաղաձայն՝* պ, կ, տ *եւայլն:*
**Լծորդ** - *զուգորդող, յարաբերակից կամ միմեանց փոխարինող հնչիւններ կամ տառեր, ըստ Ծործորեցու լծորդ են՝ բմմի, գկքխ, դտթ, զսցձ, ժշչ, ճղչ, լղն, րռ հնչիւնները:*
**Լծորդութիւն** - *բայական համակարգի սահմ. ներկայ 1-ին դէմքի վերջաւորութիւնը՝ իր ձայնաւորի հետ միասին, ինչպէս գործ-եմ, ընթեռն-ում, ընթան-ամ, թռչ-իմ: Սակայն մեկնիչների մօտ այս ըմբռնումը չատ անգամ չփոթուած է լծորդ հասկացողութեան հետ: Թրակացու մօտ որոշակի կերպով սահմանազատուած է «Լծորդութիւն»-ը (συζυγία) «լծորդ»-ից (συζυγής) եւ վերաբերում է բայի խոնարհման համակարգին: Ծունրբէնում բայերը լծորդութիւնների մէջ խմբաւորուում են ըստ լծորդ հնչիւնների:*

**Խադ** - *սրի կամ դաշոյնի տեսակ:*
**Խազմ** - *կռիւ, պատերազմ, վէճ:*
**Խնճոյ** - *խրախճանք, ուրախութիւն՝ հարսանեաց սեղան, խնճոյք:*
**Խոզքորակ** - *խոճկոր, խոզի ձագ:*
**Խոճակեր** - *խոհարար, խորտկարար, կերակուր եփող:*
**Խոտել** - *խոտան համարել, մերժել, արհամարհել, անտեսել, փուչ համարել:*

**Կաճել** - *յարմար սեպել, ջանալ, յարդարել, պատրաստել, յօրինել:*
**Կաղամար** - *թանաքաման:*



**Կառն** - *փչոտ հաստ տերեւներով՝ ձուաձեւ բոյս, որ աճում է ճանապարհների եզերքին եւ ամայի՝ անբերրի վայրերում:*
**Կարապետ** - *առաջնորդող, առաջից գնացող, ռահվիրայ, ճանապարհ բացող:*
**Կարուակել** - *կարկատել, հնոտիներ նորոգել, կարել, կարկատան դնել:*
**Կենցաղաւգուտ** - *կեանքի համար օգտակար, հասարակական արժէք եւ կարեւորութիւն ունեցող:*
**Կթոց** - *կաթ կթելու աման:*
**Կինճ** - *վարազ, խոզ, մանաւանդ արու, նաեւ՝ երէ:*
**Կիսաբոլոր** - *քանակ կամ թիւ, որի մէջ կայ մի բոլոր (=ամբողջ) եւ կէս բոլոր (=կէս ամբողջ), ինչպէս՝* երեք, *որ կիսաբոլոր է երկուսի, կամ* տասնհինգ *՝ որ կիսաբոլոր է տասի, այսինքն՝ բաղկացած է տասից եւ նրա կէսից:*
**Կիսաձայն** - *(հնչ.) ըստ Թրակացու՝ արտաբերման ժամանակ բաղաձայնների մի մասը նաեւ ձայն են հանում, այդ պատճառով էլ կիսաձայն է կոչւում դրանք: Այդ կարգի կիսաձայն բաղաձայններն են կրկնակ համարուածները,* սուլականները, նայները՝ ζ, ε, ψ, μ, ν, ρ, σ : *Իսկ հայ թարգմանիչը դրանց հայերէն համարժէքները համարել է՝* զ, ց, ն, ժ, շ, մ, ս, ր *բաղաձայնները, որ աւանդաբար ընդունել են նաեւ մեր բոլոր քերական մեկնիչները: Այժմ ա՛յլ է կիսաձայնի ըմբռնումը:*
**Կիր** - *կրել բայի արմատը, իսկ իբրեւ քերականական տերմին՝ կրաւորական (ի հակադրութիւն ներգործականի):*
**Կողաբաղ** - *կողակից, ամուսին, լծակից:*
**Կուսաստան** - *կուսանոց, կոյսերի վանք, մենաստան:*
**Կուտպան** - *ախոռապետ, վերակացու՝ պահապան ձիերի երամակների:*
**Կրտսերադաս** - *(քրկն.) բառի առաջում դրուած, նախադաս:*

**Հագագ** - 1. *ձայնաճեղք, ձայնարան, որտեղ ձայն է առաջանում թոքերից օդը արտաշնչելիս, հնչափող:* 2. *ձայնի վերածուած օդ.* 3. *Հ հնչիւնի նման արտասանութիւն՝ ձայն: Միայն չնչից բաղկացած հնչիւն:*
**Համբակ** - *Նորածին երեխայ, դեռահաս, թերուս, թերավարժ, աշակերտ, իմաստակ, անհմուտ, տգէտ:*
**Համբակագոյն** - *առաւել թերուս, թերավարժ, տգէտ, անձեռնհաս, իմաստակ:*
**Հանդերձեալ** - *ապագայի, գալիքի վերաբերող:*
**Հասարակ** - *հաւասար երկուսի բաժանուած, կէս, միջին, մէջ. նաեւ՝* հաղորդ, կցորդ, *մասնակից, հաւասար, միօրինակ, միաբան, միակերպ, ընդհանուր:*
**Հասարակաբար** - *հաւասարապէս, կէս առ կէս, ընդհանրապէս:*
**Հասարակութիւն** - *ընդհանրութիւն, կցորդութիւն, ամէնքին հաւասարապէս պատկանելը, նաեւ՝ հաւասարութիւն, կէսը:*
**Հաստատադրութիւն** - *Թրակացին բայական սեռ է վերագրում նաեւ անուանը, ներգործութիւն (ἐνέργεια) եւ կիր (πάθος) նրան յատուկ համարելով ներգործութիւն (ἐνέργεια) եւ կիր (πάθος) սեռի կարգը. ըստ որում հայ թարգմանիչը, իբրեւ նմուշ, յունարէնի բառապատճենմամբ, բերում է դերբայներից եւ բայածականներից, իբր ներգործական՝ դատաւոր եւ ընտրող, իսկ կրաւորական՝ դատեալ, դատեցեալ: Հարկ է նշել, որ յունարէն (διάθεσις) բառի դիմաց հայ թարգմանիչը ստեղծել է երկու տերմին՝ հաստատադրութիւն (օգտագործելով միայն անուան սեռի առնչութեամբ) եւ տրամադրութիւն (բայական սեռի կապակցութեամբ):*

**Հաւանալ**
**Հաւիլ** } *սկսուել, սկզբնաւորուել:*

**Հեգ** - *վանկ:*

**Հեռուստ** - *հեռուից:*

**Հետեւակ** - *գրականագիտական առումով՝ արձակ գրուածքին: Հնում չափածոյ գրողներին (քերթողներին կամ բանաստեղծներին) նմանեցնում էին (փոխաբերաբար) հեծեալների, իսկ արձակ գրողներին՝ հետիոտների, որտեղից եւ հետեւակ տերմինի գործածութիւնը արձակ գրուածքների համար:*

**Հետեւանք** - *քերականական յատկանիշ:*

**Հեց** - *անուի չրջանակը, գօտին, որի վրայ ամրացուած են չառաւիղները:*

**Հիբար** - *մեկնական բառ՝ «ինչպէս», «օրինակ» իմաստով: Համանիշներն են՝ հիզաև, որգոն:*

**Հիզաև** - *մեկնական բառ՝ «ինչպէս», «օրինակ», «այսպէս» իմաստով: Համանիշներ են՝ հիբար, որգոն:*

**Հիւսնական** - *այն ինչ յատուկ է կամ վերաբերում է հիւսնութեանը՝ատաղձագործութեանը:*

**Հոմերաևալ** - *նմանուել Հոմերոսի, իբրեւ հանճարեղ քերթող· 2· ապագան գուշակել, կանխատեսել:*

**Հոշական** - *կոչական: Նաեւ՝ բացականչական: Հմմտ· առասական:*

**Հրաշական** - *զարմացական, որպէս թէ մակբայի տեսակ:*

**Ձայնորդ** - *քերականագիտական իմաստով՝ այն բաղաձայն հնչիւնները, որոնցում գերիշխում է ձայնը աղմուկի յարաբերութեամբ:*

**Ձաևնմունք** - *նուիրում, նուիրատուութիւն, ընծայաբերում:*

**Ձեւք** - *բառակազմութիւն:*

**Ձեւք աևուաև** - *անուան կազմութիւնը:*

**Ճղուղ** - *անիւ, ճախարակ:*

**Մակադրական** - 1· *բառի վրայ դրուող մակդիր, ածական:* 2· *մականուն:*

**Մակաւասարութիւն** - *միեւնոյն վերջաւորութիւնն ունեցող գոյական, որ հաւասարապէս վերաբերում է թէ՛ արականին եւ թէ՛ իգականին: Այս երեւոյթը յատուկ է միայն այն լեզուներին, որոնք քերականական սեռ ունեն:*

**Մակբաշխ** - *որոշեալ դերանուններ, ինչպէս՝ իւրաքանչիւր, երկքանչիւր:*

**Մահակ** - *հաստակեղ գաւազան՝ ծեծելու նպատակով:*

**Մատակ** - *խոշոր կենդանիների էգը (ձիու, էշի եւայլն), յատկապէս գոմէշինը:*

**Մարդաստան** - *մարդաշատ վայր: Հին Հայաստանի գաւառներից մէկը Վասպուրականում:*

**Մարտացու** - *սուր, թուր: Կռուի համար նախատեսուած մարտիկ կամ գործիք:*

**Մակբայ դիպուածոյ** - *ենթադրական կամ վարանական իմաստ արտայայտող եղանակաւորող բառ, ինչպէս՝ թերեւս, գուցէ եւ այլն:*

**Մակբայ ետեղական** - *տեղի մակբայ:*

**Մակբայ ժողովոյ** - *հաւաքական մակբայ:*

**Մակբայ միջակութեան** - *մակբայի տեսակ· հյ· յայտնապէս, բնաւ, ամենեւին, համարէն բառերը Թրակացու հայ թարգմանիչը բերում է յունարէն օրինակների փոխարէն: Յունարէնը, ինչպէս յայտնի է, մակբայները կազմում է յոգնակի սեռականի վերջաւորութեան ν–ն փոխելով ς–ի*



*(καλῶν > καλῶς «գեղեցկաբար», «բարւոք կերպով»): Եւ որովհետեւ սեռականի այդ վերջաւորութիւնը 3 սեռերի համար էլ ընդհանուր է՝ «միջակ» (μέσον), այդ պատճառով էլ հայերէնի բառապատճենումը ստացել է «միջակութիւն» տերմինի գործածութիւն, որը, սակայն, չի արտայայտում հայերէնի բառական–քերականական յարաբերութիւնները:*

**Մակբայ ուրացութեան** - *ժխտական բառեր՝ չէ՛, ո՛չ, ո՛չ իւիֆ, ո՛չ միով իւիֆ:*

**Մակբայ քերդութեան** - *ձեւի եւ միաւնութեան մակբայ, ինչպէս՝ ողկուզաւրէն, տարմաբար, մուրցացի եւ այլն:*

**Մակերակ** - *երեքի կրկնակին կամ երեքի վրայ էլի աւելացած մի բան:*

**Մակքառակ** - *չորսի կրկնակին՝ ութ, կամ չորսի վրայ աւելացած էլի մի բան, չորսից բարձր:*

**Մարթել** - *կարողանալ, ի վիճակի լինել:*

**Մեծասար** - *տաղաչափական տերմին, նչ· երկվանկ բառ, որի առաջին վանկը երկար է, երկրորդը՝ կարճ (– ◡):*

**Մեկնակ** - *առանձին, եզակի, միայնակ:*

**Միջակ** - 1· *այս տերմինը կիրառւում է հայերէնի 7 բաղաձայնների նկատմամբ, որոնք դիտւում են որպէս նուրբ բաղաձայններից՝ թաւ, եւ թաւ բաղաձայններից՝ նուրբ, այլ կերպ ասած՝ «միջակ» դիրքում: Դրանք են, ըստ մեկնիչների՝ բ, գ, դ, ձ, ղ, ճ, ժ: 2· իբրեւ կէտադրական նշան՝ միջակէտ: 3· մարդկային բարքերի որոշում՝ բարի, չար եւ միջակ:*

**Յամրեղ** - *յամրի յատկութիւն ունեցող, յամր, դանդաղկոտ, տնտնացող, յամեցող: Հկռ· Արագեղ:*

**Յանգ** - *վերջ, եզր:*

**Յանկարծադիպութիւն** - *յանկարծակի՝ անսպասելի պատահած դէպքը իբրեւ երեւոյթ:*

**Յանգութիւն** - 1· *պատշաճութիւն, յարմարութիւն:* 2· *յարաբերութիւն, առնչութիւն:*

**Յանկումն** - *աւարտ, եզր, սահման, հանգիստ, դադար:*

**Յարաբարդ** - *երեք բառով բարդուած: Թրակացին ընդունել է պարզ, բարդ եւ յարաբարդ անուններ, այսպէս· Μέμνων յատուկ անունը դիտւել է որպէս պարզ (ἁπλοῦν), Ἀγαμεμνων–ը՝ բարդ (σύνθετον), իսկ Ἀγαμεμνίδες–ը՝ յարաբարդ (παρασύνθετον): Հայ թարգմանիչը, հետամուտ իր կիրառած սկզբունքին, «հայացնում» է յունարէն վերոյիշեալ օրինակները, ստեղծելով, սակայն, բոնազբօսիկ ձեւեր· իբրեւ պարզ յատուկ անուն նշում է Մանան անունը, որպէս բարդ անուն՝ ֆաջ Մանան, իսկ յարաբարդ անուն՝ ֆաջագոյն եւս Մանուէլ:*

**Յարազուարճ** - *մշտազուարճ, կենսուրախ:*

**Յարակայ** } *բայի անցեալ ժամանակի տեսակ· օրինակ ըստ յունա–*
**Յարակայական** } *բանութեան՝ էկոփէի (այսինքն՝ կոփեալ էր իմ):*

**Յարաձգական** - *բայի սահմանական եղանակի անկատար ժամանակի անուանում:*

**Յարաևուն** - *բառացի՝ այլ անուան առնչուող: Քերականօրէն՝ ածանցուած միեւնոյն անունից, ինչպէս՝ Տիրիճան՝ տէր բառից, խրախճանիք՝ խրախ բառից:*

**Յարաշէշտ** } *վերջընթեր վանկում շեշտ ունեցող (բառ)· բառի նման*
**Յարաշեշտողոր** } *շեշտակրութիւնը իւրայատուկ է յունարէնին, եւ ո՛չ՝ հայերէն գրաւոր լեզուին, թէեւ Թրակացու թարգմանիչը, եւ նրա հետեւորդն գրաւոր լեզուին*

*դուխեամբ մեր միւս մեկնիչները բռնագբօսիկ կերպով վերագրում են այն հայերէն բառերի արտաբերման առանձնայատկութիւններին:*

**Յարապարոյկ** - *առոգանութեան տերմին. ըստ յունարէնի բառ-արտաբերման օրինաչափութիւնների, վերջից հաշուած բառի երկրորդ վանկի վրայ դրուող պարոյկ նշանը, բառի վերջընթեր վանկի վրայ դրուող պարոյկ:*

**Յարառոցել** - *1. իրար կից կամ միասին առնել, վերցնել: 2. միշտ միասին գործածել:*

**Յարացոյց** - *(քերկն.) լեզուի այս կամ այն խօսքի մասի թեքումները ամբողջութեամբ վերցրած, դրանց հերթագայութիւնը: Ընդհանրապէս նչ. նախատիպ, նախօրինակ, օրինակ:*

**Յարեցուցանել** - *յարել, կցել, իր կողմը ձգել, միացնել իր հետ:*

**Յարեւանալ** - *հետեւել, հետը գնալ, յարել:*

**Յարկացոցել** } *առաջ բերել, ներկայացնել, հանդէս բերել, ցոյց տալ,*
**Յարկացուցանել** } *մօտը՝ առաջը կանգնեցնել:*

**Յաւդել** - *կցել, կապակցել, տառերը իրար միացնել՝ կապել, վանկ եւ բառ կազմելու համար:*

**Յաւշել** - *կտոր-կտոր անել, կտրատել, մաս-մաս բաժանել:*

**Յեռումն** - *չարայարելը, ընդելուզելը, չարակարգութիւն. իրար միացնելով կապակցելը, տողելը:*

**Յոյր** - *թաւ կամ թանձր արտասանուող (բաղաձայն):*

**Յորդելակ** - *սուր, բարձր, չեչտուած հնչիւն՝ ձայնի յորդ կամ ուժգին արտաբերմամբ:*

**Յուշկապարիկ** - *աւերակներում թափառող ոգի, երկակենցաղ հրէշ, առասպելաբանութեան մէջ՝ իշացուլ:*

**Նախագաղափար** - *արմատական, չածանցուած (բառ):*

**Նախադասութիւն** - *սկզբից՝ առաջից դասուելը, դրուելը:*

**Նախադրութիւն** - *Թրակացու հայ թարգմանիչը (նրա հետեւողութեամբ՝ Մործորեցին եւ այլ մեկնիչներ) նախադրութիւն է դիտում ինչպէս ածանցաւոր բառերի նախածանցները (-ներ-, -արտ-, -ապ-, -բաղ-, -շար- եւ այլն), այնպէս էլ նախդիրները (զ, ի, ց, առ, ընդ, ն) եւ նախադրութիւնները (վասն, յաղագս, շուրջ եւ այլն):*

**Նախահաւ** - *1. նախնի, նախորդ, սկիզբ: 2. Ադամ: 3. հօր կամ մօր պապը:*

**Նախայարաշեշտ** - *ըստ յունարէն բառերի արտաբերման՝ վերջից հաշուած 3-րդ վանկի չեչտը: Թրակացու հայ թարգմանիչը (եւ նրա հետեւողութեամբ Մործորեցին ու միւս մեկնիչները) նոյն առանձնայատկութիւնը անհիմն կերպով վերագրում է հայերէն բառերի արտաբերմանը, որ բնաւ յատուկ ու բնորոշ չէ:*

**Նախերգան** - *առաջաբան, ներածութիւն՝ գրուածքի սկիզբը, երկու խօսքը, առաջին հատուածը. երգի սկզբնաւորութիւնը:*

**Նայ** - *ընդհանրապէս «խոնաւ», «թաց» է նշանակում: Քերականական իմաստով՝ ձայնորդ հնչիւնների անուանումը՝ լ, ղ, մ, ն, բ, ռ, այլ կերպ ասած՝ կողքային եւ թրթռուն հնչիւնների յորջորջումը:*

**Ներբակ առեալ** - *մէջը առած, ընդգրկած, ամփոփած, բովանդակած:*

**Ներբող** - *1. գովերգ. չափածոյ քնարական ստեղծագործութիւն՝ նուիրուած որեւէ նշանաւոր անձի կամ դիպուածի՝ իրաղարձութեան փառաբանութով: 2. նման բնոյթի չափածոյ, քնարական երկ:*

**Ներգոյս** - *ներսում գոյութիւն ունեցող, ներյատուկ: 2. ի բնէ եղող:*

**Ներկուռ** - *համուտ, ներհուն, խորագէտ, վարժ, կիրթ:*



**Ներտաղական** - *ոտանաւորի՝ չափածոյի նմանութեամբ, տաղաչափական ձեւով:*

**Նմանասեր** - *նոյն ծագումն ունեցող, համասեռ, ազգակից:*

**Նոխազ** - *արու այծ, այծերի առաջնորդ՝ քոչ, որին զոհաբերում են աստուածներին, այստեղից՝ «Բաւութեան նոխազ» արտայայտութիւնը իբրեւ ոճ՝ «անմեղ տեղ զոհուող, տուժող» նշանակութեամբ:*

**Նոխազերգութիւն** - *ողբերգութիւն, եղերերգութիւն, աղէտալի տեսարան՝ դէպք, իրադարձութիւն նկարագրող թատերական խաղ:*

**Նրան** - *սուսեր, սուր, թուր:*

**Շաղաշար** - *վանկ. հմմչ.՝ սիղղոբայ, փաղառութիւն, հեգ, գուգաշար:*

**Շարագիր** - *մատենագիր, հեղինակ, չարագրող. 2. գրուածք, մատենագրութիւն. 3. նշանագրեր, տառեր:*

**Շարագրած** - *մատենագրութիւն:*

**Շարադասութիւն** - *հմմչ.՝ բաղդասութիւն, չարահիւսութիւն:*

**Շարակայեմ** - *իրար կից՝ մերձ գտնուել, մի քանի մասերից բաղադրուել, բաղկանալ:*

**Շարաձայնեալ** - *ձայնակցած, ձայնակցուած, ձայնակցել, ձայնակցուել: Հնչիւնների միակցութեամբ արտաբերութիւն:*

**Շարաձայնութիւն** - *բաղաձայնութիւն:*

**Շեղջ** - *դէզ, կոյտ:*

**Շրջաբեկութիւն** - *պարոյկ չեչտը, բառի արտաբերումը պարոյկով՝ ձայնի բարձրացմամբ ու իջեցմամբ:*

**Ոլորակ** - *առոգանութեան տերմին. ձայնի ելեւէջում առհասարակ (ինտոնացիա), ինչպէս՝ չեչտ (սուր), բութ (ծանր), պարոյկ (°): 2. Շեչտադրութեան այս երեք տեսակներն ու դրանց արտաբերումը:*

**Ոյն** - *«ունել» բայի արմատը. նչ. ունակութիւն, ուժ, կարողութիւն, զօրութիւն:*

**Ոտ** - *յդ. ոտք: Տաղաչափական տերմին, չափ (ամանակ) վանկի, որից՝ ոտանաւոր (չափածոյ գրուածք):*

**Ունչ** - *հոտառութեան օրգանը՝ քիթ, նաեւ՝ ռունգ:*

**Որգոն** - *մեկնական բառ՝ «ինչպէս», «օրինակ», «այսպէս» իմաստով: Հոմանիշներն են՝ Հիքար, Հիզան եւայլն:*

**Որթոց** - *որտեղ որթատունկ է տնկուած, այգի, այգեստան:*

**Չարաձայն** - *դժուարահունչ, դժոխալուր, անախորժ ձայնով:*

**Չուխայ** - *նուրբ բրդեայ գործուածք՝ խաւով:*

**Պաճուճաբանութիւն** - *պերճախօսութիւն, դեղեցիկ յօրինուածքով չարադրանք, զարդարուն խօսք, պերճաբանութիւն, ճարտարախօսութիւն, նաեւ՝ ճոռոմաբանութիւն:*

**Պատան** - *դէպք, դիպուած, բախտ, հանգամանք: Նաեւ՝ հանդիպող յատկանիշ:*

**Պատկանաւոր** - *յարմար, պատշաճ, դասաւորուած, ներդաշնակ:*

**Պատուիրական** - *գործածուած է իբրեւ անուանում տրական հոլովի համար:*

**Պարառութիւն** - *միասին վերցնելը, ձայնաւորի եւ բաղաձայնի միասին արտասանութիւնը:*

**Պարոյկ** - *առոգանութեան տերմին, որը նշանակում է, թէ ձայնը ոլորուն է՝ բառի արտաբերման ժամանակ բարձրանում եւ իջնում է: Այդպէս է անուանուել յունարէնին յատուկ չեչտի մի տեսակը: Մեր քերականները եւ մեկնիչները յետագայում նոյնացրել են այն հարցականի հետ:*

**Պարունակ** - *1. իր մէջ ամփոփող, ընդգրկող, բովանդակող: 2. կամար, շրջան: 3. Մեկնողական ասոյթ, շրջաբանութիւն, իբրեւ քերականական տերմին նչ. անունների այն տեսակը (ըստ մեկնիչների), որոնք ցոյց են տալիս միեւնոյն առարկայից առատօրէն ունեցող վայր, ինչպէս՝* կուսաստան, ընկուզուտ, որթոց *եւ այլն:*

**Պիտակ** - *1. անհարազատ, խորթ: 2. կեղծ, չինծու, սուտ, պատիր, խարդախուած: 3. օտար: 4. թղթի կտոր: 5. գրուած թուղթ, նամակ:*

**Պիտակապէս** - *անուանապէս, միայն անունով, ձեւականօրէն: Հկռկ.՝* Իսկապէս, տիրաբար:

**Պիտակութիւն** - *անհարազատութիւն, օտարութիւն, խորթութիւն:*

**Ջամբել** - *տալ, հայթայթել, սնել, ուղարկել, առաքել, կերակրել:*

**Ռիշտ** - *ժլատ, կծծի, չկամեցող:*

**Սեռական** - *1. պատկանելութեան հոլով. 2. (փիլ.) սեռ ընդհանրութիւնը ցոյց տուող, ինչպէս՝* կենդանի, տունկ, միջատ, *որոնք, իրենց հերթին, տեսակների են բաժանուում:*

**Սերք** - *անուան քերականական սեռ, ինչպէս՝ արական, իգական եւ չէզոք, ըստ բառի վերջաւորութեան:*

**Սուլմունք** - *սուլելը, սվսվալը:*

**Սոինչ** - *1. չչիւն, սուլուում. սրնգի, ճախարակի կամ նման այլ առարկաների ձայն: 2. սուլական կամ չչական բաղաձայն:*

**Ստեղն** - *առոգանութեան եւ տաղաչափութեան տերմին. եռավանկ բառ, որի առաջին վանկը երկար է, իսկ վերջին երկուսը՝ կարճ (⏑ ⏑):*

**Ստիւքս** - *ոտանաւորի տող, չարք, քառատող: Հմնչ.՝ Ստիքս:*

**Ստորադաս**
**Ստորադասական** } *ցած դասուած, երկրորդական:*

**Ստորադասութիւն** - *ներքեւ՝ ցած դնելը (ըստ չարքի), ստորեւ դասուելը:*

**Ստորանկեալ** - *1. ենթակայ, առարկայ: 2. հպատակ: Բառացի՝ ներքեւ ընկած:*

**Ստորասութիւն** - *հաստատական բնոյթի նախադասութիւն: Հկռ. Բացասութիւն, նաեւ նշանակում է՝ ճառ, գիրք եւ այլն:*

**Ստուարաձայն** - *ստուար՝ թաւ ձայն ունեցող (հնչիւն), նկատի են ունեցուում բաղաձայնները: Համանիշ՝* յոյր, խաժ, թաւ:

**Սփածանեմ** - *մէջքից գոգնոց կապել՝ աշխատանքի ժամանակ չորերը մաքուր պահելու համար:*

**Վախճանականք անուանց** - *անունների վերջաւորութիւնները եզակիում: Ցուներէնում անունների վերջաւորութիւնները միաժամանակ սեռի որոշման ցուցիչ են (որպիսիք յատուկ չեն հայերէնին), ուստի եւ ունեն բառական-քերականական յարաբերութիւնների դրսեւորման դեր:*

**Վաղադասական** - *սկզբից՝ առաջից դրուող, դասուող:*

**Վատաձայն** - *խժալուր, աններդաշնակ, անբարեհունչ. (քերկ.) խուլ բաղաձայն. Հմնչ. չարաձայն:*



**Վատամարմին** - *1. նիհարակազմ, վտիտ, տկար մարմնով: Հկռ. Քաջամարմին:*

**Վարժասէր** - *ուսումնասէր, ուսումնական, գիտուն:*

**Վարկանեմ** - *կարծել, սեպել, համարել, հաշուել:*

**Վարկպարագի** - *վայրիվերոյ, թեթեւակի. 2. իզուր տեղ. 3. պարզ եւ անպաճոյճ. 4. պատահաբար. 5. անխորհրդաբար. 6. չնչին, յետին, երկրորդական, փոքրարժէք, հեշտ:*

**Վարոտեմ** - *վանել, հեռացնել, ետ մղել:*

**Վերբերական** - *(քրկն.) յարաբերական. գործածուած է դերանունների մի խումբ ստանալու համար:*

**Վերծանութիւն** - *1. ընթերցումն, ընթերցանութիւն, կարդալը: 2. կարդալով իմանալը:*

**Վերջադասք** - *(քրկն.)՝ բառի վերջում դրուած, յետադաս:*

**Վերսաստ** - *չեչտ, սուր չեչտ (՛):*

**Վերսաստանալ** - *չեչտ կրել, չեչտով հնչուել:*

**Վերսաստութիւն** - *առոգանութեան տերմին. նչ. ուժեղ, սաստիկ չեչտելը, սուր չեչտ (՛):*

**Տաղ** - *չափածոյ գրուածք, բանաստեղծութիւն, քերթուածք:*

**Տապալումն** - *բառի թեքումը՝ հոլովումն ու խոնարհումը:*

**Տարացոյց** - *օրինակ, նմուշ, ապացոյց:*

**Տի** - *տարիք, հասակ. նաեւ՝ դար: Շաղկապի իմաստով՝* եւս, իսկ, այլ: *Ժամանակի իմաստով՝* հապա, դէ:

**Տիւ** - *1. Օրուայ լոյս ժամանակը, արեւածագից մինչեւ երեկոյ. նաեւ՝ ամբողջ մի օր՝ 24 ժամ, գիշեր եւ ցերեկ:*

**Տպագիոն** - *թանկագին քար՝ բիւրեղեայ, կարմիր կամ ոսկեգոյն՝ կանաչ, կապուտակ եւ դեղին երակներով:*

**Տրամադրութիւն** - *գործածուել է իբրեւ անուանում բայական սեռի համար:*

**Տրամախոհութիւն** - *կշռադատութիւն, փաստերից ճիշդ հետեւութիւն անելու կարողութիւն, ճիշդ մտածողութիւն: Մտածութիւն, միտք եւ այլն:*

**Տրոհութիւն** - *բաժանում, անջատում:*

**Ցրաւնք** - *ցրումն եւ վայր՝ տեղի ցրման, բաժանման:*

**Իսեալ** - *փխնկ. հիւսեալ:*

**Իծեալ** - *փխնկ. հիւծեալ:*

**Իւն** - *փխնկ. հիւն:*

**Փակաղակ** - *կողպէք, բանալի, նիգ:*

**Փակեղն** - *1. գլխի ծածկոյթ, (եկեղ.) վեղար. 2. կանանց եւ կոյսերի գլխի ծածկոց. 3. ուսի ծածկոյթ, (եկեղ.) վակաս. 4. Վրայի ծածկոյթ, (եկեղ.) (եկեղ.) փիլոն. 5. վարշամակ, դաստառակ. 6. բաճկոն. 7. (եկեղ.) ուրար:*

**Փաղաղել** - *վանկ կազմել՝ մի քանի հնչիւնների միակցութեամբ. բառացի՝ կից վերցնել:*

**Փաղանուն** - *բառացի՝ անուանակից. 1. համանուն, համանիշ. 2. սեռ նշանակող անուն, որի մէջ մտնում են տեսակներ, ինչպէս՝* կենդանի, միջատ, տունկ *եւ այլն:*

**Փաղառական** - *հնչիւնակապակցական, երբ մի չարք հնչիւններ միասնաբար են արտաբերուում:*
**Փաղառութիւն** - *բաղաձայններով եզրափակուած վանկի անուանումը:*
**Փաստական** - *գործածուել է իբրեւ անուանում հայցական հոլովի համար: Բառացի՝ պատճառական: Այլ անուանումներ՝ խնդրական, հայցական, կրողական եւ այլն:*
**Փարսի** - *պարսկերէն:*
**Փոխարկութիւն** - *այլափոխութիւն, փոփոխութիւն, վերածումն այլ բանի:*
**Փողար** - *փողահար, փող հնչեցնող:*

**Քաղիկ** - *փղձ· փոքրիկ քաղ, քօչ, արու այծ, նոխազ:*
**Քամահելի** - *արհամարհելի, անտեսելի, արգահատելի:*
**Քաջաձայնութիւն** - *բարձրահնչութիւն, նաեւ՝ քաղցրաձայն· փոխաբերաբար՝ հռչակաւոր:*
**Քաջամարմին** - 1· *առողջ՝ ուժեղ մարմնով· 2· մսեղ՝ պարարտ:*
**Քաջոլորակի** - *առոգանութեան տերմին· նշ· ձայնի լաւ ելեւէջներով կամ չեչտերով (ընթերցումն), ախորժալուր եղանակով (երգեցողութիւն):*
**Քարճ** - 1· *գօշ, ցանցառամօրուս, քոսա· 2· թերաճ (հասակ), վտիտ:*
**Քարտ** - *մագաղաթ կամ թուղթ գրելու· 2· նամակ, հրովարտակ· 3· գիրք, մատեան:*
**Քարուկ** - *փղf շ· փոքր քար:*
**Քեմուխտ** - 1· *ողորկ՝ հարթ եւ բարակ կաշի· 2· իշու կամ ջորու մորթուց պատրաստուած կաշի:*
**Քերդող** - 1· *բանաստեղծ· 2· մատենագէտ· 3· թարգմանիչ, մեկնիչ, վերծանող· 4· քերական:*
**Քուրայ** - *հնոց, բով, վառարան:*





# ՑԱՆԿ
## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ


*Աբէլ* – 148
*Աբրահամ (Նահապետ)* – 133, 148
*Ադամ* – 113, 114, 147, 148
*Աթէնք* – 115
*Ահարոն* – 205
*Աղբակ* – 203
*Աղէքսանդրոս* – 118
*Աղուանք* – 115
*Ապողինար* – 123
*Ապողոն* – 160
*Ասորեստան* – 203
*Ասորիք* – 114, 203
*Արիստոտէլ*
*Արիստոտէլէս* } 131, 193, 196, 218, 245
*Արտաշէս (թագ·)* 143
*Արցախային (բարբառ)* 128
*Արփաքսադ* – 113
*Աքիլլեւս* – 118, 188

*Գեղբուայ լեառն* – 145
*Գորգայք* – 203

*Դանայ (ցեղ)* – 148
*Դարեհ (թագ·)* – 143
*Դաւիթ (մարգարէ, նաեւ թագ·)* – 114, 148, 191, 205, 206
«*Դաւթեան քերթուխիւն*» –144
«*Դաւթեան երիվարն*» – 205
*Դերովրա* – 145
*Դինայ* – 127
*Դիոմիդէս* – 162
*Դիոնէսիոս (Թրակացի)* } 122, 123
*Դիոնիսիոս*
*Դիոնիսիոս (դիցուհի)* – 140

*Եբեր* – 112, 114
*Եղիա (մարգարէ)* – 133
*Ենովս* – 114
*Ենովք* – 112, 113, 114
*Երուսաղէմ* – 147, 148
*Եւմիդէս* – 117

*Զաբուղոն* – 148
*Զմիւռնացիս Կողոփանեաց* – 118
*Զմիւռնիա* – 117

*Թադէոս (առաք·)* – 112
*Թերսիտէս* – 118
*Թէոդոս Թագաւոր* – 316
*Թէոդուպաւլիս* – 316
*Թէոփիլոս Իմաստասէր* – 241

*Իսրայէլ* – 114, 148

*Խութային (բարբառ)* – 128

*Կարմիր (ծովն)* – 114

*Կադմոս* – 114, 115
*Կիկրոպս* – 115
*Կորդուաց լեառն* – 203
*Կորճայ (լեզուն)* – 203
*Կորճայք* – 128, 156, 157, 278
*Կորնթոս* – 147
*Կրիս[պ]ոս* – 127

*Հերովդիանոս* – 123
*Հոմերոս* – 117, 118, 126, 158, 160, 163, 204, 230, 282
*Հոմերոն* – 116, 162, 186
*Հոմնիսի* – 117

*Ղուկաս* – 241

*Ցակոբ (նահապետ)* – 148
*Ցակոբ Իսրայէլ* – 224
*Ցեսու* – 114
*Ցիսուս* – 324
*Քրիստոս* – 148, 302
*Ցովհան (Բաներեգէս)* – 224
*Ցովհաննէս Եղնկայեցի Ծործորեցւոյ* – 111, 327
*Ցովհաննէս Մկրտիչ* – 133, 224
*Ցովնաթան* – 145
*Ցովսէփ* – 291, 302
*Ցորդանան* – 148
*Ցուդայ* – 112

*Մանայճ (գաւառ)* } 203
*Մանէճ*
*Մարաց (երկիր)* – 203
*Մաքսոն (բժիշկ)* – 188
*Մելամպոդոս* – 117
*Մելէս (գետ)* – 118
*Մեսրոպ (Մաշտոց)* – 115
*Մեմփիս* – 115
*Մոկաց (գաւառ)* – 203
*Մովսէս (մարգարէ)* – 114, 133, 146, 148, 205

*Նաւէ* – 114
*Նեստոր* – 188
*Նեփթաղէմ* – 148
*Նոյ (նահապետ)* – 113

*Ջորրորդ Հայք* – 128

*Պասիփա* – 127
*Պատրոկղէ* – 187, 188
*Պարիս* – 187, 162
*Պաւղոս (առաքեալ)* – 133, 147
«*Պաւղոսական գիրքն*» – 205
*Պետրոս (առաքեալ)* – 148
*Պիղատոս* – 291
*Պղատոն* – 218
*Պրիամոս (թագ.)* – 187

*Սահակ (կաթ.)* – 115
*Սահակ (նահապետ)* – 148
*Սամարիա* – 147
*Սաւուղ (թագ.)* – 145, 205
*Սիդոն* – 114
*Սիմոն* – 148
*Սիոն* – 147, 148, 186
*Սիսարա* – 145
*Սիւնիք* – 128
*Սկամանդրոս (գետ)* – 118
*Սպերացի* – 128
*Սոկրատ* – 135

*Տայեցի* – 128
*Տիգրան (Բ թագ.)* – 144
*Տիգրանուհի* – 144
*Տիւրոս* – 114

*Վիրք* – 115

*Փարաւոն* – 146, 148
*Փիւնիկ* – 114

*Քիքոս* – 118



# ՑԱՆԿ
## ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

### Ա.- ՁԵՌԱԳԻՐ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Մաշտոցի Անուան Մատենադարան, *Ձեռագրեր* No. 215, 1276, 2079, 2104, 2193, 2326, 2329, 2364, 2365, 2366, 2380, 2515, 3504, 3778, 3883, 5919, 6273, 6331, 6396, 6558, 7037, 7995, 9992։

Խաչերեան Լ., *Եսայի Նչեցին եւ Գլաձորի համալսարանը*, Երեւան, Պետական համալսարանի հրատարակչութիւն, Մոսկվայի Վ. Ի. Լենինի անուան գրադարան, 1968 (Դոկտորական դիսերտացիա), 563 էջ (մեքենագիր)։

### Բ.- ՏՊԱԳԻՐ ԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աբեղեան Մ., *Երկեր*, հ. Ա, Երեւան, 1966։

Աբեղեան Մ., *Երկեր*, հ. Դ, Երեւան, 1970։

Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915г.

Ալիշան Ղ., *Ազգային վիպասանութիւնք*, «Բազմավէպ», 1850։

Ալիշան Ղ., *Սիսական*, Վենետիկ, 1893։

Ալիշան Ղ., *Հայապատում*, Վենետիկ, 1901։

Ալիշան Ղ., *Ցուշիկք հայրենեաց հայոց*, Վենետիկ, 1921, հատ. Բ, տպ. 2-րդ։

Աճառեան Հ., *Հայոց անձնանունների բառարան*, հհ. Ա–ե, Երեւան, 1942–1962։

Աղայեան Է., *Հայ լեզուաբանութեան պատմութիւն*, Երեւան, 1958, հ. 1։

Աղայեան Է., *Հայերէնի բացատրական բառարան*, հհ. Ա եւ Բ, Երեւան, 1976։

Անասեան Յ., *Հայկական մատենագիտութիւն*, հ. Ա, Երեւան, 1959։

Առաքել Սիւնեցի, *Ցաղագս Քերականութեան. Համառօտ Լուծմունք, աշխատասիրութեամբ Լ. Գ. Խաչերեանի*, Լոս Անճելըս, 1982։

Առաքելեան Գ., *Ցուցական գրականութեան պատմութիւն*, Երեւան, 1962:
Բադալեան Յ., *Օրացոյցի պատմութիւն*, Երեւան, 1970:
Բժշկեան Տրապիզոնցի Մ., *Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց*, Վենետիկ, 1850:
Գրիգոր Կամախեցի, *Ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1915:
Դաւիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, աշխատասիրութեամբ Մ. Արեւշատեանի, Երեւան, 1960:
Դաւթի քերականական աշխատութեան նորայայտ ամբողջական ձեռագիր տեքստը, աշխատասիրութեամբ Գ. Ջահուկեանի, «Բանբեր Մատենադարանի», No. 3, 1956:
Дворецкий И.Х., Древнегреческо-русский словарь, тт.I,II,1958г.
Δημητρακοῦ Δ., Μέγα Λεξικόν τῆς Ἑλληνικῆς γλώσσης, Ἀθῆναι, 1949.
Եսայի Նչեցի, *Վերլուծութիւն քերականութեան*, աշխատասիրութեամբ Լ. Գ. Խաչերեանի, Երեւան, 1966:
Երեմեան Ս., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963:
Զարպհանալեան Գ., *Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց*, Վենետիկ, 1878: Նոյնի Բ տպագրութիւնը, 1886, նաեւ Գ տպագրութիւնը, 1897:
Թէոփիլեանց Մ., *Վարք երեւելի արանց*, հհ. Ա եւ Բ, Վենետիկ, 1839:
Թովմայ Վարդ. Արծրունւոյ *Պատմութիւն տանն Արծրունեաց*, Թիֆլիս, 1917:
*ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950:
Խաչերեան Լ., *Գրչութեան արուեստի լեզուական-քերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում*, Երեւան, 1962:
Խաչերեան Լ., *Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ* (XIII-XIV դարեր), Երեւան, 1973:
Խաչերեան Լ., *Լեզուների առաջացման ու զարգացման տեսութիւնը եւ գրի ու մատենագրութեան սոցիալական նշանակութիւնը ըստ Վարդան Արեւելցու*, «Լրաբեր», ամսագիր ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1972 թ., No. 2:
Խաչիկեան Լ., *Գլաձորեան համալսարանը եւ նրա սանների աւարտական ատենախօսութիւնները*, Երեւան պետ. համալսարանի գիտական աշխատութիւններ, հ. 23, 1946, էջ 423–450:
Խաչիկեան Լ., *Արտազի հայկական իշխանութիւնը եւ Մործորի դպրոցը*, «Բանբեր Մատենադարանի», No. 11, 1973:
Կղեմէս Գալանոս, *Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ*, հ. Ա, 1650:
Հիւբշման Հ., *Հին հայոց տեղւոյ անունները*, Վիեննա, 1904:
Ղարիբեան Ս., *Համառօտութիւն հայ բարբառագիտութեան*, Երեւան, 1941:
Ղարիբեան Ս., *Հայ բարբառագիտութիւն*, Երեւան, 1953:
Մալխասեանց Ստ., *Հայերէն բացատրական բառարան*, հհ. Ա–Դ, Երեւան, 1944–1945:
*Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*. կազմեց՝ Ն. Պողարեան, հ. Ա, 1966, Երուսաղէմ, հ. 4, 1969:
Յ. Մխիթարեան, *Էջեր հայ չարահիւսութեան պատմութիւնից* (5–15–րդ դարեր), 1979, *Կիրովական, Ձեռագրի իրաւունքով*:



Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913:
Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն*, աշխարհաբար թարգմանութիւն Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1940:
Յովսէփեան Գ., *Խաղբակեանք կամ Պռոչեանք Հայոց պատմութեան մէջ*, Երուսաղէմ, 1949, մասն Բ:
Յովհաննէս Երզնկացի, *Հաւաքումն Մեկնութեան Քերականի*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1983:
Յովհաննէս Քոնեցի, *Յաղագս քերականին*, աշխատասիրութեամբ Լ. Խաչիկեանի եւ Ս. Աւագեանի, Երեւան, 1977:
Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, *կազմեցին՝ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան*, հհ. Ա եւ Բ, 1836–37, Վենետիկ:
Ոսկեան Հ., *Վասպուրականի-Վանի վանքերը*, Վիեննա, 1942, մասն Բ;
Չամչեանց Մ., *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ, 1786, հ. Գ:
Ջահուկեան Գ., *Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում*, Երեւան, 1954:
Սրապեան Ա., *Յովհաննէս Երզնկացի*, Երեւան, 1958:
Վարդան Արեւելցի, *Մեկնութիւն քերականի*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի, Երեւան, 1972:
*Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին*, կազմեց՝ Մեսրոպ Վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964:
*Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց*, կազմեց՝ Բ. Կիւլէսէրեան, Անթիլիաս, 1961:
Քիւրտեան Յ., *Երիզս եւ եկեղեաց գաւառ*, Վենետիկ, հ. Ա, 1953:
Քիւրտեան Յ., *Յովհաննէս Երզնկացի-Մործորեցի (նորագիւտ նիւթեր Ս. Ղազարու մէկ նոր ձեռագրէն)*, «Բազմավէպ», 1954:
Օրմանեան Մ., *Ազգապատում*, Կոստանդնուպոլիս, 1914, հ. Բ, նոյնի *Գէղբուքի վերահրատարակումը*, 1960, հ. 1, մասն Ա:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Էջ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ..... 7-9
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ..... 11-12
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ..... 13-108
ՀԱՄԱՌԱՒՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ
(ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ) ..... 109-327
*Նուաստ վարդապետի Յո[վ]հաննու Եզնկայեցւոյ,*
*որ եւ Ծործորեցւոյ, արարեալ*
*«Համառաւտ տեսութիւն քերականին»* ..... *111*
*Յաղագս վերծանութեան* ..... *135*
*Յաղագս ոլորակի* ..... *149*
*Յաղագս կիտից* ..... *153*
*Յաղագս հագներգութեան* ..... *158*
*Յաղագս տառի* ..... *160*
*Յաղագս վանգի* ..... *178*
*Յաղագս երկար վանգի* ..... *179*
*Յաղագս սուղ վանգի* ..... *184*
*Յաղագս հասարակաց շաղաշարաց* ..... *185*
*Յաղագս բառի* ..... *189*
*Յաղագս բանի* ..... *190*
*Յաղագս անուան* ..... *194*
*Յաղագս բայի* ..... *233*
*Յաղագս լծորդութեան* ..... *245*
*Յաղագս ընդունելութեան* ..... *260*
*Յաղագս յաւդի* ..... *262*
*Յաղագս դերանունութեան* ..... *267*
*Յաղագս նախադրութեան* ..... *276*
*Յաղագս մակբայի* ..... *279*
*Յաղագս շաղկապի* ..... *296*
*Յաղագս առոգանութեան* ..... *305*
*Յաղագս ոտից* ..... *315*
*Թելադրութիւն ի խոնարհմունս բայի* ..... *324*

SYNOPSIS ..... 331-348
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ..... 349-362
ԲԱՌԱՑԱՆԿ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ԵՒ ԴԺՈՒԱՐԻՄԱՑ ԲԱՌԵՐԻ ..... 363-374
ՑԱՆԿ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ..... 375-376
ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ..... 377-379

*Գրքի ձեւաւորումը՝ Նորիկ Գրիգորեանի*
*Կոմպիւտըրային գրաշարումը՝ Արամ Օրջանեանի*
*Տեխնիկական սրբագրումը՝ Արաքս Մարտիրոսեանի*
*Տպագրումը՝ Խաչիկ Ունանեանի*

Prof. Dr. L. K. KHACHERIAN
1802 N. Wilton Pl., # 1,
Los Angeles, CA. 90028, U.S.A.
Tel. (213) 469-5063